Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

1385

22
Ա-79

2010

ԱՒԵՏԱՐԱՆ

ՏԵԱՌՆ ՄԵՐՈՅ

ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ

Ի ՎԵՆԵՏԻԿ

Ի ՎԱՆՍ ՍՐԲՈՑ ՂԱԶԱՐՈՒ

ՅԱՄԻ 1874 ՌՅԻԳ

11412
2001

ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆ

ՄԱՏԹԷՈՍԻ ԱՒԵՏԱՐԱՆԻՆ

Աւետարանս որ ըստ Մատթէոսի գրեալ է, զի ինքն Մատթէոս աշակերտ տեառն գրեաց զաւետարանս զայս: Եւ պատմէ մեզ 'ի սկզբանն զըստ մարմնոյ ծնունդ փրկչին 'ի զաւակէ Դաւթի. վասն որոյ և զազգահամարն ժողովէ մինչև 'ի Քրիստոս՝ ազգս քառասուն և երկու: Բերէ ըստ կարգի և զմկրտութիւն Յովհաննու, և 'ի լերինն 'ի գիւաց զփորձութիւնն, և նշանս և արուեստս մեծամեծս 'ի փրկչէն եղեալ, և զընտրութիւն աշակերտացն, և վասն խորհրդոյ մատնութեանն. և զկատարածն, զի մատնեցաւ Պիղատոսի. և խաչեցաւ մարմնով, և մարմինն եդաւ 'ի գերեզմանի, և զինուորքն բաժանեցին զհանդերձս նորա: Նոյն և զերրորդ աւուր յարութիւնն, և զպատուէր աշակերտացն՝ աշակերտել զամենայն հեթանոսս և մկրտել զնոսա. պատուիրեաց լինել ընդ նոսա զամենայն աւուրս մինչև 'ի կատարած աշխարհի:

Մատթէոս գրեաց զաւետարանս իւր յԵրուսաղէմ քաղաքի 'ի լեզու Եբրայեցի՝ զկնի ութ ամի համբառնալոյ փրկչին, 'ի խնդրոյ եկեղեցւոյն Երուսաղեմի:

Մատթէոս Թարգմանի՝ երգ կենաց:

ՍԿԻԶԲՆ ԳԼԽՈՑ

ԱՒԵՏԱՐԱՆԻՆ ՈՐ ԸՍՏ ՄԱՏԹԷՈՍԻ

	գլ.	հմր.
վասն մոգուցն.	Բ.	1
վասն կոտորածի մանկանցն	Բ.	16
վասն յառաջընթաց քարոզութեանն Յովհաննու Մկրտչին	Գ.	1
վասն վարդապետութեան 'փրկչին . . .	Գ.	22

ԱՀ

Վասն երանութեանց . . . . ե. 2
Վասն բորոտին. . . . . ը. 1
Վասն հարիւրապետին . . . . . . ը. 5
Վասն զոքանչին Պետրոսի. . . . . . . ը. 14
Վասն բժշկութեան ամենայն ցաւոց. . . ը. 16
Վասն՝ որ ոչ ետ հրաման երթալ զկնի . . ը. 19
Վասն սաստելոյն 'ի վերայ ջուրցն . . . ը. 23
Վասն դիւահարացն . . . . ը. 28
Վասն անդամալուծին. . . . . թ. 1
Վասն Մատթէի . . . . թ. 9
Վասն դստեր ժողովրդապետին . . . . թ. 18
Վասն տեռատեսին . . . . թ. 20
Վասն երկուց կուրացն . . . . . . թ. 27
Վասն խուլ և համր դիւահարին . . . . թ. 32
Վասն առաքելոցն իշխանութեան . . . . ժ. 1
Վասն առաքելոյն Յովհաննու զաշակերտան ժա. 2
Վասն՝ որոյ ձեռն գօսացեալ էր . . . . ժբ. 10
Վասն կոյր և համր դիւահարին . . . . ժբ. 22
Վասն՝ որ խնդրէին նշանս. . . . . . ժբ. 38
Վասն առակացն . . . . ժգ. 1
Վասն Յովհաննու և Հերովդի. . . . . ժդ. 1
Վասն հինգ հացիցն . . . . ժդ. 15
Վասն երթալոյն 'ի վերայ ծովուն . . . ժդ. 22
Վասն անցանելոյն զպատուիրանաւն ԱՅ . ժե. 1
Վասն կնոջն Քանանացւոյ . . . . . ժե. 21
Վասն բժշկելոյ զժողովուրդն . . . . ժե. 29
Վասն եօթն հացիցն . . . . ժե. 32
Վասն խմորոյ Փարիսեցւոցն . . . . . ժզ. 6
Վասն որ 'ի Կեսարիա հարցմանն . . . ժզ. 13
Վասն այլակերպութեանն տեառն . . . ժէ. 1
Վասն լուսնահարին . . . . ժէ. 14
Վասն խնդրելոյ զերկդրամեանն . . . . ժէ. 23
Վասն հարցանելոյն՝ թէ ո՛ է 'ի մէնջ մեծ. . ժը. 1
Վասն տակի հարիւր ոչխարին . . . ժը. 12
Վասն թողլոյ զբիւր տաղանդն . . . . ժը. 23
Վասն հարցմանն արձակելոյ առն զկին. . ժթ. 1
Վասն հարցանելոյ մեծատանն զՅիսուս. . ժթ. 16

Վասն վարձկանութեան մշակացն . . . ի. 1
Վասն որդւոցն Զեբեդեայ . . . . . ի. 20
Վասն երկուց կուրացն . . . . . . ի. 29
Վասն իշոյն և յաւանակին . . . . . իա. 1
Վասն կուրացն և կաղացն . . . . . իա. 14
Վասն չորանալոյ թզենւոյն . . . . . իա. 18
Վասն հարցանելոյ զտէրն՝ քահանայապե-
տացն և ծերոց . . . . իա. 23
Վասն երկուց որդւոցն առակաց. . . . իա. 28
Վասն այգւոյն առակին . . . . . . իա. 33
Վասն կոչեցելոցն 'ի հարսանիսն. . . . իբ. 1
Վասն դահեկանին, որով փորձեցին զտէրն. իբ. 15
Վասն Սադուկեցւոցն . . . . . . իբ. 23
Վասն օրինականացն . . . . իբ. 34
Վասն տեառն հարցանելոյն զՓարիսեցիսն . իբ. 41
Վասն վայ տալոյ դպրացն և Փարիսեցւոցն. իգ. 13
Վասն կատարածի. . . . . իդ. 3
Վասն աւուրն և ժամուն . . . . . . իդ. 36
Վասն տասն կուսանացն . . . . . . իե. 1
Վասն զտաղանդան տալոյ . . . . . . իե. 14
Վասն գալստեանն տեառն . . . . . իե. 31
Վասն օծանելոյն զտէրն իւղով . . . . իզ. 6
Վասն պատրաստելոյ զպասեքն . . . . իզ. 17
Վասն օրինաւոր խորհրդոյն . . . . . իզ. 26
Վասն մատնութեան տեառն. . . . . իզ. 41
Վասն ուրացութեան Պետրոսի . . . . իզ. 69
Վասն Յուդայի զղջմանն. . . . . . իէ. 3
Վասն խնդրելոյ զտէրունական մարմինն . . իէ. 57
Վասն իւղաբեր կանանցն . . . . . . իը. 1

Ս̃Բ ՄԱՏԹԷՈՍ ԱՒԵՏԱՐԱՆԻՉ

ԱՒԵՏԱՐԱՆ

ԸՍՏ ՄԱՏԹԷՈՍԻ

ԳԼ. Ա.

1 ԳԻՐՔ ծննդեան Յիսուսի Քրիստոսի
որդւոյ Դաւթի որդւոյ Աբրահամու։
2 Աբրահամ ծնաւ զիսահակ, իսահակ
ծնաւ զՅակովբ, Յակովբ ծնաւ զՅու-
դա և զեղբարս նորա։
3 Յուդա ծնաւ զՓարէս և զԶարա 'ի
Թամարայ, Փարէս ծնաւ զԵզրոմ, Եզ-
րոմ ծնաւ զԱրամ։
4 Արամ ծնաւ զԱմինադաբ, Ամինադաբ
ծնաւ զՆաասոն, Նաասոն ծնաւ զՍ-
աղմոն։

Սաղմոն ծնաւ զԲոոս 'ի Հռաքաբայ, 5
Բոոս ծնաւ զՈվբէդ 'ի Հռութայ, Ով-
բէդ ծնաւ զՅեսսէ, Յեսսէ ծնաւ ըզ-
Դաւիթ արքայ:
Դաւիթ ծնաւ զՍողոմոն 'ի կնոջէն 6
Ուրիայ:
Սողոմոն ծնաւ զՌոբովամ, Ռոբովամ 7
ծնաւ զԱբիա, Աբիա ծնաւ զԱսափ:
Ասափ ծնաւ զՅովսափատ, Յովսափատ 8
ծնաւ զՅովրամ, Յովրամ ծնաւ զՈզիա:
Ոզիա ծնաւ զՅովաթամ, Յովաթամ 9
ծնաւ զԱքազ, Աքազ ծնաւ զԵզեկիա:
Եզեկիա ծնաւ զՄանասէ, Մանասէ 10
ծնաւ զԱմովս, Ամովս ծնաւ զՅովսիա:
Յովսիա ծնաւ զՅեքոնիա և զեղբարս 11
նորա առ գերութեամբն Բաբելացւոց:
Յետ գերութեանն Բաբելայւոց ծնաւ 12
Յեքոնիա զՍաղաթիէլ, Սաղաթիէլ
ծնաւ զԶօրաբաբէլ:
Զօրաբաբէլ ծնաւ զԱբիուդ, Աբիուդ 13
ծնաւ զԵղիակիմ, Եղիակիմ ծնաւ զԱ-
զովր:
Ազովր ծնաւ զՍադովկ, Սադովկ ծնաւ 14
զԱքին, Աքին ծնաւ զԵղիուդ:
Եղիուդ ծնաւ զԵղիազար, Եղիազար 15
ծնաւ զՄատթան, Մատթան ծնաւ
զՅակովբ:
Յակովբ ծնաւ զՅովսէփ զայրն Մարե- 16

մայ՝ որում խօսեցեալ զՄարիամ կոյս․
յորմէ ծնաւ Յս̃, որ անուանեցաւ Քս̃։
17 Արդ ամենայն ազգքն յԱբրահամէ մին-
չև 'ի Դաւիթ՝ ազգք չորեքտասանք, և
'ի Դաւթէ մինչև 'ի գերութիւնն Բաբե-
լացւոց՝ ազգք չորեքտասանք․ և 'ի գե-
րութենէն Բաբելացւոց մինչև 'ի Քրիս-
տոս ազգք չորեքտասանք։
18 Եւ Յիսուսի Քրիստոսի ծնունդն էր այս-
պէս։ Խօսեցեալ զմայր նորա Մարիամ
Յովսեփու, մինչչև եկեալ առ միմեանս՝
գտաւ յղացեալ 'ի Հոգւոյն սրբոյ։
19 Եւ Յովսէփ այր նորա, քանզի արդար
էր և ոչ կամէր առակել զնա, խորհեցաւ
լռելեայն արձակել զնա։
20 Եւ մինչդեռ նա զայս ածէր զմտաւ,
ահա հրեշտակ տեառն 'ի տեսլեան ե-
րևեցաւ նմա՝ և ասէ․ Յովսէփ որդի
Դաւթի, մի երկնչիր առնուլ առ քեզ
զՄարիամ կին քո․ քանզի որ 'ի նմայն
ծնեալ է՝ 'ի Հոգւոյն սրբոյ է։
21 Ծնցի որդի, և կոչեսցես զանուն նորա
Յիսուս, զի նա փրկեսցէ զժողովուրդ-
իւր 'ի մեղաց իւրեանց։
22 Այլ այս ամ̃ եղև, զի լցցի որ ասացաւն
'ի տ̃նէ 'ի ձեռն Եսայեայ մարգարէի։
23 Ահա կոյս յղասցի՝ և ծնցի որդի, և կո-
չեսցեն զանուն նորա Եմմանուէլ․ որ

Թարգմանի՝ ընդ մեզ Աստուած։
Եւ զարթուցեալ Յովսէփ 'ի քնոյ անտի, 24
արար որպէս հրամայեաց նմա հրեշտակն
տեառն, և առ յինքն զկինն իւր։
Եւ ոչ գիտէր զնա, մինչև ծնաւ զորդին 25
իւր զանդրանիկ և կոչեաց զանուն նորա
Յիսուս։

ԳԼ. Բ

Եւ 'ի ծնանելն Յսի 'ի Բեթղեհէմ 1
Հրէաստանի յաւուրս Հերովդի արքայի,
ահա մոգք յարևելից եկին յԵրուսաղէմ։
Եւ ասեն. ո՞ւր է որ ծնաւ արքայն Հր- 2
րէից, զի տեսաք զաստղն նորա յարևելս,
և եկաք երկիր պագանել նմա։
Եւ իբրև լուաւ արքայ Հերովդէս՝ խռո- 3
վեցաւ, և ա̃մ Երուսաղէմ ընդ նմա։
Եւ ժողովեալ զա̃մ զքահանայապետս և 4
զդպիրս ժողովրդեանն, հարցանէր 'ի նոռ-
ցանէ թէ ուր ծնանիցի Քրիստոսն։
Եւ նոքա ասեն ցնա. 'ի Բեթղեհէմ 5
Հրէաստանի. զի այսպէս գրեալ է 'ի
ձեռն մարգարէին։
Եւ դու Բեթղեհէմ երկիր Յուդայ, 6
ոչ ինչ կրտսեր ես յիշխանս Յուդայ. 'ի
քէն ելցէ ինձ իշխան, որ հովուեսցէ
զժողովուրդ իմ զԻսրայէլ։
Յայնժամ Հերովդէս գաղտ կոչեաց 7

զմոգսն, եւ ստուգեաց 'ի նոցանէ զժա-
մանակ աստեղն երեւելոյ։
8 Եւ արձակեալ զնոսա 'ի Բեթղեհէմ,
ասէ. գնացէք ստուգեցէք վ̄ն մանկանն,
եւ յորժամ գտանիցէք՝ ազդ արասջիք
ինձ, զի եւ ես եկեալ երկիր պագից նմա։
9 Եւ նոքա իբրեւ լուան 'ի թագաւորէն՝
գնացին, եւ ահա աստղն զոր տեսին յա-
րեւելս՝ առաջնորդեաց նոցա, մինչեւ ե-
կեալ եկաց 'ի վերայ ուր էր մանուկն։
10 Իբրեւ տեսին զաստղն, խնդացին յոյժ
ուրախութիւն մեծ։
11 Եւ իբրեւ մտին 'ի տունն, տեսին զմա-
նուկն հանդերձ Մարեմաւ մարբն իւրով,
եւ անկեալ երկիր պագանէին նմա. եւ
բացեալ զգանձս իւրեանց՝ մատուցին
նմա պատարագս՝ ոսկի եւ կնդրուկ եւ զը-
մուռս։
12 Եւ հրաման առեալ 'ի տեսլեան չդառ-
նալ անդրէն առ Հերովդէս, ընդ այլ ճա-
նապարհ գնացին յաշխարհն իւրեանց։
13 Եւ իբրեւ գնացին նոքա անտի, ահա
հրեշտակ տեառն երեւէր 'ի տեսլեան
Յովսեփու, եւ ասէր. արի առ զմանուկդ
եւ զմայր իւր՝ եւ փախիր յԵգիպտոս, եւ
անդ լինիջիր՝ յորժամ ասացից քեզ.
քանզի 'ի խնդիր է Հերովդէս կորուսա-
նել զմանուկդ։

Եւ նա յարուցեալ առ զմանուկն եւ զմ- 14
մայր իւր գիշերի՝ եւ գնաց յԵգիպտոս.
եւ անդ էր մինչեւ ցվախճան Հերովդի։
Զի լցցի ասացեալն 'ի տեառնէ 'ի ձեռն 15
մարգարէին, որ ասէ. յԵգիպտոսէ կո-
չեցի զորդի իմ։
Յայնժամ իբրեւ ետես Հերովդէս թէ 16
խաբեցաւ 'ի մոգուց անտի, բարկացաւ
յոյժ. եւ առաքեաց կոտորեաց զամենայն
մանկունս որ էին 'ի Բեթղեհէմ եւ
յամենայն սահմանս նորա՝ յերկեմենից
եւ 'ի խոնարհ, ըստ ժամանակին զոր
ստուգեաց 'ի մոգուց։
Յայնժամ կատարեցաւ ասացեալն 'ի 17
ձեռն Երեմիայ մարգարէի որ ասէ։
Ձայն գուժեաց 'ի Հռամայ, ողբումն եւ 18
լալումն եւ աշխարումն յոյժ. Հռաքէլ
լայր զորդիս իւր, եւ ոչ կամէր մխիթարել
զի ոչ էին։
Եւ 'ի վախճանել Հերովդի, ահա հրե- 19
շտակ տեառն 'ի տեսլեան երեւէր Յով-
սեփայ յԵգիպտոս։
Եւ ասէր. արի առ զմանուկդ եւ զմայր 20
իւր, եւ գնա յերկիրն Իսրայէլի. զի մե-
ռան որ խնդրէին զանձն մանկանդ ։
Եւ նա յարուցեալ առ զմանուկն եւ 21
զմայր նորա, եւ եկն յերկիրն Իսրայէլի։
Եւ իբրեւ լուաւ եթէ Արքեղայոս թա- 22

գաւառեաց Հրէաստանի փոխանակ Հե-
րովդի հօրն իւրոյ , երկեաւ երթալ
անդր. և հրաման առեալ 'ի տեսլեան ,
գնաց 'ի կողմանս Գալիլեացւոց :
23 Եւ եկեալ բնակեցաւ 'ի քաղաքին որ
կոչէր Նազարեթ , զի լցցի բան մարգա-
րէիցն , թէ Նազովրեցի կոչեսցի :

ԳԼ. Գ.

1 Յաւուրսն յայնոսիկ գայ Յովհաննէս
Մկրտիչ քարոզել յանապատին Հրէաս-
տանի :
2 Եւ ասէր , ապաշխարեցէք՝ զի մերձեալ
է արքայութիւնն երկնից :
3 Զի սա է վասն որոյ ասացաւ 'ի ձեռն
Եսայեայ մարգարէի , որ ասէ. ձայն
բարբառոյ յանապատի , պատրաստ ա-
րարէք զճանապարհ տեառն. և ուղիղ
արարէք զշաւիղս նորա :
4 Եւ ինքն Յովհաննէս ունէր հանդերձ
'ի ստեաց ուղտու , և գօտի մաշկեղէն
ընդ մէջ իւր. և կերակուր նորա էր մա-
րախ և մեղր վայրենի :
5 Յայնժամ ելանէին առ նա ամենայն Ե-
րուսաղէմացիք և ամենայն Հրէաստան
և ամենայն կողմն Յորդանանու :
6 Եւ մկրտէին 'ի նմանէ 'ի Յորդանան , և
խոստովան լինէին զմեղս իւրեանց :

Եւ տեսեալ զբազումս 'ի Սադուկեցւոցն 7
և 'ի Փարիսեցւոց եկեալս 'ի մկրտութիւն
նորա, ասէ ցնոսա. ծնունդք իժից, ո՞
ցոյց ձեզ փախչել 'ի բարկութենէն որ
գալոց է։
Արարէք այսուհետև պտուղ արժանի 8
ապաշխարութեան։
Եւ մի համարիցիք ասել յանձինս թէ 9
ունիմք մեք հայր զԱբրահամ. ասեմ
ձեզ, զի կարող է Ա̃ծ 'ի քարանցս յայս-
ցանէ յարուցանել որդիս Աբրահամու։
Զի աւասիկ տապար առ արմին ծառոց 10
դնի. ա̃մ ծառ որ ոչ առնիցէ զպտուղ
բարի՝ հատանի և 'ի հուր արկանի։
Ես մկրտեմ զձեզ ջրով յապաշխարու- 11
թիւն. բայց որ զկնի իմ գայ՝ հզօրագոյն
է քան զիս, և ես չեմ բաւական բառ-
նալ զկօշիկս նորա. նա մկրտեսցէ զձեզ
'ի հոգին սուրբ և 'ի հուր։
Որոյ հեծանոցն 'ի ձեռին իւրում, և 12
սրբեսցէ զկալ իւր և ժողովեսցէ զցո-
րեանն 'ի շտեմարանս իւր, և զյարդն
այրեսցէ անշէջ հրով։
Յայնժամ գայ Յ̃ս 'ի Գալիլեէ 'ի Յորդա- 13
նան առ Յովհաննէս՝ մկրտել 'ի նմանէ։
Եւ Յովհաննէս արգելու զնա և ասէ. 14
ինձ պիտոյ է 'ի քէն մկրտել, և դու առ
իս գաս։

15 Պատասխանի ետ Յիսուս և ասէ ցնա.
Թոյլ տուր այժմ, զի այսպէս վայել է
մեզ լնուլ զամենայն արդարութիւն. և
ապա թոյլ ետ նմա։
16 Եւ իբրև մկրտեցաւ Յս, ել վաղվաղակի
'ի ջրոյ անտի. և ահա բացան նմա եր-
կինք, և ետես զՀոգին Այ զի իջանէր
իբրև զաղաւնի, և գայր 'ի վերայ նորա։
17 Եւ ահա ձայն յերկնից որ ասէր, դա է
որդի իմ սիրելի ընդ որ հաճեցայ։

ԳԼ. Դ

1 Յայնժամ վարեցաւ Յիսուս յանապատ
'ի Հոգւոյն՝ փորձել 'ի սատանայէ։
2 Եւ պահեալ զքառասուն տիւ և զքա-
ռասուն գիշեր՝ ապա քաղցեաւ։
3 Եւ մատուցեալ փորձիչն ասէ ցնա. եթէ
որդի ես Աստուծոյ՝ ասա զի քարինքս
այսոքիկ հաց լինիցին։
4 Նա պատասխանի ետ և ասէ. գրեալ է՝
թէ ոչ հացիւ միայն կեցցէ մարդ, այլ
ամ բանիւ որ ելանէ 'ի բերանոյ Այ։
5 Յայնժամ առեալ ածէ զնա սատանայ 'ի
քաղաքն սուրբ, և կացուցանէ զնա 'ի
վերայ աշտարակի տաճարին։
6 Եւ ասէ ցնա. եթէ որդի ես Այ՝ արկ
զքեզ աստի 'ի վայր. զի գրեալ է թէ
հրեշտակաց իւրոց պատուիրեալ է վն

քո՝ և 'ի վերայ ձեռաց բարձցեն զքեզ,
զի մի՛ երբեք հարցես զքարի զոտն քո։
Ասէ ցնա դարձեալ Յիսուս. գրեալ է, 7
Թէ ոչ փորձեսցես զտէր Աստուած քո։
Դարձեալ առնու ածէ զնա սատանայ 'ի 8
լեառն մի բարձր յոյժ, և ցուցանէ նմա
զամենայն թագաւորութիւնս աշխարհի
և զփառս նոցա.
Եւ ասէ ցնա, զայս ա՟մ քեզ տաց՝ եթէ 9
անկեալ երկիր պագանիցես ինձ։
Յայնժամ ասէ ցնա Յ՟ս. երթ յետս իմ 10
սատանայ, զի գրեալ է՝ տ՟ն Ա՟յ քում եր-
կիր պագցես, և զնա միայն պաշտեսցես։
Ապա եթող զնա սատանայ, և ահա 11
հրեշտակք մատեան և պաշտէին զնա։
ԲԲ Եւ իբրև լուաւ Յիսուս եթէ Յովհան- 12
նէս մատնեցաւ, մեկնեցաւ գնաց 'ի
Գալիլեա։
Եւ թողեալ զՆազարեթ, եկն բնակե- 13
ցաւ 'ի Կափառնաում 'ի ծովեզերին, 'ի
սահմանս Զաբուղոնի և Նեփթաղիմայ։
Զի լցցի բանն որ ասացաւ 'ի ձեռն Ե- 14
սայեայ մարգարէի.
Երկիր Զաբուղոնի և երկիր Նեփթա- 15
ղիմայ՝ ճանապարհ ծովու՝ յայնկոյս Յոր-
դանանու, Գալիլեա հեթանոսաց։
Ժողովուրդ որ նստէր 'ի խաւարի՝ ետես 16
լոյս մեծ. և որոց նստէին յաշխարհին և

'ի ստուերս մահու՝ լոյս ծագեաց նոցա։
17 Յայնմ հետէ սկսաւ քարոզել Յ̃ս՝ և ա-
սել. ապաշխարեցէք՝ զի մերձեալ է
արքայութիւն երկնից։
18 Մինչ դեռ զգնայր Յ̃ս ընդ եզր ծովուն
Գալիլեացւոց, ետես երկուս եղբարս՝
զՍիմոն զկոչեցեալն Պետրոս, և զԱն-
դրէաս եղբայր նորա՝ արկեալ ուռկան
'ի ծով. քանզի ձկնորսք էին։
19 Եւ ասէ ցնոսա. եկայք զկնի իմ, և ա-
րարից զձեզ որսորդս մարդկան։
20 Եւ նոքա թողեալ վաղվաղակի զգոր-
ծիսն՝ գնացին զհետ նորա։
21 Եւ մատուցեալ անտի յառաջ՝ ետես այլ
երկուս եղբարս, զՅակոբոս Զեբե-
դեայ և զՅովհաննէս զեղբայր նորա 'ի
նաւի՝ Զեբեդեաւ հանդերձ հարբն
իւրեանց, մինչ կազմէին զուռկանս իւ-
րեանց. և կոչեաց զնոսա։
22 Նոքա թողեալ վաղվաղակի զնաւն և
զհայրն իւրեանց, գնացին զհետ նորա։
23 Եւ շրջէր Յ̃ս ընդ ա̃մ կողմն Գալիլեա-
ցւոց. ուսուցանէր 'ի ժողովուրդս նոցա
և քարոզէր զաւետարանն արքայութ̃ե,
և բժշկէր զա̃մ հիւանդութիւնս և զա̃մ
ախտս 'ի ժողովրդեանն։
24 Եւ ել լուր ն̃ր ընդ ա̃մ երկիրն Ասորւոց,
և մատուցին առ նա զա̃մ հիւանդս՝ որ

1008 / 35-477

նեղեալ էին 'ի պէսպէս ցաւս և 'ի տան-
ջանս, և զդիւահարս և զլուսնոտս և
զանդամալոյծս, և բժշկեաց զնոսա:
Եւ երթային զհետ նորա ժողովուրդք 25
բազումք՝ 'ի Գալիլեէ և 'ի Դեկապօլեայ
և յԵ̃ղմէ և 'ի Հրէաստանէ և յայնկոյս
Յորդանանու, և բժշկեաց զնոսա:

Գլ. Ե

ԲԳ Եւ տեսեալ զժողովուրդսն՝ ել 'ի 1
լեառն. և իբրև նստաւ անդ՝ մատեան
առ նա աշակերտք նորա:
Եւ բացեալ զբերան իւր ուսուցանէր 2
զնոսա, և ասէր:
Երանի աղքատաց հոգւով, զի նոցա է 3
արքայութիւն երկնից:
Երանի սգաւորաց, զի նոքա մխիթա- 4
րեսցին:
Երանի հեզոց, զի նոքա ժառանգես- 5
ցեն զերկիր:
Երանի որ քաղցեալ և ծարաւի իցեն 6
արդարութեան, զի նոքա յագեսցին:
Երանի ողորմածաց, զի նոքա ողորմու- 7
թիւն գտցեն:
Երանի այնոցիկ որ սուրբ են սրտիւք, 8
զի նոքա զԱստուած տեսցեն:
Երանի խաղաղարարաց, զի նոքա որ- 9
դիք Աստուծոյ կոչեսցին:

10 Երանի որ հալածեալ իցեն վն արդա-
րութե՛, զի նոցա է արքայութի երկնից։
11 Երանի է ձեզ՝ յորժամ նախատիցեն
զձեզ և հալածեսցեն, և ասիցեն զամե-
նայն բան չար զձէնջ ստու վասն իմ։
12 Ցնծացէք և ուրախ լերուք, զի վարձք
ձեր բազում են յերկինս. զի այսպէս
հալածեցին զմարգարէսն որ յառաջ քան
զձեզ էին։
13 Դուք էք աղ երկրի. ապա թէ աղն ան-
համի՝ ի՞ւ յաղիցի. ոչ իմիք ազդիցէ այ-
նուհետև, բայց եթէ ընկենուլ ար-
տաքս՝ և կոխան լինել՚ի մարդկանէ։
14 Դուք էք լոյս աշխարհի. ոչ կարէ քա-
ղաք թաքչել՝ որ ՚ի վերայ լերին կայցէ։
15 Եւ ոչ լուցանեն ճրագ և դնեն ընդ
գրուանաւ, այլ՚ի վերայ աշտանակի. և
լոյս տայ ամենեցուն՝ որ ՚ի տանն իցեն։
16 Այնպէս լուսաւորեսցէ լոյս ձեր առա-
ջի մարդկան, որպէս զի տեսցեն զգործս
ձեր բարիս, և փառաւորեսցեն զհայր
ձեր որ յերկինս է։
17 Մի՛ համարիք եթէ եկի լուծանել զօ- ԲԴ.
րէնս կամ զմարգարէս. ոչ եկի լուծա-
նել՝ այլ լնուլ։
18 Ամէն ասեմ ձեզ՝ մինչև անցցեն երկինք
և երկիր, յովտ մի, որ նշանախեց մի է,
ոչ անցցէ յօրինացն և ՚ի մարգարէից՝

մինչեւ ամենայն եղիցի։
Որ ոք լուծցէ մի ինչ 'ի պատուիրանացս 19
յայսցանէ 'ի փոքունց, եւ ուսուսցէ այն-
պէս զմարդիկ, փոքր կոչեսցի յարքայու-
թեան երկնից. իսկ որ արասցէ եւ ուսուսցէ,
նա մեծ կոչեսցի յարքայութեան երկնից։
Բայց ասեմ ձեզ, զի եթէ ոչ առաւե- 20
լուցու արդարութիւն ձեր աւելի քան
զդպրացն եւ զփարիսեցւոց, ոչ մտանիցէք
յարքայութիւն երկնից։
Լուարուք զի ասացաւ առաջնոցն թէ 21
մի սպանաներ. զի որ սպանանիցէ՝ պար-
տական լիցի դատաստանի։
Այլ ես ասեմ ձեզ, եթէ ամ̃ որ բար- 22
կանայ եղբօր իւրում տարապարտուց,
պարտաւոր լիցի դատաստանի. եւ որ ա-
սիցէ ցեղբայր իւր յիմար, պարտաւոր
լիցի ատենի. եւ որ ասիցէ ցեղբայր իւր
մորոս, պարտաւոր լիցի 'ի գեհեն հրոյն։
Եթէ մատուցանիցես զպատարագ քո 'ի 23
վերայ սեղանոյ, եւ անդ յիշեսցես՝ եթէ
եղբայր քո ունի ինչ խէթ զքէն։
Թող զպատարագն քո առաջի սեղա- 24
նոյն. երթ նախ հաշտեաց ընդ եղբօր
քում, եւ ապա եկեալ մատուսջիր զպա-
տարագն քո։
Լեր իրաւախոհ ընդ ոսոխի քում վաղա- 25
գոյն, մինչդեռ իցես ընդ նմա 'ի ճանա-

պարհի. գուցէ մատնիցէ զքեզ ոսոխն
դատաւորի, և դատաւորն դահճի, և
արկանիցիս 'ի բանտ։
26 Ամէն ասեմ քեզ, ոչ ելանիցես անտի
մինչև հատուցանիցես զյետին նաքա-
րակիտն։
27 Լուարուք զի ասացաւ, մի՛ շնար։
28 Բայց ես ասեմ ձեզ, թէ ա̃մ որ հայի 'ի
կին մարդ առ 'ի ցանկանալոյ նմա, ան-
դէն շնացաւ ընդ նմա 'ի սրտի իւրում։
29 Եթէ ակն քո աջ գայթակղեցուցանէ
զքեզ, խլեա զնա և ընկեա 'ի քէն. զի
լաւ է քեզ եթէ մի յանդամոց քոց կորի-
ցէ, և մի՛ ամենայն մարմինդ քո անկա-
նիցի 'ի գեհեն։
30 Եւ եթէ աջ ձեռն քո գայթակղեցու-
ցանէ զքեզ, հատ զնա և ընկեա 'ի քէն.
լաւ է քեզ եթէ մի յանդամոց քոց կո-
րիցէ, և մի՛ ամենայն մարմինդ քո արկա-
նիցի 'ի գեհեն։
31 Ասպաքէն ասացաւ, եթէ որ արձակիցէ
զկին իւր՝ տացէ նմա զարձակմանն։
32 Բայց ես ասեմ՝ ձեզ, եթէ ամենայն որ
արձակէ զկին իւր առանց բանի պոռն-
կութեան՝ նա տայ նմա շնալ. և որ զար-
ձակեալն առնէ՝ շնայ։
33 Դարձեալ լուարուք զի ասացաւ առաջ-
նոցն. մի՛ երդնուցուս սուտ, բայց հա-

տուցես տեառն զերդմունս քո։
Այլ ես ասեմ ձեզ՝ ամենեւին մի՛ երդ- 34
նուլ, մի՛ յերկինս՝ զի աթոռ է Այ։
Եւ մի՛ յերկիր՝ զի պատուանդան է ոտից 35
նորա, և մի՛ յԵրուսաղէմ՝ զի քաղաք է
մեծի արքայի։
Եւ մի՛ 'ի գլուխ քո երդնուցուս, զի ոչ 36
կարես մազ մի սպիտակ առնել՝ կամ
թուխ։
Այլ եղիցի ձեր բան, այոն՝ այո, և ոչն՝ 37
ոչ. զի աւելին քան զայն 'ի չարէն է։
Լուարուք զի ասացաւ, ակն ընդ ական 38
և ատամն ընդ ատաման։
Այլ ես ասեմ ձեզ, մի՛ կալ հակառակ 39
չարին. այլ եթէ ոք ածիցէ ապտակ յաջ
ծնօտ քո՝ դարձո նմա և զմիւսն։
Եւ որ կամիցի ոք դատել և առնուլ զշ- 40
ապիկս քո, թող 'ի նա և զբաճկոն քո։
Եւ որ տարապարհակ վարիցէ զքեզ 41
մղոն մի, երթ ընդ նմա և երկուս։
Որում խնդրէ 'ի քէն՝ տուր. և որ կամի 42
փոխ առնուլ 'ի քէն՝ մի՛ դարձուցաներ
զերեսս։
Լուարուք ապաքէն զի ասացաւ. սի- 43
րեսցես զընկեր քո և ատեսցես զթշնա-
մին քո։
Այլ ես ասեմ ձեզ. սիրեցէք զթշնամիս 44
ձեր. օրհնեցէք զանիծիչս ձեր. բարի

արարէք ատելեաց ձերոց, և աղօթս ա-
րարէք 'ի վերայ այնոցիկ՝ որ լլկենն ըզ-
ձեզ և հալածեն։
45 Զի եղիջիք որդիք Հօր ձերոյ որ յեր-
կինսն է. զի զարեգակն իւր ծագէ 'ի
վերայ չարաց և բարեաց, և ածէ անձրև
'ի վերայ արդարոց և մեղաւորաց։
46 Զի եթէ սիրիցէք զայնոսիկ որ սիրենն
զձեզ՝ զի՞նչ վարձք իցեն, ո՞չ ապաքէն և
մաքսաւորք զնոյն գործեն։
47 Եւ եթէ տայցէք միայն ողջոյն բարե-
կամաց ձերոց՝ զի՞նչ աւելի առնէք. ո՞չ
ապաքէն մաքսաւորք և մեղաւորք զնոյն
գործեն։
48 Արդ եղերուք դուք կատարեալք, որպէս
և Հայրն ձեր երկնաւոր կատարեալ է։

ԳԼ. Զ

1 Զգոյշ լերուք ողորմութե՟ ձերում՝ մի ԲԵ
առնել առաջի մարդկան, որպէս թէ 'ի
ցոյց ինչ նոցա. գուցէ և վարձս ոչ ընդու-
նիցիք 'ի Հօրէն ձերմէ՝ որ յերկինսն է։
2 Այլ յորժամ առնիցես ողորմութիւն,
մի հարկաներ փող առաջի քո, որպէս
կեղծաւորքն առնեն 'ի ժողովուրդս և 'ի
հրապարակս, որպէս զի փառաւորեսցին
'ի մարդկանէ. ամէն ասեմ ձեզ՝ այն իսկ
են վարձք նոցա։

Այլ դու յորժամ ողորմութ̃ի առնիցես, 3
մի՛ գիտասցէ ձախ քո զի՛նչ գործէ աջ քո։
Որպէս զի եղիցի ողորմութիւնն քո 'ի ծա- 4
ծուկ. և Հայրն քո որ տեսանէ 'ի ծա-
ծուկ՝ հատուսցէ քեզ յայտնապէս։
Եւ յորժամ յաղօթս կայցես, մի՛ լինի- 5
ցիս որպէս կեղծաւորքն. զի սիրեն 'ի
ժողովուրդս և յանկիւնս հրապարակաց
կալ յաղօթս, որպէս զի երևեսցին մարդ-
կան. ամէն ասեմ ձեզ՝ այն իսկ են
վարձք նոցա։
Այլ դու յորժամ կայցես յաղօթս, 6
մուտ 'ի սենեակ քո և փակեա զդուրս
քո, և կաց յաղօթս առ Հայր քո 'ի ծա-
ծուկ. և Հայրն քո որ տեսանէ 'ի ծա-
ծուկ, հատուսցէ քեզ յայտնապէս։
Եւ յորժամ կայցէք յաղօթս, մի՛ շատա- 7
խօսք լինիք իբրև զհեթանոսսն. զի հա-
մարին եթէ 'ի բազում խօսից իւրեանց
լսելի լինիցին։
Արդ մի՛ նմանիցէք նց̃. զի գիտէ Հայրն 8
ձեր՝ զի՛նչ պիտոյ է ձեզ, մի՛նչ չև ձեր
խնդրեալ ի՛նչ իցէ 'ի նմանէ։
Եւ արդ՝ այսպէս կացէք դուք յաղօթս. 9
Հայր մեր որ յերկինս, սուրբ եղիցի ա-
նուն քո։
Եկեսցէ արքայութիւն քո. եղիցին կամք 10
քո՝ որպէս յերկինս և յերկրի։

11 Զհաց մեր հանապազորդ տուր մեզ
այսօր։
12 Եւ թող մեզ զպարտիս մեր, որպէս և
մեք թողումք մերոց պարտապանաց։
13 Եւ մի՛ տանիր զմեզ՚ի փորձութիւն, այլ
փրկեա զմեզ՚ի չարէ. զի քո է արքայութիւն
և զօրութիւն և փառք յաւիտեանս. ամէն։
14 Զի եթէ թողուցուք մարդկան զյան-
ցանս նոցա, թողցէ և ձեզ հայրն ձեր
երկնաւոր։
15 Ապա թէ ոչ թողուցուք մարդկան զյան-
ցանս նոցա, և ոչ հայրն ձեր թողցէ
ձեզ զյանցանս ձեր։
16 Եւ յորժամ պահիցէք՝ մի՛ լինիք իբրև
զկեղծաւորսն տրտմեալք. որ ապակա-
նեն զերեսս իւրեանց, որպէս զի երևես-
ցին մարդկան թէ պահիցեն. ամէն ա-
սեմ ձեզ, այն իսկ են վարձք նոցա։
17 Այլ դու յորժամ պահիցես, օծ զգլուխ
քո և լուա զերեսս քո։
18 Զի մի՛ երևեսցիս մարդկան իբրև ըղ-
պահող. այլ հօրն քում ՚ի ծածուկ. և
հայրն քո որ տեսանէ ՚ի ծածուկ, հա-
տուսցէ քեզ յայտնապէս։
19 Մի՛ գանձէք ձեզ գանձս յերկրի, ուր
ցեց և ուտիճ ապականեն, և ուր գողք
ական հատանեն և գողանան։
20 Այլ գանձեցէք ձեզ գանձս յերկինս,

ուր ոչ ցեց և ոչ ուտիճ ապականեն, և
ոչ գողք ական հատանեն և գողանան:
Զի ուր գանձք ձեր են՝ անդ և սիրտք 21
ձեր եղիցին:
ԲՁ Ճրագ մարմնոյ ակն է. եթէ ակն քո 22
առատ է, ա̃մ մարմինդ լուսաւոր եղիցի:
Ապա թէ ակն քո չար է՝ ամենայն մար- 23
մինդ խաւարին եղիցի. իսկ արդ եթէ
լոյսդ որ 'ի քեզ է խաւար է, խաւարն
ո՞րչափ ևս:
Ոչ ոք կարէ երկուց տերանց ծառայել. 24
կամ զմին ատիցէ և զմիւսն սիրիցէ,
կամ զմին մեծարիցէ և զմիւսն արհա-
մարհիցէ. ոչ կարէք Աստուծոյ ծառայել
և Մամոնայի:
Վասն այդորիկ ասեմ ձեզ. մի հոգայք 25
վասն ոգւոց ձերոց՝ զի՞նչ ուտիցէք կամ
զի՞նչ ըմպիցէք. և մի՛ վասն մարմնոց ձե-
րոց՝ թէ զի՞նչ ագանիցիք. ո՞չ ապաքէն
ոգի առաւել է քան զկերակուր և մար-
մին քան զհանդերձ:
Հայեցարուք 'ի թռչունս երկնից՝ զի ոչ 26
վարեն և ոչ հնձեն և ոչ ժողովեն 'ի շտե-
մարանս, և հայրն ձեր երկնաւոր կե-
րակրէ զնոսա. ո՞չ ապաքէն դուք առա-
ւել էք քան զնոսա:
Իսկ արդ՝ ո՞ 'ի ձէնջ առ հոգալ իւրում՝ 27
յաւելուլ կարիցէ 'ի հասակ իւր կան-

գուն մի։

28 Եւ վասն հանդերձի զի՞ հոգայք. հայե-
ցարո՛ւք 'ի շուշանն վայրենի՝ որպէս ա-
ճէ. ոչ ջանայ և ոչ նիւթէ։
29 Ասեմ ձեզ զի և ոչ Սողոմոն յամենայն
'ի փառսն իւրում զգեցաւ իբրև զմի 'ի
նոցանէ։
30 Իսկ եթէ զխոտ 'ի վայրի որ այսօր է
և վաղիւն 'ի հնոց արկանի, Աստուած
այնպէս զգեցուցանէ, որչափ ևս առաւել
զձեզ թերահաւատք։
31 Մի այսուհետև հոգայցէք և ասիցէք,
զի՞նչ կերիցուք կամ զի՞նչ արբցուք կամ
զի՞նչ զգեցցուք։
32 Զի զայդ ամենայն հեթանոսք խնդրեն.
քանզի գիտէ հայրն ձեր երկնաւոր թէ
պիտոյ է ձեզ այդ ամենայն։
33 Խնդրեցէք նախ զարքայութիւնն Ա̃յ և
զարդարութի̃նն. և այդ ա̃մ յաւելցի ձեզ։
34 Մի այսուհետև հոգայցէք վասն վա-
ղուին, զի վաղիւն վասն իւր հոգասցի.
շատ է աւուրն չար իւր։

ԳԼ. Է

1 Մի դատիք՝ զի մի դատիցիք։ ԲԻ
2 Զի որով դատաստանաւ դատիք՝ դա-
տելոց էք. և որով չափով չափէք՝ չա-
փեսցի ձեզ։

Զի՞ տեսանես զշիւղ յական եղբօր 3
քո, և ՚ի քում ական զգերանդ ոչ տե-
սանես։
Կամ զիա՞րդ ասես ցեղբայր քո, Թող 4
հանից զշիւղդ յականէ քումմէ. և ա-
հաւադիկ ՚ի քում ական գերան կայ։
Կեղծաւոր՝ հան նախ զգերանդ յակա- 5
նէ քումմէ, և ապա հայեսցիս հանել
զշիւղն յականէ եղբօր քո։
Մի՛ տայք զսրբութիւն շանց, և մի՛ ար- 6
կանէք զմարգարիտս ձեր առաջի խոզաց,
զի մի՛ առ ոտն կոխեսցեն զնոսա և
դարձեալ երգիծուցանիցեն զձեզ։
Խնդրեցէք և տացի ձեզ, հայցեցէք և 7
գտջիք, բախեցէք և բացցի ձեզ։
Զի ա̃մ որ խնդրէ՝ առնու, և որ հայցէ՝ 8
գտանէ, և որ բախէ՝ բացցի նմա։
Ո՞ իցէ ՚ի ձէնջ մարդ՝ ցոր խնդրիցէ որ- 9
դի իւր հաց, միթէ քա՞ր տայցէ նմա։
Եւ կամ խնդրիցէ ձուկն, միթէ օձ 10
տայցէ նմա։
Արդ եթէ դուք որ չարդ էք՝ գիտէք 11
պարգևս բարիս տալ որդւոց ձերոց,
ո՞րչափ ևս առաւել հայրն ձեր որ յեր-
կինս է տացէ բարիս այնոցիկ որ խնդ-
րեն զնա։
Զամենայն որ միանգամ կամիջիք՝ թէ 12
արասցեն ձեզ մարդիկ՝ այնպէս և դուք

առարէք նոցա. զի այն իսկ են օրէնքն և
մարգարէք։
13 Մտէք ընդ նեղ դուռն. քանզի ընդար-
ձակ է դուռնն և համարձակ ճանա-
պարհն՝ որ տանի ՚ի կորուստ, և բա-
զումք են որ մտանեն ընդ նա։
14 Քանզի անձուկ է դուռնն և նեղ ճա-
նապարհն՝ որ տանի ՚ի կեանս, և սա-
կաւք են որ գտանեն զնա։
15 Զգոյշ լերուք ՚ի սուտ մարգարէից՝
որ գան առ ձեզ հանդերձիւք ոչխարաց,
և ՚ի ներքոյ են գայլք յափշտակողք։
16 Ի պտղոյ նոցա ծանիջիք զնոսա. մի-
թէ քաղիցե՞ն ՚ի փշոց խաղող՝ կամ ՚ի
տատասկէ թուզ։
17 Այսպէս ա̃մ ծառ բարի՝ պտուղ բարի
առնէ, և ծառ չար՝ պտուղ չար առնէ։
18 Ոչ կարէ ծառ բարի՝ պտուղ չար առնել,
և ոչ ծառ չար՝ պտուղ բարի առնել։
19 Ամենայն ծառ որ ոչ առնէ պտուղ բա-
րի, հատանի և ՚ի հուր արկանի։
20 Ապա ՚ի պտղոյ նոցա ծանիջիք զնոսա։
21 Ոչ ա̃մ որ ասէ ցիս՝ տէր տէր, մտցէ
յարքայութիւն երկնից. այլ որ առնէ
զկամս հօր իմոյ որ յերկինսն է։
22 Բազումք ասիցեն ցիս յաւուրն յայնմիկ.
տէր տէր՝ ո՞չ յանուն քո մարգարէա-
ցաք, և յանուն քո դևս հանաք, և յա-

նուն քո զօրութիւնս բազումս արարաք:
Եւ յայնժամ ասացից ցն̃ս, եթէ ոչ եր- 23
բեք գիտէի զձեզ. ՚ի բաց կացէք յինէն
ամենեքեան՝ որք գործէիք զանօրէնութի̃ն:
Ամենայն որ լսէ զբանս իմ զայսոսիկ և 24
առնէ զսոսա, նմանեսցի առն իմաստ-
նոյ՝ որ շինեաց զտուն իւր ՚ի վերայ վիմի:
Իջին անձրևք և խաղացին գետք, շնչե- 25
ցին հողմք՝ և բախեցին զտունն, և ոչ
կործանեցաւ. քանզի ՚ի վերայ վիմի
հաստատեալ էր:
Եւ ա̃մ որ լսէ զբանս իմ զայսոսիկ և 26
ոչ առնէ զսոսա, նմանեսցի առն յիմա-
րի՝ որ շինեաց զտուն իւր ՚ի վերայ աւազոյ:
Իջին անձրևք՝ յարեան գետք, շնչեցին 27
հողմք՝ հարին զտունն և անկաւ. և էր
կործանու̃մն նորա մեծ յոյժ:
Եւ եղև իբրև կատարեաց Յ̃ս զամենայն 28
զբանս զայսոսիկ, զարմանային ժողո-
վուրդքն ընդ վարդապետութիւն նորա:
Զի իբրև իշխանութեամբ ուսուցա- 29
նէր՝ և ոչ որպէս դպիրքն:

ԳԼ. Ը

Այլ իբրև էջ ՚ի լեռնէ անտի, գնացին 1
զկնի նորա ժողովուրդք բազումք:
Եւ ահա մատուցեալ բորոտ մի, երկիր 2
պագանէր նմա և ասէր. տէր եթէ

կամիս՝ կարող ես զիս սրբել։
3 Ձգեաց զձեռն իւր և հասոյց 'ի նա Յս՝
և ասէ. կամիմ՝ սրբեաց. և վաղվաղա-
կի սրբեցաւ 'ի նմանէ բորոտութիւնն։
4 Եւ ասէ ցնա Յս. զգոյշ լեր՝ մի ումեք
ասիցես. այլ երթ ցոյց զանձն քո քա-
հանային և մատո զպատարագն զոր հրա-
մայեաց Մովսէս, 'ի վկայութիւն նոցա։
5 Եւ մտեալ 'ի Կափառնաում, մատեաւ
առ նա հարիւրապետ մի, աղաչէր զնա։
6 Եւ ասէր. տէր՝ մանուկ իմ անկեալ կայ
'ի տան անդամալոյծ՝ չարաչար տանջեալ։
7 Ասէ ցնա Յս. ես եկից և բժշկեցից զնա։
8 Պատասխանի ետ հարիւրապետն՝ և ա-
սէ. տէր՝ չեմ բաւական եթէ ընդ յար-
կաւ իմով մտցես. այլ ասա բանիւ, և
բժշկեսցի մանուկն իմ։
9 Քանզի և ես այր մի եմ ընդ իշխանու-
թեամբ, ունիմ ընդ ինև զինուորս. ա-
սեմ սմա երթ՝ և երթայ, և այլում թէ
եկ՝ և գայ, և ծառայի իմում թէ արա
զայս՝ և առնէ։
10 Իբրև լուաւ Յիսուս զարմացաւ, և ասէ
ցայնոսիկ որ զհետն երթային. ամէն
ասեմ ձեզ՝ և ոչ յԻսրայէլի այսպիսի
հաւատս գտի երբէք։
11 Բայց ասեմ ձեզ, զի բազումք յարևելից
և յարևմտից եկեսցեն՝ և բազմեսցին ընդ

Աբրահամու և ընդ Սահակայ և ընդ
Յակոբու յարքայութեան երկնից։
Եւ որդիքն արքայութեան ելցեն՚ի խա- 12
ւարն արտաքին. անդ եղիցի լալ և կրր-
ճել ատամանց։
Եւ ասէ Յս ցհարիւրապետն. երթ՝ և 13
որպէս հաւատացերդ եղիցի քեզ. և ող-
ջացաւ մանուկն նորա յաւուր յայնմիկ։
Եւ եկեալ Յս՚ի տուն Պետրոսի, ետես 14
զի զոքանչ նր̃ անկեալ դնէր տապացեալ։
Կալաւ զձեռանէ նորա՝ և եթող զնա 15
ջերմն. յոտն եկաց և պաշտէր զնոսա։
Իբրև եղև երեկոյ՝ մատուցին առ նա 16
դիւահարս բազումս, և եհան զայսն
բանիւ, և զամ̃ հիւանդսն բժշկեաց։
Զի լցցի բանն որ ասացաւ՚ի ձեռն Ե- 17
սայեայ մարգարէի. Նա զհիւանդութիս
մեր վերացոյց, և զցաւս մեր եբարձ։
Գ.Կ Տեսեալ Յիսուսի ժողովուրդս բազումս 18
զիւրև, հրամայեաց երթալ յայնկոյս։
Եւ մատուցեալ դպիր մի ասէ ցնա. 19
վարդապետ՝ եկից և ես զկնի քո յոր
վայր և երթիցես։
Ասէ ցնա Յիսուս. աղուեսուց որջք գոն 20
և թռչնոց երկնից բոյք, այլ որդւոյ մար-
դոյ ոչ գոյ՝ ուր դիցէ զգլուխ իւր։
Եւ մի ոմն յաշակերտացն նր̃ ասէ ցնա. 21
տէր՝ տուր ինձ հրաման զի երթայց

նախ թաղեցից զհայր իմ։
22 Ասէ ցնա Յս. եկ զկնի իմ, և թոյլ տուր
մեռելոցն թաղել զմեռեալս իւրեանց։
23 Եւ իբրև եմուտ ՚ի նաւն, գնացին ըզ-
կնի նորա աշակերտքն նորա։
24 Եւ ահա շարժումն մեծ եղև ՚ի ծովուն՝
մինչ նաւին ծածկել յալեաց անտի, և
ինքն ննջէր։
25 Եւ մատուցեալ աշակերտքն յարուցին
զնա և ասեն. տէր, փրկեա զմեզ՝ զի
կորնչիմք։
26 Եւ ասէ ցնոսա. ընդէ՞ր վատասիրտք էք
սակաւահաւատք. յայնժամ յարուցեալ
սաստեաց հողմոյն և ծովուն, և եղև
խաղաղութիւն մեծ։
27 Եւ մարդիկն զարմացան՝ և ասէին. ո-
րպիսի՞ ոք իցէ սա, զի և հողմք և ծով
հնազանդին սմա։
28 Եւ իբրև անց յայնկոյս յերկիրն Գեր-
գեսացւոց, պատահեցին նմա դիւա-
հարք երկու՝ ելեալք ՚ի գերեզմանացն,
չարաչարք յոյժ. որպէս զի չէր հնար ան-
ցանել ումեք ընդ այն ճանապարհ։
29 Եւ ահա աղաղակեցին և ասեն. զի՞
կայ մեր և քո՝ Յիսուս որդի Աստուծոյ,
եկիր տարաժամ տանջել զմեզ։
30 Եւ էր հեռագոյն ՚ի նոցանէ երամակ
մի խոզից արօտական։

Եւ դեւքն աղաչէին զնա եւ ասէին. Ե- 31
թէ հանես զմեզ աստի, հրամա՛ն տուր
մեզ երթալ յերամակ խոզիցն։
Եւ ասէ ցնոսա, Երթա՛յք. եւ նոքա ե- 32
լեալ գնացին յերամակն խոզից, եւ դի-
մեաց ամենայն երամակն ՚ի դարէ ան-
տի ՚ի ծով, եւ մեռան ՚ի ջուրսն։
Եւ խոզարածքն փախեան, եւ երթեալ 33
՚ի քաղաքն պատմեցին զամենայն, եւ զիրս
դիւահարացն։
Եւ ահա ամենայն քաղաքն ել ընդ ա- 34
ռաջ Յիսուսի. իբրեւ տեսին զնա՝ աղա-
չեցին զի գնասցէ ՚ի սահմանաց նոցա։

ԳԼ. Թ

Եւ մտեալ ՚ի նաւ անց յայնկոյս, եւ եկն 1
՚ի քաղաք իւր։
Եւ ահա մատուցին առ նա անդամա- 2
լոյծ մի, որ դնէր ՚ի մահիճս. եւ տեսեալ
Յիսուսի զհաւատս նոցա, ասէ ցանդա-
մալոյծն. Թողեալ լիցին քեզ մեղք քո։
Եւ ահա ոմանք ՚ի դպրացն ասեն ընդ 3
միտս. Հայհոյէ դա։
Եւ ծանուցեալ Յիսուսի զխորհուրդս 4
նոցա՝ ասէ ցնոսա. ընդէ՞ր խորհիք դուք
չարիս ՚ի սիրտս ձեր։
Զինչ դիւրին է, ասե՞լ՝ Թողեալ լիցին 5
քեզ մեղք քո, թէ ասել արի՛ եւ շրջեաց։

6 Այլ զի գիտասջիք եթէ իշխանութիւն
ունի որդի մարդոյ յերկրի թողուլ ըզ-
մեղս. յայնժամ ասէ ցանդամալոյծն. ա-
րի՛ առ զմահիճս քո եւ երթ 'ի տուն քո:
7 Եւ յարուցեալ գնաց 'ի տուն իւր:
8 Իբրեւ տեսին ժողովուրդքն, զարմացան.
եւ փառաւոր առնէին զԱստուած զտուիչն
այնպիսի իշխանութեան՝ մարդկան:
9 Եւ անցեալ ընդ այն Յիսուսի՝ ետես Գ.Բ
զայր մի զի նստէր 'ի մաքսաւորութեան
Մատթէոս անուն. եւ ասէ ցնա, եկ զկնի
իմ. եւ յարուցեալ գնաց զկնի նորա:
10 Եւ եղեւ իբրեւ բազմեալ էր նա 'ի տան,
եւ ահա բազում մաքսաւորք եւ մեղաւորք
եկեալ եւ բազմեալ էին ընդ Յիսուսի եւ
ընդ աշակերտս նորա:
11 Իբրեւ տեսին Փարիսեցիք՝ ասեն ցաշա-
կերտս նորա. ընդէ՞ր ընդ մաքսաւորս եւ
ընդ մեղաւորս ուտէ վարդապետն ձեր:
12 Իսկ Յս իբրեւ լուաւ՝ ասէ ցնոսա. ոչ է
պիտոյ բժիշկ կարողաց՝ այլ հիւանդաց:
13 Երթայք ուսարուք զի՞նչ է, զողորմու-
թիւն կամիմ եւ ոչ զզոհ. զի ոչ եկի կո-
չել զարդարս այլ զմեղաւորս:
14 Յայնժամ մատեան առ նա աշակերտքն
Յովհաննու եւ ասեն. ընդէ՞ր մեք եւ Փա-
րիսեցիքն պահեմք յաճախ, եւ քո աշա-
կերտքդ ոչ պահեն:

Ասէ ցնոսա Յիսուս. միթէ մարթ իցէ 15
իցէ մանկանց առագաստի սուգ առնուլ՝
մինչ փեսայն ընդ նոսա իցէ. այլ եկեսցեն
աւուրք՝ յորժամ բարձցի ՚ի նոցանէ փե֊
սայն, և ապա պահեսցեն։
Ոչ ոք արկանէ կապերտ անթափ ՚ի վե֊ 16
րոյ հնացեալ ձորձոյ՝ զի առնու ելանէ
զլրութիւն նորա ՚ի հանդերձէն, և ևս
չար պատառումն լինի։
Եւ ոչ արկանեն գինի նոր ՚ի տիկս հինս. 17
ապա թէ ոչ՝ տիկքն պատառին և գի֊
նին հեղու և տիկքն կորնչին. այլ ար֊
կանեն զգինի նոր ՚ի տիկս նորս, և եր֊
կոքին պահին։
Գ.Գ. Մինչ դեռ նա զայս խօսէր ընդ նոսա, 18
ահա իշխան մի մատուցեալ երկիր պա֊
գանէր նմա և ասէր. դուստր իմ արդ ևս
վախճանեցաւ. այլ եկեալ դիցես զձեռն
քո ՚ի վերայ նորա և կեցցէ։
Յարեաւ Յիսուս և գնաց զհետ նորա 19
աշակերտօքն հանդերձ։
Եւ ահա կին մի տեռատես երկոտասան֊ 20
ամեայ՝ մատուցեալ յետոյ մերձեցաւ
՚ի դրօշակ հանդերձի նորա։
Քանզի ասէր ՚ի մտի իւրում, թէ միայն 21
մերձենամ ՚ի հանդերձս նորա փրկիմ։
Իսկ Յիսուս իբրև դարձաւ և ետես զնա՝ 22
ասէ. քաջալերեաց դուստր՝ հաւատք քո

կեցուցին զքեզ. և փրկեցաւ կինն ՚ի
ժամէն յայնմանէ։
23 Իբրև եկն Յիսուս ՚ի տուն իշխանին, և
ետես զփողարսն և ամբոխ յոյժ, ասէ
ցնոսա. ՚ի բաց գնացէք։
24 Զի ոչ եթէ մեռեալ է աղջիկդ՝ այլ
ննջէ։
25 Եւ ծաղր առնէին զնա. և իբրև ել ամ֊
բոխն ՚ի բաց, եմուտ՝ կալաւ զձեռանէ
նորա և յարեաւ աղջիկն։
26 Եւ ել համբաւս այս ընդ ամենայն եր֊
կիրն ընդ այն։
27 Եւ մինչ դեռ անցանէր ը͞ այն Յ͞ս, զհետ Գ.Գ.
եղեն նորա կոյրք երկու, աղաղակէին և
ասէին. ողորմեաց մեզ որդի Դաւթի։
28 Եւ իբրև եկն ՚ի տուն, մատեան առ նա
կոյրքն, և ասէ ցնոսա Յիսուս. հաւա֊
տայք եթէ կարող եմ առնել ձեզ զայդ.
ասեն ցնա՝ այո տէր։
29 Յայնժամ մերձեցաւ յաչս նոցա և ա֊
սէ. ըստ հաւատոց ձերոց եղիցի ձեզ։
30 Եւ բացան աչք ն͞ց. և սաստեաց ն͞ց Յ͞ս՝
և ասէ. զգոյշ կացէք՝ մի ոք գիտասցէ։
31 Եւ նոքա ելեալ համբաւեցին զնա ընդ
ամենայն երկիրն ընդ այն։
32 Եւ յելանելն նոցա արտաքս, ահա մա֊
տուցին առ նա այր մի՝ համր դիւահար։
33 Եւ յելանել դիւին՝ խօսեցաւ համրն.

եւ զարմացան ժողովուրդքն եւ ասէին.
թէ եւ ոչ երբեք երեւեցաւ այսպիսի ինչ
յԻսրայէլի:
Իսկ Փարիսեցիքն ասէին թէ իշխանաւն 34
դիւաց հանէ դա զդեւս:
Գ.Ե Եւ շրջէր Յ՟ս ընդ ա՟մ քաղաքս եւ ընդ 35
գիւղս. ուսուցանէր'ի ժողովուրդս նոցա,
եւ քարոզէր զաւետարանն արքայութ՟ե.
եւ բժշկէր զամենայն ախտս եւ զամենայն
հիւանդութիւնս 'ի ժողովրդեանն:
Եւ տեսեալ զժողովուրդսն՝ գթացաւ 36
'ի ն՟ս. զի էին աշխատեալք եւ ցրուեալք
իբրեւ զոչխարս որոց ոչ իցէ հովիւ:
Յայնժամ ասէ ցաշակերտսն իւր. հունձք 37
բազում են եւ մշակք սակաւ:
Արդ աղաչեցէք զտէր հնձոց՝ զի հանցէ 38
մշակս 'ի հունձս իւր:

Գլ. Ժ

Եւ կոչեցեալ առ ինքն զերկոտասա- 1
նեսին աշակերտսն իւր, ետ նոցա իշ-
խանութիւն այսոց պղծոց՝ հանել զն՟ս, եւ
բժշկել զա՟մ ցաւս եւ զա՟մ հիւանդութ՟իս:
Եւ առաքելոցն երկոտասանից էին ա- 2
նուանք այսոքիկ. առաջին Սիմոն՝ ա-
նուանեալն Պետրոս եւ Անդրէաս եղ-
բայր նորա:
Յակոբոս Զեբեդեայ եւ Յովհաննէս 3

եղբայր նորա. Փիլիպպոս և Բարթո-
ղոմէոս. Թովմաս և Մատթէոս մաք-
սաւոր. Յակոբոս Ալփեայ և Ղեբէոս՝
որ անուանեցաւ Թադէոս:
4 Սիմոն Կանանացի և Յուդա Իսկա-
րիովտացի՝ որ և մատնեաց զնա:
5 Զնոսա երկոտասանեսին առաքեաց Յի-
սուս, պատուիրեաց նոցա և ասէ. 'ի ճա-
նապարհ հեթանոսաց մի՛ երթայցէք և
'ի քաղաք Սամարացւոց մի՛ մտանիցէք:
6 Այլ երթայք առաւել առ ոչխարս կո-
րուսեալս տանն Իսրայէլի:
7 Եւ իբրև երթայցէք՝ քարոզեցէք և ասա-
ցէք թէ մերձեալ է արքայութի՟ երկնից:
8 Զհիւանդս բժշկեցէք, զբորոտս սըր-
բեցէք, զդևս հանէք, ձրի առէք և ձրի
տուք:
9 Մի՛ ստանայք ոսկի և մի՛ արծաթ և մի՛
պղինձ 'ի գօտիս ձեր:
10 Մի՛ պարկ 'ի ճանապարհ, և մի՛ երկուս
հանդերձս, մի՛ կօշիկս, մի՛ ցուպ. զի ար-
ժանի է մշակն կերակրոյ իւրոյ:
11 Յոր քաղաք մտանիցէք կամ 'ի գեօղ,
հարցանիցէք թէ ո՛ է 'ի նմա արժանի.
և անդ լինիջիք մինչև ելանիցէք անտի:
12 Եւ իբրև մտանիցէք 'ի տունն, ողջոյն
տայջիք նմա և ասասջիք. ողջոյն տանս
այսմիկ:

Եթէ իցէ տունն արժանի, եկեսցէ ող- 13
ջոյնն ձեր 'ի վերայ նր. ապա թէ ոչ իցէ
արժանի, ողջոյնն ձեր առ ձեզ դարձցի։
Եւ որ ոչ ընկալցի զձեզ և ոչ լուիցէ 14
բանից ձերոց, իբրև ելանիցէք 'ի տա-
նէն կամ 'ի քաղաքէն յայնմանէ, թօ-
թափեսջիք զփոշին յոտից ձերոց։
Ամէն ասեմ ձեզ, դիւրագոյն լիցի երկրին 15
Սոդոմացւոց և Գոմորացւոց յաւուրն
դատաստանի, քան քաղաքին այնմիկ։
Գ.Զ Ահաւասիկ ես առաքեմ զձեզ իբրև զոչ- 16
խարս 'ի մէջ գայլոց. եղերուք այսու-
հետև խորագէտք իբրև զօձս, և միա-
միտք իբրև զաղաւնիս։
Զգոյշ լինիջիք 'ի մարդկանէ. զի մատ- 17
նեսցեն զձեզ յատեանս, և 'ի ժողո-
վուրդս իւրեանց տանջեսցեն զձեզ։
Եւ առաջի դատաւորաց և թագաւորաց 18
տանիցին զձեզ վասն իմ 'ի վկայութիւն
նոցա և հեթանոսաց։
Այլ յորժամ մատնեսցեն զձեզ, մի հո- 19
գայցէք թէ ո՞րպէս կամ զի՞նչ խօսիցիք,
զի տացի ձեզ 'ի ժամուն յայնմիկ զինչ
խօսիցիք։
Զի ոչ եթէ դուք իցէք որ խօսիցիքն, 20
այլ Հոգին Հօր ձերոյ՝ որ խօսիցի 'ի ձեզ։
Մատնեսցէ եղբայր զեղբայր 'ի մահ, և 21
հայր զորդի. և յարիցեն որդիք 'ի վերայ

հարց և սպանանիցեն զնոսա :
22 Եւ եղիջիք ատեցեալք յամենեցունց վն
անուան իմոյ. իսկ որ համբերեսցէ 'ի
սպառ, նա կեցցէ :
23 Եւ յորժամ հալածեսցեն զձեզ 'ի քա-
ղաքիս յայսմիկ՝ փախիջիք յայլ. և եթէ
յայնմանէ հալածիցեն զձեզ՝ փախիջիք
'ի միւս. ամէն ասեմ ձեզ, ոչ սպառեսջիք
զքաղաքս Իսրայելի՝ մինչև եկեսցէ որ-
դի մարդոյ :
24 Ոչ է աշակերտ առաւել քան զվարդա-
պետ, և ոչ ծառայ քան զտէր իւր :
25 Շատ իցէ աշակերտին եթէ եղիցի ի-
բրև զվարդապետ իւր, և ծառային՝ իբրև
զտէր իւր. եթէ զտանուտէրն Բէեզղե-
բուղ կոչեցին, որչափ ևս առաւել զըն-
տանիս նորա :
26 Մի այսուհետև երկնչիցիք 'ի նոցանէ.
զի ոչ ինչ է 'ի ծածուկ՝ որ ոչ յայտնես-
ցի, և գաղտնի որ ոչ ծանիցի :
27 Զոր ասեմ ձեզ 'ի խաւարի՝ ասացէք 'ի
լոյս. և զոր լսէք յունկանէ՝ քարոզեցէք
'ի վերայ տանեաց :
28 Եւ մի երկնչիք յայնցանէ՝ որ սպանա-
նեն զմարմին, և զոգի ոչ կարեն սպա-
նանել. այլ երկերուք դուք առաւել
յայնմանէ որ կարող է զոգի և զմար-
մին կորուսանել 'ի գեհենի :

Ո՞չ ապաքէն երկու ճնճղուկք դանկի 29
միոջ վաճառին, և մի ՚ի նոցանէ յերկիր
ոչ անկցի առանց Հօր ձերոյ։
Այլ ձեր և ա̃մ իսկ հեր գլխոյ թուեալ է։ 30
Եւ արդ մի՛ երկնչիցիք, զի լաւ էք քան 31
զբազում ճնճղուկս։
Ամենայն որ խոստովանեսցի յիս առաջի 32
մարդկան, խոստովանեցից և ես զնմա-
նէ առաջի Հօր իմոյ որ յերկինսն է։
Եւ որ ուրասցի զիս առաջի մարդկան, 33
ուրացայց և ես զնա առաջի Հօր իմոյ որ
յերկինսն է։
Մի՛ համարիք եթէ եկի արկանել խա- 34
ղաղութիւն յերկիր. ոչ եկի արկանել
խաղաղութիւն, այլ սուր։
Քանզի եկի քակել զայր ՚ի հօրէ իւրմէ, 35
և զդուստր ՚ի մօրէ իւրմէ, և զհարսն ՚ի
սկեսրէ իւրմէ։
Եւ թշնամիք առն ընտանիք իւր։ 36
Որ սիրէ զհայր կամ զմայր առաւել քան 37
զիս՝ ոչ է ինձ արժանի. և որ սիրէ զուստր
կամ զդուստր առաւել քան զիս՝ չէ ինձ
արժանի։
Եւ որ ոչ առնու զխաչ իւր և գայ զկնի 38
իմ, չէ ինձ արժանի։
Որ գտանէ զանձն իւր՝ կորուսցէ զնա, և 39
որ կորոյս զանձն իւր վ̃ն իմ, գտցէ զնա։
Որ ընդունի զձեզ՝ զիս ընդունի, և որ 40

զիս ընդունի՝ ընդունի զառաքիչն իմ։
41 Որ ընդունի զմարգարէ յանուն մարգա-
րէի՝ զվարձս մարգարէի առցէ․ և որ
ընդունի զարդար յանուն արդարոյ՝ ըզ-
վարձս արդարոյ առցէ։
42 Եւ որ արբուսցէ միում՚ի փոքրկանցս
յայսցանէ բաժակ մի ջուր ցուրտ միայն՝
յանուն աշակերտի, ամէն ասեմ ձեզ
ոչ կորուսցէ զվարձս իւր։

ԳԼ. ԺԱ.

1 Եւ եղև իբրև կատարեաց Յիսուս Գ.Է
զպատուէր երկոտասանից աշակերտացն
իւրոց, գնաց անտի քարոզել և ուսուցա-
նել՚ի քաղաքս նոցա։
2 Իսկ Յովհաննէս իբրև լուաւ՚ի բանտին
զգործսն Քրիստոսի, առաքեաց՚ի ձեռն
աշակերտացն իւրոց։
3 Եւ ասէ ցնա․ դո՞ւ ես որ գալոցն ես,
եթէ այլում ակնկալցուք։
4 Պատասխանի ետ Յիսուս՝ և ասէ ցնո-
սա․ գնացէք պատմեցէք Յովհաննու,
զոր լուայք և տեսիք։
5 Կոյրք տեսանեն, կաղք գնան, բորոտք
սրբին և խուլք լսեն և մեռեալք յառ-
նեն և աղքատք աւետարանին։
6 Եւ երանի է որ ոչ գայթակղեսցի յիս։
7 Եւ իբրև նոքա գնացին, սկսաւ Յիսուս

ասել ցժողովուրդսն զՅովհաննէ. զի՞նչ
ելէք տեսանել յանապատին, եղէ՞գն
շարժուն՝ի հողմոյ։
Այլ զի՞նչ ելէք տեսանել. մա՞րդ ՝ի 8
համդերձս փափկութե զարդարեալ. ա-
հաւանիկ որ զփափուկսն զգեցեալ են՝
՝ի տունս թագաւորաց են։
Այլ զի՞նչ ելէք տեսանել. մարգարէ՞. 9
այո ասեմ ձեզ, և առաւել ևս քան ըզ-
մարգարէ։
Զի նա է վ՛ն որոյ գրեալն է. ահա ես ա- 10
ռաքեցից զհրեշտակ իմ առաջի երեսաց
քոց՝ որ պատրաստեսցէ զճանապարհս
քո առաջի քո։
Ամէն ասեմ ձեզ՝ չէ յարուցեալ՝ի ծը- 11
նունդս կանանց մեծ քան զՅովհաննէս
Մկրտիչ. բայց փոքրիկն յարքայութե
երկնից մեծ է քան զնա։
Բայց յաւուրցն Յովհաննու Մկրտչի 12
մինչև ցայժմ՝արքայութի՛ն երկնից բըռ-
նադատի, և բռունք յափշտակեն զնա։
Քանզի ա՛մ օրէնք և մարգարէք՝ մինչև 13
ցՅովհաննէս մարգարէացան։
Եւ թէ կամիք ընդունել՝նա է Եղիա 14
որ գալոցն է։
Որ ունիցի ականջս լսելոյ, լուիցէ։ 15
Ո՞ւմ նմանեցուցից զազգս զայս. նման 16
է մանկտւոյ որ նստիցին՝ի հրապարակս,

կարդայցեն զընկերս իւրեանց։
17 Եւ ասիցեն. փող հարաք ձեզ և ոչ
կաքաւեցէք, ողբացաք ձեզ և ոչ կոծե-
ցարուք։
18 Եկն Յովհաննէս, ոչ ուտէր և ոչ ըմ-
պէր. և ասեն՝ դև գոյ 'ի նմա։
19 Եկն որդի մարդոյ՝ ուտէ և ըմպէ. և ա-
սեն, ահա այր կերող և արբեցող, բա-
րեկամ մաքսաւորաց և մեղաւորաց. և
արդարացաւ իմաստութիւն յորդւոց իւրոց։
20 Յայնժամ սկսաւ նախատել զքաղաքսն՝
յորս եղեն բազում զօրութիւնք նորա,
և ոչ ապաշխարեցին։
21 Վա՜յ քեզ Քորազին, վա՜յ քեզ Բեթ-
սայիդա. զի եթէ 'ի Տիւրոս և 'ի Սիդոն
եղեալ էին զօրութիւնքն որ 'ի ձեզ ե-
ղեն, վաղու ևս արդեօք խորգով և մոխ-
րով ապաշխարեալ էր։
22 Բայց ասեմ ձեզ. դիւրագոյն լիցի եր-
կրին Տիւրոսի և Սիդոնի յաւուրն դա-
տաստանի՝ քան ձեզ։
23 Եւ դու Կափառնաում, մի՞ մինչև յեր-
կինս բարձրասցիս, այլ մինչև 'ի դժոխս
իջցես. զի եթէ 'ի Սոդոմ եղեալ էին
զօրութիւնքն՝ որ 'ի քեզ եղեն, ապա-
քէն կային ևս մինչև ցայսօր։
24 Բայց ասեմ ձեզ՝ եթէ երկրին Սոդո-
մացւոց դիւրագոյն լիցի յաւուրն դա-

դատաստանի՝ քան քեզ։

ԳԿ Յայնմ ժամանակի պատասխանի ետ Յս̃ 25
և ասէ. գոհանամ զքէն հայր՝ տր̃ երկնի
և երկրի. զի ծածկեցեր զայս յիմաս-
տնոց և՚ի գիտնոց և յայտնեցեր տղայոց։
Այո հայր, զի այսպէս հաճոյ եղև ա- 26
ռաջի քո։
Ամենայն ինչ տուաւ ինձ՚ի հօրէ իմմէ. 27
և ոչ ոք ճանաչէ զորդի՝ եթէ ոչ հայր, և
ոչ զհայր ոք ճանաչէ՝ եթէ ոչ որդի, և
ում որդին կամիցի յայտնել։
Եկայք առ իս ամենայն վաստակեալք և 28
բեռնաւորք, և ես հանգուցից զձեզ։
Առէք զլուծ իմ՚ի ձեզ, և ուսարուք 29
յինէն՝ զի հեզ եմ և խոնարհ սրտիւ, և
գտջիք հանգիստ անձանց ձերոց։
Զի լուծ իմ քաղցր է և բեռն իմ փոքր- 30
ոգի։

ԳԼ. ԺԲ

ԳԲ Յայնժամ գնաց Յս̃ ընդ արտորայսն 1
նոցա՚ի շաբաթու. և աշակերտքն նորա
քաղցեան, և սկսան հասկ կորզել և
ուտել։
Փարիսեցիքն իբրև տեսին՝ ասեն ցնա. 2
ահաւասիկ աշակերտքն քո գործեն, զոր
ոչ է արժան գործել՚ի շաբաթու։
Եւ նա ասէ ցնոսա. ո՞չ իցէ ընթերցեալ 3

ձեր զոր արար Դաւիթ յորժամ քաղ-
ցեաւ, եւ որ ընդ նմայն էին։
4 Զիա՛րդ եմուտ 'ի տունն Աստուծոյ՝ եւ
եկեր զհացն զառաջաւորութեան. զոր
ոչ էր օրէն նմա ուտել, եւ ոչ որոց ընդ-
նմայն էին, բայց միայն քահանայից։
5 Կամ թէ չիցէ՞ ընթերցեալ յօրէնս՝ զի 'ի
շաբաթս քահանայքն 'ի տաճարին պղ-
ծեն զշաբաթն եւ անմեղք են։
6 Բայց ասեմ ձեզ՝ զի մեծ քան զտաճարն
է աստ։
7 Եւ եթէ գիտէիք զի՞նչ է զողորմութիւն
կամիմ եւ ոչ զզոհ, ապա ոչ դատապար-
տէիք դուք զանպարտսն։
8 Զի տէր է շաբաթու՝ որդին մարդոյ։
9 Եւ գնացեալ անտի Յիսուս՝ եկն 'ի ժո-
ղովուրդն նոցա։
10 Եւ անդ էր այր մի՝ որոյ ձեռն իւր գօ-
սացեալ էր. հարցին զնա եւ ասեն, եթէ
պա՞րտ իցէ 'ի շաբաթու բժշկել. զի չա-
րախօսեսցեն զնմանէ։
11 Եւ նա ասէ ցնոսա. ո՞վ է 'ի ձէնջ մարդ՝
որոյ իցէ ոչխար մի, եւ անկանիցի այն
'ի խորխորատ 'ի շաբաթու. միթէ ո՞չ
ունիցի եւ յարուցանիցէ զնա։
12 Իսկ արդ ո՞րչափ եւս առաւել է մարդ
քան զոչխար. ապա ուրեմն պարտ է 'ի
շաբաթու բարիս գործել։

Յայնժամ ասէ ցայրն. Ձգեա զձեռն քո, 13
եւ նա ձգեաց, եւ եղեւ ողջ իբրեւ զմիւսն։
Իսկ Փարիսեցիքն ելեալ արտաքս խոր- 14
հուրդ առին զնմանէ թէ որպէս կորուսցեն զնա։
Եւ Յիսուս իբրեւ գիտաց, մեկնեցաւ ան- 15
տի. եւ գնացին զհետ նորա ժողովուրդք
բազումք, եւ բժշկեաց զամենեսեան։
Եւ սաստեաց նոցա զի մի՛ յայտնեսցեն 16
զնմանէ ումեք։
Զի լցցի որ ասացաւն ՚ի ձեռն Եսայեայ 17
մարգարէի։
Ահա մանուկ իմ զոր ընտրեցի, եւ սի- 18
րելի իմ ընդ որ հաճեցաւ անձն իմ. ե-
դից զոգի իմ ՚ի վերայ նորա, եւ իրաւունս
հեթանոսաց պատմեսցէ։
Ոչ հակառակեսցի եւ ոչ աղաղակեսցէ, 19
եւ ոչ ոք լուիցէ ՚ի հրապարակս զբարբառ
նորա։
Զեղէգն ջախջախեալ ոչ փշրեսցէ, եւ 20
զպատրոյգն առկայծեալ ոչ շիջուսցէ.
մինչեւ հանցէ ՚ի յաղթու̅ի զդատաստան։
Եւ յանուն նորա հեթանոսք յուսասցին։ 21
Դ.Գ. Յայնժամ մատուցաւ առ նա դիւահար 22
մի կոյր եւ համր, եւ բժշկեաց զնա. ո̅պ
զի համրն եւ կոյրն խօսիցի եւ տեսանիցէ։
Զարմացան ա̅մ ժողովուրդքն՝ եւ ասէին. 23
միթէ սա՞ իցէ Ք̅նն որդի Դաւթի։

24 Բայց Փարիսեցիքն իբրեւ լուան՝ ասեն.
ոչ իւիք հանէ դա զդեւս՝ եթէ ոչ Բէեղ-
զեբուղաւ իշխանաւն դիւաց:
25 Իբրեւ գիտաց Յս̃ զխորհուրդս նոցա՝ ասէ
ցնոսա. ա̃մ թագաւորութի̃ բաժանեալ
յանձն իւր՝ աւերի. եւ ա̃մ քաղաք կամ
տուն բաժանեալ յանձն իւր՝ ոչ կացցէ:
26 Եւ եթէ սատանայ զսատանայ հանէ,
յանձն իւր բաժանեցաւ. արդ՝ զիա՛րդ
կացցէ թագաւորութիւն նորա:
27 Եւ եթէ ես Բէեղզեբուղաւ հանեմ
զդեւս, որդիքն ձեր ի՞ւ հանիցեն. վասն
այնորիկ նոքա եղիցին ձեր դատաւորք:
28 Ապա թէ հոգւով Աստուծոյ հանեմ ես
զդեւս, ուրեմն հասեալ է 'ի վերայ ձեր
արքայութիւն Աստուծոյ:
29 Կամ զիա՞րդ կարէ ոք մտանել 'ի տուն
հզօրի՝ եւ զգործիսն նորա յափշտակել,
եթէ ոչ նախ կապիցէ զհզօրն, եւ ապա
զտունն նորա յափշտակիցէ:
30 Որ ոչ ընդ իս է, հակառակ իմ է. եւ որ
ոչ ժողովէ ընդ իս՝ ցրուէ:
31 Վասն այդորիկ ասեմ ձեզ. ա̃մ մեղք եւ
հայհոյութի̃ք թողցին մարդկան, բայց
զհոգւոյն հայհոյութիւն մի՛ թողցի:
32 Եւ որ ոք ասիցէ բան զորդւոյ մարդոյ՝
թողցի նմա. բայց որ զհոգւոյն սրբոյ ա-
սիցէ՝ մի՛ թողցի նմա, մի՛ յայսմ աշխար-

հի և մի՛ ՚ի հանդերձելումն։
Կամ արարէք զծառն բարի՝ և զպտուղ 33
նորա բարի, կամ արարէք զծառն չար՝
և զպտուղ նորա չար. քանզի ՚ի պտղոյ
անտի ծառն ճանաչի։
Ծնունդք իժից, զիա՞րդ կարիցէք բա֊ 34
րիս խօսել՝ որ չարքդ էք. քանզի ՚ի յա֊
ւելուածոյ սրտի խօսի բերան։
Մարդ բարի՝ ՚ի բարի գանձուց սրտի իւ֊ 35
րոյ հանէ զբարիս. և մարդ չար՝ ՚ի չար
գանձուց սրտի իւրոյ հանէ զչարիս։
Բայց ասեմ ձեզ, թէ ընդ ա̃մ դատարկ 36
բանի զոր խօսիցին մարդիկ, տացեն հա֊
մար յաւուրն դատաստանի։
Զի ՚ի բանից քոց արդարասցիս, և ՚ի 37
բանից քոց պարտաւորեսցիս։
Դ.Դ. Յայնժամ պատասխանի ետուն նմա ո֊ 38
մանք ՚ի դպրացն և ՚ի Փարիսեցւոց՝ և
ասեն. վարդապետ՝ կամիմք նշան ինչ
տեսանել ՚ի քէն։
Նա պատասխանի ետ և ասէ ցնոսա. 39
ազգ չար և շնացող նշան խնդրէ. և նշ֊
ան մի տացի նմա, բայց նշանն Յովնա֊
նու մարգարէի։
Զի որպէս էր Յովնան ՚ի փոր կիտին 40
զերիս տիւս և զերիս գիշերս, նոյնպէս
եղիցի և որդի մարդոյ ՚ի սիրտ երկրի զե֊
րիս տիւս և զերիս գիշերս։

41 Արք Նինուէացիք յարիցեն 'ի դատաս-
տանի ընդ ազգիս ընդ այսմիկ՝ և դատա-
պարտեսցեն զսա. զի զղջացան 'ի քարո-
զութեանն Յովնանու. և արդ աւասիկ
մեծ քան զՅովնան է աստ։
42 Դշխոյն հարաւոյ յարիցէ 'ի դատաստա-
նի ընդ ազգիս ընդ այսմիկ՝ և դատապար-
տեսցէ զսա. զի եկն 'ի ծագաց երկրի՝
լսել զիմաստութիւնն Սողոմոնի. և ահա
մեծ քան զՍողոմոն է աստ։
43 Այլ յորժամ այսն պիղծ ելանէ 'ի
մարդոյ՝ շրջի ընդ անջրդիս տեղիս.
խնդրէ հանգիստ՝ և ոչ գտանէ։
44 Յայնժամ ասէ. դարձայց 'ի տուն իմ
ուստի ելի. և եկեալ գտանէ զնա պա-
րապորդ, մաքրեալ և յարդարեալ։
45 Յայնժամ երթայ և առնու ընդ իւր
եօթն այլ այսս չարագոյնս քան զինքն,
և մտեալ բնակէ անդ. և լինի յետինն
մարդոյն այնորիկ չար քան զառաջինն.
այնպէս եղիցի և ազգիս այսմիկ չարի։
46 Մինչդեռ նա ընդ ժողովուրդսն խօսէր,
ահա մայր նորա և եղբարք նորա կային
արտաքոյ՝ և խնդրէին խօսել ընդ նմա։
47 Եւ ասէ ոմն ցնա. ահա մայր քո և եղ-
բարք քո կան արտաքոյ, և խնդրեն խօ-
սել ընդ քեզ։
48 Նա պատասխանի ետ այնմիկ որ ասացն

ցնա, և ասէ. ո՞վ է իմ մայր, կամ ո՞վ
 են իմ եղբարք։
Եւ ձգեալ զձեռն իւր յաշակերտսն՝ ա- 49
սէ. ահա մայր իմ և եղբարք իմ։
Զի որ առնիցէ զկամս հօր իմոյ որ յեր- 50
կինսն է, նա է իմ եղբայր և քոյր և
մայր։

Գլ. ԺԳ

ԴԵ Յաւուր յայնմիկ ելեալ Յիսուս 'ի տա- 1
նէն՝ նստաւ առ ծովեզերն։
Եւ ժողովեցան առ նա ժողովուրդք բա- 2
զումք, մինչև մտանել նմա 'ի նաւն՝ և
նստել. և ամենայն ժողովուրդն կայր առ
ծովեզերբն։
Եւ խօսէր ը՟նտ բազում առակօք՝ և ասէր։ 3
Ահա ել սերմանահան սերմանել. և 'ի 4
սերմանելն իւրում, էր որ անկաւ առ
ճանապարհաւ, և եկն թռչունն երկնից՝
և եկեր զնա։
Եւ այլն անկաւ յապառաժի, ուր ոչ 5
գոյր հող բազում. և վաղվաղակի բու-
սաւ. առ 'ի չգոյէ հիւթոյ երկրին,
Ի ծագել արևու տապացաւ, և զի ոչ 6
գոյին արմատք՝ չորացաւ։
Եւ այլն անկաւ 'ի մէջ փշոյ, և ելին 7
փուշքն և հեղձուցին զնա։
Եւ այլն անկաւ յերկիր բարի, և տայր 8

պտուղ, էր որ հարիւրաւոր, և էր որ
վաթսնաւոր, և էր որ երեսնաւոր։
9 Որ ունիցի ականջս լսելոյ, լուիցէ։
10 Եւ մատուցեալ աշակերտքն ասեն ցնա.
ընդէ՞ր առակօք խօսիս ընդ նոսա։
11 Նա պատասխանի ետ և ասէ ցն̃ս. քան-
զի ձեզ տուեալ է գիտել զխորհուրդս
արքայութե̃ն երկնից, և նց̃ չէ՛ տուեալ։
12 Զի որ գուցէ՝ տացի նմա և յաւելցի.
և որ ոչն գուցէ, և զոր ունիցին՝ բարձ-
ցի ՚ի նմանէ։
13 Վասն այնորիկ առակօք խօսիմ ընդ ն̃ս.
զի տեսանեն՝ և ոչ տեսանեն, և լսեն՝
և ոչ լսեն, և ոչ առնուն ՚ի միտ։
14 Եւ կատարի առ նոսա մարգարէութի̃ն
Եսայեայ՝ որ ասէ. լսելով լուիջիք՝ և մի՛
իմասջիք, և տեսանելով տեսջիք՝ և մի՛
տեսջիք։
15 Զի թանձրացաւ սիրտ ժողովրդեանս
այսորիկ, և ականջօք իւրեանց ծանունս
լուան. և զաչս իւրեանց կափուցին՝ զի
մի՛ երբեք տեսցեն աչօք՝ և ականջօք
լուիցեն՝ և սրտիւք իմասցին, և դարձ-
ցին և բժշկեցից զնոսա։
16 Բայց ձեր երանի է աչացդ՝ զի տեսա-
նեն, և ականջաց ձերոց՝ զի լսեն։
17 Ամէն ասեմ ձեզ, զի բազում մարգարէք
և արդարք ցանկացան տեսանել զոր

տեսանէքդ՝ և ոչ տեսին, և լսել զոր լը-
սէքդ՝ և ոչ լուան:
Եւ արդ լուարուք դուք զառակ սեր- 18
մանացանին:
Յամենայնէ որ լսէ զբանն արքայութե՟ 19
և ոչ առնու 'ի միտ, գայ չարն և յափըշ-
տակէ զսերմանեալն 'ի սիրտ նորա. այն
է՝ որ առ Ճանապարհաւն սերմանեցաւ:
Եւ որ յապառաժին սերմանեցաւ՝ այն 20
է, որ իբրև լսէ զբանն, և վաղվաղակի
խնդութե՟ ընդունի զնա:
Բայց քանզի ոչ ունի արմատս յինքեան 21
այլ առ ժամանակ մի է, 'ի լինել նե-
ղութեան և հալածանաց վասն բանին՝
վաղվաղակի գայթակղի:
Իսկ որ 'ի մէջ փշոցն սերմանեցաւ՝ այն 22
է, որ իբրև լսէ զբանն, և հոգք աշխար-
հիս և պատրանք մեծութեան հեղձու-
ցանեն զբանն, և լինի անպտուղ:
Իսկ որ յերկիրն բարի սերմանեցաւ՝ այն 23
է, որ իբրև լսէ զբանն՝ և 'ի միտ առ-
նու, և տայ զպտուղ. է որ հարիւր և
է որ վաթսուն և է որ երեսուն:
Դ.Զ Այլ առակ արկ առ նոսա և ասէ. Նմա- 24
նեցաւ արքայութի՟ երկնից առն, որ սեր-
մանիցէ սերմն բարի յագարակի իւրում:
Եւ 'ի քուն լինել մարդկան, եկն թըշ- 25
նամին նորա, և ցանեաց 'ի վերայ ո-

ռոմն 'ի մէջ ցորենոյն՝ և գնաց։
26 Եւ իբրև բուսաւ խոտն և արար պը-
տուղ, ապա երևեցաւ և որոմնն։
27 Մատուցեալ ծառայք տանուտեառնն
ասեն ցնա. տէր՝ ո՞չ սերմն բարի սերմա-
նեցեր յագարակին քում, արդ ուստի՞
ունիցի զորոմնն։
28 Եւ նա ասէ ցնոսա. այր թշնամի արար
զայն. ասեն ցնա ծառայքն. կամի՞ս զի
երթիցուք քաղեսցուք զայն 'ի բաց։
29 Եւ նա ասէ ցնս. մի, գուցէ մինչ քա-
ղիցէք զորոմնն, և զցորեանն ընդ նմին 'ի
բաց խլիցէք։
30 Թոյլ տուք երկոցունց աճել 'ի միասին
մինչև 'ի հունձս, և 'ի ժամանակի հըն-
ձոցն ասացից ցհնձօղսն. քաղեցէք նախ
զորոմնդ՝ և կապեցէք զայդ խրձունս առ
'ի այրել, և զցորեանն ժողովեցէք 'ի
շտեմարանս իմ։
31 Այլ առակ արկ առ նոսա և ասէ. նմա՛ն
է արքայութիւն երկնից հատոյ մանա-
նխոյ. զոր առեալ մարդոյ՝ սերմանեաց
յագարակի իւրում։
32 Որ փոքր է քան զամ սերմանիս. և յոր-
ժամ աճիցէ, մեծ է քան զամ բանջարս.
և լինի ծառ՝ մինչև գալ թռչնոց երկնից
և հանգչել յոստս նորա։
33 Այլ առակ խօսեցաւ ընդ նոսա և ասէ.

Նման է արքայութի երկնից խմորոյ, զոր
առեալ կնոջ թաքոյց 'ի գրիւս երիս ա-
լեր՝ մինչև ամենայն խմորեցաւ:
Զայս ամենայն խօսեցաւ Յիսուս առա- 34
կօք ընդ ժողովուրդսն, և առանց առակի
ոչ ինչ խօսէր ընդ նոսա:
Զի լցցի ասացեալն 'ի մարգարէէն. 35
բացից առակօք զբերան իմ, բղխեցից
զծածկեալսն 'ի սկզբանէ աշխարհի:
Դէ Յայնժամ թողեալ Յսի զժողովուրդսն՝ 36
եկն 'ի տուն. մատեան առ նա աշա-
կերտքն նորա՝ և ասեն. մեկնեա մեզ
զառակ որոմանցն ագարակի:
Նա պատասխանի ետ և ասէ ցնոսա. որ 37
սերմանէ զսերմն բարի՝ է որդի մարդոյ:
Եւ ագարակն աշխարհս է. սերմն բա- 38
րի նոքա են որ որդիքն արքայութեան
են, իսկ որոմն որդիք չարին են:
Եւ թշնամին որ վարեաց զայն՝ սատա- 39
նայ է. և հունձքն կատարած աշխար-
հիս է, և հնձողքն հրեշտակք են:
Որպէս ժողովի որոմն և 'ի հուր այրի, 40
այնպէս եղիցի 'ի կատարածի աշխարհիս:
Առաքեսցէ որդի մարդոյ զհրեշտակս 41
իւր, և ժողովեսցեն յարքայութենէ նո-
րա զամենայն գայթակղութիւնս՝ և զայ-
նոսիկ ոյք գործեն զանօրէնութիւն:
Եւ արկցեն զնոսա 'ի հնոց հրոյ. անդ ե- 42

ղեցի լալ և կրճել ատամանց։
43 Յայնժամ արդարքն ծագեսցեն իբրև
զարեգակն յարքայութե՟ն երկնից. որ ու-
նիցի ականջս լսելոյ լուիցէ։
44 Դարձեալ՝ նման է արքայութ՟ի երկնից
գանձի ծածկելոյ յագարակի. զոր գը-
տեալ մարդոյ՝ թագոյց. և ՚ի խնդութ՟է
անտի երթայ վաճառէ զա՟մ ինչ զոր ու-
նի, և գնէ զագարակն զայն։
45 Դարձեալ՝ նման է արքայութիւն եր-
կնից առն վաճառականի՝ որ խնդրիցէ
մարգարիտս գեղեցիկս։
46 Եւ գտեալ մի պատուական մարգարիտ՝
երթեալ վաճառեաց զա՟մ զոր ինչ ունէր՝
և գնեաց զայն մարգարիտ։
47 Դարձեալ՝ նման է արքայութ՟ի երկնից
ուռկանի արկելոյ ՚ի ծով՝ և յամենայն
ազգաց ժողովելոյ։
48 Զոր՝ իբրև լցաւ, հանեալ ՚ի ցամաք՝
և նստեալ ժողովեցին զբարի բարին յա-
մանս, և զխոտանն ՚ի բաց ընկեցին։
49 Այնպէս եղիցի ՚ի կատարածի աշխար-
հիս. ելցեն հրեշտակք՝ և մեկնեսցեն
զչարս ՚ի միջոյ արդարոց։
50 Եւ արկցեն զն՟ս ՚ի հնոց հրոյն. անդ ե-
ղիցի լալ և կրճել ատամանց։
51 Ասէ ցնոսա Յիսուս. իմացարո՞ւք զայս ա-
մենայն. ասեն ցնա. այո տէր։

Եւ նա ասէ ցնոսա. վասն այսորիկ ա̃մ 52
դպիր աշակերտեալ արքայութե̃ երկնից՝
նման է առն տանուտեառն, որ հանէ
՚ի գանձէ իւրմէ զնոր և զհին:
ԵԿ Եւ եղև իբրև կատարեաց Յիսուս զա- 53
ռակս զայսոսիկ՝ փոխեցաւ անտի:
Եւ եկեալ ՚ի գաւառ իւր՝ ուսուցանէր 54
զն̃ո ՚ի ժողովրդեանն նոցա, մինչև զար-
մանալ նոցա և ասել. սմա ուստի՞ իցէ այս
իմաստութիւն և զօրութիւնք:
Ո՞չ սա է հիւսանն որդի, ո՞չ մայր սորա 55
կոչի Մարիամ, և եղբարք սորա Յակո-
բոս և Յովսէս և Սիմոն և Յուդա:
Եւ քորք սորա ո՞չ ամենեքեան առ մեզ 56
են. արդ ուստի՞ է սմա այս ա̃մ:
Եւ գայթակղէին ՚ի նա. և Յիսուս ասէ 57
ցնոսա. չիք մարգարէ անարգ եթէ ոչ
յիւրում գաւառի և յիւրում տան:
Եւ ոչ արար անդ զօրութիւնս բազումս՝ 58
վասն անհաւատութեան նոցա:

ԳԼ. ԺԳ.

ԵԳ. Յայնմ ժամանակի լուաւ Հերովդէս 1
չորրորդապետ զլուր Յիսուսի:
Եւ ասէ ցծառայս իւր. նա է Յովհան- 2
նէս Մկրտիչ, նա յարեաւ ՚ի մեռելոց, և
վասն այնորիկ զօրութիւնք լինին նովաւ:
·Քանզի Հերովդէս կալաւ զՅովհաննէս, 3

կապեաց զնա և եդ 'ի բանտի վասն Հե-
րովդիայ կնոջ Փիլիպպոսի եղբօր նորա։
4 Զի ասէր ցնա Յովհաննէս. չէ՛ արժան
քեզ ունել զդա։
5 Եւ կամէր զնա սպանանել, բայց երկըն-
չէր 'ի ժողովրդենէ անտի. քանզի իբրև
զմարգարէ ունէին զնա։
6 Եւ իբրև եղեն ծնունդք Հերովդի՝ կա-
քաւեաց դուստրն Հերովդիայ 'ի մէջ
բազմականին, և հաճոյ թուեցաւ Հե-
րովդի։
7 Ուստի և երդմամբ խոստացաւ տալ նմա
զինչ և խնդրեսցէ։
8 Եւ նա յառաջագոյն խրատեալ 'ի մօ-
րէ իւրմէ. տուր ինձ ասէ այսր 'ի վերայ
սկտեղ զգլուխն Յովհաննու Մկրտչի։
9 Եւ տրտմեցաւ թագաւորն. բայց վասն
երդմանցն և բազմականացն՝ հրամայեաց
տալ նմա։
10 Եւ առաքեաց գլխատեաց զՅովհաննէս
'ի բանտի։
11 Եւ բերաւ գլուխ նր՟ սկտեղբ՝ և տուաւ
աղջկանն, և տարաւ առ մայր իւր։
12 Եւ մատուցեալ աշակերտքն նր՟՝ բարձին
զմարմինն և թաղեցին, և եկեալ պատ-
մեցին Յիսուսի։
13 Եւ իբրև լուաւ Յիսուս, գնաց անտի նա- ԵԳ.
ւու յանապատ տեղի առանձինն. իբրև

լուան ժողովուրդքն, գնացին զհետ նո-
րա հետի 'ի քաղաքաց անտի:
Եւ իբրեւ ել՝ ետես ժողովուրդ բազում, 14
գթացաւ 'ի նա, եւ բժշկեաց զհիւանդս
նոցա:
Իբրեւ ընդ երեկս եղեւ, մատեան առ 15
նա աշակերտքն եւ ասեն. տեղիս ամա-
պատ է՝ եւ օրս տարաժամեալ, արձա-
կեա զժողովուրդդ, զի երթիցեն շուրջ
'ի շէնսն, գնեսցեն իւրեանց կերակուրս:
Եւ ասէ Յիսուս. ոչ ինչ պիտոյ է դոցա 16
երթալ. դուք տուք դոցա ուտել:
Եւ նոքա ասեն ցնա. ոչ ինչ ունիմք աստ, 17
բայց հինգ նկանակ եւ երկուս ձկունս:
Եւ ասէ ցնոսա. բերէք այսր զայն: 18
Եւ հրամայեաց բազմեցուցանել զժո- 19
ղովուրդսն 'ի վերայ խոտոյ. եւ առեալ
զհինգ նկանակն եւ զերկուս ձկունսն՝
հայեցաւ յերկինս, օրհնեաց եւ եբեկ՝
եւ ետ ցաշակերտսն զնկանակսն, եւ աշա-
կերտքն ժողովրդոցն:
Կերան ամենեքեան եւ յագեցան, եւ բար- 20
ձին զնշխարս կոտորոցն երկոտասան սա-
կառի լի:
Եւ որք կերանն՝ էին արք իբրեւ հինգ 21
հազար. թող զկանայս եւ զմանկտի:
ԵԴ. Եւ ստիպեաց վաղվաղակի զաշակերտսն 22
մտանել 'ի նաւ՝ եւ յառաջել յայնկոյս,

մինչ ինքն զժողովուրդսն արձակեսցէ։
23 Եւ իբրև արձակեաց զժողովուրդսն,
ել 'ի լեառն առանձինն կալ յաղօթս.
և իբրև ընդ երեկս եղև, անդ էր միայն։
24 Եւ նաւն մեկնեալ էր 'ի ցամաքէն բա-
զում ասպարիսօք ծփեալ յալեացն.
քանզի ընդդէմ էր հողմն։
25 Եւ 'ի չորրորդում պահու գիշերոյն եկն
առ նոսա Յս գնալով 'ի վերայ ծովուն։
26 Իբրև տեսին զնա աշակերտքն զի գնայր
'ի վերայ ծովուն՝ խռովեցան, և ասեն
թէ առ աչօք ինչ իցէ. և առ ահին աղա-
ղակեցին։
27 Եւ վաղվաղակի խօսեցաւ ընդ նոսա
Յս և ասէ. քաջալերեցարուք ես եմ
մի՛ երկնչիք։
28 Պատասխանի ետ նմա Պետրոս և ասէ.
տէր՝ եթէ դու ես, հրամայեա ինձ գալ
առ քեզ 'ի վերայ ջրոցս։
29 Եւ նա ասէ, եկ. և իջեալ 'ի նաւէն
Պետրոս՝ գնաց 'ի վերայ ջրոցն, և եկն
առ Յիսուս։
30 Եւ տեսեալ զհողմն սաստիկ՝ երկեաւ.
և իբրև սկսաւ ընկղմիլ՝ աղաղակեաց և
ասէ. տէր փրկեա զիս։
31 Եւ վաղվաղակի Յիսուս ձգեաց զձեռն
իւր՝ կալաւ զնա և ասէ. թերահաւատ՝
ընդէ՞ր երկմտեցեր։

Եւ իբրև ելին 'ի նաւն՝ հանդարտեաց 32
հողմն։
Եւ որ 'ի նաւին էին՝ մատեան երկիր 33
պագին նմա և ասեն. արդարև որդի
Աստուծոյ ես դու։
Եւ անցեալ եկին 'ի ցամաք 'ի Գեննե- 34
սարեթ։
Եւ իբրև ծանեան զնա արք տեղւոյն 35
այնորիկ, առաքեցին ընդ ամ գաւառն՝ և
ածին առ նա զամենայն հիւանդս։
Եւ աղաչէին զնա, զի գոնէ միայն 'ի 36
քղանցս հանդերձի նորա մերձեսցին. և
որ միանգամ մերձեցանն՝ փրկեցան։

ԳԼ. ԺԵ

ԵՆ Յայնժամ մատեան առ Յս՝ որ յԵ՜մէ 1
Փարիսեցիքն և դպիրք'ի և ասեն։
Ընդէ՞ր աշակերտքն քո անցանեն զա- 2
ւանդութեամբ ծերոցն. զի ոչ լուանան
զձեռս յորժամ հաց ուտեն։
Նա պատասխանի ետ և ասէ ցնա. իսկ 3
դուք ընդէ՞ր անցանէք զպատուիրանաւն
Աստուծոյ՝ վասն ձերոյ աւանդութեն։
Զի Աստուած ասաց. պատուեա զհայր 4
քո և զմայր։
Եւ որ բամբասէ զհայր կամ զմայր՝ մա- 5
հու վախճանեսցի։
Եւ դուք ասէք. որ ասիցէ ցհայր իւր 6

կամ զմայր իւր, Թէ պատարագ է՝ զոր
յինէն օգտիցիս, և ոչ պատուիցէ զհայր
իւր և զմայր իւր. և խոտէք զբանն Աս-
տուծոյ վասն ձերոյ աւանդութեանն։
7 Կեղծաւորք, բարւոք մարգարէացաւ 'ի
վերայ ձեր Եսայի և ասէ.
8 Ժողովուրդս այս շրթամբք պատուէ
զիս, և սիրտ իւրեանց հեռացեալ մե-
կուսի է յինէն։
9 Զուր պաշտեն զիս, ուսուցանեն վար-
դապետութիւնս՝ զմարդկան պատուիրեալս։
10 Եւ կոչեցեալ առ ինքն զժողովուրդն՝
ասէ ցնոսա. լուարուք և 'ի միտ առէք։
11 Ոչ որ ինչ մտանէ ընդ բերան՝ պղծէ
զմարդ, այլ որ ինչ ելանէ 'ի բերանոյ՝
այն պղծէ զմարդ։
12 Յայնժամ մատուցեալ աշակերտայն նո-
րա ասեն ցնա. գիտե՞ս զի Փարիսեցիքն
իբրև լուան զբանն՝ գայթակղեցին։
13 Նա պատասխանի ետ նոցա՝ և ասէ. ա-
մենայն տունկ զոր ոչ տնկեաց հայր իմ
երկնաւոր, խլեսցի։
14 Թոյլ տուք զնոսա. կոյրք են կուրաց
առաջնորդք. կոյր կուրի յորժամ առաջ-
նորդէ՝ սխալէ, և երկոքին 'ի խորխո-
րատ անկանին։
15 Պատասխանի ետ նմա Պետրոս և ասէ.
մեկնեա մեզ զառակս զայս։

Ասէ Յ՟ս. տակաւին եւ դուք անմիտք էք։ 16
Եւ ոչ իմանայք, եթէ ա՟մ որ մտանէ 17
'ի բերան, յորովայն երթայ եւ արտաքս
ելանէ։
Իսկ որ ելանէ 'ի բերանոյ՝ 'ի սրտէ ան- 18
տի գայ, եւ այն պղծէ զմարդ։
Զի 'ի սրտէ ելանեն խորհուրդք չարք՝ 19
սպանութիւնք, շնութիւնք, պոռնկու-
թիւնք, գողութիւնք, սուտ վկայու-
թիւնք, հայհոյութիւնք։
Այս ա՟մ է՝ որ պղծէ զմարդն, այլ ան- 20
լուայ ձեռօք ուտել՝ ոչ պղծէ զմարդ։
Եւ ելեալ անտի Յ՟ս գնաց 'ի կողմանս 21
Տիւրոսի եւ Սիդոնի։
ԿԶ Եւ ահա կին մի քանանացի 'ի սահմանաց 22
անտի նոցա ելեալ, աղաղակէր եւ ասէր.
ողորմեա ինձ տ՟ր որդի Դաւթի, դուստր
իմ չարաչար այսահարի։
Եւ նա ոչ ետ նմա պատասխանի. եւ մա- 23
տուցեալ աշակերտքն նորա՝ աղաչէին
զնա եւ ասէին. արձակեա զնա զի աղա-
ղակէ զհետ մեր։
Նա պատասխանի ետ եւ ասէ. ոչ ուրեք 24
առաքեցայ՝ եթէ ոչ առ ոչխարս կորու-
սեալս տանն Իսրայէլի։
Եւ նա մատուցեալ երկիր պագանէր նմա 25
եւ ասէր. տէր՝ օգնեա ինձ։
Պատասխանի ետ նմա եւ ասէ. ոչ է բար- 26

ւոք առնուլ զհաց մանկանց և արկա-
նել շանց։
27 Եւ նա ասէ. այո տէր, քանզի և շունք
կերակրին՚ի փշրանաց անկելոց՚ի սեղա-
նոյ տեառն իւրեանց։
28 Յայնժամ պատասխանի ետ նմա Յ̃ս և
ասէ. ո՛վ կին դու՝ մեծ են հաւատք քո,
եղիցի քեզ որպէս և կամիս. և բժշկե-
ցաւ դուստր նորա ՚ի նմին ժամու։
29 Եւ գնացեալ անտի Յիսուսի, եկն ՚ի ծով ԵԷ
եզրն Գալիլեացւոց, և ելեալ ՚ի լեառն՝
նստէր անդ։
30 Մատեան առ նա ժողովուրդք բ̃մք՝ որ
ունէին ընդ իւրեանս՝ կաղս, կոյրս, հա-
մերս, միակողմանիս և այլս բ̃մս. և ըն-
կեցին զն̃ս առ ոտս Ն̃ր և բժշկեաց զն̃ս։
31 Մինչև զարմանալ ժողովրդոցն՝ որ տե-
սանէին զի համերքն խօսէին՝ կաղք
գնային՝ միակողմանիք բժշկէին՝ կոյրք
տեսանէին, և փառաւոր առնէին զԱս-
տուած Իսրայելի։
32 Եւ կոչեցեալ առ ինքն Յ̃սի զաշակերտսն՝
ասէ. գթամ ՚ի ժողովուրդդ, զի արդ
երեք աւուրք են զի կան առ իս, և ոչ
ունին զինչ ուտիցեն. և արձակել ըզ-
դոսա նօթիս՝ չկամիմ, գուցէ նքթիցեն
զճանապարհայն։
33 Ասեն ցնա աշակերտքն. իսկ արդ մեզ

յանապատի սաստ ուստի՞ իցէ այնչափ
հաց՝ մինչև յագեցուցանել զայսչափ ժո֊
ղովուրդ։
Եւ ասէ ցնս Յս. քանի՞ նկանակ ունիք. 34
և նոքա ասեն. եօթն, և սակաւ ձկունս։
Եւ հրամայեաց ժողովրդեանն բազմել 35
'ի վերայ գետնոյ։
Եւ առեալ զեօթն նկանակն և զձկունսն՝ 36
գոհացաւ և եբեկ և ետ ցաշակերտսն,
և նոքա ժողովրդեանն։
Կերան ամենեքեան և յագեցան, և բար֊ 37
ձին զնշխարս կոտորոցն՝ եօթն զամ֊
բիւղ լի։
Եւ որք կերանն՝ էին արք իբրև չորք հա֊ 38
զարք, թող զկանայս և զմանկտի։
Իբրև արձակեաց զժողովուրդսն, ել 'ի 39
նաւ և եկն 'ի սահմանս Մագդաղեայ։

ԳԼ. ԺԶ

Եւ մատուցեալ Փարիսեցիքն և Սա֊ 1
դուկեցիք փորձելով խնդրէին 'ի նմանէ՝
նշան յերկնից ցուցանել նոցա։
Նա պատասխանի ետ և ասէ ցնոսա. 2
(յորժամ երեկոյ լինի՝ ասէք, պարզ լի֊
նիցի զի կարմրացեալ է երկին։
Եւ առաւօտու՝ այսօր մրրիկ, զի շառա֊ 3
գունի տրտմութեամբ երկին. արդ զե֊
րեսս երկնի կարէք քննել, իսկ զնշան

ժամանակիս ոչ կարէք գիտել)։
4 *Ազգ չար և շնացող՝ նշան խնդրէ, և*
նշան մի՛ տացի նմա բայց նշանն Յովնա-
նու մարգարէի. և եթող զնոսա և գնաց։
5 *Գնացին և աշակերտքն յայնկոյս՝ և մո-*
ռացան առնուլ հաց։
6 *Ասէ ցնոսա Յս. տեսէք և զգոյշ լերուք 'ի*
խմորոյ Սադուկեցւոցն և Փարիսեցւոցն։
7 *Նոքա խորհէին ընդ միմեանս և ասէին*
թէ հաց ոչ բարձաք։
8 *Գիտաց Յս և ասէ. զի՞ խորհիք 'ի միտս*
ձեր թերահաւատք՝ եթէ հաց ոչ ունիք։
9 *Տակաւին չիմանայք և ոչ յիշէք զհինգ*
նկանակն 'ի հինգ հազարսն, և քանի՛
սակառի բարձիք։
10 *Եւ ոչ զեօթն նկանակն 'ի չորս հա-*
զարսն, և քանի՛ զամբիւղս բարձիք։
11 *Արդ զիա՞րդ ոչ իմանայք եթէ ոչ վասն*
հացի ասացի ձեզ՝ զգոյշ լինել 'ի խմորոյ
Սադուկեցւոց և Փարիսեցւոցն։
12 *Յայնժամ 'ի միտ աւին թէ ոչ ասաց*
զգուշանալ 'ի խմորոյ, այլ յաղանդոյ
Փարիսեցւոցն և Սադուկեցւոց։
13 *Եւ եկեալ Յս 'ի կողմանս Փիլիպպեայ* ՁԿ
Կեսարեայն, հարցանէր ցաշակերտսն
և ասէր. զո՞ ոք ասեն զինէն մարդիկ
թէ իցէ որդի մարդոյ։
14 *Եւ նոքա ասեն. ոմն զՅովհաննէս Մկ-*

կըրտիչ, և այլք զԵղիա, և կէսք զԵրե-
միա, կամ զմի ոք 'ի մարգարէից։
Ասէ ցնոսա. իսկ դուք զո՞ ասէք զինէն 15
թէ իցեմ։
Պատասխանի ետ Սիմօն Պետրոս և ա- 16
սէ. դու ես Քս̃ն որդի Ա̃յ կենդանւոյ։
Պատասխանի ետ Յիսուս և ասէ ցնա. 17
Երանի՜ քեզ Սիմօն որդի Յովնանու, զի
մարմին և արիւն ոչ յայտնեաց քեզ՝ այլ
Հայր իմ որ յերկինս է։
Եւ ես քեզ ասեմ՝ զի դու ես վէմ, և 'ի 18
վերայ այդր վիմի շինեցից զեկեղեցի իմ,
և դրունք դժոխոց զնա մի՛ յաղթահա-
րեսցեն։
Եւ տաց քեզ փականս արքայութեան 19
երկնից. և զոր միանգամ կապեսցես յեր-
կրի, եղիցի կապեալ յերկինս. և զոր
արձակեսցես յերկրի, եղիցի արձակեալ
յերկինս։
Յայնժամ սաստեաց աշակերտացն զի մի՛ 20
ումեք ասիցեն թէ նա է Քրիստոսն։
Յայնմ հետէ սկսաւ Յիսուս ցուցանել 21
աշակերտացն թէ պարտ է նմա երթալ
յԵ̃ղէմ. և թէ բազում չարչարանս չար-
չարիլ 'ի քահանայապետից և 'ի դպրաց
և 'ի ծերոց ժողովրդեանն՝ և սպանանիլ
և յերիր աւուր յառնել։
Եւ առեալ զնա մեկուսի Պետրոսի, 22

սկսաւ կագել ընդ նմա եւ ասել. քաւ
լիցի քեզ տէր, մի՛ եղիցի քեզ այդ։
23 Եւ նա դարձեալ 'ի Պետրոս՝ ասէ. երթ
յետս իմ սատանայ, գայթակղութիւն
իմ ես. զի ոչ խորհիս դու զԱստուծոյն
այլ զմարդկան։
24 Յայնժամ Յիսուս ասէ ցաշակերտսն
իւր. եթէ ոք կամի զկնի իմ գալ՝ ուրասցի
զանձն, եւ առցէ զխաչ իւր եւ եկեսցէ
զկնի իմ։
25 Զի որ կամիցի զանձն իւր կեցուցանել՝
կորուսցէ զնա. եւ որ կորուսցէ զանձն
իւր վասն իմ՝ գտցէ զնա։
26 Զի՞նչ օգտիցի մարդ թէ զաշխարհս ա-
մենայն շահեսցի, եւ զանձն իւր տու-
ժեսցէ. կամ զի՞նչ տացէ մարդ փրկանս
ընդ անձին իւրոյ։
27 Զի գալոց է որդի մարդոյ փառօք հօր
իւրոյ հանդերձ հրեշտակօք իւրովք. եւ
յայնժամ հատուսցէ իւրաքանչիւր ըստ
գործս իւր։
28 Ամէն ասեմ ձեզ, զի իցեն ոմանք 'ի սո-
ցանէ որ աստ կան, որք ոչ ճաշակես-
ցեն զմահ՝ մինչեւ տեսցեն զորդի մարդոյ
եկեալ արքայութեամբ իւրով։

ԳԼ. ԺԷ

Եւ յետ վեց աւուր առնու ընդ իւր Յի- 1
սուս զՊետրոս և զՅակոբոս և զՅով-
հաննէս զեղբայր նորա, և հանէ զնոսա
'ի լեառն մի բարձր առանձինն:
Եւ այլակերպեցաւ առաջի նոցա. և լու- 2
սաւորեցան երեսք նորա իբրև զարե-
գակն, և հանդերձք նորա եղեն սպիտակ
իբրև զլոյս:
Եւ ահա երևեցան նոցա Մովսէս և 3
Եղիա որ խօսէին ընդ նմա:
Պատասխանի ետ Պետրոս և ասէ ցՅս. 4
Տէր՝ բարւոք է մեզ աստ լինել. եթէ
կամիս՝ արասցուք երիս տաղաւարս, մի
քեզ և մի Մովսեսի և մի Եղիայի:
Եւ մինչ դեռ նա խօսէր, ահա ամպ լու- 5
սաւոր հովանի եղև 'ի վերայ նոցա. ձայն
եղև յամպոյն և ասէ. դա է որդի իմ սիրե-
լի ընդ որ հաճեցայ, դմա լուարուք:
Իբրև լուան աշակերտքն, անկան 'ի վե- 6
րայ երեսաց իւրեանց և երկեան յոյժ:
Եւ մատուցեալ Յիսուս բուռն եհար զնո- 7
ցանէ և ասէ. յոտն կացէք և մի երկնչիք:
Ամբարձին զաչս իւրեանց և ոչ զոք տե- 8
սին՝ բայց միայն զՅիսուս:
Եւ մինչ դեռ իջանէին 'ի լեռնէ անտի, 9
պատուիրեաց նոցա Յիսուս՝ և ասէ. մի

ումեք ասիցէք զտեսիլդ՝ մինչեւ որդի
մարդոյ 'ի մեռելոց յարիցէ։
10 Հարցին ցնա աշակերտքն եւ ասեն.
զիա՞րդ դպիրքն ասեն եթէ Եղիայի նախ
պարտ է գալ։
11 Պատասխանի ետ Յիսուս եւ ասէ ցնո-
սա. Եղիա գայ եւ հաստատեսցէ զա̃մ։
12 Այլ ասեմ ձեզ՝ զի Եղիա եկեալ իսկ է
եւ ոչ ծանեան զնա. այլ արարին ընդ նա
զոր ինչ կամեցան. նոյնպէս եւ որդի մար-
դոյ չարչարելոց է 'ի նոցանէ։
13 Յայնժամ 'ի միտ առին աշակերտքն թէ
վասն Յովհաննու Մկրտչի ասաց ցնոսա։
14 Եւ իբրեւ եկին 'ի ժողովուրդն, մատեաւ ՉԲ
այր մի՝ 'ի ծունր իջանէր եւ ասէր. տէ՛ր
ողորմեա որդւոյ իմում, զի լուսնոտի
եւ չարաչար հիւանդանայ. բազում ան-
գամ անկանի 'ի հուր՝ եւ երբեք 'ի ջուր։
15 Եւ մատուցի զնա աշակերտացն քոց եւ
ոչ կարացին բժշկել։
16 Պատասխանի ետ Յիսուս եւ ասէ. ով
ազգ անհաւատ եւ թիւր, մինչեւ ցե՞րբ
իցեմ ընդ ձեզ՝ մինչեւ յե՞րբ անսայցեմ
ձեզ. ած զնա առ իս։
17 Եւ սաստեաց 'ի նա Յիսուս եւ ել 'ի նմա-
նէ դեւն, եւ բժշկեցաւ մանուկն 'ի ժամէն
յայնմանէ։
18 Յայնժամ մատեան աշակերտքն առան-

ձինն և ասեն ցՅիսուս. մեք ընդէր ոչ
կարացաք հանել զնա:
Եւ նա ասէ ցնոսա. վասն թերահաւա- 19
տութեան ձերոյ. ամէն ասեմ ձեզ՝ եթէ
ունիցիք հաւատս քան զհատ մանանխոյ,
ասասջիք լերինս այսմիկ՝ փոխեաց աստի
անդր, և փոխեսցի. և ոչ ինչ անհնարին
լինիցի ձեզ:
Բայց այս ազգ ոչ ելանէ եթէ ոչ աղօ- 20
թիւք և պահովք:
ՁԳ. Եւ մինչ դեռ շրջէին նոքա ՚ի Գալիլեա՝ 21
ասէ ցնոսա Յիսուս. մատնելոց է որդի
մարդոյ ՚ի ձեռս մարդկան:
Եւ սպանցեն զնա և յերիր աւուր յա- 22
րիցէ. և տրտմեցան յոյժ:
Իբրև եկին նոքա ՚ի Կափառնաում, մա- 23
տեան որք զերկդրամեանն պահանջէին՝
առ Պետրոս, և ասեն. վարդապետն ձեր
ո՞չ տայ զերկդրամեանն. և ասէ՝ այո:
Եւ իբրև եմուտ ՚ի տուն՝ յառաջեաց 24
քան զնա Յիսուս և ասէ. զիա՞րդ թուի
քեզ Սիմոն. թագաւորք ազգաց յումմէ՞
առնուն զհարկս կամ զհաս, յորդւո՞ց իւ-
րեանց թէ յօտարաց:
Եւ իբրև ասաց թէ յօտարաց, ասէ ցնա 25
Յիսուս. ապա ուրեմն ազատ են որդիքն:
Բայց զի մի՛ գայթակղեցուսցուք զնոսա, 26
երթ ՚ի ծով և ընկեա կարթ, և զա-

ռաջին ձուկն որ ելանիցէ՝ առ և բաց զբե-
րան նորա, և գտանիցես սատեր. և զայն
առեալ տացես նոցա ընդ իմ և ընդ քո։

ԳԼ. ԺԸ

1 Յայնմ աւուր մատեան աշակերտքն առ
Յիսուս և ասեն. ո՞վ իցէ 'ի մէնջ մեծ
յարքայութեան երկնից։
2 Եւ կոչեաց առ ինքն Յիսուս մանուկ
մի, կացոյց զնա 'ի մէջ նոցա։
3 Եւ ասէ. ամէն ասեմ ձեզ, եթէ ոչ
դարձջիք և եղիջիք իբրև զմանկտի, ոչ
մտանիցէք յարքայութիւն երկնից։
4 Արդ որ խոնարհեցուցանէ զանձն իբրև
զմանուկս զայս, նա է մեծ յարքայու-
թեան երկնից։
5 Եւ որ ոք ընկալցի մանուկ մի այսպիսի
յանուն իմ, զիս ընդունի։
6 Եւ որ ոք գայթակղեցուսցէ զմի 'ի փո-
քրկանցս յայսցանէ յիս հաւատացե-
լոց, լաւ է նմա եթէ կախիցի երկան ի-
շոյ ընդ պարանոց նորա և ընկղմեսցի 'ի
խորս ծովու։
7 Վայ աշխարհի 'ի գայթակղութեանց,
հարկ է գալ գայթակղութեանց. բայց
վայ մարդոյն այնմիկ յոյր ձեռն գայցէ
գայթակղութիւն։
8 Եթէ ձեռն քո կամ ոտն գայթակղե-

ցուցանէ զքեզ, հատ զնա և ընկեա 'ի
քէն. լաւ լիցի քեզ միաձեռանի կամ կաղ
մտանել 'ի կեանս, քան թէ երկուս
ձեռս և երկուս ոտս ունել, և անկա-
նել 'ի հուրն յաւիտենական։

Եւ եթէ ակն քո գայթակղեցուցանէ 9
զքեզ, խլեա զնա և ընկեա 'ի քէն. լաւ
լիցի քեզ միականի մտանել 'ի կեանս,
քան երկուս աչս ունել և անկանել 'ի
գեհենն հրոյն։

ԶԴ Զգոյշ լերուք՝ մի արհամարհիցէք զմի 10
'ի փոքրկանցս յայսցանէ. ասեմ ձեզ, զի
հրեշտակք նոցա յերկինս հանապազ տե-
սանեն զերեսս հօր իմոյ որ յերկինս է։

Զի եկն որդի մարդոյ կեցուցանել ըզ- 11
կորուսեալն։

Զինչ թուի ձեզ, եթէ լինիցի մար- 12
դոյ հարիւր ոչխար և մոլորիցի մի 'ի նո-
ցանէ, ոչ թողուցու զիննսուն և զինն
ոչխարն 'ի լերինս, և երթիցէ խնդրիցէ
զմոլորեալն։

Եւ եթէ լինիցի գտանել զնա, ամէն ա- 13
սեմ ձեզ զի ուրախ լինի 'ի վերայ նորա
առաւել՝ քան 'ի վերայ իննսուն և իննսուն-
ցըն, որ չիցեն մոլորեալ։

Այսպէս ոչ են կամք առաջի հօր իմոյ 14
որ յերկինս է՝ եթէ կորիցէ մի 'ի փոքր-
կանցս յայսցանէ։

15 Եթէ մեղիցէ քեզ եղբայր քո, երթ յան֊
դիմանեա զնա յորժամ դու և նա միայն
իցէք. եթէ լուիցէ քեզ, շահեցար զեղ֊
բայր քո։
16 Ապա թէ ոչ լուիցէ քեզ, առ ընդ քեզ
միւս ևս կամ երկուս, զի 'ի բերանոյ
երկուց և երից վկայից հաստատեսցի
ամենայն բան։
17 Իսկ եթէ նոցա ոչ լուիցէ, ասասջիր յե֊
կեղեցւոջ. ապա թէ և եկեղեցւոյն ոչ
լուիցէ, եղիցի քեզ իբրև զհեթանոսն և
զմաքսաւոր։
18 Ամէն ասեմ ձեզ, զոր կապիցէք յեր֊
կրի՝ եղիցի կապեալ յերկինս, և զոր
արձակիցէք յերկրի՝ եղիցի արձակեալ
յերկինս։
19 Դարձեալ ասեմ ձեզ. եթէ երկու 'ի
ձէնջ միաբանիցեն յերկրի վասն ամե֊
նայն իրաց, զի՛նչ և խնդրեսցեն՝ եղիցի
նոցա 'ի հօրէ իմմէ որ յերկինսն է։
20 Զի ուր իցեն երկու կամ երեք ժողովեալ
յանուն իմ, անդ եմ ես 'ի մէջ նոցա։
21 Յայնժամ մատեաւ առ նա Պետրոս և
ասէ. տէր՝ քանի՞ցս անգամ եթէ մեղի֊
ցէ ինձ եղբայր իմ, և թողից նմա. մին֊
չև ցեօ՞թն անգամ։
22 Ասէ ցնա Յիսուս. ոչ ասեմ քեզ թէ
մինչև ցեօթն անգամ, այլ մինչև յեօ֊

թանասնեկին եօթն։
Վասն այսորիկ նմանեցաւ արքայութիւն 23
երկնից առն թագաւորի, որ կամեցաւ
համար առնուլ՚ի մէջ ծառայից իւրոց։
Եւ իբրև սկսաւ առնուլ, մատուցաւ 24
առ նա պարտապան մի բիւր քանքարոյ։
Իբրև ոչ ունէր հատուցանել, հրամայ- 25
եաց՝ զնա վաճառել տէրն նորա, և զկին
նորա և զորդիս և զամենայն որ զինչ և
ունիցի՝ և հատուցանել։
Եւ անկեալ ծառայն երկիր պագանէր 26
նմա և ասէր. երկայնամիտ լեր առ իս՝
և զամենայն հատուցից քեզ։
Գթացեալ տէր ծառային այնորիկ՝ ար- 27
ձակեաց զնա, և զփոխն եթող նմա։
Եւ ելեալ ծառայն այն եգիտ զմի՚ի ծա- 28
ռայակցաց իւրոց, որ պարտէր նմա հա-
րիւր դահեկան. և կալեալ զնա խեղդէր
և ասէր. հատո ինձ զոր պարտիսդ։
Արդ անկեալ ծառայակիցն առ ոտս նո- 29
րա, աղաչէր զնա և ասէր. երկայնամիտ
լեր առ իս և հատուցից քեզ։
Եւ նա ոչ կամէր. այլ չոգաւ արկ զնա 30
՚ի բանտ՝ մինչև հատուսցէ զպարտսն։
Իբրև տեսին ծառայակիցքն որ ինչ ե- 31
ղեն՝ տրտմեցան յոյժ, և եկեալ ցուցին
տեառն իւրեանց զամենայն որ ինչ եղեն։
Յայնժամ կոչեաց զնա տէրն իւր և ա- 32

սէ. ծառայ չար՝ զամենայն զպարտսն
թողի քեզ՝ վասն զի աղաչեցեր զիս։
33 Իսկ արդ ո՞չ էր պարտ եւ քեզ ողորմել
ծառայակցին քում, որպէս եւ ես քեզ
ողորմեցայ։
34 Եւ բարկացեալ տէրն նորա՝ մատնեաց
զնա դահճաց, մինչեւ հատուսցէ զամե-
նայն զպարտսն։
35 Նոյնպէս եւ Հայր իմ որ յերկինս է՝ ա-
րասցէ ձեզ, եթէ ոչ թողուցուք իւրա-
քանչիւր եղբօր իւրում՚ի սրտից ձերոց
զյանցանս նոցա։

ԳԼ. ԺԹ

1 Եւ եղեւ իբրեւ կատարեաց Յիսուս ՁԵ
զբանս զայսոսիկ, փոխեցաւ՚ի Գալիլեէ
եւ եկն ՚ի սահմանս Հրէաստանի յայն-
կոյս Յորդանանու։
2 Եւ գնացին զհետ նորա ժողովուրդք բա-
զումք, եւ բժշկեաց զնոսա անդ։
3 Եւ մատուցեալ առ նա Փարիսեցիքն
փորձէին զնա եւ ասէին, եթէ արժա՞ն
իցէ ումեք արձակել զկին իւր ըստ ա-
մենայն վնասու։
4 Պատասխանի ետ նոցա եւ ասէ. չիցէ՞
ընթերցեալ ձեր՝ թէ որ հաստատեացն՚ի
սկզբանէ՝ արու եւ էգ արար զնս, եւ ասէ։
5 Վն այսորիկ թողցէ այր զհայր եւ զմայր՝

և երթիցէ զհետ կնոջ իւրոյ, և եղիցին
երկոքեան 'ի մարմին մի:
Ապա ուրեմն ոչ են երկու՝ այլ մի մար- 6
մին. արդ զոր Աստուած զուգեաց՝ մարդ
մի՛ մեկնեսցէ:
Ասեն ցնա. իսկ Մովսէս ընդէ՞ր պա- 7
տուիրեաց մեզ տալ թուղթ մեկնելոյ՝
և արձակել:
Ասէ ցնոսա. Մովսէս վասն խստասրտութե̃ 8
ձերոյ հրամայեաց ձեզ արձակել զկանայս
ձեր, այլ 'ի սկզբանէ ոչ եղև այնպէս:
Բայց ասեմ ձեզ, զի ամենայն որ արձա- 9
կեսցէ զկին իւր՝ և ոչ վասն պոռնկութե̃,
և առնիցէ այլ՝ շնայ, և որ զարձակեալն
առնիցէ՝ շնայ:
Ասեն ցնա աշակերտքն իւր. եթէ այդ- 10
պէս ինչ վնաս իցէ ընդ այր և ընդ կին,
լաւ է չամուսնանալ:
Նա ասէ ցնոսա. ոչ ամենեքեան բաւա- 11
կան են այդմ բանի, այլ որոց տուեալ է:
Զի են ներքինիք որ յորովայնէ մօր 12
իւրեանց ծնան այնպէս. և են ներքինիք՝
որ 'ի մարդկանէ եղեն ներքինիք, և են
ներքինիք՝ որ զանձինս իւրեանց արարին
ներքինիս վասն արքայութեան երկնից.
որ կարողն է տանել՝ տարցի:
Յայնժամ մատուցան առ նա մանկտի, զի 13
ձեռն դիցէ 'ի վերայ նց̃ և աղօթս արաս-

ցէ. և աշակերտքն նորա սաստէին նոցա։
14 Ասէ Յիսուս. թո՛յլ տուք մանկտւոյդ և
մի՛ արգելուք զդոսա գալ առ իս, զի այդ-
պիսեաց է արքայութիւն երկնից։
15 Եւ եդեալ ձեռն ՚ի վերայ նոցա՝ գնաց
անտի։
16 Եւ ահա մատուցեալ ոմն առ նա ասէ. ՋՋ
վարդապետ բարի՝ զի՞նչ բարի գործե-
ցից զի ընդունիցիմ զկեանս յաւիտենա-
կանս։
17 Եւ նա ասէ ցնա. զի՞ հարցանես զիս
զբարւոյ, մի է բարի. եթէ կամիս ՚ի
կեանս յաւիտենականս մտանել՝ պա-
հեա զպատուիրանսն։
18 Ասէ ցնա. զո՞րս. ասէ ցնա Յիսուս. զմի՛
սպանաներն և մի՛ շնար և մի՛ գողանար
և մի՛ սուտ վկայեր։
19 Պատուեա զհայր քո և զմայր, և սի-
րեսցես զընկեր քո իբրև զանձն քո։
20 Ասէ ցնա պատանին. զայդ ամենայն
պահեցի ՚ի մանկութենէ իմմէ. արդ ի՞ւ
իւիք պակաս իցեմ։
21 Ասէ ցնա Յիսուս. եթէ կամիս կատա-
րեալ լինել, երթ վաճառեա զինչս քո և
տուր աղքատաց, և ունիցիս գանձս յեր-
կինս, և եկ զկնի իմ։
22 Իբրև լուաւ պատանին զբանն, գնաց
տրտմեալ, զի ունէր ստացուածս բազումս։

Ասէ Յիսուս ցաշակերտսն. ամէն ասեմ 23
ձեզ, զի դժուարաւ մտցէ մեծատունն
յարքայութիւն երկնից:
Դարձեալ ասեմ ձեզ. դիւրին է մալխոյ 24
մտանել ընդ ծակ ասղան, քան մեծա-
տան յարքայութիւն Աստուծոյ մտանել:
Իբրև լուան աշակերտքն՝ զարմացան 25
յոյժ և ասեն. իսկ ո՞ կարիցէ ապրել:
Հայեցաւ 'ի նոսա Յիսուս և ասէ. առ 26
'ի մարդկանէ այդ անկար է, այլ առ յԱս-
տուծոյ ամենայն ինչ զօրաւոր:
Յայնժամ պատասխանի ետ Պետրոս և 27
ասէ ցնա. ահաւասիկ մեք թողաք զամենայն,
և եկաք զկնի քո, արդ զի՞նչ լինիցի մեզ:
Ասէ ցնոսա Յիսուս. ամէն ասեմ ձեզ, 28
զի դուք որ եկիք զկնի իմ, 'ի միւսանգամ
գալստեան՝ յորժամ նստցի որդի մար-
դոյ յաթոռ փառաց իւրոց, նստջիք և
դուք յերկոտասան աթոռ՝ դատել զեր-
կոտասան ազգն Իսրայելի:
Եւ ամենայն որ ոք եթող զտուն կամ 29
զեղբարս կամ զքորս կամ զհայր կամ
զմայր կամ զկին կամ զորդիս կամ զա-
գարակս վասն անուան իմոյ, հարիւրա-
պատիկ առցէ և զկեանսն յաւիտենա-
կանս ժառանգեսցէ:
Բազումք եղիցին առաջինք յետինք՝ և 30
յետինք առաջինք:

Գլ. Ի

1 Քանզի նման է արքայութիւն երկնից
առն տանուտեառն, որ ել ընդ առա-
ւօտս 'ի վարձու ունել մշակս յայգի իւր:
2 Եւ արկ վարձս մշակացն աւուրն դահե-
կան, և առաքեաց զնոսա յայգի իւր:
3 Եւ ելեալ զերրորդ ժամու՝ ետես այլս
զի կային դատարկ 'ի հրապարակս:
4 Ասէ և ցնոսա. երթայք և դուք յայգի
իմ, և որ ինչ արժան իցէ՝ տաց ձեզ:
5 Գնացին և նոքա. և դարձեալ ելեալ զվեց
ժամու և զինն ժամու՝ արար նոյնպէս:
6 Եւ զմետասաներորդ ժամու ելեալ ե-
գիտ այլս զի կային դատարկ, ասէ ցնոսա.
ընդէ՞ր կայք աստ զօրս ցերեկ դատարկ:
7 Ասեն ցնա. զի ոչ ոք կալաւ զմեզ 'ի վար-
ձու. ասէ ցնոսա. երթայք և դուք յայ-
գին, և որ ինչ արժան է՝ առնուցուք:
8 Եւ իբրև երեկոյ եղև՝ ասէ տէր այ-
գւոյն ցգաւառապետ իւր. կոչեա զմշակ-
սըն և տուր նոցա վարձս՝ սկսեալ 'ի յետ-
նոցն մինչև ցառաջինսն:
9 Իբրև եկին որք զմետասաներորդ ժա-
մուն, առին մէն մի դահեկան:
10 Եկեալ և առաջինքն՝ համարէին թէ ա-
ւելի առնուցուն, և առին մէն մի դա-
հեկան և նոքա:

Իբրև առին, տրտնջէին զտանուտեառ- 11
նէն և ասէին,
Թէ գոքա յետինքդ մի ժամ գործեցին, 12
և հաւասարակորդս մեզ արարեր զդոսա, որ
զծանրութիւն աւուրն բարձաք և զտօթ:
՚Նա պատասխանի ետ միում ՚ի նոցանէ 13
և ասէ. ընկեր, չզրկեմ զքեզ, ո՞չ դահե-
կանի միոջ սակ արկեր ընդ իս:
Առ զքոյդ և երթ, եթէ կամիմ յետ- 14
նոյս տալ՝ որպէս և քեզ:
Եթէ չիցէ՞ ինձ իշխանութիւն յիմս առ- 15
նել զինչ և կամիմ. կամ թէ ակն քո չար
է, զի ես առատ եմ:
Այսպէս եղիցին յետինք առաջինք և 16
առաջինք յետինք, զի բազումք են կո-
չեցեալք և սակաւք են ընտրեալք:
Ձէ Իբրև ելանէր Յիսուս յԵրուսաղէմ, առ 17
զերկոտասանսն առանձինն, և ՚ի ճանա-
պարհին ասէ ցնոսա.
Ահաւասիկ ելանեմք յԵրուսաղէմ, և 18
որդի մարդոյ մատնեսցի քահանայապե-
տիցն և դպրաց, և դատապարտեսցեն
զնա ՚ի մահ:
Եւ մատնեսցեն զնա հեթանոսաց՝ այ- 19
պանել և հարկանել և ՚ի խաչ հանել, և
յերիր աւուր յարիցէ:
Յայնժամ մատեաւ առ նա մայր որ- 20
դւոցն Զեբեդեայ որդւովքն իւրովք.

հանդերձ. երկիր պագանէր եւ խնդրէր
ինչ 'ի նմանէ։
21 Եւ նա ասէ ցնա. զի՞նչ կամիս. ասէ
ցնա. ասա զի նստցին սոքա երկու որ-
դիքս իմ, մի ընդ աջմէ քումմէ եւ մի ընդ
ահեկէ յարքայութեան քում։
22 Պատասխանի ետ Յիսուս եւ ասէ. ոչ գի-
տէք զինչ խնդրէք. կարէ՞ք ըմպել զբա-
ժակն զոր ես ըմպելոցն եմ, կամ զմկր-
տութիւնն զոր ես մկրտելոցն եմ մկրտիլ.
ասեն ցնա. կարող եմք։
23 Ասէ ցնոսա Յիսուս. զբաժակն իմ ըմպի-
ցէք, եւ զմկրտութիւնն զոր ես մկրտելոց
եմ՝ մկրտիցիք, բայց նստուցանել ընդ
աջմէ եւ ընդ ահեկէ իմմէ՝ ոչ է իմ տալ,
այլ որոց տուեալ է 'ի Հօրէ իմմէ։
24 Եւ լուեալ տասանցն, բարկացան 'ի վե-
րայ երկուցն եղբարց։
25 Յիսուս կոչեաց զնոսա առ ինքն, եւ ասէ.
գիտէք զի իշխանք ազգաց տիրեն նոցա,
եւ մեծամեծքն իշխեն նոցա։
26 Ոչ այնպէս իցէ եւ 'ի ձերում միջի. այլ
որ կամիցի 'ի ձէնջ մեծ լինել՝ եղիցի ձեր
պաշտօնեայ։
27 Եւ որ կամիցի 'ի ձէնջ առաջին լինել՝ ե-
ղիցի ձեր ծառայ։
28 Որպէս որդի մարդոյ ոչ եկն պաշտօն
առնուլ այլ պաշտել, եւ տալ զանձն

իւր փրկանս փոխանակ բազմաց։
ԷԿ Եւ յելանելն նոցա յԵրիքովէ, գնացին 29
զհետ նորա ժողովուրդք բազումք։
Եւ ահա կոյրք երկու նստէին առ ճա- 30
նապարհաւն. իբրեւ լուան թէ Յիսուս
անցանէ՝ աղաղակեցին և ասեն. ողոր-
մեաց մեզ Յիսուս որդի Դաւթի։
Եւ ամբոխն սաստեաց նոցա զի լռեսցեն. 31
և նոքա եւս առաւել աղաղակէին և ա-
սէին. տէր, ողորմեաց մեզ որդի Դաւթի։
Զտեղի առ Յիսուս, կոչեաց զնոսա և 32
ասէ. զի՞նչ կամիք զի արարից ձեզ։
Ասեն ցնա. տէր, զի բացցին աչք մեր։ 33
Եւ գթացեալ Յիսուս մերձեցաւ յաչս 34
նոցա, և վաղվաղակի տեսին, և գնացին
զհետ նորա։

ԳԼ. ԻԱ.

Իբրեւ մօտ եղեն յԵրուսաղէմ և եկին 1
'ի Բեթփագէ՝ մերձ 'ի լեառն Ձիթե-
նեաց, յայնժամ Յիսուս արձակեաց եր-
կուս յաշակերտացն իւրոց։
Եւ ասէ ցնոսա. երթայք 'ի գեօղդ որ 2
առաջի ձեր է, և անդէն գտանէք էշ կա-
պեալ և յաւանակ ընդ նմին, լուծէք ա-
ծէք ինձ։
Եւ եթէ ոք ասիցէ ինչ ձեզ, ասասջիք 3
եթէ տեառն իւրեանց պիտոյ են. և

վաղվաղակի առաքեսցէ զնոսա։
4 Բայց այս ամենայն եղև զի լցցի բան
մարգարէին որ ասէ.
5 Ասացէք դստեր Սիովնի, ահա թագա-
ւոր քո գայ քեզ հեզ, և հեծեալ յէշ
և յաւանակի իշոյ։
6 Գնացին աշակերտքն և արարին որպէս
հրամայեացն նոցա Յիսուս։
7 Եւ ածին զէշն և զյաւանակն, և ար-
կին զնոքօք ձորձս իւրեանց, և նստաւ
'ի վերայ նոցա։
8 Եւ բազում ժողովուրդք տարածեցին
զհանդերձս իւրեանց 'ի ճանապարհին,
և այլք հատանէին ոստս 'ի ծառոց և
տարածանէին 'ի ճանապարհին։
9 Եւ ժողովուրդքն որ առաջին և զկնի
երթային՝ աղաղակէին և ասէին. օրհ-
նութ̃ի որդւոյ Դաւթի, օրհնեալ որ գայ
յանուն տ̃ն, օրհնութիւն 'ի բարձունս։
10 Եւ 'ի մտանելն նորա յԵէ̃մ՝ դղրդեցաւ
քաղաքն ամենայն, և ասէ, ո՞վ իցէ սա։
11 Եւ ժողովուրդքն ասէին. սա է մարգա-
րէն Յ̃ս որ 'ի Նազարեթէ Գալիլեացւոց։
12 Եւ եմուտ Յիսուս 'ի տաճարն և եհան
արտաքս զամենեսին որ վաճառէինն և
գնէին 'ի տաճարի անդ, և զսեղանս հա-
տավաճառացն կործանեաց և զաթոռս
աղաւնեվաճառացն։

Եւ ասէ ցնոսա. գրեալ է, տուն իմ տուն 13
աղօթից կոչեսցի, և դուք արարէք զդա
այրս աւազակաց:
Եւ մատեան առ նա կոյրք և կաղք 'ի 14
տաճարին և բժշկեաց զնոսա:
Իբրև տեսին քահանայապետքն և դը- 15
պիրք զսքանչելիսն զոր արար, և ըզ-
մանկտին որ աղաղակէին 'ի տաճարին
և ասէին, օրհնութիւն որդւոյ Դաւթի,
բարկացան:
Եւ ասեն ցնա. լսե՞ս զինչ ասեն դոքա. 16
ասէ ցնս Յիսուս. այո, չիցէ՞ ընթերցեալ
ձեր թէ 'ի բերանոյ տղայոց և ստնդիե-
ցաց կատարեցեր զօրհնութիւն:
Եւ թողեալ զնոսա ել արտաքոյ քաղա- 17
քին 'ի Բեթանիա, և անդ ագաւ:
ԻԲ Եւ այգուցն իբրև դարձաւ անդրէն 'ի 18
քաղաքն՝ քաղցեաւ:
Եւ տեսեալ թզենի մի 'ի վերայ ճանա- 19
պարհին՝ եկն 'ի նա, և ոչ ինչ եգիտ 'ի
նմա բայց միայն տերև. և ասէ ցնա.
մի՛ այսուհետև 'ի քէն պտուղ եղիցի յա-
ւիտեան. և առժամայն չորացաւ թը-
զենին:
Իբրև տեսին աշակերտքն զարմացան և 20
ասեն, թէ զիա՞րդ վաղվաղակի ցամաքե-
ցաւ թզենին:
Պատասխանի ետ Յս և ասէ ցնոսա. ա- 21

մէն ասեմ ձեզ, եթէ ունիցիք հաւատս
և ոչ երկմտիցէք, ոչ միայն թզենւոյդ առ-
նիցէք, այլ թէպէտ և լերինդ ասիցէք՝
բարձիր և անկիր 'ի ծով, եղիցի։
22 Եւ զամենայն ինչ զոր և խնդրիցէք յա-
ղօթս հաւատովք՝ առնուցուք։
23 Եւ իբրև եկն 'ի տաճարն, մատեան առ
նա մինչդեռ ուսուցանէր, քահանայա-
պետքն և ծերք ժողովրդեանն և ասեն.
որո՞վ իշխանութեամբ առնես զայդ. և ո՞վ
ետ քեզ զիշխանութիւնդ զայդ։
24 Պատասխանի ետ Յիսուս և ասէ ցնոսա.
հարցից և ես զձեզ բան մի, զոր թէ
ասիցէք ինձ, և ես ձեզ ասացից որով
իշխանութեամբ առնեմ զայս։
25 Մկրտութիւնն Յովհաննու ուստի՞ էր,
յերկնի՞ց թէ 'ի մարդկանէ. և նոքա
խորհէին ընդ միտս և ասէին.
26 Եթէ ասեմք յերկնից, ասէ մեզ. իսկ
ընդէ՞ր ոչ հաւատացէք նմա. և եթէ ա-
սեմք 'ի մարդկանէ, երկնչիմք 'ի ժո-
ղովրդենէն, զի ամենեքին զՅովհաննէս
իբրև զմարգարէ ունէին։
27 Պատասխանի ետուն Յիսուսի և ասեն.
ոչ գիտեմք. ասէ ցնոսա և նա. և ոչ ես
ասեմ ձեզ որով իշխանութեամբ առ-
նեմ զայս։
28 Բայց զի՞արդ թուի ձեզ. առն միոջ էին

երկու որդիք, և մատուցեալ առ առա-
ջինն ասէ. որդեակ, երթ այսօր գոր-
ծեա յայգւոջ:
Նա պատասխանի ետ և ասէ. երթամ 29
տէր, և ոչ չոգաւ:
Մատեաւ և առ միւսն, և ասէ նոյն- 30
պէս. Նա պատասխանի ետ և ասէ, ոչ
կամիմ. բայց յետոյ զղջացաւ և չոգաւ
յայգին:
Արդ ո՞ յերկոցունց արար զկամս հօրն. 31
ասեն՝ յետինն. ասէ ցնոսա Յիսուս.
ամէն ասեմ ձեզ, զի մաքսաւորք և պոռ-
նիկք յառաջեսցեն քան զձեզ յարքայու-
թիւն երկնից:
Զի եկն Յովհաննէս ճանապարհաւ ար- 32
դարութեան և ոչ հաւատացէք նմա. և
մաքսաւորք և պոռնիկք հաւատացին
նմա, և դուք տեսէք և ոչ զղջացարուք
յետոյ հաւատալ նմա:
ԻԳ. Ա՛յլ առակ լուարուք. այր մի էր տա- 33
նուտէր, որ տնկեաց այգի և ցանկով
պատեաց զնա, և փորեաց ՚ի նմա հնձան,
և շինեաց աշտարակ. և ետ զնա մշակս,
և գնաց ՚ի տար աշխարհ:
Իբրև մերձեցաւ ժամանակ պտղոյ, ա- 34
ռաքեաց զծառայս իւր առ մշակսն առ-
նուլ զպտուղս նորա:
Եւ կալեալ մշակացն զծառայս նորա, 35

զո՟մն տանջեցին, զո՟մն սպանին, զո՟մն
քարկոծեցին:
36 Դարձեալ առաքեաց այլ ծառայս բ՟զմս
քան զառաջինսն, և արարին ն՟ց նոյն՟պս:
37 Յետոյ առաքեաց առ նոսա զորդի իւր
և ասէ. Թերևս ամաչեսցեն յորդւոյ
ատի իմմէ:
38 Իսկ մշակքն իբրև տեսին զորդին, ա-
սեն ընդ միտս. սա է ժառանգն, եկայք
սպանցուք զսա և կալցուք զժառան-
գութիւն սորա:
39 Եւ առեալ հանին զնա արտաքոյ քան
զայգին և սպանին:
40 Արդ յորժամ եկեսցէ տէր այգւոյն՝
զի՞նչ արասցէ մշակացն այնոցիկ:
41 Ասեն ցնա. զչարսն չարաչար կորուսցէ, և
զայգին տացէ այլոց մշակաց, որք տա-
ցեն նմա զպտուղս 'ի ժամու իւրեանց:
42 Ասէ ցն՟ա Յ՟ս. չիցէ՞ երբէք ընթերցեալ
ձեր 'ի գիրս, զվէմն զոր անարգեցին
շինողքն, նա եղև գլուխ անկեան. 'ի
տ՟նէ եղև այս, և է սքանչելի յաչս մեր:
43 Վասն այսորիկ ասեմ ձեզ, զի բարձցի
'ի ձէնջ արքայութիւնն Աստուծոյ, և
տացի ազգի որ առնիցէ զպտուղս նորա:
44 Եւ որ անկցի 'ի վերայ վիմիս այսորիկ՝
փշրեսցի, և յո՛յր վերայ անկցի՝ հոսես-
ցէ զնա:

Իբրև լուան քահանայապետքն և դպիրք 45
և Փարիսեցիք զառակս նորա, գիտացին
թէ վասն նոցա ասաց:
Եւ խնդրէին զնա ունել, բայց երկեան 46
'ի ժողովրդոցն, քանզի իբրև զմարգա-
րէ ունէին զնա:

Գլ. ԻԲ

ԷԴ Դարձեալ պատասխանի ետ Յիսուս, 1
և ասէ ցնոսա առակօք:
Նմանեցաւ արքայութիւնն երկնից առն 2
թագաւորի որ արար հարսանիս որդւոյ
իւրում:
Եւ առաքեաց զծառայս իւր կոչել ըզ- 3
հրաւիրեալսն 'ի հարսանիս, և ոչ կա-
մեցան գալ:
Դարձեալ առաքեաց այլ ծառայս և ա- 4
սէ. ասացէք հրաւիրելոցն, ահաւասիկ
զճաշ իմ պատրաստեցի. զուարակք իմ և
պարարակք զենեալ են, և ամենայն ինչ
պատրաստ է, եկայք 'ի հարսանիսս:
Եւ նոքա յուլացեալ գնացին՝ ոմն յա- 5
գարակ իւր, և ոմն 'ի վաճառ իւր:
Եւ այլք կալան զծառայս նորա, թշնա- 6
մանեցին և սպանին:
Իսկ թագաւորն իբրև լուաւ՝ բարկա- 7
ցաւ, և առաքեաց զզօրս իւր և սատա-
կեաց զսպանողսն զայնոսիկ, և զքա-

ղաքն նոցա այրեաց։
8 Յայնժամ ասէ ցծառայս իւր. հարսա֊
նիքս պատրաստ են և հրաւիրեալքն
չէին արժանի։
9 Արդ երթայք յանցս ճանապարհաց,
և զորս միանգամ գտանիցէք՝ կոչեցէք ՚ի
հարսանիսս։
10 Եւ ելեալ ծառայքն ՚ի ճանապարհս, ժո֊
ղովեցին զամենեսեան զորս և գտին՝ ըզ֊
չարս և զբարիս, և լցան հարսանիքն
բազմականօք։
11 Եւ մտեալ թագաւորն հայել զբազմա֊
կանօքն, ետես անդ այր մի՝ որ ոչ էր
զգեցեալ հանդերձ հարսանեաց։
12 Եւ ասէ ցնա. ընկեր, զիա՞րդ մտեր
այսր, զի ոչ ունէիր հանդերձ հարսա֊
նեաց. և նա պապանձեցաւ։
13 Յայնժամ ասէ թագաւորն ցպասա֊
ւորսն. կապեցէք զդորա զոտս և զձեռս՝
և հանէք զդա ՚ի խաւարն արտաքին.
անդ եղիցի լալ և կրճել ատամանց։
14 Զի բազումք են կոչեցեալք և սակաւք
են ընտրեալք։
15 Յայնժամ գնացեալ Փարիսեցիքն, ա֊ ԷԵ
ռին խորհուրդ զնմանէ թէ ո՞րպէս դնի֊
ցեն նմա որոգայթ բանիւք։
16 Եւ առաքեն առ նա զաշակերտսն իւ֊
րեանց Հերովդիանոսօքն հանդերձ՝ և

ասեն. վարդապետ, գիտեմք զի ճշմա-
րիտ ես և զճանապարհն Ա՟յ ճշմարտու-
թեամբ ուսուցանես, և ոչ է քեզ փոյթ
զումեքէ, և ոչ հայիս յերեսս մարդոյ:
Արդ ասա մեզ, զիա՞րդ թուի քեզ. 17
պա՞րտ է հարկս տալ կայսեր թէ ոչ:
Գիտաց Յիսուս զխորամանկութի՟ նց՟, 18
և ասէ. զի՞ փորձէք զիս կեղծաւորք:
Ցուցէք ինձ զդահեկան հարկին, և նո- 19
քա մատուցին նմա դահեկան մի:
Եւ ասէ ցնոսա. ո՞յր է պատկերս այս 20
կամ գիր:
Ասեն, կայսեր. յայնժամ ասէ ցնոսա. 21
երթայք տուք զկայսերն՝ կայսեր, և
զԱստուծոյն՝ Աստուծոյ:
Իբրև լուան՝ զարմացան և թողին զնա 22
և գնացին:
Յայնմ աւուր մատեան առ նա Սադու-
կեցիքն որ ասէին՝ թէ չիք յարութիւն. 23
հարցին զնա,
Եւ ասեն. վարդապետ, Մովսէս ասաց. 24
եթէ ոք մեռցի անորդի՝ արասցէ զկին
նորա եղբայր իւր, և յարուսցէ զաւակ
եղբօր իւրում:
Էին առ մեզ եղբարք եօթն. առաջինն 25
արար կին և մեռաւ. և զի ոչ ունէր զա-
ւակ, եթող զկինն իւր եղբօր իւրում:
Նոյնպէս և երկրորդն և երրորդն, 26

մինչև ցեօթներորդն։
27 Յետ ամենեցուն մեռաւ և կինն։
28 Արդ 'ի յարութեան ո՞յր յեօթանցն եղիցի
նա կին, զի ամենեքին կալան զնա կին։
29 Պատասխանի ետ նոցա Յիսուս և ասէ.
մոլորեալք, ոչ գիտէք զգիրս և ոչ զզօրու-
թիւն Աստուծոյ։
30 Զի 'ի յարութեան ոչ կանայս առնեն
և ոչ արանց լինին, այլ են իբրև զհրեշ-
տակս յերկինս։
31 Բայց վասն յարութեան մեռելոց չիցէ՞
ընթերցեալ ձեր զասացեալն ձեզ յԱ՟յ։
32 Ես եմ Աստուած Աբրահամու Աստուած
Իսահակայ և Աստուած Յակոբայ, և չէ
Աստուած Ա՟ծ մեռելոց՝ այլ կենդանեաց։
33 Իբրև լուան ժողովուրդքն՝ զարմանային
ընդ վարդապետութիւն նորա։
34 Իսկ Փարիսեցիքն իբրև լուան եթէ
պապանձեցոյց զՍադուկեցիսն, ժողովե-
ցան 'ի միասին։
35 Եւ եհարց մի ոմն 'ի նոցանէ՝ զնա փոր-
ձելով և ասէ։
36 Վարդապետ, ո՞ր պատուիրան է մեծ յօ-
րէնս։
37 Եւ Յիսուս ասէ ցնա. սիրեսցես զՏ՟ր Ա՟ծ
քո յամենայն սրտէ քումմէ՝ և յամեն
անձնէ քումմէ՝ և յամենայն մտաց քոց։
38 Այս է մեծ և առաջին պատուիրան։

Եւ երկրորդն նման սմին. սիրեսցես 39
զընկեր քո իբրև զանձն քո։
Յայս երկուս պատուիրանս ամենայն օ֊ 40
րէնք և մարգարէք կախեալ կան։
Եւ 'ի ժողովել Փարիսեցւոցն՝ եհարց 41
ցնոսա Յիսուս և ասէ։
Զիա՞րդ թուի ձեզ վասն Քրիստոսի, 42
ո՞յր որդի է. ասեն ցնա. Դաւթի։
Ասէ ցնոսա Յիսուս. իսկ զիա՞րդ Դա֊ 43
ւիթ հոգւովն կոչէ զնա տէր և ասէ.
Ասաց տէր ցտէր իմ, նիստ ընդ աջմէ 44
իմմէ մինչև եդից զթշնամիս քո պա֊
տուանդան ոտից քոց։
Իսկ եթէ Դաւիթ զնա տէր կոչէ՝ զիա՞րդ
որդի նորա իցէ։
Եւ ոչ ոք կարէր տալ նմա պատասխանի 45
բան մի, և ոչ իշխէր ոք յայնմ օրէ հար֊
ցանել զնա և ոչ ինչ։

ԳԼ. ԻԳ

Է.Զ Յայնժամ խօսեցաւ Յիսուս ընդ ժո֊ 1
ղովուրդսն և ընդ աշակերտսն իւր և ասէ։
Յաթոռն Մովսէսի նստան դպիրքն և 2
Փարիսեցիք։
Զամենայն ինչ զոր ասիցեն ձեզ՝ արա֊ 3
րէք և պահեցէք. բայց ըստ գործոցն նո֊
ցա մի՛ առնէք, զի ասեն և ոչ առնեն։
Կապեն բեռինս ծանունս և դժուարա֊ 4

կիրս, և դնեն 'ի վերայ ուսոց մարդկան. և մատամբ իւրեանց ոչ կամին շարժել
զնոսա։
5 Եւ զամենայն զգործս իւրեանց առնեն
'ի ցոյց մարդկան. լայնեն զգրապանակս
իւրեանց, և երկայնեն զքղանցս հան-
դերձից իւրեանց։
6 Սիրեն զյառաջագահս յընթրիս, և զնախաթոռս 'ի ժողովուրդս և զողջոյնս
'ի հրապարակս։
7 Եւ կոչել 'ի մարդկանէ՝ ռաբբի ռաբբի։
8 Բայց դուք մի՛ զոք կոչէք վարդապետ,
զի մի է ձեր ուսուցիչ, և ամենեքին
դուք եղբարք էք։
9 Եւ հայր մի՛ կոչէք ձեզ յերկրի, զի ձեր
մի է հայր որ յերկինսն է։
10 Եւ մի՛ կոչիցիք ուսուցիչք, զի ուսուցիչ
ձեզ Քրիստոս է։
11 Եւ մեծն 'ի ձէնջ եղիցի ձեր սպասաւոր։
12 Որ բարձրացուցանէ զանձն խոնարհես-
ցի, և որ խոնարհեցուցանէ զանձն
բարձրասցի։
13 Վա՛յ ձեզ դպրաց և փարիսեցւոց կեղ-
ծաւորաց, զի փակէք զարքայութիւն
երկնից առաջի մարդկան. դուք ոչ մտա-
նէք, և որոց մտանենն՝ չտայք թոյլ
մտանել։
14 (Վա՛յ ձեզ դպրաց և փարիսեցւոց կեղ-

ծաւորաց, զի ուտէք զտունս այրեաց.
պատճառանօք երկարէք զաղօթս, վասն
զի աւելի դատաստան ընդունիցիք)։
Վա՜յ ձեզ դպրաց և Փարիսեցւոց կեղ- 15
ծաւորաց, զի շրջիք ընդ ծով և ընդ ցա-
մաք՝ առնել եկամուտ մի. և յորժամ լի-
նիցի, առնէք զնա որդի գեհենի կրկին
եւս քան զձեզ։
Վա՜յ ձեզ առաջնորդք կոյրք, զի ասէք՝ 16
որ երդնու 'ի տաճարն՝ չէ ինչ, բայց որ
երդնու յոսկին որ 'ի տաճարին է՝ ար-
ժան է։
Մորոսք և կոյրք, զի՞նչ մեծ է՝ ոսկի՞ն 17
եթէ տաճարն որ սրբէ զոսկին։
Եւ որ երդնու 'ի սեղանն՝ չէ ինչ, բայց 18
որ երդնու 'ի պատարագն որ 'ի վերայ
նորա է՝ արժան է։
Յիմարք և կոյրք, զի՞նչ մեծ է՝ պատա- 19
րագն, եթէ սեղանն որ սրբէ զպա-
տարագն։
Իսկ արդ որ երդուաւ 'ի սեղանն, երդնու 20
'ի նա՝ և յամենայն որ 'ի վերայ նորա է։
Եւ որ երդուաւ 'ի տաճարն, երդնու 'ի 21
նա և 'ի բնակիչն նորա։
Եւ որ երդուաւ յերկինս, երդնու յա- 22
թոռն Ա՟յ՝ և յայն որ նստին 'ի վ՟ր նորա։
Վա՜յ ձեզ դպրաց և Փարիսեցւոց կեղ- 23
ծաւորաց, զի տասանորդէք զանանուխ

և զսամիթ և զչաման, և թողէք զծանր
ծանր օրինացն՝ զդատաստան և զողոր-
մութիւն և զհաւատս. զայս արժան էր
առնել՝ և զայն չթողուլ։
24 Առաջնորդք կոյրք, որ զմժղուկս քա-
մէք և զուղտս կլանէք։
25 Վայ ձեզ դպրաց և Փարիսեցւոց կեղ-
ծաւորաց, զի սրբէք զարտաքին զբաժա-
կին և զսկաւառակին, և՚ի ներքոյ լի են
յափշտակութեամբ և անխառնութ՟բ։
26 Փարիսեցի կոյր, սրբեա նախ զներքին
բաժակին և զսկաւառակին, զի լինիցի
և արտաքինն նոցա սուրբ։
27 Վայ ձեզ դպրաց և Փարիսեցւոց կեղ-
ծաւորաց, զի նման էք գերեզմանաց
բռելոց, որ արտաքոյ երևին գեղեցիկք՝
և՚ի ներքոյ լի են ոսկերօք մեռելոց և
ամենայն պղծութեամբ։
28 Նոյնպէս և դուք արտաքոյ երևիք մարդ-
կան արդարք, և՚ի ներքոյ լի էք կեղ-
ծաւորութեամբ և անօրէնութեամբ։
29 Վայ ձեզ դպրաց և Փարիսեցւոց կեղ-
ծաւորաց, զի շինէք զշիրիմս մարգա-
րէից և զարդարէք զգերեզմանս ար-
դարոց։
30 Եւ ասէք. եթէ էաք յաւուրս հարցն
մերոց, ոչ հաղորդէաք արեան մարգա-
րէիցն։

Ապա ուրեմն վկայէք զանձանց՝ եթէ 31
որդիք էք այնոցիկ որ կոտորեցին զմար-
գարէսն։
Եւ դուք լցէք զչափ հարցն ձերոց։ 32
Օձք՝ ծնունդք իժից, զիա՞րդ փախնու- 33
ցուք 'ի դատաստանէ գեհենին։
Վասն այդորիկ ահաւասիկ ես առաքեմ 34
առ ձեզ մարգարէս և իմաստունս և
դպիրս, և 'ի նոցանէ սպանանիցէք և 'ի
խաչ հանիցէք, և 'ի նոցանէ տանջիցէք
'ի ժողովուրդս ձեր, և հալածիցէք 'ի
քաղաքէ 'ի քաղաք։
Որպէս զի եկեսցէ 'ի վերայ ձեր ամենայն 35
արիւն արդար հեղեալ յերկրի. յարե-
նէն Աբելի արդարոյ մինչև ցարիւնն
Զաքարիայ որդւոյ Բարաքեայ՝ զոր
սպանէք ընդ մէջ տաճարին և սեղանոյ։
Ամէն ասեմ ձեզ, եկեսցէ այն ամենայն 36
'ի վերայ ազգիս այսորիկ։
Երուսաղէմ, Երուսաղէմ, որ կոտորեիր 37
զմարգարէսն և քարկոծ առնեիր զառա-
քեալսն առ քեզ, քանիցս անգամ կա-
մեցայ ժողովել զմանկունս քո՝ զոր օրի-
նակ ժողովէ հաւ զձագս իւր ընդ թե-
ւովք, և ոչ կամեցարուք։
Ահա թողեալ լիցի ձեզ տունդ ձեր ա- 38
ւերակ։
Բայց ասեմ ձեզ թէ ոչ ևս տեսանի- 39

ցէք զիս յայսմ հետէ, մինչև ասիցէք
օրհնեալ եկեալն յանուն տեառն:

ԳԼ. ԻԴ

1 Եւ ելեալ արտաքս Յիսուս 'ի տաճա- Ի·Է·
րէն գնայր. և մատեան աշակերտքն ցու-
ցանել նմա զշինուածս տաճարին:
2 Եւ նա պատասխանի ետ և ասէ ցնոսա.
տեսանէ՞ք զայդ ամենայն. ամէն ասեմ
ձեզ, ոչ մնասցէ այդր քար 'ի քարի վե-
րայ որ ոչ քակտեսցի:
3 Եւ մինչ դեռ նստէր 'ի լերինն Ձիթե-
նեաց, մատեան առ նա աշակերտքն ա-
ռանձինն և ասեն. ասա մեզ, երբ լինի-
ցի այդ, և կամ զի՞նչ նշան իցէ քոյոյ
գալստեանն և վախճանի աշխարհիս:
4 Պատասխանի ետ Յիսուս և ասէ ցնոսա.
զգոյշ լերուք, գուցէ ոք զձեզ խաբիցէ:
5 Զի բազումք գայցեն յանուն իմ, և ա-
սիցեն՝ թէ ես եմ Քրիստոսն. և զբա-
զումս մոլորեցուցանիցեն:
6 Լսելոց էք պատերազմունս և համբաւս
պատերազմաց, զգոյշ լերուք՝ մի խռովես-
ջիք, զի պարտ է լինել այնմ ամենայնի,
այլ չև է կատարած:
7 Յարիցէ ազգ յազգի վերայ, և թագա-
ւորութիւն 'ի թագաւորութեան վերայ.
և եղիցին սովք և սրածութիւնք և սասա-

նութիւնք ՚ի տեղիս տեղիս։
Սակայն և այն ամ սկիզբն է երկանց։ 8
Յայնժամ մատնեսցեն զձեզ ՚ի նեղու- 9
թիւնս, և սպանանիցեն զձեզ. և եղիջիք
ատեցեալք յամ ազգաց վն անուան իմոյ։
Եւ յայնժամ գայթակղեսցին բազումք, 10
և զմիմեանս մատնեսցեն և ատեսցեն
զմիմեանս։
Եւ բազում սուտ մարգարէք յարիցեն, 11
և զբազումս մոլորեցուսցեն։
Եւ վասն բազմանալոյ անօրէնութեանն, 12
ցամաքեսցի սէր բազմաց։
Բայց որ համբերեսցէ ՚ի սպառ, նա 13
կեցցէ։
Եւ քարոզեսցի աւետարանս արքայութեան 14
ընդ ամ տիեզերս՝ ՚ի վկայութիւն ամ հե-
թանոսաց, և ապա եկեսցէ կատարած։
Արդ յորժամ տեսանիցէք զպղծութիւն 15
աւերածոյն, որ ասացեալն է ՚ի ձեռն
Դանիէլի մարգարէի. զի կայցէ ՚ի տեղ-
ւոջն սրբութեան, որ ընթեռնուն՝ ՚ի միտ
առցէ։
Յայնժամ որ ՚ի Հրէաստանի իցեն՝ փա- 16
խիցեն ՚ի լերինս։
Եւ որ ՚ի տանիս կայցէ, մի իջցէ առ- 17
նուլ ինչ ՚ի տանէ իւրմէ։
Եւ որ յանդի իցէ, մի դարձցի յետս 18
առնուլ զձորձս իւր։

19 Բայց վա՜յ իցէ յղեաց և ստնտուաց յա-
ւուրսն յայնոսիկ։
20 Յաղօթս կացէք զի մի՛ լինիցի փախուս-
տըն ձեր ձմերանի, և մի՛ 'ի շաբաթու։
21 Զի եղիցի յայնժամ նեղութիւն մեծ,
որպիսի ոչ եղև 'ի սկզբանէ արարածոց
աշխարհի մինչև ցայժմ, և ոչ այլ լիցի։
22 Եւ եթէ ոչ կարճէին աւուրքն այնոքիկ,
ոչ ապրէր ամենայն մարմին. բայց վասն
ընտրելոցն կարճեսցին աւուրքն այնոքիկ։
23 Յայնժամ թէ ոք ասիցէ ձեզ՝ ահաւա-
սիկ աստ է Քրիստոսն կամ անդ, մի՛
հաւատայցէք։
24 Զի յարիցեն սուտ քրիստոսք և սուտ
մարգարէք, և տացեն նշանս մեծամեծս
և արուեստս, մինչև մոլորեցուցանել
թէ հնար ինչ իցէ և զընտրեալսն։
25 Ահա յառաջագոյն ասացի ձեզ։
26 Արդ եթէ ասիցեն ձեզ, ահաւանիկ յա-
նապատի է, մի՛ ելանիցէք. և թէ ահա
յըշտեմարանս է, մի՛ հաւատայցէք։
27 Զի որպէս փայլակն որ ելանէ յարևե-
լից և երևի մինչև յարևմուտս, այնպէս
եղիցի գալուստն որդւոյ մարդոյ։
28 Զի ուր դէշն իցէ, անդր ժողովեսցին
արծուիք։
29 Վաղվաղակի յետ նեղութեան աւուրցն
այնոցիկ՝ արեգակն խաւարեսցի, և լու-

սին ոչ տացէ զլոյս իւր, և աստեղք անկ-
ցին յերկնից, և զօրութիւնք երկնից
շարժեսցին:

Եւ ապա երևեսցի նշան որդւոյ մար- 30
դոյ յերկինս, և յայնժամ կոծեսցին ա-
մենայն ազգք երկրի. և տեսցեն զորդի
մարդոյ եկեալ 'ի վերայ ամպոց երկնից
զօրութեամբ և փառօք բազմօք:

Եւ առաքեսցէ զհրեշտակս իւր փողով 31
մեծաւ, և ժողովեսցեն զընտրեալս նորա
'ի չորից հողմոց՝ 'ի ծագաց երկնից մին-
չև 'ի ծագս նոցա:

Ի թզենւոյ անտի ուսարուք զառակն, 32
զի յորժամ նորա ոստքն կակղասցին և
տերևն ցցուիցի, գիտէք թէ մերձ է ա-
մառն:

Նոյնպէս և դուք յորժամ տեսանիցէք 33
զայս ամենայն, գիտասջիք թէ մերձ է
'ի դուրս:

Ամէն ասեմ ձեզ, եթէ ոչ անցցէ ազգս 34
այս՝ մինչև այս ամենայն եղիցի:

Երկինք և երկիր անցցեն, և բանք իմ 35
մի անցցեն:

Բայց վասն աւուրն այնորիկ և ժամու 36
ոչ ոք գիտէ՝ ոչ հրեշտակք երկնից և ոչ
որդի, բայց միայն հայր:

Այլ որպէս աւուրքն Նոյի, այնպէս ե- 37
ղիցի գալուստն որդւոյ մարդոյ:

38 Զի որպէս էին յաւուրսն որ յառաջ
քան զջրհեղեղն, ուտէին և ըմպէին, կա-
նայս առնէին և արանց լինէին, մինչև
յօրն յորում եմուտ Նոյ 'ի տապանն։
39 Եւ ոչ գիտացին՝ մինչև եկն ջրհեղեղն
և եբարձ զամենեսին, այնպէս եղիցի և
գալուստն որդւոյ մարդոյ։
40 Յայնժամ թէ իցեն երկու յագարակի՝
մին առցի և միւսն թողցի։
41 Եւ եթէ երկու աղայցեն 'ի մի երկանս,
մին առցի և միւսն թողցի։
42 Արթուն կացէք, զի ոչ գիտէք յորում
ժամու տէրն ձեր գայ։
43 Զայն գիտասջիք եթէ գիտէր տանու-
տէրն յորում պահու գող գայ, սկէր և
ոչ տայր ական հատանել զտան իւրոյ։
44 Վասն այսորիկ և դուք եղերուք պատ-
րաստք, զի յորում ժամու ոչ ակն ունի-
ցիք՝ գայ որդի մարդոյ։
45 Իսկ ո՞վ իցէ հաւատարիմ ծառայ և ի-
մաստուն, զոր կացոյց տէր իւր 'ի վերայ
ծառայից իւրոց՝ տալ նոցա կերակուր 'ի
ժամու։
46 Երանի է ծառային այնմիկ զոր եկեալ
տէրն գտանիցէ արարեալ այնպէս։
47 Ամէն ասեմ ձեզ, զի 'ի վերայ ամենայն
ընչից իւրոց կացուսցէ զնա։
48 Ապա թէ ասիցէ ծառայն չար 'ի սրտի

իւրում, տէր իմ յամէ գալ։
Եւ սկսանիցի հարկանել զծառայակիցս 49
իւր, ուտիցէ և ըմպիցէ ընդ արբեցօղս։
Գայցէ տէր ծառային այնորիկ յաւուր 50
յորում ոչ ակն ունիցի, և 'ի ժամու յո-
րում ոչ գիտիցէ։
Եւ կտրեսցէ զնա ընդ մէջ, և զբաժին 51
նորա ընդ կեղծաւորս դիցէ. անդ եղիցի
լալ և կրճել ատամանց։

ԳԼ. ԻԵ

Յայնժամ նմանեսցի արքայութիւն եր- 1
կնից տասն կուսանաց, որոց առեալ զլապ-
տերս իւրեանց ելին ընդ առաջ փեսային
և հարսին։
Հինգն 'ի նոցանէ յիմարք էին և հինգն 2
իմաստունք։
Յիմարքն առին զլապտերսն, և ձէթ 3
ընդ իւրեանս ոչ բարձին։
Իսկ իմաստունքն առին ձէթ ամանովք 4
ընդ լապտերս իւրեանց։
Եւ 'ի յամել փեսային, նիրհեցին ամե- 5
նեքեան և 'ի քուն մտին։
Եւ 'ի մէջ գիշերի եղև բարբառ, ահա 6
փեսայ գայ՝ ելէք ընդ առաջ նորա։
Յայնժամ յարեան ամենայն կուսանքն՝ 7
և կազմեցին զլապտերս իւրեանց։
Ասեն յիմարքն ցիմաստունսն. տուք 8

մեզ յիւղոյդ ձերմէ, զի ահա շիջանին
լապտերքս մեր։

9 Պատասխանի ետուն իմաստունքն և ա-
սեն, գուցէ ոչ իցէ մեզ և ձեզ բաւական,
այլ երթայք'ի վաճառականս և գնեսջիք
ձեզ։

10 Իբրև նոքա գնացին գնել, եկն փեսայն՝
և պատրաստքն մտին ընդ նմա 'ի հար-
սանիսն և փակեցաւ դուռնն։

11 Յետոյ գան և այլ կուսանքն և ասեն.
տէր տէր, բաց մեզ։

12 Նա պատասխանի ետ և ասէ. ամէն ա-
սեմ ձեզ թէ ոչ գիտեմ զձեզ։

13 Արթուն կացէք զի ոչ գիտէք զօրն և ոչ
զժամն։

14 Որպէս այր մի գնացեալ'ի տար աշխարհ,
կոչեաց զծառայս իւր և ետ նոցա զինչս
իւր։

15 Ումեմն ետ հինգ քանքար՝ և ումեմն
երկուս՝ ումեմն մի, իւրաքանչիւր ըստ
իւրում կարի, և գնաց։

16 Չոգաւ վաղվաղակի որ առ զհինգն՝
գործեաց նոքօք, և շահեցաւ այլ ևս
հինգ։

17 Նոյնպէս և որ զերկուսն, շահեցաւ այլ
ևս երկուս։

18 Եւ որ զմին առ՝ գնաց փորեաց զերկիր,
և թաքոյց զարծաթ տեառն իւրոյ։

Յետ բազում ժամանակի գայ տէր ծա֊ 19
ռայիցն այնոցիկ և առնէ համարս 'ի մէջ
նոցա:
Եւ մատուցեալ որ զհինգ քանքարն առ, 20
մատոյց այլ ևս հինգ քանքար և ասէ.
տէր, հինգ քանքար ետուր ցիս, արդ ա֊
ւասիկ հինգ այլ ևս քանքար 'ի վերայ
շահեցայ:
Ասէ ցնա տէրն իւր. ազնի՛ւ, ծառայ 21
բարի և հաւատարիմ, որովհետև 'ի սա֊
կաւուդ հաւատարիմ ես, 'ի վերայ բազ֊
մաց կացուցից զքեզ. մուտ յուրախու֊
թիւն տեառն քո:
Մատուցեալ և որոյ զերկուս քանքարսն 22
առեալ էր՝ և ասէ. տէր, երկուս քան֊
քարս ետուր ցիս, ահաւասիկ երկուս ևս
այլ քանքարս՝ զոր 'ի վերայ շահեցայ:
Ասէ ցնա տէրն իւր. ազնի՛ւ, ծառայ 23
բարի և հաւատարիմ, որովհետև 'ի սա֊
կաւուդ հաւատարիմ ես, 'ի վերայ բազ֊
մաց կացուցից զքեզ. մուտ յուրախու֊
թիւն տեառն քո:
Մատուցեալ և որոյ զմի քանքարն ա֊ 24
ռեալ էր, և ասէ. տէր, գիտէի զի այր
մի խիստ ես, հնձես զոր ոչ սերմանե֊
ցեր, և ժողովես ուստի ոչ սփռեցեր:
Երկեայ՝ գնացի և թագուցի զքանքարն 25
քո յերկրի, արդ ահաւասիկ քոյդ ցքեզ:

26 Պատասխանի ետ տէրն և ասէ ցնա.
ծառայ չար և վատ, գիտէիր եթէ հնձե-
ձեմ՝ ուստի ոչ սերմանեցի, և ժողովեմ՝
ուստի ոչ սփռեցի։
27 Պարտ էր քեզ արկանել զարծաթդ իմ
'ի սեղանաւորս, և եկեալ ես տոկոսեօք
պահանջէի զիմն։
28 Արդ առէք 'ի դմանէ զքանքարդ, և տուք
այնմ որ ունիցի զտասն քանքարն։
29 Զի ամենայնի որ ունիցի՝ տացի և յա-
ւելցի, և որ ոչն ունիցի՝ և զոր ունիցին
բարձցի 'ի նմանէ։
30 Եւ զծառայդ անպիտան հանէք 'ի խա-
ւարն արտաքին. անդ եղիցի լալ և կրճ-
ճել ատամանց։
31 Եւ յորժամ եկեսցէ որդի մարդոյ փա-
ռօք իւրովք և ամ հրեշտակք ընդ նմա,
յայնժամ նստցի յաթոռ փառաց իւրոց։
32 Եւ ժողովեսցին առաջի նր ամ ազգք,
և մեկնեսցէ զնոսա 'ի միմեանց, որպէս
հովիւ զի մեկնեսցէ զօդիս յայծեաց։
33 Եւ կացուսցէ զօդիսն ընդ աջմէ իւրմէ՝
և զայծիսն 'ի ձախմէ։
34 Յայնժամ ասասցէ թագաւորն ցայնո-
սիկ որ ընդ աջմէն իցեն. եկայք օր-
հնեալք հօր իմոյ, ժառանգեցէք զպատ-
րաստեալ ձեզ զարքայութիւնն 'ի սկզ-
բանէ աշխարհի։

Զի քաղցեայ՝ եւ ետուք ինձ ուտել, 35
ծարաւեցի՝ եւ արբուցէք ինձ, օտար էի՝
եւ ժողովեցէք զիս։
Մերկ՝ եւ զգեցուցէք զիս, հիւանդ էի՝ 36
եւ տեսէք զիս, 'ի բանտի էի՝ եւ եկիք
առ իս։
Յայնժամ պատասխանի տացեն նմա ար- 37
դարքն եւ ասասցեն. տէր, ե՞րբ տեսաք
զքեզ քաղցեալ՝ եւ կերակրեցաք, կամ
ծարաւի՝ եւ արբուցաք։
Ե՞րբ տեսաք զքեզ օտար՝ եւ ժողովե- 38
ցաք, կամ մերկ՝ եւ զգեցուցաք։
Ե՞րբ տեսաք զքեզ հիւանդ՝ կամ 'ի բան- 39
տի, եւ եկաք առ քեզ։
Պատասխանի տացէ թագաւորն եւ ա- 40
սասցէ ցնոսա. ամէն ասեմ ձեզ, որով-
հետեւ արարէք միում յեղբարցս այսո-
ցիկ փոքրկանց՝ ինձ արարէք։
Յայնժամ ասասցէ եւ ցայնոսիկ որ ընդ 41
ահեկէն իցեն. երթայք յինէն անի-
ծեալք 'ի հուրն յաւիտենական, որ
պատրաստեալ է սատանայի եւ հրեշտա-
կաց նորա։
Զի քաղցեայ՝ եւ ոչ ետուք ինձ ուտել, 42
ծարաւեցի՝ եւ ոչ արբուցէք զիս։
Օտար էի՝ եւ ոչ ժողովեցէք զիս, մերկ 43
էի՝ եւ ոչ զգեցուցէք զիս, հիւանդ եւ 'ի
բանտի՝ եւ ոչ տեսէք զիս։

44 Յայնժամ պատասխանի տացեն և նոքա
և ասասցեն. տէր, ե՞րբ տեսաք զքեզ
քաղցեալ՝ կամ ծարաւի կամ օտար կամ
մերկ կամ հիւանդ կամ ՚ի բանտի, և ոչ
պաշտեցաք զքեզ:
45 Յայնժամ պատասխանի տացէ նոցա և
ասասցէ. ամէն ասեմ ձեզ, որովհետև
ոչ արարէք միում ՚ի փոքրկանցս յայս-
ցանէ՝ և ոչ ինձ արարէք:
46 Եւ երթիցեն նոքա ՚ի տանջանս յաւի-
տենականս, և արդարքն ՚ի կեանս յա-
ւիտենականս:

ԳԼ. ԻԶ

1 Եւ եղև իբրև կատարեաց Յիսուս
զամենայն զբանս զայսոսիկ, ասէ ցա-
շակերտսն իւր:
2 Գիտէ՞ք, զի յետ երկուց աւուրց զատիկ
լինի, և որդի մարդոյ մատնի ՚ի խաչ
ելանել: ՎԵՐՋ
3 Յայնժամ ժողովեցան քահանայապետքն
և դպիրքն և ծերք ժողովրդեանն ՚ի սրահ
քահանայապետին՝ որում անուն էր
Կայիափա:
4 Եւ արարին խորհուրդ, զի նենգութե՛
կալցին զՅիսուս և սպանցեն:
5 Բայց ասէին թէ մի՛ ՚ի տօնի աստ՝ զի մի՛
խռովութիւն լինիցի ՚ի ժողովրդեանն:

Իբրեւ եկն Յիսուս 'ի Բեթանիա 'ի տուն 6
Սիմոնի բորոտի,
Մատեաւ առ նա կին մի որ ունէր շիշ 7
իւղոյ ծանրագնի, եւ թափեաց 'ի գլուխ
նորա 'ի բազմականին։
Իբրեւ տեսին աշակերտքն, բարկացան՝ 8
եւ ասեն. ընդէ՞ր է կորուստ այդ իւղոյդ։
Զի մարթ էր վաճառել զդա մեծագնի՝ 9
եւ տալ աղքատաց։
Գիտաց Յիսուս եւ ասէ ցնոսա. զի՞ աշ- 10
խատ առնէք զկինդ, գործ մի բարի գոր-
ծեաց դա յիս։
Յա̃մ ժամ զաղքատս ընդ ձեզ ունիք, 11
բայց զիս ոչ հանապազ ընդ ձեզ ունիք։
Արկանել դորա զիւղդ 'ի մարմին իմ, 12
առ 'ի թաղելոյ զիս նշանակեաց։
Բայց ամէն ասեմ ձեզ, զի ուր եւ քա- 13
րոզեսցի աւետարանս այս ընդ ամենայն
աշխարհ՝ խօսեսցի եւ զոր արար դա՝ 'ի
յիշատակ դորա։
Յայնժամ գնաց մի յերկոտասանիցն՝ 14
անուանեալ Յուդա Սկարիովտացի՝ առ
քահանայապետսն եւ ասէ.
Զի՞նչ կամիք տալ ինձ եւ ես մատնե- 15
ցից զնա ձեզ. եւ նոքա կշռեցին նմա ե-
րեսուն արծաթի։
Եւ յայնմ հետէ խնդրէր պարապ զի 16
մատնեսցէ զնա նոցա։

17 Եւ յառաջնում աւուր բաղարջակերացն
մատեան աշակերտքն առ Յիսուս և ա֊
սեն. ո՞ւր կամիս զի պատրաստեսցուք
քեզ ուտել զպատիկն։
18 Եւ նա ասէ ցնոսա. երթայք'ի քաղաքն
առ այս անուն, և ասացէք ցնա. վար֊
դապետ ասէ, ժամանակ իմ մերձեալ է,
առ քեզ առնեմ զպատիկ աշակերտօքս
հանդերձ։
19 Եւ արարին աշակերտքն որպէս հրա֊
մայեաց նոցա Յիսուս, և պատրաստե֊
ցին զպատիկն։
20 Եւ իբրև երեկոյ եղև՝ կայր բազմեալ
ընդ երկոտասան աշակերտսն։
21 Եւ մինչ դեռ ուտէին նոքա, ասէ. ամէն
ասեմ ձեզ, զի մի ոմն'ի ձէնջ մատնելոց
է զիս։
22 Եւ տրտմեցան յոյժ, սկսան ասել ցնա
իւրաքանչիւր ոք'ի նոցանէ. միթէ ես
իցեմ տէր։
23 Նա պատասխանի ետ և ասէ. որ մխեաց
ընդ իս զձեռն իւր'ի սկաւառակս՝ նա
մատնելոց է զիս։
24 Որդի մարդոյ երթայ՝ որպէս և գրեալ է
վասն նորա, բայց վա՜յ մարդոյն այնմիկ
յոյր ձեռս որդի մարդոյ մատնեսցի. լաւ
էր նմա թէ չէր ծնեալ մարդն այն։
25 Պատասխանի ետ Յուդա՝ որ մատնելոցն

էր զնա՝ և ասէ. միթէ ես իցեմ վար-
դապետ. ասէ ցնա, դու ասացեր։
Եւ մինչ դեռ ուտէին նոքա՝ առ Յ̅ս հաց, 26
օրհնեաց և եբեկ, և ետ աշակերտացն
և ասէ. առէք կերայք՝ այս է մարմին իմ։
Եւ առեալ բաժակ գոհացաւ՝ ետ նոցա 27
և ասէ. արբէք 'ի դմանէ ամենեքին։
Զի այդ է արիւն իմ նորոյ ուխտի, որ 28
'ի վերայ բազմաց հեղանի 'ի թողու-
թիւն մեղաց։
Բայց ասեմ ձեզ, ոչ ևս արբից յայսմ 29
հետէ 'ի բերոյ որթոյ մինչև ցօրն ցայն
յորժամ արբից զդա ընդ ձեզ նոր յար-
քայութեան հօր իմոյ։
Եւ օրհնեցին և ելին 'ի լեառն Ձիթե- 30
նեաց։
Յայնժամ ասէ ցն̅ս Յիսուս. ամենեքին 31
դուք գայթագղելոց էք յինէն յայսմ
գիշերի, զի գրեալ է՝ թէ հարից զհովիւն
և ցրուեսցին ոչխարքն հօտին։
Եւ յետ յառնելոյն իմոյ, յառաջեցից 32
քան զձեզ 'ի Գալիլեա։
Պատասխանի ետ Պետրոս և ասէ ցնա. 33
թէպէտ և ամենեքեան գայթագղես-
ցին 'ի քէն, սակայն ես ոչ գայթագղե-
ցայց։
Ասէ ցնա Յիսուս. ամէն ասեմ քեզ, 34
զի յայսմ գիշերի մինչ չև հաւու խօսեալ

լիցի, երիցս ուրասցիս զիս։
35 Ասէ ցնա Պետրոս. Թէ և մեռանել հա-
սանիցէ ընդ քեզ, զքեզ ոչ ուրացայց.
Նոյնպէս և ամենայն աշակերտքն ասէին։
36 Յայնժամ գայ Յիսուս ընդ նո՟ 'ի գիւղ
մի՝ որում անուն էր Գեթսեմանի, և
ասէ ցնոսա. Նստարուք այդր, մինչև եր-
թայց կայից յաղօթս։
37 Եւ առեալ ընդ իւր զՊետրոս՝ և զեր-
կուս որդիսն Զեբեդեայ, սկսաւ տըրտ-
մել և հոգալ։
38 Յայնժամ ասէ ցնոսա. տրտում է ոգի
իմ մինչև 'ի մահ, կացէք աստ և սկե-
ցէք ընդ իս։
39 Եւ մատուցեալ յառաջ սակաւիկ մի՝
անկաւ 'ի վերայ երեսաց իւրոց, կաց յա-
ղօթս և ասէ. Հայր իմ, եթէ հնար է՝
անցցէ բաժակս այս յինէն. բայց ոչ
որպէս ես կամիմ, այլ որպէս դու։
40 Գայ առ աշակերտսն, և գտանէ զնոսա
'ի քուն, և ասէ ցՊետրոս. ա՛յդպէս ոչ
կարացէք մի ժամ արթուն կալ ընդ իս։
41 Արթուն կացէք և աղօթս արարէք զի
մի՛ անկանիցիք 'ի փորձութիւն. հոգիս
յօժար է, բայց մարմինս տկար։
42 Դարձեալ երկրորդ անգամ չոգաւ՝ եկաց
յաղօթս Յիսուս և ասէ. Հայր իմ, եթէ
հնար իցէ անցանել յինէն բաժակիս

այսմիկ, ապա թէ ոչ՝ արբից զդա, եղի-
ցին կամք քո։
Եւ եկեալ միւսանգամ եգիտ զնոսա ՚ի 43
քուն. զի էին աչք իւրեանց ծանրա-
ցեալք։
Եթող զնոսա և գնաց, կաց յաղօթս 44
երրորդ անգամ, և դարձեալ զնոյն բան
ասաց։
Յայնժամ գայ առ աշակերտսն և ասէ 45
ցնոսա. Ննջեցէք այսուհետև և հանգե-
րուք, զի ահա հասեալ է ժամ և որդի
մարդոյ մատնի ՚ի ձեռս մեղաւորաց։
Արիք երթիցուք աստի, զի ահաւասիկ 46
եհաս որ մատնելոցն է զիս։
Եւ մինչ դեռ նա զայն խօսէր, ահա Յու- 47
դա մի յերկոտասանիցն էկն, և ընդ նմա
ամբոխ բազում սրովք և բրօք ՚ի քահանայա-
պետիցն և ՚ի ծերոց ժողովրդեանն։
Եւ որ մատնելոցն էր զնա, ետ նոցա նը- 48
շան և ասէ. ընդ որում ես համբուրեցից՝
նա է, զնա ունիցիք։
Եւ վաղվաղակի մատուցեալ առ Յիսուս 49
ասէ. ողջ եր վարդապետ. և համբու-
րեաց ընդ նմա։
Եւ Յիսուս ասէ ցնա. ընկեր, վասն ո- 50
րո՞յ եկիր. յայնժամ մատուցեալ արկին
ձեռս ՚ի Յիսուս, և կալան զնա։
Եւ ահա մի ոմն յայնցանէ որ էին ընդ 51

Յիսուսի, ձգեաց զձեռն և եհան զսուր
իւր և եհար զծառայ քահանայապետին,
և՛ի բաց եհան զունկն նորա։
52 Յայնժամ ասէ ցնա Յիսուս. դարձո
զսուր քո՛ի տեղի իւր, զի ամենեքեան որ
սուր առնուցուն՝ սրով անկանիցին։
53 Թէ համարիցիս թէ ոչ կարեմ աղաչել
զՀայր իմ, և հասուցանիցէ ինձ այժմ
այսր՝ աւելի քան զերկոտասան գունդս
հրեշտակաց։
54 Այլ զիա՞րդ լնուցուն գիրք եթէ այսպէս
պարտ է լինել։
55 Յայնժամ ասաց Յիսուս ցամբոխն. ի-
բրև 'ի վերայ աւազակի ելէք սուսերօք
և բրօք՝ ունել զիս. հանապազ առ ձեզ
'ի տաճարին նստէի և ուսուցանէի, և
ոչ կալայք զիս։
56 Այլ այս ամենայն եղև զի լցցին գիրք
մարգարէից. յայնժամ աշակերտքն ա-
մենեքին թողին զնա և փախեան։
57 Իսկ նոցա կալեալ զՅիսուս ածին առ
Կայիափա քահանայապետ՝ ուր դպիրքն
և ծերք ժողովեալ էին։
58 Եւ Պետրոս զհետ նորա երթայր բացա-
գոյն մինչև 'ի սրահ քահանայապետին.
և մտեալ 'ի ներքս նստէր ընդ սպասա-
ւորսն տեսանել զկատարածն։
59 Իսկ քահանայապետքն և ամենայն ա-

տեանն խնդրէին սուտ վկայութիւն զՅի-
սուսէ զի սպանցեն զնա:
Եւ ոչ գտանէին ՚ի բազմաց սուտ վկ- 60
կայից մատուցելոց. յետոյ մատուցեալ
երկու սուտ վկայք,
Ասէին՝ թէ սա ասէր կարող եմ քակել 61
զտաճարն Այ, և զերիս աւուրս շինել:
Եւ յարուցեալ քահանայապետն ասէ 62
ցնա. չտա՞ս ինչ պատասխանի, զի՞նչ
դոքա ամբաստանեն զքէն:
Եւ Յիսուս լուռ կայր. պատասխանի ետ 63
քահանայապետն և ասէ ցնա. երդմնե-
ցուցանեմ զքեզ յաստուած կենդանի,
զի ասասցես մեզ թէ դո՞ւ ես Քրիստոսն
որդի Աստուծոյ:
Ասէ ցնա Յիսուս. դու ասացեր. բայց 64
ասեմ ձեզ, յայսմ հետէ տեսանիցէք
զորդի մարդոյ նստեալ ընդ աջմէ զօրու-
թեանն՝ և եկեալ ընդ ամպս երկնից:
Յայնժամ քահանայապետն պատառեաց 65
զհանդերձս իւր, և ասէ. հայհոյեաց,
զի՞ ևս պիտոյ են մեզ վկայք, ահա արդ
լուայք զհայհոյութիւն նորա:
Զի՞նչ հաճոյ է ձեզ. նոքա պատաս- 66
խանի ետուն և ասեն. մահապարտ է:
Յայնժամ թքին ընդ երեսս նորա, և 67
կռփեցին զնա, և ոմանք ապտակեցին
և ասեն.

68 Մարգարեաց մեզ Քրիստոս, ո՞վ է որ
եհարն զքեզ։
69 Իսկ Պետրոս նստէր արտաքոյ 'ի գաւ֊
թին. մատեաւ առ նա աղախին մի և
ասէ. և դու ընդ Յ͞սի Գալիլեացւոյ էիր։
70 Նա ուրացաւ առաջի ամենեցուն և ա֊
սէ, թէ ոչ գիտեմ զի՛նչ խօսիդ։
71 Եւ իբրև ել նա արտաքս քան զդուռնն՝
ետես զնա այլ կին մի, և ասէ ցայնոսիկ
որ անդն կային. և սա ընդ Յիսուսի
Նազովրեցւոյ էր։
72 Եւ դարձեալ ուրացաւ երդմամբ թէ ոչ
գիտեմ զայրն։
73 Եւ յետ սակաւ միոյ մատուցեալ որք
կայինն անդ, ասեն ցՊետրոս. արդա֊
րև և դու 'ի նոցանէ ես, քանզի և խօսք
քո յայտ առնեն զքեզ։
74 Յայնժամ սկսաւ նզովել և երդնուլ,
թէ ոչ գիտեմ զայրն. և իսկոյն հաւ
խօսեցաւ։
75 Եւ յիշեաց Պետրոս զբանն Յիսուսի զոր
ասաց, թէ մինչ չև հաւու խօսեալ իցէ՝
երիցս ուրասցիս զիս. և ելեալ արտաքս
ելաց դառնապէս։

Գլ. ԻԷ

1 Իբրև այգ եղև, խորհուրդ արարին
ամենայն քահանայապետքն և ծերք ժո֊

ժողովրդեանն վասն Յ՟ի սպանանել զնա:
Կապեցին զնա և առին գնացին. և ե- 2
տուն 'ի ձեռս Պոնտացւոյ Պիղատոսի
դատաւորի:
Յայնժամ տեսեալ Յուդայի որ մատնեաց 3
զնա՝ թէ պարտաւորեցաւ, զղջացաւ և
դարձոյց զարծաթն առ քահանայա-
պետսն և ծերս ժողովրդեանն:
Եւ ասէ. մեղայ, զի մատնեցի զարիւն 4
արդար. և նոքա ասեն. մեզ չէ փոյթ,
դու գիտես:
Եւ ընկէց զարծաթն 'ի տաճարին և 5
գնաց, և չոգաւ խեղդեցաւ:
Իսկ քահանայապետիցն առեալ զար- 6
ծաթն ասեն. ոչ է արժան ընդունել
զայդ 'ի կորբանն, ք՟զի գինք արեան են:
Խորհուրդ առեալ, գնեցին այնու զա- 7
գարակն բրտի 'ի գերեզման օտարաց:
Վասն այնորիկ կոչեցաւ ագարակն այն 8
ագարակ արեան՝ մինչև ցայսօր:
Յայնժամ լցաւ որ ասացաւն 'ի ձեռն 9
Երեմիայ մարգարէին. և առին զերեսուն
արծաթին զգինս վաճառելոյն, զոր ար-
կին յորդւոցն Իսրայէլի:
Եւ ետուն զնա յագարակն բրտի, որպէս 10
հրամայեաց ինձ տէր:
Եւ Յիսուս եկաց առաջի դատաւորին. 11
եհարց ցնա դատաւորն և ասէ. դո՞ւ ես

թգ̄րն Հրէից. և Յս̄ ասէ. դու ասես։
12 Եւ 'ի չարախօսելն նր̄ 'ի քահանայապե-
տիցն և 'ի ծերոց, ոչ ինչ ետ պտսխ̄նի։
13 Յայնժամ ասէ ցնա Պիղատոս. ո՞չ լսես՝
որչափ դոքա հակառակ քո վկայեն։
14 Եւ ոչ ետ նմա պատասխանի և ոչ բան
մի, մինչև զարմանալ դատաւորին յոյժ։
15 Բայց ըստ տօնի սովոր էր դատաւորն
արձակել ժողովրդեանն կապեալ մի՝ զոր
կամէին։
16 Ունէին յայնժամ կապեալ մի նշանա-
ւոր, որում անուն էր Յեսու Բարաբբա։
17 Իբրև ժողովեցան, ասէ ցնոսա Պիղա-
տոս. զո՞ կամիք յերկուց աստի՝ զի արձա-
կեցից ձեզ, զՅեսու՞ Բարաբբա՝ եթէ
զՅիսուս զանուանեալն Քրիստոս։
18 Քանզի գիտէր թէ առ նախանձու
մատնեցին զնա։
19 Եւ մինչ նստէր յատենին, առաքեաց առ
նա կինն իւր և ասէ. չկայ ինչ քո և ար-
դարոյն այնորիկ՝ զի բազում անցք ան-
ցին ընդ իս այսօր յանուրջս վասն նորա։
20 Իսկ քահանայապետքն և ծերք հաւա-
նեցուցին զժողովուրդսն զի խնդրեսցեն
զԲարաբբայն և զՅիսուս կորուսցեն։
21 Պատասխանի ետ դատաւորն և ասէ ցնս̄.
զո՞ կամիք զի արձակեցից ձեզ յերկուց
աստի. և նոքա ասեն, զԲարաբբա։

Ասէ ցնոսա Պիղատոս. իսկ զի՞ արարից 22
զՅիսուս զանուանեալն Քրիստոս։
Ասեն ամենեքեան, խաչեսցի. և նա ա- 23
սէ, զի՞նչ չար արար. և նոքա առաւել
ևս աղաղակէին և ասէին, խաչեսցի։
Եւ տեսեալ Պիղատոսի թէ ոչ ինչ օգ- 24
նէ՝ այլ առաւել խռովութիւն լինի, ա-
ռեալ ջուր՝ լուաց զձեռս առաջի ժողո-
վրդեանն և ասէ. քաւեալ եմ ես յա-
րենէ արդարոյդ այդորիկ, դուք գի-
տասջիք։
Պատասխանի ետ ամենայն ժողովուրդն 25
և ասէ. արիւն դորա ՚ի վերայ մեր և ՚ի
վերայ որդւոց մերոց։
Յայնժամ արձակեաց նոցա զԲարաբ- 26
բայն, և զՅիսուս գան հարեալ՝ ետ ՚ի
ձեռս զի խաչեսցի։
Յայնժամ զինուորք դատաւորին առին 27
զՅիսուս յապարանս, և ժողովեցին ՚ի
վերայ նորա զամենայն զգունդն։
Մերկացուցին զնա, և արկին զնովաւ 28
քղամիդ կարմիր։
Եւ բոլորեալ պսակ ՚ի փշոց՝ եդին ՚ի 29
գլուխ նորա, և եղէգն յաջոյ ձեռին նո-
րա. ՚ի ծունր իջեալ առաջի նորա կատա-
կէին և ասէին. ողջ եր Թագաւոր Հրէից։
Եւ թքեալ ՚ի նա՝ առնուին զեղէգնն և 30
ծեծէին զգլուխ նորա։

31 Եւ յորժամ ծաղրեցին զնա, մերկացու-
ցին 'ի նմանէ զքղամիդն և ագուցին նմա
զիւր հանդերձն, և տարան զնա 'ի խաչ
հանել:
32 Եւ ելեալ արտաքս՝ գտին այր մի Կիւրե-
նացի՝ անուն Սիմոն, զնա կալան պահակ՝
զի բարձցէ զխաչն նորա:
33 Եւ եկեալ 'ի տեղին անուանեալ Գող-
գոթա, որ է տեղի կառափելոյ:
34 Ետուն նմա ըմպել գինի ընդ լեղի խառ-
նեալ. և իբրև ճաշակեաց, ոչ կամէր
ըմպել:
35 Եւ հանեալ զնա 'ի խաչ՝ բաժանեցին
զհանդերձս նորա վիճակաւ, զի լցցի բանն
որ ասացաւ 'ի մարգարէէն. բաժանեցին
զհանդերձս իմ յիւրեանս, և 'ի վերայ
պատմուճանի իմոյ վիճակս արկանէին:
36 Եւ նստեալ պահէին զնա:
37 Եւ եդին 'ի վերայ գլխոյ նորա՝ գրեալ
զվնաս նր̃ թէ այս է Յս̃ թգ̃րն Հրէից:
38 Յայնժամ հանին ը̃ նմա 'ի խաչ երկուս
աւազակս, մի յաջմէ նորա և մի յահեկէ:
39 Եւ որ անցանէինն՝ հայհոյէին զնա,
շարժէին զգլուխս իւրեանց,
40 Եւ ասէին. վա՜հ որ քակէիր զտաճարն
և զերիս աւուրս շինէիր զնա. ապրեցո
զքեզ, թէ որդի ես Այ̃՝ էջ 'ի խաչէդ:
41 Նոյնպէս և քահանայապետքն ծաղրէին

հանդերձ դպրօքն և ծերովք՝ և ասէին.
Զայլս ապրեցոյց՝ զինքն ոչ կարէ ապրե- 42
ցուցանել. եթէ թագաւոր է Իղի՝ իջցէ
այժմ՝ի խաչէդ և հաւատասցուք դմա:
Եթէ յուսացաւ յԱստուած, փրկեսցէ 43
այժմ զդա եթէ կամի զդա. քանզի ասաց
եթէ Աստուծոյ որդի եմ:
Զնոյն և աւազակքն որ խաչեալ էին 44
ընդ նմա, նախատէին զնա:
Եւ ՚ի վեց ժամէ աւուրն խաւար եղև 45
՚ի վր ամենայն երկրի մինչև ցինն ժամ:
Եւ զինն ժամաւն գոչեաց Յիսուս ՚ի 46
ձայն մեծ և ասէ. էլի էլի՝ լամա սաբաք-
թանի. այս ինքն է, Աստուած իմ Աս-
տուած իմ՝ ընդէր թողեր զիս:
Ոմանք յայնցանէ որ անդն կային, իբրև 47
լուան՝ ասէին, զԵղիա կարդայ դա:
Եւ վաղվաղակի ընթացաւ մի ոմն ՚ի նո- 48
ցանէ, առ սպունգ լի քացախով, հարեալ
յեղեգան ետ ըմպել նմա:
Եւ կէսքն ասէին. թող տեսցուք եթէ 49
գա՞յ Եղիա փրկել զդա:
Եւ Յիսուս դարձեալ աղաղակեաց ՚ի 50
ձայն մեծ, և արձակեաց զոգին:
Եւ ահա վարագոյր տաճարին ցելաւ 51
յերկուս՝ ՚ի վերուստ մինչև ՚ի վայր. և
երկիր շարժեցաւ և վէմք պատառե-
ցան:

52 Եւ գերեզմանք բացան, եւ բազում մար-
մինք ննջեցելոց սրբոց յարեան։
53 Եւ ելեալ 'ի գերեզմանաց յետ յարու-
թեանն նորա մտին 'ի քաղաքն սուրբ եւ
երեւեցան բազմաց։
54 Իսկ հարիւրապետն եւ որ ընդ նմա պա-
հէին զՅիսուս, իբրեւ տեսին զշարժումն
եւ զեղեալսն, երկեան յոյժ եւ ասեն.
արդարեւ Աստուծոյ որդի էր սա։
55 Էին անդ կանայք բազումք, կային 'ի հե-
ռաստանէ եւ հայէին, որք եկին զկնի
Յիսուսի 'ի Գալիլէէ պաշտել զնա։
56 Յորս էր Մարիամ Մագդաղենացի, եւ
Մարիամ Յակոբեայ եւ Յովսեայ մայր,
եւ մայր որդւոցն Զեբեդեայ։
57 Եւ իբրեւ երեկոյ եղեւ, եկն այր մի մե-
ծատուն յԱրիմաթեայ՝ որում անուն էր
Յովսէփ, որ եւ աշակերտեցաւ իսկ Յսի։
58 Սա մատուցեալ առ Պիղատոս, խըն-
դրեաց զմարմինն Յիսուսի. յայնժամ
Պիղատոս հրամայեաց տալ զմարմինն։
59 Եւ առեալ զմարմինն Յովսէփ՝ պատեաց
սուրբ կտաւով։
60 Եւ եդ 'ի նոր գերեզմանի զոր փորեաց
'ի վիմի, եւ թաւալեցուցեալ կափա-
րիչ դրան գերեզմանին վէմ մի մեծ՝
գնաց։
61 Անդ էր Մարիամ Մագդաղենացի՝ եւ

միւս Մարիամ, նստէին հանդէպ գե-
րեզմանին :
Եւ 'ի վաղիւ անդր որ է յետ ուրբա- 62
թուն, ժողովեցան քահանայապետքն
և Փարիսեցիքն առ Պիղատոս,
Եւ ասեն. տէր, յիշեցաք զի մոլորե- 63
ցուցիչն այն ասէր մինչ կենդանին էր
թէ յետ երից աւուրց յառնեմ :
Արդ հրամայեա զգուշանալ գերեզմա- 64
նին մինչև ցերիս աւուրս, գուցէ եկեալ
աշակերտքն գիշերի՝ գողանայցեն զնա,
և ասիցեն ժողովրդեանն թէ յարեաւ
'ի մեռելոց. և լինիցի յետին մոլորու-
թիւնն չար քան զառաջինն :
Ասէ ցն՟ա Պիղատոս. ունիք զզօրականն, 65
երթայք զգուշացարուք ո՟պ և գիտէք :
Եւ նոքա երթեալ զգուշացան գերեզ- 66
մանին, և կնքեցին զվէմն հանդերձ զօ-
րականօքն :

ԳԼ. ԻԸ

Եւ յերեկոյի շաբաթուն՝ յորում լու- 1
սանայր միաշաբաթին, եկն Մարիամ
Մագդաղենացի, և միւս Մարիամն՝ տե-
սանել զգերեզմանն :
Եւ ահա շարժումն մեծ եղև, զի հրեշ- 2
տակ տ՟ն իջեալ յերկնից՝ մատուցեալ
'ի բաց թաւալեցոյց զվէմն 'ի դրանց ան-

տի, և նստէր 'ի վերայ նորա։
3 Եւ էր տեսիլ նորա իբրև զփայլակն, և
հանդերձ նորա սպիտակ իբրև զձիւն։
4 Եւ յահէ անտի նորա խռովեցան պա-
հապանքն, և եղեն իբրև զմեռեալս։
5 Պատասխանի ետ հրեշտակն և ասէ
ցկանայսն. մի՛ երկնչիք դուք, գիտեմ
զի զՅիսուս զխաչելեալն խնդրէք։
6 Չէ՛ աստ, քանզի յարեաւ որպէս ասացն.
եկայք տեսէք զտեղին ուր կայր։
7 Եւ վաղվաղակի երթայք ասացէք աշա-
կերտացն նորա թէ յարեաւ. և ահա
յառաջանայ քան զձեզ 'ի Գալիլեա, անդ
տեսանիցէք զնա. ահա ասացի ձեզ։
8 Եւ ելեալ վաղվաղակի 'ի գերեզմանէ
անտի ահիւ և խնդութեամբ բազմաւ՝
ընթանային պատմել աշակերտացն։
9 Եւ ահա պատահեաց նոցա Յիսուս և
ասէ, ողջ էք. և նոքա մատուցեալ կալան
զոտս նորա և երկիր պագին նմա։
10 Յայնժամ ասէ ցնս Յս. մի՛ երկնչիք, եր-
թայք ասացէք եղբարցն իմոց զի երթի-
ցեն 'ի Գալիլեա, և անդ տեսցեն զիս։
11 Իբրև նոքա գնացին, ահա ոմանք 'ի զօ-
րականացն եկին 'ի քաղաքն և պատմե-
ցին քահանայապետիցն զամենայն որ
ինչ եղեն։
12 Եւ նոքա ժողովեալ հանդերձ ծերովքն,

խորհուրդ առեալ՝ արծաթ յոյժ ետուն
զօրականացն,
Եւ ասեն. ասասջիք եթէ աշակերտքն 13
նորա եկեալ գիշերի գողացան զնա՝ մինչ
մեք 'ի քուն էաք։
Եւ եթէ լուր լիցի այդ առ դատաւորն, 14
մեք հաճեսցուք զնա՝ և զձեզ անհոգս
արասցուք։
Եւ նոցա առեալ զարծաթն, արարին 15
որպէս ուսանն. և ել համբաւս այս 'ի
Հրէից՝ մինչև ցայսօր։
Իսկ մետասան աշակերտքն գնացին 'ի 16
Գալիլեա 'ի լեառնն՝ ուր ժամադիր ե-
ղև նոցա Յիսուս։
Իբրև տեսին զնա՝ երկիր պագին նմա, 17
և ոմանք յերկուացան։
Եւ մատուցեալ Յ՟ս խօսեցաւ ընդ նոսա 18
և ասէ. տուաւ ինձ ա՟մ իշխանութիւն
յերկինս և յերկրի. որպէս առաքեաց
զիս Հայր, և ես առաքեմ զձեզ։
Գնացէք այսուհետև՝ աշակերտեցէք 19
զա՟մ հեթանոսս, մկրտեցէք զնոսա յա-
նուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ։
Ուսուցէք նոցա պահել զամենայն՝ որ 20
ինչ պատուիրեցի ձեզ, և ահաւասիկ ես
ընդ ձեզ եմ զամենայն աւուրս, մինչև 'ի
կատարած աշխարհի։

ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆ

ՄԱՐԿՈՍԻ ԱՒԵՏԱՐԱՆԻՆ

Աւետարանս որ ըստ Մարկոսի գրեալ է. սոյն Մարկոս աշակերտ Պետրոսի և ընթացակից Պօղոսի՝ գրեաց զաւետարանս զայս: Եւ գնէ սկիզբն և ասէ. Սկիզբն աւետարանի՝ ի Յովհաննու քարոզութենէն. և զմկրտութիւնն Յովհաննու, և առնու վկայութիւն յԵսայեայ մարգարէէ. նշանակէ և զփորձութիւնն՝ ի լերինն, և ոչ ասէ զփորձանքն. պատմէ և վասն ընտրութեան աշակերտացն, և նշանս և արուեստս՝ զոր արար. և զխորհուրդ մատնութեանն, և զկատարածն, որ և մատնեցաւ Պիղատոսի, և խաչեցաւ մարմնով. և զի զինուորքն բաժանեցին զհանդերձս նորա. և զի մարմինն եդաւ՝ ի գերեզմանի, և յարեաւ երեքօրեայ. և զիջանել հրեշտակին, և երեւել կանանցն, և զնոյն պատմել աշակերտացն:

Մարկոս հրամանաւ Պետրոսի վիմի գրեաց զաւետարանս իւր յԱղէքսանդր քաղաքի՝ ի լեզու Եգիպտացի, զկնի հնգետասան ամի համբառնալոյ փրկչին:

Մարկոս՝ բարձր պատուար, կամ՝ ի վերայ տանեացն:

ՍԿԻԶԲՆ ԳԼԽՈՑ

ԱՒԵՏԱՐԱՆԻՆ ՈՐ ԸՍՏ ՄԱՐԿՈՍԻ

	Գլ.	Հմր.
Վասն դիւահարին.	ա̃.	23
Վասն Պետրոսի զոքանչին.	ա̃.	29
Վասն բժշկութե̃ պէսպէս հիւանդութեանց.	ա̃.	32
Վասն բորոտին.	ա̃.	40
Վասն անդամալուծին.	բ̃.	3
Վասն Ղեւեայ մաքսաւորին	բ̃.	14
Վասն գօսացեալ ձեռինն.	գ̃.	1
Վասն առաքելոցն ընտրութեան.	գ̃.	13
Վասն սերմանեացն առակի	դ̃.	2
Վասն սաստելոյ ջուրցն	դ̃.	35
Վասն լէգէոնաց	ե̃.	1

Վասն դատեր ժողովրդապետին . . . . . ե. 21
Վասն տեռատեսին . . . . ե. 25
Վասն համարոյ առաքելոցն . . . . . . զ. 7
Վասն Յովհաննու և Հերովդի. . . . . . զ. 14
Վասն հինգ հացին և երկու ձկանցն . . . զ. 35
Վասն 'ի վերայ ծովուն գնալոյ. . . . . . զ. 47
Վասն անցանելոյն զպատուիրանաւն. . . . է. 5
Վասն Ասորւոյ կնոջն Փիւնիկեցւոյ . . . է. 24
Վասն համերն և խլին . . . . է. 31
Վասն եօթն հացին. . . . . ը. 1
Վասն խմորոյ Փարիսեցւոցն . . . . . . ը. 16
Վասն կուրին . . . . ը. 22
Վասն հարցանելոյն 'ի Կեսարիա . . . . . ը. 27
Վասն այլակերպութեանն տեառն . . . . թ. 1
Վասն լուսնահարին . . . . թ. 16
Վասն խորհելոյն՝ թէ ո՞վ իցէ մեծ. . . . թ. 32
Վասն հարցանելոյն՝ թէ պա՞րտ է արձակել զկին ժ. 1
Վասն հարցանելոյ մեծատանն զՅիսուս . . ժ. 17
Վասն որդւոցն Զեբեդեայ. . . . . . . ժ. 35
Վասն Բարտիմէոսի . . . . ժ. 46
Վասն յաւանակին . . . . ժա. 1
Վասն չորանալոյ թզենւոյն . . . . . . ժա. 12
Վասն անյիշաչարութեան . . . . . . ժա. 25
Վասն հարցանելոյ քահանայապետացն զո՞րն. ժա. 27
Վասն այգւոյն. . . . . ժբ. 1
Վասն հարցանելոյ զդահեկանէն . . . . . ժբ. 13
Վասն Սադուկեցւոցն. . . . . ժբ. 18
Վասն դպրացն. . . . . ժբ. 28
Վասն տեառն հարցանելոյ զՓարիսեցիսն . ժբ. 35
Վասն երկու լումայիցն . . . . ժբ. 41
Վասն կատարածին . . . . ժգ. 3
Վասն աւուրն, և ժամուն . . . . ժգ. 32
Վասն օծանելոյ կնոջն զտէրն իւղով. . . ժդ. 3
Վասն զատկին. . . . . ժդ. 12
Վասն մատնութեանն մարգարէանալոյ . . ժդ. 18
Վասն Պետրոսի ուրացութեանն. . . . . ժդ. 66
Վասն խնդրելոյ զտէրունական մարմինն. . ժե. 42
Վասն իւղաբեր կանանցն . . . . ժզ. 1

9



ՍԲ ՄԱՐԿՈՍ ԱՒԵՏԱՐԱՆԻՉ

Ա Ւ Ե Տ Ա Ր Ա Ն

ԸՍՏ ՄԱՐԿՈՍԻ

ԳԼ. Ա

1 ՍԿԻԶԲՆ աւետարանի Յիսուսի Քրիս-
տոսի, որդւոյ Աստուծոյ։
2 Որպէս և գրեալ է 'ի մարգարէս. ահա-
ւասիկ ես առաքեմ զհրեշտակ իմ առաջի
քո, որ հանդերձեսցէ զճանապարհ քո
առաջի քո։
3 Ձայն բարբառոյ յանապատի, պատ-
րաստ արարէք զճանապարհ տեառն, և
ուղիղ արարէք զշաւիղս նորա։
4 Եւ եղև զի Յովհաննէս մկրտէր յանա-
պատի, և քարոզէր մկրտութիւն ապաշ-
խարութեան 'ի թողութիւն մեղաց։
5 Եւ երթայր առ նա ամենայն աշխարհն
Հրէաստանի, և Երուսաղեմացիք ամե-
նեքեան. և մկրտէին 'ի նմանէ 'ի Յորդա-
նան գետ՝ խոստովանեալ զմեղս իւրեանց։

Եւ էր Յովհաննէս զգեցեալ ստև ուղ- 6
տու, և գօտի մաշկեղէն ընդ մէջ իւր. և
կերակուր նր մարախ և մեղր վայրենի:
Քարոզէր և ասէր. գայ զօրագոյնն քան 7
զիս զկնի իմ, որում չեմ բաւական խո-
նարհել լուծանել զխրացս կօշկաց նորա:
Ես մկրտեցի զձեզ ջրով, և նա մկըր- 8
տեսցէ զձեզ հոգւովն սրբով:
Եւ եղև յաւուրսն յայնոսիկ եկն Յս 9
'ի Նազարեթէ Գալիլեացւոց, և մկրտե-
ցաւ 'ի Յովհաննէ 'ի Յորդանան:
Եւ նոյնժամայն ընդ վերանալ 'ի ջրոյն, 10
ետես ցելեալ զերկինս, և զհոգին Ս.Ճ
իբրև զաղաւնի՝ զի իջանէր 'ի վերայ նր:
Ձայն եղև յերկնից և ասէ. դու ես որ- 11
դի իմ սիրելի, ընդ քեզ հաճեցայ:
Եւ նոյնժամայն հոգին հանէ զնա յա- 12
նապատ:
Եւ էր նա անդ զաւուրս քառասուն 13
փորձեալ 'ի սատանայէ, և էր ընդ գա-
զանս. և հրեշտակք պաշտէին զնա:
ԲԲ Եւ յետ մատնելոյն Յովհաննու, եկն 14
Յիսուս 'ի Գալիլեա. քարոզէր զաւե-
տարանն Աստուծոյ և ասէր.
Թէ կատարեալ է ժամանակ, և հասեալ 15
է արքայութիւն Աստուծոյ. ապաշխա-
րեցէք և հաւատացէք յաւետարանն:
Իբրև անցանէր առ ծովեզերբն Գալի- 16

լեացւոց, ետես զՍիմոն և զԱնդրէաս
զեղբայր Սիմոնի, զի արկեալ էր նոցա
ուռկանս 'ի ծով. քանզի ձկնորսք էին։
17 Եւ ասէ ցնոսա Յիսուս. եկայք զկնի իմ,
և արարից զձեզ լինել որսորդս մարդկան։
18 Եւ վաղվաղակի թողեալ զուռկանսն,
գնացին զհետ նորա։
19 Եւ մատուցեալ անտի սակաւիկ մի յա-
ռաջ, ետես զՅակովբոս Զեբեդեայ և
զՅովհաննէս զեղբայր նորա. և զնոսա
'ի նաւին մինչ կազմէին ուռկանս, և կո-
չեաց զնոսա։
20 Եւ վաղվաղակի թողեալ զհայրն իւ-
րեանց զԶեբեդէոս 'ի նաւին վարձկա-
նօքն հանդերձ, գնացին զհետ նորա։
21 Եւ մտանեն 'ի Կափառնաում, և իսկ և ԲԳ.
իսկ 'ի շաբաթուն մտեալ 'ի ժողովուրդն,
ուսուցանէր զնոսա։
22 Եւ զարմանային ընդ վարդապետութիւն
նորա, զի ուսուցանէր զնոսա իբրև իշխա-
նութեամբ և ոչ որպէս դպիրքն։
23 Եւ էր 'ի ժողովրդեանն նոցա այր մի,
յորում այս պիղծ գոյր 'ի նմա. որ աղա-
ղակեաց և ասէ.
24 Թոյլ տուր, զի՞ կայ մեր և քո՝ Յիսուս
Նազովրեցի, եկիր կորուսանել զմեզ. գի-
տեմք զքեզ՝ ով ես սուրբ Աստուծոյ։
25 Սաստեաց 'ի նա Յիսուս և ասէ. կար-

կեաց և ել 'ի դմանէ։
Եւ զարկոյց զնա այսն պիղծ. և աղա- 26
ղակեաց 'ի ձայն մեծ և ել 'ի նմանէ։
Եւ զարմացան ամենեքին, մինչև հծծել 27
ընդ միմեանս և ասել. զի՞նչ է այս նոր
վարդապետութիւն, զի իշխանութեամբ և այ-
սոց պղծոց սաստէ, և հնազանդին նմա։
Եւ ել լուր նորա ընդ ամենայն կողմն 28
Գալիլեացւոց։
Եւ վաղվաղակի ելեալ 'ի ժողովրդե- 29
նէն, եկն 'ի տուն Սիմոնի և Անդրեայ՝
Յակովբաւ և Յովհաննու հանդերձ։
Եւ զոքանչ Սիմոնի դնէր ջերմացեալ, 30
և վաղվաղակի ասեն ցնա վասն նորա։
Եւ մատուցեալ յարոյց զնա՝ կալեալ 31
զձեռանէ նորա. և եթող զնա տենդն և
պաշտէր զնոսա։
Եւ իբրև երեկոյ եղև 'ի մտանել արե- 32
գականն, բերէին առ նա զամենայն
հիւանդս և զդիւահարս։
Եւ էր ամենայն քաղաքն ժողովեալ առ 33
դրունն։
Եւ բժշկեաց բազում հիւանդս 'ի պէս- 34
պէս ախտից, և դևս բազում եհան.
և ոչ տայր խօսել դիւացն, զի գիտէին
զնա թէ Քրիստոս է։
ԲԴ Եւ ընդ այգն ընդ առաւօտն յարու- 35
ցեալ ել և գնաց յանապատ տեղի, և

անդ կայր յաղօթս:
36 Եւ գնաց զհետ նորա Սիմոն՝ և որ ընդ
նմայն էին:
37 Եւ իբրև գտին զնա՝ ասեն ցնա, թէ
ամենեքին խնդրեն զքեզ:
38 Եւ ասէ ցնոսա. Եկայք երթիցուք և այլ
մօտաւոր գիւղաքաղաքսն, զի և անդ
քարոզեցից. զի յայս իսկ եկեալ եմ:
39 Եւ քարոզէր 'ի ժողովուրդս նոցա ընդ
ամենայն Գալիլեացիս, և դևս հանէր:
40 Գայ առ նա բորոտ մի, աղաչէր՝ 'ի
ծունր իջանէր և ասէր. տէր, եթէ կա-
միս՝ կարող ես զիս սրբել:
41 Իսկ Յիսուս գթացեալ ձգեաց զձեռն, մերձե-
ցաւ 'ի նա և ասէ ցնա. կամիմ, սրբեաց:
42 Եւ իբրև ասացն ցնա, վաղվաղակի գը-
նաց 'ի նմանէ բորոտութիւն և սրբեցաւ:
43 Եւ սաստեաց նմա՝ եհան զնա արտաքս
վաղվաղակի և ասէ.
44 Զգոյշ լեր, մի ումեք ինչ ասիցես. այլ
երթ ցոյց զքեզ քահանային, և մատո
վասն սրբութեան քո պատարագ՝ զոր հրա-
մայեաց Մովսէս, 'ի վկայութիւն նոցա:
45 Եւ նա ելեալ սկսաւ քարոզել յոյժ և
հռչակ հարկանել զբանն, մինչ ոչ ևս
կարող լինել նմա յայտնապէս 'ի քաղաք
մտանել, այլ արտաքոյ յանապատ տեղիս
էր. և գային առ նա յամ կողմանց:

Գլ. Բ

ԲԾ Եւ մտեալ դարձեալ ՚ի Կափառնաում 1
յետ աւուրց:
Լուր եղեւ եթէ ՚ի տան է. եւ ժողովե- 2
ցան բազումք մինչեւ տեղի եւս ոչ լինել՝
եւ ոչ առ դրանն. եւ խօսէր նոցա զբանն:
Եւ գային առ նա, բերէին անդամա- 3
լոյծ մի բարձեալ ՚ի չորից:
Եւ իբրեւ ոչ կարէին մերձենալ առ նա 4
յամբոխէ անտի, քակեցին զյարկն՝ ուր
էր Յս, եւ բացեալ զառաստաղն իջուցին
զմահիճսն յորում կայր անդամալոյծն:
Եւ տեսեալ Յիսուսի զհաւատս նոցա, 5
ասէ ցանդամալոյծն. որդեակ, թողեալ
լիցին քեզ մեղք քո:
Եւ էին ոմանք ՚ի դպրաց անտի որ անդ 6
նստէին եւ խորհէին ՚ի սիրտս իւրեանց:
Զի՞նչ է այս որ խօսի սա զհայհոյու- 7
թիւնս. ո՞վ կարէ թողուլ զմեղս, եթէ
ոչ մի Աստուած,
Եւ գիտաց Յիսուս յոգի իւր թէ այն- 8
պէս խորհին ՚ի սիրտս իւրեանց, եւ ասէ.
զի՞ խորհիք զայդ ՚ի սիրտս ձեր:
Զի՞նչ դիւրին է, ասե՞լ ցանդամալոյծն՝ 9
թողեալ լիցին քեզ մեղք քո, եթէ ա-
սել՝ արի առ զմահիճս քո եւ երթ ՚ի
տուն քո:

10 Այլ զի գիտասջիք եթէ իշխանութիւն ունի որդի մարդոյ ՚ի վերայ երկրի թողուլ զմեղս, ասէ ցանդամալոյծն.

11 Քեզ ասեմ, արի առ զմահիճս քո եւ երթ ՚ի տուն քո։

12 Եւ յարեաւ վաղվաղակի առեալ զմահիճսն, ել առաջի ամենեցուն. մինչեւ զարմանալ ամենեցուն եւ փառաւոր առնել զԱստուած եւ ասել, թէ այսպիսի ինչ երբէք ոչ տեսաք։

13 Եւ ել դարձեալ ՚ի ծովեզրն, եւ ամենայն ժողովուրդն գայր առ նա, եւ ուսուցանէր զնոսա։ Բ.Գ

14 Եւ մինչդեռ անցանէր, ետես զՂեւի Ալփեայ՝ զի նստէր ՚ի մաքսաւորութեան. եւ ասէ ցնա, եկ զկնի իմ. եւ յարուցեալ գնաց զկնի նորա։

15 Եւ եղեւ ՚ի բազմելն նորա ՚ի տան նորա, եւ բ͞զմ մաքսաւորք եւ մեղաւորք բազմեալ էին ընդ Յ͞ի եւ ը͞ աշակերտսն ն͞ր. քանզի էին բազումք որ երթային զհետ նորա։

16 Իսկ դպիրքն եւ Փարիսեցիք իբրեւ տեսին թէ ուտէ ընդ մաքսաւորս եւ ընդ մեղաւորս, ասեն ցաշակերտսն նորա. զի՞ է զի ընդ մեղաւորս եւ ընդ մաքսաւորս ուտէք եւ ըմպէք։

17 Իբրեւ լուաւ Յ͞ս ասէ ց͞ն. ոչ ինչ է պիտոյ բժիշկ ողջոց՝ այլ հիւանդաց. եւ ոչ

եկի կոչել զարդարս՝ այլ զմեղաւորս։
Եւ էին աշակերտքն Յովհաննու և Փա- 18
րիսեցիքն 'ի պահս, գան և ասեն ցնա.
ընդէ՞ր աշակերտքն Յովհաննու և Փա-
րիսեցիքն պահեն, և քո աշակերտքդ
ոչ պահեն։
Եւ ասէ ցնս̃ Յս̃. միթէ մա՞րթ ինչ իցէ 19
որդւոց առագաստի մինչ ընդ նս̃ իցէ փե-
սայն՝ պահել. ցորքան ընդ իւրեանս ու-
նիցին զփեսայն, ոչ է մարթ պահել։
Այլ եկեսցեն աւուրք՝ յորժամ վերա- 20
ցի 'ի նոցանէ փեսայն, և ապա պահե-
ցեն յաւուրն յայնմիկ։
Ոչ ոք կապերտ նոր անթափ արկանէ 'ի 21
վերայ հնացեալ ձորձոյ. ապա թէ ոչ՝ առ-
նու լրութեամբն իւրով նորն 'ի հնոյ ան-
տի, և չար ևս պատառումն լինի։
Եւ ոչ ոք արկանէ գինի նոր 'ի տիկս 22
հինս. ապա թէ ոչ, պայթուցանէ գի-
նին զտիկսն, գինին հեղու և տիկքն
կորնչին. այլ գինի նոր 'ի տիկս նորս
արկանելի է։
ԲԻ Եւ եղև նմա 'ի շաբաթու անցանել ընդ 23
արտորայս, և աշակերտք 'ի գնալն իւ-
րեանց՝ սկսան հասկ կորզել և ուտել։
Եւ Փարիսեցիքն ասեն ցնա. տե՛ս զի՞նչ 24
գործեն աշակերտքն քո 'ի շաբաթու՝
զոր չէ արժան։

25 Եւ ասէ ցնոսա Յիսուս. ո՞չ երբէք իցէ
ընթերցեալ ձեր զոր արարն Դաւիթ,
յորժամ պիտոյն եղև՝ և քաղցեաւ նա
և որ ընդ նմայն էին։
26 Զիա՞րդ եմուտ 'ի տունն Աստուծոյ առ
Աբիաթարաւ քահանայապետիւ, և
զհացսն զառաջաւորութե̃ն եկեր՝ և ետ
այնոցիկ որ ընդ նմայն էին. զոր ոչ էր
օրէն ուտել, բայց միայն քահանայիցն։
27 Եւ ասէ ցնոսա. շաբաթ վասն մարդոյ
եղև, և ոչ եթէ մարդ վասն շաբաթու։
28 Ապա ուրեմ̃ն՝ տէր է որդի մարդոյ և
շաբաթու։

ԳԼ. Գ

1 Եւ եմուտ միւսանգամ 'ի ժողովուրդն,
և էր անդ այր մի՝ որոյ ձեռն իւր գօսա-
ցեալ էր։
2 Եւ սպասէին նմա եթէ բժշկիցէ զնա
'ի շաբաթուն, զի չարախօսեսցեն ըզ-
նմանէ։
3 Եւ ասէ ցայրն որոյ ձեռնն գօսացեալ
էր. արի անց 'ի մէջ։
4 Եւ ասէ ցնոսա. զի՞նչ արժան է 'ի շա-
բաթու, բարի՞ ինչ գործել՝ եթէ չար
առնել, ոգի՞ մի ապրեցուցանել եթէ կո-
րուսանել. և նոքա լռեցին։
5 Եւ հայեցեալ Յ̃սի զնոքօք լի ցասմամբ,

տրտմեալ վասն կուրութեան սրտից նո-
ցա՝ ասէ ցայրն. ձգեա զձեռն քո, և նա
ձգեաց, և ողջացաւ ձեռն նորա։
Գ.Կ Եւ ելեալ արտաքս վաղվաղակի Փարի- 6
սեցիքն Հերովդիանոսօքն հանդերձ,
խորհուրդ առնէին վասն նր թէ զիա՞րդ
կորուսցեն զնա։
Իսկ Յիսուս աշակերտօքն իւրովք գնաց 7
'ի ծովեզրն. և բազում ժողովուրդ 'ի
Գալիլեացւոց երթային զհետ նորա, և
'ի Հրէաստանէ,
Եւ յԵ̃ղ̃մէ, և յայնկոյս Յորդանանու, 8
և որք 'ի Տիւրոսէ և 'ի Սիդոնէ. բա-
զում ժողովուրդ իբրև լսէին՝ որչափ ինչ
առնէր, գային առ նա։
Եւ ասէ ցաշակերտսն իւր, զի նաւակ 9
մի պատրաստական կայցէ նմա վասն
ամբոխին՝ զի մի՛ նեղեսցեն զնա։
Քանզի զբազումս բժշկեաց. մինչ գալ 10
խռնել զնովաւ՝ զի մերձեսցին առ նա,
որք ունէին ախտս ինչ։
Եւ այսք պիղծք յորժամ տեսանէին 11
զնա, անկանէին առաջի նորա, աղաղա-
կէին և ասէին,
Թէ դու ես որդին Ա.Յ. և նա յոյժ սաս- 12
տէր նց̃, զի մի՛ յայտնի առնիցեն զնա։
Գ.Բ Ելանէ 'ի լեառն և կոչէ առ ինքն զորս 13
ինքն կամեցաւ, և չոգան առ նա։

14 Եւ արար երկոտասանս՝ զի իցեն զնովաւ,
և զի առաքեսցէ զնոսա քարոզել։
15 Եւ ունել իշխանութիւն բժշկելոյ զցաւս
և հանելոյ զդևս։
16 Եւ եդ անուն Սիմոնի՝ Պետրոս։
17 Եւ Յակովբու Զեբեդեայ և Յովհան-
նու եղբօրն Յակովբայ, եդ նց̃ անուանս
Բանէրեգէս, որ է որդիք որոտման։
18 Եւ զԱնդրէաս, և զՓիլիպպոս, և զԲա-
րթողիմէոս, և զՄատթէոս զմաք-
սաւորն, և զԹովմաս, և զՅակովբոս
Ալփեայ, և զԹադէոս, և զՍիմոն Կա-
նանացի։
19 Եւ զՅուդա Իսկարիովտացի, որ և
մատնեացն զնա։
20 Գան 'ի տուն, և գայ միւսանգամ ընդ Գ.Գ.
նոսա ժողովուրդն, մինչ զի և հաց ևս ոչ
ժամանել ուտել նոցա։
21 Եւ իբրև լուան որ իւրքն էին՝ ելին
ունել զնա, զի համարէին թէ մոլե-
գնեալ իցէ։
22 Եւ դպիրքն որ յԵրուսաղեմէ իջեալ
էին, ասէին թէ Բէեղզեբուղ գոյ 'ի դմա,
և իշխանաւ դիւացն հանէ դա զդևս։
23 Եւ կոչեցեալ զնոսա առ ինքն, առակօք
խօսէր ընդ նոսա. զիա՞րդ կարէ սատա-
նայ զսատանայ հանել։
24 Եւ արդ՝ եթէ թագաւորութիւն յանձն

իւր բաժանեսցի, ոչ կարէ կալ թագա-
ւորութիւնն այն։
Եւ եթէ տուն յանձն իւր բաժանես- 25
ցի, ոչ կարէ կալ տունն։
Եւ եթէ սատանայ’ի վերայ անձին իւ- 26
րոյ յարեաւ և բաժանեալ է, ոչ կարէ
կալ, այլ վախճանեալ է։
Այլ ոչ ոք կարէ զկարասի հզօրի մտեալ 27
’ի տուն նորա աւար հարկանել, եթէ
ոչ նախ զհզօրն կապիցէ, և ապա զտուն
նորա աւար հարկանիցէ։
Ամէն ասեմ ձեզ, զի ամենայն թողցի 28
որդւոց մարդկան մեղք և հայհոյութիւնք՝
որչափ և հայհոյեսցեն։
Բայց որ հայհոյեսցէ զՀոգին սուրբ, ոչ 29
ունիցի թողութիւն յաւիտեան. այլ
պարտապան լիցի յաւիտենից մեղաց։
Զի ասէին թէ այս պիղծ գոյ ’ի նմա։ 30
Գ.Գ. Գան եղբարքն և մայր նորա, և արտա- 31
քոյ կացեալ՝ յղեցին և կոչէին զնա։
Եւ անդ ժողովուրդն շուրջ զնովաւ նըս- 32
տէր. և իբրև ասացին ցնա, ահաւասիկ
մայր քո և եղբարք քո՝ կան արտաքոյ և
խնդրեն զքեզ։
Պատասխանի ետ նոցա և ասէ. ո՞վ է իմ 33
մայր կամ եղբարք։
Հայեցաւ շուրջ զիւրև յաշակերտսն զի 34
նստէին, և ասէ. ահաւասիկ մայր

իմ և եղբարք իմ։
35 Զի որ առնիցէ զկամս Աստուծոյ, նա
է իմ եղբայր և քոյր և մայր։

ԳԼ. Դ

1 Դարձեալ սկսաւ ուսուցանել առ ծովե- ԳԵ
զերբն, և խռնեցան զնովաւ ժողովուրդք
բազումք, մինչև 'ի նաւ մտանել նմա, և
նստել 'ի ծովուն. և ամենայն ժողովուրդն
զծովեզերբն՝ զցամաքն ունէին։
2 Եւ ուսուցանէր զնս առակօք բզմ ինչ.
և ասէր նց 'ի վարդապետութեն իւրում։
3 Լսէք, ահաւասիկ ել սերմանող սեր-
մանել։
4 Եւ եղև 'ի սերմանելն, ոմն անկաւ
առ ճանապարհաւ, և եկն թռչունն և
եկեր զնա։
5 Եւ այլն անկաւ յապառաժի, ուր ոչ
գոյր հող բազում, և վաղվաղակի բու-
սաւ. քանզի ոչ գոյր հիւթ երկրին,
6 Եւ յորժամ ծագեաց արև՝ ջեռաւ, և
զի ոչ գոյին արմատք՝ ցամաքեցաւ։
7 Եւ այլն անկաւ 'ի մէջ փշոց. ելին
փուշքն և հեղձուցին զնա, և պտուղ
ոչ ետ։
8 Եւ այլն անկաւ յերկիր բարւոք, և ե-
լեալ աճեցեալ տայր պտուղ, և բերէր
ընդ միոյ երեսուն և ընդ միոյ վաթսուն

եւ ընդ միոյ հարիւր։
Եւ ասէր. որ ունիցի ականջս լսելոյ՝ 9
լուիցէ։
Գ.Ջ Եւ իբրեւ եղեւ առանձինն, հարցին ցնա 10
որ զնովաւն էին աշակերտօքն հանդերձ՝
զառակսն։
Եւ ասէ ցնոսա. Ձեզ տուեալ է գիտել 11
զխորհուրդս արքայութեա̃ն Ա̃Յ, բայց նց̃ որ
արտաքինքն են՝ ա̃մ ինչ առակօք լինի։
Զի տեսանելով տեսցեն եւ մի՛ տեսցեն, 12
եւ լսելով լուիցեն՝ եւ մի՛ իմասցին. զի մի՛
երբեք դարձցին՝ եւ թողցի նոցա։
Եւ ասէ ցն̃ս. ոչ գիտէք զառակս զայս, 13
եւ զիա՞րդ զամենայն առակսն գիտիցէք։
Որ սերմանէն՝ զբանն սերմանէ։ 14
Եւ նոքա են որ առ ճանապարհաւն, ուր 15
բանն սերմանի. եւ յորժամ լսեն զնա,
գայ սատանայ եւ հանէ զբանն սերմա-
նեալ՚ի սիրտս նոցա։
Եւ նոքա են որ յապառաժին սերմա- 16
նեցան, որք յորժամ լսիցեն զբանն, վաղ-
վաղակի խնդութեամբ ընդունին։
Եւ զի ոչ ունին արմատս յանձինս՝ այլ 17
առ ժամանակ մի են, ապա՚ի հասանել
նեղութեան կամ հալածման վա̃ս բանին,
վաղվաղակի գայթագղին։
Իսկ որ՚ի մէջ փշոցն սերմանեցան՝ նոքա 18
են, որ իբրեւ զբանն լսեն,

19 Եւ հոգք աշխարհիս և պատրանք մե-
ծութեան մտանեն, և հեղձուցանեն
զբանն և անպտուղ լինի։
20 Եւ նոքա են որ յերկիրն բարւոք սեր-
մանեցան, որք լսեն զբանն և ընդունին,
և տան պտուղ՝ ընդ միոյ երեսուն և
ընդ միոյ վաթսուն և ընդ միոյ հարիւր։
21 Եւ ասէ ցնոսա. միթէ գա՞յ ճրագ զի ընդ Գ. Է
գրուանաւ դնիցի կամ ընդ մահճօք. ո՞չ
ապաքէն 'ի վերայ աշտանակի դնիցի։
22 Զի չէ ինչ 'ի ծածուկ որ թէ ոչ յայտ-
նեսցի, և ոչ եղև ինչ գաղտնի, եթէ ոչ
'ի յայտ գայցէ։
23 Եթէ ոք ունիցի ականջս լսելոյ, լուիցէ։
24 Եւ ասէ ցնոսա. տեսէք զինչ լսէքդ, և
յաւելցի ձեզ որոց լսէքդ. որով չափով
չափէք՝ նովին չափեսցի ձեզ։
25 Որ ոք ունիցի՝ տացի նմա, և որ ոչն ու-
նիցի՝ և զոր ունիցին բարձցի 'ի նմանէ։
26 Եւ ասէր. այսպէս է արքայութիւն Գ. Կ
Աստուծոյ, որպէս զի այր մի արկանիցէ
սերմանիս յերկիր։
27 Եւ ննջիցէ և յառնիցէ զցայգ և զցերեկ,
և սերմանիքն բուսանիցեն և աճիցեն,
և նա ոչ գիտէ,
28 Թէ երկիրն ինքնին բերէ զպտուղ. նախ
զխոտն և ապա զհասկն, ապա ցորեան
ատոք 'ի հասկին։

Այլ յորժամ տայցէ զպտուղն՝ վաղվա- 29
ղակի առաքէ մանգաղ, զի հասեալ են
հունձք։

Եւ ասէր. ո՞ւմ նմանեցուսցուք զար- 30
քայութիւնն Աստուծոյ, կամ որո՞վ ա-
ռակաւ առակեսցուք զնա։

Որպէս հատն մանանխոյ՝ որ յորժամ 31
սերմանիցի յերկրի, փոքրագոյն է քան
զամենայն սերմանիս որ են յերկրի։

Եւ յորժամ սերմանիցի, բուսանի և 32
լինի մեծ քան զամենայն բանջար, և ար-
ձակէ ոստս մեծամեծս, մինչև բաւական
լինել ընդ հովանեաւ նորա թռչնոց եր-
կնից բնակել։

Եւ այնպիսի առակօք խօսէր ընդ նոսա 33
զբանն, որպէս կարող լինէին լսել։

Եւ առանց առակի ոչ ինչ խօսէր ընդ 34
նոսա, բայց առանձինն աշակերտացն
իւրոց մեկնէր զամենայն։

ԴԲ Եւ ասէ ցնոսա յաւուրն յայնմիկ՝ իբրև 35
ընդ երեկս լինէր. եկայք անցցուք յայն
կողմն։

Թողուն զժողովուրդն, և առնուն զնա 36
նաւաւն հանդերձ, և զայլ ևս նաւսն որ
էին ընդ նմա։

Եւ լինէր մրրիկ մեծ հողմոյ, և զալիսն 37
'ի նաւն զեղոյր, մինչ զրեթէ լի իսկ
լինել։

38 Եւ ինքն ննջէր 'ի խելս նաւին 'ի վերայ
բարձի. զարթուցանէին զնա և ասէին.
վարդապետ, ոչ ինչ է քեզ փոյթ, զի
կորնչիմք աւասիկ:
39 Եւ զարթուցեալ սաստեաց հողմոյն և
ծովուն, ասէ. դադարեա կարկեաց, և
դադարեաց հողմն և եղև խաղաղու-
թիւն մեծ:
40 Եւ ասէ ցնոսա. ընդէ՞ր այդպէս վատա-
սիրտք էք, չե՞ւ ևս ունիք հաւատս. և եր-
կեան երկիւղ մեծ և ասէին ցմիմեանս.
ո՞ ոք արդեօք իցէ սա, զի և հողմ և ծով
հնազանդին սմա:

ԳԼ. Ե

1 Եւ եկն յայնկոյս ծովուն յաշխարհն
Գերգեսացւոց:
2 Եւ ընդ ելանելն նորա 'ի նաւէ անտի,
պատահեաց նմա այր մի 'ի գերեզմա-
նացն՝ զոր ունէր այս պիղծ:
3 Որոյ և բնակութիւն իւր իսկ 'ի գերեզ-
մանս էր, և ոչ շղթայիւք ոք ևս կարէր
կապել զնա:
4 Վասն բազում անգամ ոտնակապօք և
շղթայիւք կապելոյ, և խզելոյ 'ի նմանէ
զշղթայսն և զոտնակապսն խորտակե-
լոյ, և ոչ ոք կարէր պարտել զնա:
5 Քանզի հանապազ զցայգ և զցերեկ

'ի գերեզմանս և 'ի լերինս աղաղակէր,
և կոծէր զանձն իւր քարամբք։
Իբրև ետես զՅիսուս 'ի հեռաստանէ, 6
ընթացաւ և երկիր եպագ նմա։
Աղաղակեաց 'ի ձայն մեծ և ասէ, զի՞ 7
կայ իմ և քո՛ Յիսուս որդի Աստուծոյ
բարձրելոյ. երդմնեցուցանեմ զքեզ յԱս-
տուած, մի՛ տանջեր զիս։
Քանզի ասէր ցնա. ել այսդ պիղծ 'ի 8
մարդոյ այտի։
Եւ հարցանէր ցնա թէ զի՞նչ անուն է 9
քո. և ասէ ցնա, լեգէոն անուն է իմ,
քանզի բազումք եմք։
Եւ աղաչէին զնա յոյժ, զի մի՛ առաքես- 10
ցէ զնոսա արտաքս քան զաշխարհն։
Եւ անդ էր առ լերամբն երամակ մի 11
խոզաց արօտական մեծ։
Աղաչեցին զնա ամենայն դեքն և ասեն. 12
առաքեա զմեզ 'ի խոզսն, զի մտցուք 'ի
նոսա։
Եւ հրամայեաց նոցա. և իբրև ելին 13
այսքն պիղծք՝ մտին 'ի խոզսն, և դի-
մեաց երամակն 'ի դարէ անտի 'ի ծովն.
էին իբրև երկու հազարք, և հեղձ-
նուին 'ի ծովուն։
Եւ խոզարածքն փախեան, և պատմե- 14
ցին 'ի քաղաքին և յագարակս, և ելին
տեսանել զի՛նչ իցէ որ գործեցաւ։

15 Գան առ Յ՟ս, եւ տեսանեն զդիւահարն
զի նստէր զգեցեալ եւ զգաստացեալ՝ որ
ունէր զլեգէոնն, եւ զահի հարան։
16 Եւ պատմեցին նոցա որոց տեսեալն էր,
թէ զինչ եղեւ այսահարին, եւ զինչ վասն
խոզիցն։
17 Եւ սկսան աղաչել զնա գնալ 'ի սահմա-
նաց նոցա։
18 Եւ իբրեւ եմուտ նա 'ի նաւն, աղաչէր
զնա դիւահարն զի ընդ նմա իցէ։
19 Եւ Յիսուս ոչ ետ նմա թոյլ, այլ ասէ
ցնա. երթ 'ի տուն քո առ ընտանիս քո,
եւ պատմեա նոցա որ ինչ միանգամ տէր
արար քեզ եւ ողորմեցաւ քեզ։
20 Եւ չոգաւ եւ սկսաւ քարոզել 'ի Դեկա-
պոլին՝ զոր ինչ արար նմա Յիսուս, եւ ա-
մենեքին զարմանային։
21 Եւ իբրեւ անց Յիսուս միւսանգամ յայն Դ.Գ.
կողմն՝ ժողովեցաւ առ նա ժողովուրդ
բազում, եւ էր առ ծովեզերբն։
22 Եւ ահա մի 'ի ժողովրդապետացն գայր,
որում անուն էր Յայրոս. եւ իբրեւ ետես
զնա՝ անկաւ առ ոտս նորա։
23 Աղաչէր զնա յոյժ եւ ասէր՝ թէ դուստր
նորա մերձ է 'ի մահ, զի եկեալ դնիցէ
նմա ձեռն, որպէս զի ապրեսցի եւ կեցցէ։
24 Եւ գնաց ընդ նմա. երթայր եւ ժողո-
վուրդ բ՟զմ զհետ նորա, եւ նեղէին զնա։

Եւ կին մի էր ’ի տեռատեսութեան ա- 25
րեան զերկոտասան ամ։
Եւ յոյժ վշտացեալ ’ի բազում բժշկաց, 26
և ծախեալ զինչս իւր զամենայն՝ և չէր
ինչ օգտեալ, այլ ևս առաւել զայրացեալ։
Իբրև լուաւ զՅսէ՝ եկն ’ի մէջ ամբոխին 27
յետոյ՝ և բուռն եհար զհանդերձէ նր։
Քանզի խորհէր ’ի մտի թէ միայն մեր- 28
ձեցայց ’ի հանդերձս նորա, փրկեցայց։
Եւ վաղվաղակի ցամաքեցաւ աղբիւր 29
արեան նորա, և գիտաց ’ի մարմին իւր
թէ բժշկեցաւ ’ի տանջանացն։
Եւ անդէն վաղվաղակի գիտաց Յիսուս 30
յանձն իւր զզօրութիւնն որ ել ’ի նմա-
նէ, դարձաւ յամբոխն և ասէ, ո՞վ մեր-
ձեցաւ ’ի հանդերձս իմ։
Եւ ասեն ցնա աշակերտքն. տեսանես 31
զի ամբոխդ նեղէ զքեզ, և ասես՝ թէ
ո՞վ մերձեցաւ ’ի հանդերձս իմ։
Եւ շուրջ հայէր տեսանել թէ ո՞վ զայն 32
արար։
Եւ կինն զարհուրեալ և դողացեալ վ՟ն 33
որոյ գաղտն արար, քանզի գիտէր զինչ
եղև նմա, եկն անկաւ առաջի նորա, և
ասաց զամենայն իրսն ստուգութեամբ։
Եւ Յիսուս ասէ ցնա. դուստր, հաւատք 34
քո կեցուցին զքեզ. երթ ’ի խաղաղու-
թիւն, և եղիջիր ողջ’ի տանջանաց քոց։

35 Մինչ դեռ նա զայն խօսէր, գան ոմանք Դ.Գ.
'ի տանէ ժողովրդապետին, և ասեն՝ Թէ
դուստրն քո մեռաւ, զի՞ ևս աշխատ առ-
նես զվարդապետդ:
36 Իսկ Յիսուս իբրև լուաւ զբանն ասա-
ցեալ, ասէ ցժողովրդապետն. մի՛ երկն-
չիր, բայց միայն հաւատա:
37 Եւ ոչ զոք եթող ընդ իւր երթալ,
բայց միայն զՊետրոս և զՅակոբոս և
զՅովհաննէս զեղբայրն Յակոբայ:
38 Գայ 'ի տուն ժողովրդապետին, և տե-
սանէ ամբոխ յոյժ և լալականս, և ա-
ղաղակ յոյժ:
39 Եւ մտեալ 'ի ներքս ասէ ցնոսա. զի՞
խռովեալ էք և լայք, մանուկն ոչ է մե-
ռեալ, այլ ննջէ:
40 Եւ ծաղր առնէին զնա. և նորա հա-
նեալ արտաքս զամենեսեան, առնու ընդ
իւր զհայր մանկանն և զմայր, և զնոսա
որ ընդ նմայն էին, և մտանէ ուր դնէր
մանուկն:
41 Եւ կալեալ զձեռանէ մանկանն, ասէ ցնա.
տալիթա կումի, որ թարգմանի՝ աղջիկ
դու, քեզ ասեմ արի՛:
42 Եւ վաղվաղակի յարեաւ աղջիկն և
գնայր, քանզի էր ամաց իբրև երկո-
տասանից. և զարմացան մեծաւ զար-
մանալեօք:

Եւ պատուէր տայր նոցա յոյժ զի մի 43
ոք գիտասցէ զայն, և ասաց տալ նմա
ուտել։

ԳԼ. Զ

ԴԵ Եւ ել անտի, եկն 'ի գաւառ իւր. և 1
երթային զհետ նորա աշակերտքն իւր։
Եւ եղև 'ի շաբաթուն՝ սկսաւ ուսուցա- 2
նել 'ի ժողովրդեանն. և բազումք իբրև
լսէին՝ զարմանային ընդ վարդապետու-
թիւն նորա, և ասէին. ուստի՞ է սմա
այս, կամ զի՞նչ է իմաստութիւնս որ
տուեալ է սմա. զի զօրութիւնք այս-
պիսիք 'ի ձեռաց սորա լինին։
Ո՞չ սա է մանուկ հիւսանն, և որդին Մա- 3
րեմայ, եղբայր Յակոբայ և Յովսեայ և
Յուդայի և Սիմոնի, և չիցե՞ն քորք դորա
աստ առ մեզ. և գայթագղէին 'ի նա։
Եւ ասէ ցնոսա. ոչ է մարգարէ անարգ՝ 4
բայց եթէ 'ի գաւառի իւրում և յազ-
գատոհմի և 'ի տան իւրում։
Եւ ոչ կարէր անդ և ոչ մի ինչ զօրու- 5
թիւն առնել, բայց սակաւ հիւանդաց
ձեռն եդեալ՝ բժշկէր զնոսա։
Եւ զարմանայր վ՟ն անհաւատուե՟ նոցա։ 6
ԴԶ Եւ շրջէր շուրջ զգաւառօքն և ուսու-
ցանէր։
Եւ կոչեաց առ ինքն զերկոտասանսն, 7

և սկսաւ առաքել զնոսա երկուս երկուս.
և տայր նոցա իշխանութիւն ՚ի վերայ
այսոց պղծոց։
8 Եւ պատուիրեաց ն͞ց զի մի ինչ բարձցեն
՚ի ճանապարհ, բայց միայն գաւազան.
մի պարկ, մի հաց, մի պղինձ ՚ի գօտիս։
9 Այլ ագանել հողաթափս, և մի զգե-
նուցուք ասէ երկուս պարեգօտս։
10 Եւ ասէր ցնոսա. յոր տուն մտանիցէք՝
անդէն օթևանս կալջիք մինչև ելանի-
ցէք անտի։
11 Եւ որ ոչ ընկալցին զձեզ և ոչ լուիցեն
ձեզ, յորժամ ելանիցէք անտի՝ թօթա-
փեսջիք զփոշի ոտից ձերոց ՚ի վկայու-
թիւն նոցա։
12 Եւ ելեալ քարոզէին զի ապաշխարեսցեն։
13 Եւ դևս բազումս հանէին, և օծանէին
իւղով զբ͞զմ հիւանդս և բժշկէին զն͞ս։
14 Եւ լուաւ արքայ Հերովդէս, քանզի Դէ.
յայտնի եղև անուն նորա. և ասէր,
թէ Յովհաննէս Մկրտիչ յարեաւ ՚ի
մեռելոց, և վասն այնորիկ զօրութիւնք
լինին նովաւ։
15 Այլք ասէին թէ Եղիա է, իսկ այլքն՝
թէ մարգարէ է, կամ թէ իբրև զմի ՚ի
մարգարէից։
16 Իբրև լուաւ Հերովդէս, ասէ. զորոյ
ես զգլուխն հատի զՅովհաննու, սա

է, նա յարեաւ 'ի մեռելոց։

Զի ինքն Հերովդէս առաքեաց կալաւ 17
զՅովհաննէս, և կապեաց զնա և եդ 'ի
բանտի վասն Հերովդիայ կնոջ Փիլիպ-
պոսի եղբօր նր̃, զի նա կին արար զնա։
Քանզի ասէր Յովհաննէս ցՀերովդէս՝ 18
թէ ոչ է օրէն քեզ ունել զկին եղբօր քոյ.
Եւ Հերովդիա ոխացեալ էր ընդ նմա, 19
և կամէր սպանանել զնա, և ոչ կարէր։
Զի Հերովդէս երկնչէր 'ի Յովհաննէ. 20
քանզի գիտէր զնա այր արդար և սուրբ.
և սպասէր նմա, և լուեալ 'ի նմանէ՝
բազում ինչ առնէր, և քաղցրութեամբ
լսէր նմա։

Իբրև օր մի լինէր պարապոյ, յորժամ 21
ընթրիս տայր Հերովդէս յաւուր ծնըն-
դոց իւրոց՝ նախարարաց իւրոց և հա-
զարապետաց և մեծամեծաց Գալի-
լեացւոց։

Եւ 'ի մտանել դստերն Հերովդիայ և 22
'ի կաքաւել, հաճոյ եղև Հերովդի և
բազմականացն. ասէ թագաւորն ցաղ-
ջիկն. խնդրեա յինէն զոր ինչ կամիս և
տաց քեզ։

Եւ երդուաւ նմա բազում անգամ թէ 23
զոր ինչ և խնդրեսցես դու յինէն՝ տաց
քեզ, մինչև ցկէս թագաւորութե̃ իմոյ։
Նա՝ ելեալ ասէ ցմայր իւր. զի՞նչ խնդ- 24

դրեցից. և նա ասէ, զգլուխն Յովհան-
նու Մկրտչի:
25 Եւ մտեալ անդրէն փութանակի առ
Թագաւորն ասէ. կամիմ զի այժմ տա-
ցես ինձ վաղվաղակի 'ի վերայ սկտեղ
զգլուխն Յովհաննու Մկրտչի:
26 Եւ տրտմեցաւ յոյժ Թագաւորն, այլ
վասն երդմանցն և կոչնականացն ոչ կա-
մեցաւ անարգել զնա:
27 Եւ առաքեաց վաղվաղակի Թագաւորն
դահիճ, և հրամայեաց բերել զգլուխն
նր̃. և չոգաւ գլխատեաց զնա 'ի բանտին:
28 Եւ եբեր զգլուխն նորա սկտեղբ և ետ
ցաղջիկն, և աղջիկն տարաւ ետ մօր
իւրում:
29 Իբրև լուան աշակերտքն նր̃, եկին բար-
ձին զմարմինն և եդին 'ի գերեզմանի:
30 Ժողովեցան առաքեալքն առ Յիսուս, Եկ
և պատմեցին նմա զամենայն ինչ զոր ա-
րարին և զոր ուսուցին:
31 Եւ ասէ ցնոսա Յիսուս. եկա՛յք դուք ա-
ռանձինն յանապատ տեղի, և հանգի-
ջիք սակաւ մի. զի էին բազումք որ եր-
թային և գային, և հաց անգամ չժա-
մանէին ուտել:
32 Եւ գնացին նաւու յանապատ տեղի ա-
ռանձինն:
33 Եւ տեսին զնոսա զի երթային, և ըղ-

գացին բազումք. և հետի յամենայն
քաղաքաց խուռն ընթանային անդր և
մերձենային առ նոսա:
Եւ ելեալ ետես ամբոխ բազում, և 34
գթացաւ 'ի նոսա, զի էին իբրև ոչխարք՝
որոց ոչ իցէ հովիւ. և սկսաւ ուսուցա-
նել զնոսա յոյժ:
Եւ իբրև բազում ժամ եղև, մատու- 35
ցեալ աշակերտքն ասէին. տեղիս անա-
պատ է, մինչ դեռ աւուր կայ,
Արձակեա զժողովուրդդ, զի երթեալ 36
շուրջ յագարակս և 'ի գեօղս՝ գնեսցեն
իւրեանց զինչ ուտիցեն, զի աստ ինչ
ուտել ոչ ունին:
Նա պատասխանի ետ և ասէ ցնոսա. 37
դուք տուք դոցա ուտել. ասեն ցնա, եր-
թիցուք գնեսցուք երկերիւր դահեկա-
նի հաց և տացուք դոցա ուտել:
Ասէ ցնոսա. քանի՞ նկանակ ունիք՝ եր- 38
թայք տեսէք. իբրև գիտացին, ասեն
ցնա՝ հինգ, և երկուս ձկունս:
Եւ հրամայեաց նոցա բազմել երախանս 39
երախանս 'ի վերայ դալար խոտոյ:
Եւ բազմեցան դասք դասք՝ ուր հարիւր 40
և ուր յիսուն:
Եւ առեալ զհինգ նկանակն և զերկուս 41
ձկունսն, հայեցաւ յերկինս, օրհնեաց՝
մանրեաց զնկանակսն և ետ ցաշակերտ-

սըն զի արկցեն նոցա, և զերկուս ձկուն-
սըն բաշխեաց ամենեցուն։
42 Կերան և յագեցան։
43 Եւ բարձին զնշխարսն երկոտասան սա-
կառի լի, և 'ի ձկանց անտի։
44 Եւ էին որք կերանն՝ իբրև արք հինգ
հազար։
45 Եւ նոյնժամայն ձեպեաց զաշակերտ- ԵԲ
սըն մտանել 'ի նաւ, և յառաջագոյն
քան զնա երթալ յայնկոյս 'ի Բեթ-
սայիդա, մինչ ինքն զժողովուրդսն ար-
ձակիցէ։
46 Եւ հրաժարեալ 'ի նոցանէ՝ ել 'ի լեառն
կալ յաղօթս։
47 Եւ իբրև երեկոյ եղև, էր նաւն 'ի մէջ
ծովուն և ինքն 'ի ցամաքի։
48 Եւ ետես զնոսա հողմակոծեալս 'ի վա-
րելն, զի էր հողմն ընդդէմ նոցա. և
զչորրորդ պահու գիշերոյն գայ առ նոսա
գնալով 'ի վերայ ծովուն, և կամէր զանց
առնել առ նոքօք։
49 Նոքա իբրև տեսին զի գնայր 'ի վերայ
ծովուն, համարեցան թէ առաչօք ինչ
լինիցի, և զաղաղակ բարձին։
50 Քանզի ամենեքեան տեսին զնա և
խռովեցան. և նա անդէն վաղվաղակի
խօսեցաւ ընդ նոսա և ասէ. քաջալե-
րեցարուք, ես եմ մի երկնչիք։

Եւ ել 'ի նաւն առ նոսա, և դադարեաց 51
հողմն. և առաւել ևս յիմարեալ էին 'ի
միտս իւրեանց և զարմանային յոյժ.
Քանզի և 'ի վերայ հացին ոչ իմացան, 52
զի էր սիրտ նոցա թմբրեալ:
Եւ իբրև անցին յայնկոյս, եկին յեր- 53
կիրն Գեննեսարէթ:
Եւ իբրև ելին 'ի նաւէ անտի՝ իսկ և իսկ 54
ծանեան զնա արք տեղւոյն այնորիկ:
Եւ ընթացեալ այսր անդր ընդ ամենայն 55
գաւառն, սկսան մահճօք բերել զհի-
ւանդս, ուր լսէին թէ անդ իցէ:
Եւ ուր և մտանէր 'ի գեօղս կամ 'ի քա- 56
ղաքս կամ յագարակս, 'ի հրապարակս
դնէին զախտաժէտս, և աղաչէին զնա
զի գոնէ 'ի քղանցս հանդերձից նորա
մերձենայցեն. և որ միանգամ մերձե-
ցանն՝ փրկեցան:

ԳԼ. Է

ԿԳ. Եւ ժողովեցան առ նա Փարիսեցիքն և 1
ոմանք 'ի դպրացն՝ որ եկեալ էին յԵ-
րուսաղեմէ:
Եւ տեսեալ զոմանս յաշակերտացն ան- 2
տի, զի խառնակ ձեռօք, այս ինքն է՝
անլուայ ուտէին հաց, բամբասեցին:
Զի Փարիսեցիքն և ա̃մ Հրեայք՝ եթէ 3
ոչ բռնալիր լուանան զձեռս, հաց ոչ ու-

տեն. ՚քզի ունին զաւանդութ̃ի ծերոցն։
4 Եւ 'ի հրապարակէ մտեալ՝ եթէ ոչ նախ
մկրտիցին, ոչ ուտեն. և այլ ինչ բազում
է զոր ընկալան ունել, մկրտութիւնս
բաժակաց և ստոմանաց և պղնձեաց և
մահճաց։
5 Ապա հարցանեն ցնա Փարիսեցիքն և
դպիրք, թէ ընդէ՞ր աշակերտքն քո ոչ
գնան ըստ աւանդութեան ծերոցն. այլ
խառնակ ձեռօք հաց ուտեն։
6 Նա պատասխանի ետ և ասէ ցնոսա,
թէ բարւոք մարգարէացաւ Եսայի վասն
ձեր կեղծաւորաց, որպէս ասաց. ժո֊
ղովուրդս այս շրթամբք մեծարէ զիս,
և սիրտ նոցա հեռացեալ 'ի բացեայ
են յինէն։
7 Զուր պաշտեն զիս, ուսուցանեն վար֊
դապետութ̃իս զմարդկան պատուիրեալս։
8 Թողեալ զպատուիրանն Ա.յ̃, ունիք ըզ֊
մարդկան աւանդութ̃ի. (մկրտութիւնս
ստոմանաց և բաժակաց, և այլոց նմա֊
նեաց սոյին առնէք բազումս)։
9 Եւ ասէ ցնոսա. բարւոք խոտէք ըզ֊
պատուիրանն Աստուծոյ, զի զձեր աւան֊
դութիւնն հաստատիցէք։
10 Զի Մովսէս ասէ. պատուեա զհայր
քո և զմայր, և որ չարախօսեսցէ զհօրէ
կամ զմօրէ՝ մահու վախճանեսցի։

Եւ դուք ասէք. եթէ ասիցէ ոք ցհայր 11
կամ ցմայր՝ կորբան, որ է պատարագ,
զոր յինէն օգտեսցիս:
Եւ ոչ ևս տայք թոյլ նմա առնել ինչ 12
հօրն կամ մօր:
Եւ անարգէք զբանն Այ ձերով աւան- 13
դութ̃ն, զոր աւանդեցիք. և բազում
ինչ այլ որ այսմ նման է՝ առնէք:
Եւ կոչեալ առ ինքն զամենայն ժողո- 14
վուրդն, ասէ ցնոսա. լուարուք ինձ ա-
մենեքեան և 'ի միտ առէք:
Ոչ ինչ արտաքուստ 'ի մարդ մտեալ՝ ե- 15
թէ կարիցէ պղծել զնա, այլ որ ելանէ
'ի նմանէ՝ այն է որ պղծէ զմարդն:
Որ ունիցի ականջս լսելոյ՝ լուիցէ: 16
ԵԴ Եւ իբրև եմուտ 'ի տուն յամբոխէ ան- 17
տի, հարցանէին զնա աշակերտքն վասն
առակին:
Եւ ասէ ցնոսա. այդպէս և դուք անմիտ 18
էք, ոչ իմանայք եթէ ամենայն որ ար-
տաքուստ 'ի ներքս մտանէ 'ի մարդ, ոչ
կարէ զնա պղծել:
Զի ոչ եթէ 'ի սիրտ նորա մտանէ, այլ 19
յորովայն՝ և արտաքս ելանէ. և սրբէ
զամենայն կերակուրսն:
Եւ ասէր, թէ որ ինչ 'ի մարդոյն ելանէ՝ 20
այն պղծէ զմարդ:
Զի 'ի ներքուստ 'ի սրտէ մարդկան 21

խորհուրդք չարութեան ելանեն. շնու-
թիւնք, պոռնկութիւնք,
22 Գողութիւնք, սպանութիւնք, ագահու-
թիւնք, չարութիւնք, նենգութիւնք, գիջու-
թիւնք, չարակնութիւն, հայհոյութիւն,
ամբարտաւանութիւն, անզգամութիւն։
23 Այս ամենայն չարիք ’ի ներքուստ ելա-
նեն և պղծեն զմարդ։
24 Եւ անտի յարուցեալ եկն ’ի սահմանս
Տիւրոսի և Սիդոնի. և մտեալ ’ի տուն՝
ոչ ումեք կամէր յայտնել, և ոչ կարաց
ծածկել։
25 Լուաւ կին մի զնմանէ, որոյ դուստր իւր
նեղեալ էր յայսոյ պղծոյ, եկն անկաւ
առաջի նորա։
26 Եւ կինն էր հեթանոս՝ Փիւնիկ Ասորի
յազգէ. և աղաչէր զնա զի զդեն հանցէ
’ի դստերէ նորա։
27 Եւ Յիսուս ասէ ցնա. Թոյլ տուր, նախ
յագեսցին մանկունք, զի ոչ է բարւոք
առնուլ զհաց մանկանց և արկանել
շանց։
28 Նա պատասխանի ետ և ասէ. տէր, և
շունք ’ի փշրանաց սեղանոյ մանկանցն
կերակրին։
29 Եւ ասէ ցնա. վասն այդր բանի՝ երթ,
ել դեւն ’ի դստերէ քումմէ։
30 Գնաց ’ի տուն իւր, և եգիտ ելեալ

զդևն. և զդուստրն՝ զի անկեալ դնէր
'ի մահիճս:
Եւ ելեալ միւսանգամ 'ի սահմանացն 31
Տիւրոսի և Սիդոնի, և եկն 'ի ծովեզ-
րն Գալիլեացւոց 'ի մէջ սահմանացն 'ի
Դեկապօլիս:
Եւ բերին առաջի նորա խուլ մի և 32
համր. և աղաչէին զի ձեռն դիցէ 'ի
վերայ նորա:
Եւ առեալ զնա մեկուսի յամբոխէ ան- 33
տի, արկ զմատունս իւր ընդ ականջս
նորա և եթուք անդր, և կալաւ ըզլե-
զուէ նորա:
Հայեցաւ յերկինս՝ յոգւոց եհան և ա- 34
սէ. եփփաթայ, որ է բացիր:
Եւ նոյնժամայն բացան լսելիք նորա և 35
լուծան կապանք լեզուի նորա, և խօսէր
ուղիղ:
Եւ պատուիրեաց նոցա զի մի՛ ումեք ա- 36
սիցեն. և որչափ նա պատուիրէր նոցա,
նոքա ևս առաւել քարոզէին:
Եւ ևս քան զևս զարմանային և ասէին. 37
զամենայն ինչ բարւոք գործեաց սա, զի
խլից լսել տայ և համրոց խօսել:

ԳԼ. Ը

ԵԶ Յաւուրսն յայնոսիկ դարձեալ ժողո- 1
վուրդ բազում էր, և ինչ ոչ ունէին

ուտել. կոչեաց զաշակերտսն իւր և ասէ
ցնոսա:
2 Գթամ ես 'ի վերայ ժողովրդեանդ. զի
արդ երեք աւուրք են մինչ առ իս են, և
ոչ ունին զինչ ուտիցեն:
3 Եւ եթէ արձակեմ զդոսա նօթիս 'ի
տունս իւրեանց՝ նքթիցեն 'ի ճանապար-
հի. զի ոմանք 'ի դոցանէ 'ի հեռաստա-
նէ եկեալ են:
4 Պատասխանի ետուն նմա աշակերտքն
նորա. ուստի՞ կարես յագեցուցանել
զդոսա հացիւ յանապատի աստ:
5 Եւ հարցանէր զնոսա. քանի՞ նկանակ
հաց ունիք. և նոքա ասեն, եօթն:
6 Եւ հրամայեաց ժողովրդեանն բազմել
'ի վերայ երկրի. և առեալ զեօթն նկա-
նակն՝ գոհացաւ եբեկ, և տայր ցաշա-
կերտսն զի արկցեն. և արկին առաջի
ժողովրդեանն:
7 Եւ ձկունս սակաւ ունէին, և զայն ևս
օրհնեաց և հրամայեաց արկանել:
8 Կերան և յագեցան, և բարձին զնշխարս
կոտորոցն եօթն զամբիւղ:
9 Եւ էին որ կերանն իբրև չորք հազարք,
և արձակեաց զնոսա:
10 Եւ նոյնժամայն մտեալ 'ի նաւ համ- ԵԼ
դերձ աշակերտօքն՝ եկն 'ի կողմանս
Դաղմանունեայ:

Ելին Փարիսեցիքն և սկսան վիճել ընդ 11
նմա, և խնդրէին 'ի նմանէ նշան յեր-
կնից՝ փորձելով զնա։

Եւ զայրացաւ յոգի իւր և ասէ․ զի՞ է 12
զի ազգս այս նշան խնդրէ․ ամէն ասեմ
ձեզ, թէ տացի նշան ազգիս այսմիկ։

Եթող զնոսա, դարձեալ եմուտ 'ի նաւ 13
և գնաց յայնկոյս։

Եւ մոռացան հաց բառնալ․ բայց միայն 14
մի նկանակ ունէին ընդ իւրեանս 'ի
նաւին։

Եւ պատուիրէր նոցա և ասէր․ զգոյշ 15
եղերուք 'ի խմորոյ անտի Փարիսեցւոց՝
և 'ի խմորոյ Հերովդիանոսաց։

Եւ խորհէին ընդ միմեանս և ասէին, 16
թէ զի հացս ոչ ունիմք։

Գիտաց Յիսուս և ասէ ցնոսա․ զի՞ խոր- 17
հիք 'ի սիրտս ձեր թերահաւատք, թէ
հաց ոչ ունիք․ տակաւին ո՞չ իմանայք և
ո՞չ յիշէք․ ապշութիւն ունի զսիրտս ձեր։

Աչք գոն և ոչ տեսանէք, ականջք են 18
և ոչ լսէք, և ոչ իմանայք տակաւին և
ոչ յիշէք։

Յորժամ զհինգ նկանակն 'ի հինգ հա- 19
զարսն, և քանի՞ սակառի լի բարձիք
զկոտորոցն․ և ասեն, երկոտասան։

Եւ յորժամ զեօթն նկանակն 'ի չորս 20
հազարսն, քանի՞ զամբիղ լի բարձիք

զկոտորոցն. և նոքա ասեն, եօթն։
21 Եւ ասէ ցն̃ս, իսկ զիա՞րդ ոչ իմանայք։
22 Գան 'ի Բեթսայիդա, և ածեն առաջի
նորա կոյր մի, և աղաչէին զնա զի մեր-
ձեսցի 'ի նա։
23 Եւ առեալ զձեռանէ կուրին՝ եհան ար-
տաքոյ շինին, եթուք յաչս նորա, և
ձեռն եդ 'ի վերայ նորա, և հարցանէր
զնա թէ տեսանիցէ՞ ինչ։
24 Բացաւ և ասէր. տեսանեմ զմարդիկս
զի շրջին իբրև զծառս։
25 Դարձեալ եդ ձեռս 'ի վերայ աչաց նո-
րա՝ եբաց, և տեսանէր. ողջացաւ և
տեսանէր համարձակ զամենայն։
26 Արձակեաց զնա 'ի տուն իւր և ասէ. 'ի
շէնդ մի մտանիցես, այլ երթ 'ի տուն
քո. և յորժամ 'ի շէնն մտանիցես՝ մի
ումեք ասիցես 'ի շինին։
27 Եւ ել Յիսուս աշակերտօքն հանդերձ ՁԿ
'ի շէնս Կեսարեայ Փիլիպպեայ, և 'ի
ճանապարհին հարցանէր ցաշակերտսն
և ասէր. զո՞ ուստէք ասեն զինէն մար-
դիկս թէ իցեմ։
28 Նոքա ետուն պատասխանի և ասեն.
զՅովհաննէս Մկրտիչ, և այլք զԵղիա,
և այլք զմի ոք 'ի մարգարէից անտի։
29 Ասէ ցնոսա. իսկ դուք զո՞ ուստէք ասէք
զինէն թէ իցեմ. պատասխանի ետ Պե-

տրոս, և ասէ ցնա. դու ես Քրիստոսն։
Եւ սաստեաց ՚ի նոսա զի մի՛ ումեք ա֊ 30
սիցեն զնմանէ։
Եւ սկսաւ ուսուցանել զնոսա, թէ 31
պարտ է որդւոյ մարդոյ բազում չար֊
չարանս ընդունել, և անարգել յերի֊
ցանց և ՚ի քահանայապետից և ՚ի դպ֊
րաց՝ և մեռանել, և յերիր աւուր
յառնել։
Եւ համարձակ զբանն խօսեցաւ. և ա֊ 32
ռեալ զնա մեկուսի Պետրոսի՝ սկսաւ
սաստել նմա։
Եւ նա դարձաւ ետես զաշակերտսն, 33
սաստեաց Պետրոսի և ասէ. երթ յետս
իմ սատանայ, զի ոչ խորհիս դու զաս֊
տուծոյն այլ զմարդկան։
Եւ կոչեցեալ առ ինքն զժողովուրդն 34
աշակերտօքն հանդերձ՝ ասէ ցնոսա.
եթէ ոք կամի գալ զկնի իմ, ուրասցի
զանձն իւր և բարձցէ զխաչ իւր՝ և ե֊
կեսցէ զկնի իմ։
Զի որ կամիցի ապրեցուցանել զանձն 35
իւր կորուսցէ զնա, և որ կորուսցէ
զանձն իւր վասն աւետարանին, ապրե֊
ցուսցէ զնա։
Զի՞նչ օգուտ է մարդոյ եթէ զաշխարհս 36
ամենայն շահեսցի, և զանձն իւր տու֊
ժեսցէ։

37 Քանզի զի՞նչ տացէ մարդ փոխանակ
անձին իւրոյ։
38 Զի որ ոք ամօթ համարեսցի զիս և
զբանս իմ 'ի շնացող և 'ի մեղաւոր ազ-
գիս այսմիկ, և որդի մարդոյ յամօթ-
արասցէ զնա յորժամ եկեսցէ փառօք
հօր իւրոյ և հրեշտակաց սրբոց։
39 Եւ ասէ ցնոսա. ամէն ասեմ ձեզ, զի են
ոմանք 'ի սոցանէ որ աստ կան, որք մի՛ ճա-
շակեսցեն զմահ՝ մինչև տեսցեն զարքա-
յութ՟ին Աստուծոյ եկեալ զօրութեամբ։

ԳԼ. Թ

1 Եւ յետ վեց աւուր առնու ընդ իւր Յի-
սուս զՊետրոս և զՅակովբոս և զՅով-
հաննէս, և հանէ զնոսա 'ի լեառն մի
բարձր առանձինն. և յայլակերպս եղև
առաջի նոցա։
2 Եւ ձորձք նորա եղեն փայլուն սպիտակ
յոյժ, որպէս թափիչք երկրի ոչ կարեն
այնպէս սպիտակացուցանել։
3 Եւ երևեցաւ նոցա Եղիա Մովսեսիւ
հանդերձ, և խօսէին ընդ Յիսուսի։
4 Պատասխանի ետ Պետրոս և ասէ ցՅի-
սուս. ռաբբի, բարւոք է մեզ աստ լինել.
և արասցուք երիս տաղաւարս՝ մի քեզ և
մի Մովսեսի և մի Եղիայի։
5 Քանզի ոչ գիտէր զի՞նչ խօսէր, զի

զարհուրեալ էին։
Եւ եղեւ ամպ մի հովանի 'ի վերայ նո֊ 6
ցա. ձայն եղեւ յամպոյ անտի եւ ասէ.
դա է որդի իմ սիրելի, դմա լուարուք։
Եւ յանկարծակի հայեցեալ այսր անդր՝ 7
ոչ եւս զոք ուրեք տեսին, բայց միայն
զՅիսուս ընդ իւրեանս։
Եւ մինչդեռ իջանէին 'ի լեռնէ անտի, 8
պատուիրեաց նոցա զի մի ումեք պատ֊
մեսցեն զոր տեսինն, բայց յորժամ որ֊
դի մարդոյ'ի մեռելոց յարիցէ։
Եւ նոքա զբանն 'ի մտի ունէին, եւ 9
խնդրէին ընդ միմեանս թէ զինչ իցէ
'ի մեռելոցն յառնել։
Հարցին զնա եւ ասեն. զի՞նչ է 'այն զոր 10
դպիրքն ասեն եթէ նախ Եղիայի պարտ
է գալ։
Նա պատասխանի ետ նոցա եւ ասէ. Եղիա 11
նախ եկեալ յարդարեսցէ զամենայն. իսկ
զիա՞րդ գրեալ է զորդւոյ մարդոյ, զի բա֊
զում ինչ չարչարեսցի եւ անարգեսցի։
Այլ ես ասեմ ձեզ, եթէ Եղիա եկն, 12
եւ արարին ընդ նմա զինչ եւ կամեցան.
որպէս եւ գրեալ է վասն նորա։
ՁԲ Եւ եկեալ առ աշակերտսն, տեսին ամ֊ 13
բոխ շուրջ զնոքօք, եւ զդպիրսն՝ զի վի֊
ճէին ընդ նոսա։
Եւ վաղվաղակի ա՟մ ժողովուրդն իբրեւ 14

տեսին զնա՝ զարմացան, և ընդ առաջ
ընթացեալ ողջոյն տային նմա։
15 Եւ եհարց ցնոսա թէ զի՞նչ վիճէիք
ընդ նոսա։
16 Պատասխանի ետ մի ոմն ՚ի ժողովրդե֊
նէն և ասէ. վարդապետ, ածի զորդի իմ
առ քեզ, զոր ունի այս համր։
17 Եւ ուր հասանէ՝ զարկուցանէ զնա, և
փրփրէ և կրճտէ զատամունս իւր և ցա֊
մաքի. և ասացի ցաշակերտսն քո զի
հանցեն, և ոչ կարացին հանել զնա։
18 Պատասխանի ետ նոցա և ասէ. ո՜վ ազգ
անհաւատ, մինչև յե՞րբ իցեմ առ ձեզ,
մինչև ցե՞րբ անսայցեմ ձեզ. ածէք զնա
առ իս։
19 Եւ ածին զնա առ նա. իբրև ետես զնա
այսն, վաղվաղակի շարժլեաց զնա, և
անկեալ յերկիր թաւալէր և փրփրէայր։
20 Եհարց ցհայր նորա և ասէ. քանի՞ ժա֊
մանակք են յորմէ հետէ այդ եղև դմա.
և նա ասէ, ՚ի մանկութենէ։
21 Բազում անգամ ՚ի հուր արկանէ զդա և
՚ի ջուր՝ զի կորուսցէ. արդ եթէ կարող
ինչ ես, օգնեա մեզ տէր՝ գթացեալ ՚ի
վերայ մեր։
22 Եւ Յիսուս ասէ ցնա. ասացեր թէ կա֊
րող ես, ամենայն ինչ հնարաւոր է այնմ
որ հաւատայն։

Եւ վաղվաղակի աղաղակեաց հայր ման- 23
կանն և ասէ. հաւատամ, օգնեա ան-
հաւատութեանս իմում:
Իբրև ետես Յիսուս եթէ կուտի ժողո- 24
վուրդն 'ի վերայ, սաստեաց այսոյն պղ-
ծոյ և ասէ. համրդ և խուլ այս, ես
տամ քեզ հրաման՝ ել 'ի դմանէ, և այլ
ևս մի մտանիցես 'ի դա:
Եւ աղաղակեաց և յոյժ լլկեաց զնա 25
և ել. և եղև պատանեակն իբրև զմե-
ռեալ, մինչև բազմաց իսկ ասել թէ
մեռաւ:
Եւ Յիսուս կալաւ զձեռանէ նորա՝ յա- 26
րոյց զնա և կանգնեցաւ:
Եւ իբրև եմուտ նա 'ի տուն, աշակերտ- 27
քըն առանձինն հարցին զնա. մեք ընդէ՞ր
ոչ կարացաք հանել զնա:
Եւ ասէ ցնոսա. այդ ազգ ոչ իւիք ելա- 28
նէ, եթէ ոչ պահօք և աղօթիւք:
ՁԳ Եւ անտի ելեալ անցանէին առ Գալի- 29
լեացւովք. և ոչ կամէր եթէ ոք գի-
տասցէ:
Քանզի ուսուցանէր զաշակերտսն իւր 30
և ասէր ցնոսա թէ որդի մարդոյ մատ-
նելոց է 'ի ձեռս մարդկան, և սպանցեն
զնա. և իբրև սպանցի՝ յերիր աւուր
յառնէ:
Եւ նոքա ոչ գիտէին զբանն, և երկն- 31

չէին հարցանել զնա։
32 Եկն 'ի Կափառնաում. և իբրև եմուտ
'ի տուն, հարցանէր զնոսա. զի՞նչ վի-
ճէիք զճանապարհայն ընդ միմեանս։
33 Եւ նոքա լուռ լինէին. քանզի ընդ մի-
մեանս վիճէին 'ի ճանապարհին թէ ով
մեծ իցէ։
34 Եւ իբրև նստաւ, կոչեաց զերկոտա-
սանսն և ասէ ցնոսա. եթէ ոք կամի ա-
ռաջին լինել՝ եղիցի ամենեցուն կրտ-
սեր և ամենեցուն պաշտօնեայ։
35 Եւ առեալ մանուկ մի կացոյց 'ի մէջ
նոցա, և ընկալեալ զնա 'ի գիրկս իւր՝
ասէ ցնոսա։
36 Որ միանգամ յայսպիսի մանկտւոյ ըն-
կալցի յանուն իմ, զիս ընդունի. և որ
զիս ընդունիցի, ոչ զիս ընդունի՝ այլ
զայն որ առաքեացն զիս։
37 Պատասխանի ետ նմա Յովհաննէս և
ասէ. վարդապետ, տեսաք զոմն զի յա-
նուն քո դևս հանէր և զմեր կնի ոչ
շրջէր, և արգելաք զնա։
38 Եւ նա ասէ. մի՛ արգելուք զնա, զի ոչ
ոք է որ առնէ զօրութիւնս յանուն իմ
և կարիցէ հայհոյել զիս։
39 Զի որ ոչն է ընդ մեզ հակառակ, 'ի մեր
կոյս է։
40 Եւ որ ոք արբուսցէ ձեզ ջուր բաժակաւ

յանուն յայս թէ դուք Քրիստոսի էք,
ամէն ասեմ ձեզ, մի՛ կորուսցէ զվարձս
իւր։

Եւ որ ոք գայթագղեցուսցէ զմի ՛ի փո- 41
քրկանցս որ հաւատան յիս, լաւ էր
նմա առաւել եթէ արկեալ էր ընդ
պարանոց նորա երկան իշոյ և ընկե-
ցեալ՛ի ծով։

Եւ եթէ գայթագղեցուսցէ զքեզ ձեռն 42
քո, հատ ընկեա՛ ի քէն. զի լաւ իցէ
քեզ խեղ մտանել՛ի կեանսն յաւիտենից,
քան երկուս ձեռս ունել և երթալ՛ի
գեհեն ՛ի հուրն անշէջ։

(Ուր որդն նոցա ոչ մեռանի և հուրն 43
ոչ շիջանի։)

Եւ եթէ ոտն քո գայթագղեցու- 44
ցէ զքեզ, հատ ընկեա զնա ՛ի քէն.
լաւ իցէ քեզ կաղ մտանել՛ի կեանսն
յաւիտենից, քան երկուս ոտս ու-
նել և անկանել՛ի գեհեն (՛ի հուրն
անշէջ։

Ուր որդն նոցա ոչ մեռանի և հուրն ոչ 45
շիջանի)։

Եւ եթէ ակն քո գայթագղեցուսցէ 46
զքեզ, հան զնա ՛ի բաց. լաւ իցէ քեզ
միով ական մտանել յարքայութիւն
Աստուծոյ, քան երկուս աչս ունել և ան-
կանել՛ի գեհեն։

47 Ուր որդն նոցա ոչ մեռանի և հուրն ոչ
շիջանի:
48 Զի ամենայն ինչ հրով յաղեսցի, (և
ամենայն ողջակէզ աղիւ յաղեսցի):
49 Բարւոք է աղ, և եթէ աղն անհամես֊
ցի՝ իւ համեմեսցի. արդ դուք կալարուք
յանձինս ձեր զաղն, և խաղաղութիւն
արարէք ընդ միմեանս:

Գ Լ· Ժ

1 Եւ անտի յարուցեալ գայ՚ի սահմանս ԶԳ·
Հրէաստանի յայնկոյս Յորդանանու. և
երթայր դարձեալ խռնեալ ժողովուրդն
առ նա, և որպէս սովոր էր՝ միւսանգամ
ուսուցանէր զնոսա:
2 Իսկ Փարիսեցիքն մատուցեալ փորձելով
հարցանէին զնա և ասէին, եթէ արժա՞ն
իցէ առն զկին իւր արձակել:
3 Նա պատասխանի ետ նոցա և ասէ. զի՞նչ
պատուիրեաց ձեզ Մովսէս:
4 Եւ նոքա ասեն. Մովսէս հրաման ետ
գիր մեկնելոյ գրել և արձակել:
5 Պատասխանի ետ Յիսուս և ասէ ցնոսա.
վասն խստասրտութեան ձերոյ գրեաց
ձեզ զպատուիրանն զայն:
6 Այլ՚ի սկզբանէ արարածոց՝ արու և էգ
արար զնոսա Աստուած և ասէ.
7 Վասն այսորիկ թողցէ այր զհայր իւր

և զմայր, և երթիցէ զհետ կնոջ իւրոյ։
Եւ եղիցին երկուքն 'ի մարմին մի. և 8
այնուհետև ոչ են երկու, այլ մարմին մի։
Արդ զոր Աստուած զուգեաց, մարդ մի՛ 9
մեկնեսցէ։
Եւ 'ի տան դարձեալ աշակերտքն զնոյն 10
հարցին զնա։
Եւ ասէ ցնոսա. եթէ այր արձակեսցէ 11
զկին իւր և արասցէ այլ, շնայ։
Եւ կին եթէ ելցէ յառնէ իւրմէ և ե- 12
ղիցի առն այլում, շնայ։
ՁԵ Եւ մատուցանէին առ նա մանկտի զի 13
ձեռն դիցէ նոցա. իսկ աշակերտքն սաս-
տէին այնոցիկ՝ որ մատուցանէինն։
Իբրև ետես Յս, բարկացեալ սաստեաց 14
նոցա և ասէ. Թոյլ տուք մանկտւոյդ
գալ առ իս և մի՛ արգելուք զդոսա, զի
այդպիսեացդ է արքայութի Աստուծոյ։
Ամէն ասեմ ձեզ, որ ոչ ընկալցի զար- 15
քայութիւն Աստուծոյ իբրև զմանուկ՝
ոչ մտցէ 'ի նա։
Եւ առեալ զնոսա 'ի գիրկս, ձեռն եդ 'ի 16
վերայ և օրհնեաց զնոսա։
Եւ ընդ ելանելն նորա անտի 'ի Ճանա- 17
պարհ, ահաւասիկ ոմն մեծատուն ըն-
թացեալ 'ի ծունր իջանէր, հարցանէր
զնա և ասէր. վարդապետ բարի, զի՞նչ
արարից զի զկեանսն յաւիտենականս

ժառանգեցից։
18 Եւ Յիսուս ասէ ցնա. զի՞ ասես զիս
բարի, չի՛ք ոք բարի, բայց մի Աստուած։
19 Զպատուիրանս գիտես. մի՛ շնար, մի՛
սպանաներ, մի՛ գողանար, մի՛ սուտ վը-
կայեր, պատուեա զհայր քո և զմայր։
20 Նա պատասխանի ետ և ասէ ցնա. վար-
դապետ, զայդ ամենայն արարի ՚ի ման-
կութենէ իմմէ, արդ զի՞նչ ևս պակաս
իցեմ։
21 Եւ Յիսուս հայեցեալ ՚ի նա սիրեաց
զնա, և ասէ ցնա. մի ինչ պակաս է ՚ի
քէն. եթէ կամիս կատարեալ լինել՝ երթ
զոր ինչ ունիս վաճառեա և տուր աղ-
քատաց, և ունիցիս գանձս յերկինս,
և առ զխաչն և եկ զկնի իմ։
22 Եւ նա խոժոռեալ ընդ բանն գնաց
տրտում, զի ունէր ինչս բազումս։
23 Եւ հայեցեալ յայսկոյս յայնկոյս Յի-
սուս, ասէ ցաշակերտսն. զիա՞րդ դժուա-
րին է՝ որ զինչս ունին, մտանել յար-
քայութիւն Աստուծոյ։
24 Եւ աշակերտքն զարմացեալ էին ՚ի վերայ
բանիցն նորա. իսկ Յս դարձեալ պա-
տասխանի ետ նոցա և ասէ. որդեակք,
ո՞րչափ դժուարին է յուսացելոց յինչս՝
մտանել յարքայութիւն Աստուծոյ։
25 Դիւրին է մալխոյ ընդ ծակ ասղան ան-

ցանել՝ քան մեծատան յարքայութիւն
Աստուծոյ մտանել։
Եւ նոքա առաւել ևս զարմանային և 26
ասէին ընդ միմեանս. իսկ ո՞ կարասցէ
ապրել։
Հայեցեալ ընդ նոսա Յիսուս ասէ. առ 27
՚ի մարդկանէ այդ անհնարին է, այլ ոչ
առ ՚ի յԱստուծոյ։
ՂԶ Սկսաւ ասել ցնա Պետրոս. ահաւասիկ 28
մեք թողաք զա̃մ և եկաք զկնի քո։
Պատասխանի ետ Յիսուս և ասէ. ամէն 29
ասեմ ձեզ, ոչ ոք է որ եթող զտուն կամ
զեղբարս կամ զքորս կամ զհայր կամ
զմայր կամ զորդիս կամ զագարակս վասն
իմ կամ վասն աւետարանին։
Եթէ ոչ առնուցու հարիւրապատիկ 30
այժմ յայսմ ժամանակի տունս և եղ-
բարս և քորս և մարս և որդիս՝ և ագա-
րակս հալածանօք հանդերձ, և յաշ-
խարհին որ գալոց է՝ զկեանս յաւիտե-
նականս։
Զի բազումք եղիցին առաջինք յետինք, 31
և յետինք առաջինք։
Եւ էին ՚ի ճանապարհի մինչ դեռ ելա- 32
նէին յԵրուսաղէմ. և երթայր Յիսուս
առաջի քան զնոսա, և զարմացեալ էին
որ զհետն երթային և երկնչէին։
ՂԷ Եւ առեալ միւսանգամ զերկոտասանսն

առանձինն, սկսաւ ասել նոցա զի՛նչ անցք
անցանելոց իցեն ընդ նա ։
33 Թէ ահաւասիկ ելանեմք յԵրուսաղէմ,
և որդի մարդոյ մատնեսցի քահանայա֊
պետիցն և դպրաց, և դատեսցեն զնա 'ի
մահ, և մատնեսցեն զնա հեթանոսաց ։
34 Եւ կատակեսցեն զնովաւ և հարկանի֊
ցեն զնա և թքանիցեն 'ի նա և սպան֊
ցեն, և յերիր աւուր յարիցէ ։
35 Եւ երթային առ նովաւ Յակովբոս և
Յովհաննէս՝ որդիքն Զեբեդեայ, և
ասեն ցնա. վարդապետ, կամիմք զի զոր
ինչ խնդրեսցուք 'ի քէն՝ արասցես մեզ ։
36 Եւ նա ասէ ցնոսա. զի՞նչ կամիք յինէն
զի արարից ձեզ ։
37 Եւ նոքա ասեն ցնա. տուր մեզ զի նստ֊
ցուք մի յաջմէ քումմէ և մի յահեկէ 'ի
փառսն քում ։
38 Պատասխանի ետ Յիսուս և ասէ ցնո֊
սա. ոչ գիտէք զի՛նչ խնդրէք, կարէ՞ք
ըմպել զբաժակն զոր ես ըմպելոց եմ,
կամ զմկրտութիւնն մկրտիլ զոր ես մը֊
կրտելոցն եմ ։
39 Եւ նոքա ասեն ցնա, կարեմք. և Յիսուս
ասէ ցնոսա. զբաժակն զոր ես ըմպելոց
եմ ըմպիցէք, և զմկրտութիւնն զոր ես
մկրտելոց եմ՝ մկրտիցիք ։
40 Այլ նստուցանել ընդ աջմէ իմմէ և ընդ

ահեկէ՝ ոչ է իմ տալ, այլ որոց պատրաս-
տեալ իցէ։
Եւ լուեալ զայն տասանցն, սկսան բար- 41
կանալ Յակոբայ և Յովհաննու։
Եւ Յիսուս կոչեաց զնոսա առ ինքն, և 42
ասէ ցնոսա. գիտէք զի որ յանուան իշ-
խանքն են հեթանոսաց, տիրեն նոցա.
և մեծամեծք նոցա իշխեն նոցա։
Ոչ նոյնպէս լիցի և 'ի ձերում միջի. 43
այլ որ կամիցի 'ի ձէնջ մեծ լինել՝ եղիցի
ձեր պաշտօնեայ։
Եւ որ կամիցի 'ի ձէնջ առաջին լինել՝ 44
եղիցի ամենեցուն ծառայ։
Քանզի և որդի մարդոյ ոչ եկն առնուլ 45
պաշտօն՝ այլ պաշտել, և տալ զանձն իւր
փրկանս փոխանակ բազմաց։
ԽԿ Եւ գան յԵրիքով, և ընդ ելանելն նո- 46
րա յԵրիքովէ աշակերտօքն և բազում
ժողովրդովք, որդի Տիմէի Բարտիմէոս
կոյր նստէր մուրացիկ յանցս Ճանա-
պարհի։
Իբրև լուաւ թէ Յիսուս Նազովրեցի է, 47
սկսաւ աղաղակել և ասել. որդի Դաւ-
թի Յիսուս, ողորմեա ինձ։
Եւ սաստէին նմա բազումք զի լռեսցէ. 48
և նա առաւել ևս աղաղակէր. որդի
Դաւթի, ողորմեա ինձ։
Զտեղի առ Յիսուս և հրամայեաց կո- 49

չել զնա. կոչեն զկոյրն և ասեն ցնա.
քաջալերեաց արի կոչէ զքեզ։
50 Եւ նորա ընկեցեալ զձորձս իւր, յա-
րեաւ եկն առ Յիսուս։
51 Պատասխանի ետ նմա Յիսուս և ասէ.
զի՞նչ կամիս թէ արարից քեզ. ասէ ցնա
կոյրն. ռաբբունի, զի բացայց։
52 Եւ Յիսուս ասէ ցնա. երթ, հաւատք քո
կեցուցին զքեզ. և վաղվաղակի բացաւ և
երթայր զհետ նորա 'ի ճանապարհին։

ԳԼ. ԺԱ.

1 Եւ յորժամ մերձ եղեն յԵրուսաղէմ
'ի Բեթփագէ և 'ի Բեթանիա մօտ 'ի
լեառն Ձիթենեաց, առաքէ երկուս յա-
շակերտաց անտի։
2 Եւ ասէ ցնոսա. երթայք դուք 'ի գեօղդ
որ ընդդէմ ձեր կայ. և նոյնժամայն ի-
բրև մտանէք 'ի նա, գտանէք յաւանակ
մի կապեալ. յորոյ վերայ ոչ ոք 'ի մարդ-
կանէ նստաւ, լուծէք զնա և ածէք։
3 Եւ եթէ ոք ասասցէ ձեզ՝ եթէ զի՞ լու-
ծանէք զյաւանակդ, ասասջիք եթէ
տեառն իւրում պիտոյ է, և վաղվաղակի
առաքեսցէ զնա այսր։
4 Չոգան և գտին զյաւանակն կապեալ
առ դուրս արտաքոյ 'ի փողոցի անդ, և
լուծին զնա։

Եւ ոմանք յորոց անդն կային՝ ասեն 5
ցնոսա. զի՞ գործէք, զի՞ լուծանէք ըզ-
յաւանակդ։
Եւ նոքա ասեն ցնոսա որպէս ասացն 6
Յիսուս, և թոյլ ետուն նոցա։
Ածեն զյաւանակն առ Յիսուս, և ար- 7
կանեն 'ի վերայ նորա հանդերձս, և նըս-
տաւ 'ի վերայ նորա։
Եւ բազումք զհանդերձս իւրեանց տա- 8
րածանէին 'ի վերայ ճանապարհին, և
այլք ոստս 'ի ծառոց հատանէին և ար-
կանէին զճանապարհաւն։
Եւ որ առաջին և զկնի երթային՝ ա- 9
ղաղակէին և ասէին, ովսաննա բարձրե-
լոյն։
Օրհնեալ որ գասդ յանուն տեառն, օր- 10
հնեալ թագաւորութիւնդ եկեալ հօր
մերոյ Դաւթի, խաղաղութիւն յերկինս
և փառք 'ի բարձունս։
Եւ եմուտ Յիսուս յԵրուսաղէմ 'ի տա- 11
ճարն, և հայեցաւ շուրջ զամենեքումբք.
և զի էր երեկոյացեալ ժամն, ել 'ի Բե-
թանիա երկոտասանիւքն հանդերձ։
ԻԲ Եւ 'ի վաղիւ անդր մինչդեռ ելանէին 'ի 12
Բեթանիա՝ քաղցեաւ։
Եւ ետես թզենի մի 'ի բացուստ տե- 13
րեւալից, և եկն թէ գտանիցէ ինչ 'ի
նմա. և իբրև եկն 'ի նա՝ ոչ ինչ եգիտ

բայց միայն տերեւ. զի ոչ իսկ էր ժա-
մանակ թզոյ:
14 Պատասխանի ետ եւ ասէ ցնա. մի եւս
ոք յաւիտեան 'ի քէն պտուղ կերիցէ. եւ
լսէին աշակերտքն նորա:
15 Գան յԵրուսաղէմ, եւ մտեալ 'ի տա-
ճարն՝ սկսաւ հանել զվաճառականսն
եւ զգնողս որ էին 'ի տաճարին. եւ ըզ-
սեղանս հատավաճառացն ցրուեաց, եւ
զաթոռս աղաւնեվաճառացն կործա-
նեաց:
16 Եւ ոչ թողոյր եթէ ոք անօթ ինչ ան-
ցուցանիցէ ընդ տաճարն:
17 Եւ ուսուցանէր եւ ասէր ցնոսա. գրեալ
է, տուն իմ տուն աղօթից կոչեսցի ա-
մենայն հեթանոսաց, եւ դուք արարէք
զդա այրս աւազակաց:
18 Լուան քահանայապետքն եւ դպիրք. եւ
խնդրէին թէ որպէս կորուսցեն զնա,
բայց երկնչէին 'ի նմանէ. զի ամենայն
ժողովուրդն զարմացեալ էր ընդ ուսումն
նորա:
19 Եւ իբրեւ երեկոյ լինէր՝ արտաքոյ քան
զքաղաքն ելանէին:
20 Եւ մինչդեռ այգուցն առ նովաւ անցա-
նէին, տեսին զթզենին ցամաքեալ յար-
մատոյ:
21 Յիշեաց Պետրոս եւ ասէ ցնա. ռաբբի,

ահաւասիկ թզենին զոր անիծեր՝ ցա-
մաքեցաւ։

Պատասխանի ետ Յիսուս և ասէ ցնոսա․ 22
եթէ ունիցիք զհաւատսն Աստուծոյ,
Ամէն ասեմ ձեզ, որ ոք ասիցէ լերինս 23
այսմիկ՝ բարձիր և անկիր 'ի ծով, և ոչ
երկմտիցէ 'ի սրտի իւրում, այլ հաւա-
տայցէ թէ զոր ասէն լինի, եղիցի նմա
զոր ինչ և ասիցէ։

Վասն այսորիկ ասեմ ձեզ, զամենայն 24
ինչ վասն որոյ աղօթս արարեալ խնդ-
րիցէք՝ և հաւատայցէք թէ առնուցուք,
եղիցի ձեզ։

Եւ յորժամ յաղօթս կայցէք, թողու- 25
ցուք՝ եթէ ունիցիք ինչ զումեքէ․ զի և
հայրն ձեր որ յերկինս է՝ թողցէ ձեզ
զյանցանս ձեր։

(Զի եթէ դուք ոչ թողուցուք, և ոչ 26
հայրն ձեր որ յերկինս է՝ թողցէ ձեզ
զյանցանս ձեր)։

ԻԳ Գան միւսանգամ յԵրուսաղէմ․ և մինչ 27
դեռ 'ի տաճարի անդ զգնայր, գան առ
նա քահանայապետքն և դպիրք և ծերք։

Եւ ասեն ցնա․ որո՞վ իշխանութեամբ 28
առնես զայդ, և ո՞վ ետ քեզ զիշխանու-
թիւնդ զայդ։

Պատասխանի ետ Յիսուս և ասէ ցնոսա․ 29
հարցից և ես զձեզ բան մի, տուք ինձ

պատասխանի. և ես ասացից ձեզ որով
իշխանութեամբ առնեմ զայս :
30 Մկրտութիւնն Յովհաննու յերկնից
էր եթէ 'ի մարդկանէ, տուք ինձ պա-
տասխանի :
31 Խորհէին ընդ միմեանս և ասէին. եթէ
ասեմք եթէ յերկնից, ասէ մեզ՝ իսկ
ընդէ՞ր ոչ հաւատացէք նմա :
32 Այլ եթէ ասեմք՝ 'ի մարդկանէ, երկըն-
չիմք 'ի ժողովրդենէն. զի ամենեքին
գիտէին զՅովհաննէս թէ մարգարէ էր :
33 Պատասխանի ետուն և ասեն ցՅիսուս,
չգիտեմք. և Յիսուս ետ նոցա պատաս-
խանի և ասէ, և ոչ ես ասեմ ձեզ որով
իշխանութեամբ առնեմ զայս :

ԳԼ. ԺԲ

1 Եւ սկսաւ խօսել ընդ նոսա առակօք
և ասել : Այր մի տնկեաց այգի, և
ած շուրջ զնովաւ ցանգ, և գուբ հըն-
ձան փորեաց, և շինեաց աշտարակ. և
ետ զնա մշակս և գնաց 'ի տար աշ-
խարհ :
2 Եւ առաքեաց առ մշակսն 'ի ժամանակի
ծառայ մի, զի 'ի մշակաց անտի առցէ 'ի
պտղոյ այգւոյն :
3 Եւ նոցա կալեալ գան հարին զնա, և
արձակեցին :

Դարձեալ առաքեաց առ նոսա այլ ծա- 4
ռայ, և զնա կառափնատեցին և արձա-
կեցին անարգեալ:
Եւ դարձեալ ա՛յլ առաքեաց, և զնա սպա- 5
նին. և զբազումս այլս զոմանս հարկա-
նէին և զոմանս սպանանէին:
Ապա որդի մի էր իւր սիրելի, զնա ա- 6
ռաքեաց առ նոսա յետոյ և ասէ. թե-
րևս ամաչեսցեն յորդւոյ աստի իմմէ:
Իսկ մշակքն իբրև տեսին զնա թէ գայ՝ 7
ասեն ցմիմեանս. սա է ժառանգն, ե-
կայք սպանցուք զսա և մեր լիցի ժա-
ռանգութիւնն:
Եւ կալեալ զնա սպանին և հանին ար- 8
տաքոյ այգւոյն:
Արդ զի՞նչ արասցէ տէր այգւոյն. եկես- 9
ցէ և կորուսցէ զմշակսն, և տացէ զայ-
գին 'ի ձեռս այլոց:
Եւ ո՛չ զգիրն զայն իցէ ընթերցեալ ձեր, 10
թէ զվէմն զոր անարգեցին շինողքն, նա
եղև գլուխ անկեան:
Ի տեառնէ եղև այս, և է սքանչելի 11
յաչս մեր:
Եւ խնդրէին զնա ունել, և երկեան 'ի 12
ժողովրդենէ անտի, զի գիտացին թէ առ
նոսա ասաց զառակն. և թողին զնա և
գնացին:
Եւ առաքեն առ նա զոմանս 'ի Փարի- 13

սեցւոց անտի և 'ի Հերովդիանոսաց, զի
զնա որսասցեն բանիւ։
14 Եւ նոքա եկեալ հարցանէին զնա նեն-
գութեամբ և ասէին. վարդապետ, գի-
տեմք զի ճշմարիտ ես, և ոչ ինչ փոյթ է
քեզ զումեքէ. զի ոչ հայիս յերեսս
մարդկան, այլ ճշմարտութեամբ զճա-
նապարհն Աստուծոյ ուսուցանես. արդ
ասա մեզ, արժա՞ն է հարկս տալ կայսեր
թէ ոչ. տացո՞ւք եթէ ոչ տացուք։
15 Եւ Յիսուս գիտաց զկեղծաւորութիւն
նոցա, ասէ ցնոսա. զի՞ փորձէք զիս կեղ-
ծաւորք, բերէք ինձ դահեկան մի զի
տեսից։
16 Եւ նոքա բերին. և ասէ ցնոսա, ո՞յր է
պատկերս այս կամ գիր. և նոքա ասեն
ցնա, կայսեր։
17 Պատասխանի ետ Յս, և ասէ ցնոսա.
երթայք տուք զկայսերն կայսեր, և զԱս-
տուծոյն Աստուծոյ. և զարմացան ը̃ նա։
18 Գան առ նա Սադուկեցիքն որ ասեն ԷԳ
թէ չիք յարութիւն, հարցանէին զնա
և ասէին։
19 Վարդապետ, Մովսէս գրեաց մեզ. ե-
թէ ուրուք եղբայր մեռանիցի և թո-
ղուցու կին և որդի ոչ թողուցու, զի
առցէ եղբայր նորա զկինն նորա, և
յարուսցէ զաւակ եղբօր իւրում։

Արդ, եղբարք եօթն էին առ մեզ. առա- 20
ջինն առ կին և մեռաւ, և ոչ եթող զաւակ։
Եւ երկրորդն առ զնոյնն և մեռաւ և ոչ 21
նա եթող զաւակ. նոյնպէս և երրորդն
առ զնոյն։
Եւ եօթնեքեան իսկ, և ոչ թողին զա- 22
ւակ. յետ ամենեցուն մեռաւ և կինն։
Արդ 'ի յարութեանն յորժամ յառնի- 23
ցեն, ո՞յր 'ի նոցանէ լինիցի կինն. զի
եօթնեքեան կալան զնա կին։
Պատասխանի ետ Յս՟ և ասէ ցնոսա. ո՞չ 24
վասն այդորիկ իսկ մոլորեալ էք, զի ոչ
գիտէք զգիրս և ոչ զզօրութիւնն Ա՟յ։
Զի յորժամ 'ի մեռելոց յարիցեն, ոչ 25
արք կանայս առնեն, և ոչ կանայք ա-
րանց լինին. այլ իբրև զհրեշտակս իցեն
որ յերկինս են։
Այլ վասն յարութե՟ մեռելոց զի յառ- 26
նեն, ո՞չ իցէ ընթերցեալ ձեր 'ի գիրսն
Մովսեսի, 'ի մորենւոջն որպէս ասաց
ցնա Աստուած. ես եմ ասէ՝ Աստուած
Աբրահամու, Աստուած Իսահակայ և
Աստուած Յակովբայ։
Եւ ոչ է Աստուած մեռելոց այլ կենդա- 27
նեաց, և արդ դուք յոյժ մոլորեալ էք։
Եւ մատուցեալ մի ոմն 'ի դպրացն լսէր 28
նոցա մինչ վիճէին. իբրև ետես եթէ
բարւոք ետ նոցա զպատասխանին, ե-

հարց ցնա և ասէ. ո՞ր պատուիրան է
առաջին։
29 Եւ Յիսուս ասէ ցնա. առաջին քան զա-
մենայն, Լուր Իսրայէլ՝ տէր Աստուած
մեր տէր մի է։
30 Եւ սիրեսցես զտէր Աստուած քո յա-
մենայն սրտէ քումմէ, և յամենայն անձ-
նէ քումմէ, և յամենայն մտաց քոց, և
յամենայն զօրութենէ քումմէ. այս է
առաջին պատուիրան։
31 Եւ երկրորդն նման սմին. սիրեսցես
զընկեր քո իբրև զանձն քո. մեծ քան
զսոսա այլ պատուիրան ոչ գոյ։
32 Եւ ասէ ցնա դպիրն. բարւոք է վարդա-
պետ, ճշմարտութեամբ ասացեր թէ մի
է Ած, և ոչ գոյ այլ բաց 'ի նմանէ։
33 Եւ սիրել զնա յամենայն սրտէ և յա-
մենայն զօրութենէ և յամենայն մտաց,
և սիրել զընկերն իբրև զանձն, առա-
ւել է քան զողջակէզս և զզոհս։
34 Եւ տեսեալ Յիսուսի թէ իմաստու-
թեամբ ետ զպատասխանին՝ ասէ ցնա.
չես հեռի յարքայութենէ Աստուծոյ. և
ոչ ևս ոք իշխէր ինչ հարցանել ցնա։
35 Պատասխանի ետ Յիսուս և ասէ, մինչ ԷՆ
ուսուցանէր 'ի տաճարին. զիա՞րդ ասեն
դպիրքն եթէ Քն որդի Դաւթի է։
36 Եւ ինքն Դաւիթ հոգւովն սրբով ասէ.

ասաց տէր ցտէր իմ, նիստ ընդ աջմէ
իմմէ՝ մինչև եդից զթշնամիս քո պա-
տուանդան ոտից քոց։

Արդ եթէ ինքն իսկ Դաւիթ զնա տէր 37
կոչէ՝ զիա՞րդ իցէ որդի նորա. և բազում
ժողովուրդ լսէր նմա քաղցրութեամբ։

Եւ ասէր ուսուցանելով 'ի վարդապե- 38
տութեան իւրում. զգոյշ լերուք 'ի դըպ-
րաց անտի, որ կամին 'ի հանդերձս ե-
րևելիս շրջել, զնախողջոյնս խնդրել 'ի
հրապարակս։

Եւ զնախաթոռս 'ի ժողովուրդս, և 39
զգահագլուխս յընթրիս։

Որ ուտեն զտունս այրեաց, պատճառա- 40
նօք յերկարեալ զաղօթս, զի աւելի ևս
դատաստանս ընկալցին։

Կայր Յիսուս ընդդէմ գանձանակին, 41
տեսանէր թէ զիա՞րդ ժողովուրդն ար-
կանէր պղինձ 'ի գանձանակն. և բազում
մեծատունք արկին բազում ինչ։

Եկն այրի մի և արկ երկուս լումայս, 42
որ է նաքարակիտ մի։

Եւ կոչեցեալ առ ինքն զաշակերտսն, 43
ասէ ցնոսա. ամէն ասեմ ձեզ զի այրին
այն տառապեալ շատ արկ քան զամենե-
սեան՝ որ արկին 'ի գանձանակն։

Քանզի ամենեքին յաւելորդաց իւրեանց 44
արկին. այլ նա 'ի չքաւորութենէ իւրմէ՝

զամենայն ինչ զոր ունէր՝ արկ գոյիւ-
չափ զկեանս իւր:

ԳԼ. ԺԳ

1 Եւ յելանելն նորա 'ի տաճարէ անտի, ԻԶ
ասէ ցնա մի յաշակերտացն նորա. վար-
դապետ, տես որպիսի են քարինքս, և
որպիսի շինուածք:
2 Պատասխանի ետ նմա Յիսուս և ասէ.
տեսանե՞ս զայդ ամենայն շինուածս, ա-
մէն ասեմ ձեզ՝ եթէ ոչ թողցի այդր
քար 'ի քարի վերայ որ ոչ քակտեսցի:
3 Եւ մինչ նստէր նա 'ի լերինն Ձիթե-
նեաց յանդիման տաճարին, հարցանէին
ցնա առանձինն՝ Պետրոս և Յակոբոս և
Յովհաննէս և Անդրէաս:
4 Ասա մեզ, ե՞րբ լինիցի այդ և զի՞նչ
նշան է յորժամ կատարելոց իցէ այդ
ամենայն:
5 Պատասխանի ետ Յս̃ և ասէ ցնոսա.
զգոյշ կացէք, մի ոք զձեզ խաբեսցէ:
6 Զի բազումք եկեսցեն յանուն իմ, և
ասիցեն թէ ես եմ Քրիստոսն, և
զբազումս մոլորեցուսցեն:
7 Այլ յորժամ լսիցէք պատերազմունս և
համբաւս պատերազմաց՝ մի խռովի-
ցիք, զի պարտ է լինել. բայց չև է կա-
տարածն:

Զի յարիցէ ազգ յազգի վերայ, և թա- 8
գաւորութիւն՝ի թագաւորութե՛ վերայ.
և եղիցին շարժմունք 'ի տեղիս տեղիս,
սովք և սրածութիւնք և խռովութիւնք.
այլ այն ամենայն սկիզբն է երկանց:
Եւ զձեզ իսկ մատնեսցեն յատեանս, և 9
'ի ժողովուրդս տանջիցիք, և առաջի դա-
տաւորաց և թագաւորաց կայցէք վասն
իմ՝ի վկայութիւն նոցա,
Եւ ամենայն հեթանոսաց. բայց նախ 10
պարտ է աւետարանիս քարոզել:
Այլ յորժամ տանիցին զձեզ մատնել, 11
մի յառաջագոյն հոգայցէք, և մի զմտաւ-
ածիցէք թէ զինչ խօսիցիք. այլ որ ինչ
տացի ձեզ 'ի ժամուն յայնմիկ՝ զայն խօ-
սիցիք, զի ոչ դուք էք որ խօսիցիքն՝ այլ
հոգին սուրբ:
Մատնեսցէ եղբայր զեղբայր 'ի մահ և 12
հայր զորդի, և յարիցեն որդիք 'ի վերայ
հարց և սպանանիցեն զնոսա:
Եւ եղիջիք ատեցեալք յամենեցունց 13
վասն անուան իմոյ, այլ որ համբերես-
ցէն 'ի սպառ՝ նա կեցցէ:
Եւ յորժամ տեսանիցէք զպղծութիւն 14
աւերածին, զի կայցէ 'ի տեղւոջ ուր
չիցէ արժան, որ ընթեռնուն 'ի միտ
առցէ: Յայնժամ որ 'ի Հրէաստանի ի-
ցեն՝ փախիցեն 'ի լերինս:

15 Եւ որ 'ի վերայ տանեայն իցէ՝ մի իջցէ
'ի տուն, և մի մտցէ բառնալ ինչ 'ի տա-
նէ իւրմէ։
16 Եւ որ յագարակին իցէ՝ մի դարձցի
յետս առնուլ զձորձս իւր։
17 Բայց վայ իցէ յղեաց և ստնտուաց յա-
ւուրսն յայնոսիկ։
18 Յաղօթս կացէք զի մի ձմերանի լինիցի
այն։
19 Եղիցին աւուրքն այնոքիկ նեղութեանց՝
որպիսի ոչ եղեն երբէք այնպիսիք 'ի
սկզբանէ արարածոց մինչև ցայժմ, և
մի այլ լիցի։
20 Եւ եթէ ոչ էր կարճեալ Աստուծոյ զա-
ւուրսն զայնոսիկ վասն ընտրելոց իւրոց,
ոչ ապրէր ամենայն մարմին. այլ վասն
ընտրելոցն զորս ընտրեաց՝ կարճեաց զա-
ւուրսն զայնոսիկ։
21 Յայնժամ եթէ ոք ասիցէ ձեզ եթէ
ահաւասիկ է Քրիստոսն կամ աւա-
նիկ, մի հաւատայցէք։
22 Զի յարիցեն սուտ քրիստոսք և սուտ
մարգարէք, և տացեն նշանս և ա-
րուեստս՝ առ 'ի մոլորեցուցանելոյ եթէ
հնար ինչ իցէ և զընտրեալսն։
23 Բայց դուք զգոյշ լերուք, ահաւասիկ
յառաջագոյն ասացի ձեզ զամենայն։
24 Այլ յաւուրսն յայնոսիկ յետ նեղու-

թեանն այնորիկ՝ արեգակն խաւարեսցի
և լուսին ոչ տացէ զլոյս իւր։
Եւ աստեղք յերկնից թօթափեսցին, 25
և զօրութիւնք յերկինս շարժեսցին։
Եւ յայնժամ տեսցեն զորդի մարդոյ ե֊ 26
կեալ ամպովք՝ զօրութեամբ և փառօք
բազմօք։
Եւ յայնժամ առաքեսցէ զհրեշտակս 27
իւր, և ժողովեսցէ զընտրեալս իւր 'ի
չորից հողմոց՝ 'ի ծագաց երկրի մինչև 'ի
ծագս երկնից։
Բայց դուք 'ի թզենւոյ անտի ուսջիք 28
զառակն. յորժամ տակաւ ոստքն նորա
կակղանայցեն և տերև արձակիցի 'ի
նմա, գիտէք թէ մերձ է ամառն։
Նոյնպէս և դուք յորժամ տեսանիցէք 29
զայս ամենայն եղեալ, գիտասջիք թէ
մերձ է առ դուրս։
Ամէն ասեմ ձեզ, թէ ոչ անցցէ ազգս 30
այս՝ մինչև այս ամենայն եղիցի։
Երկինք և երկիր անցցեն, և բանք իմ 31
ոչ անցանիցեն։
Այլ վասն աւուրն այնորիկ և ժամու՝ 32
ոչ ոք գիտէ, ոչ հրեշտակք յերկինս և
ոչ որդի, բայց հայր միայն։
Զգոյշ եղերուք, սկեցէք և կացէք 33
յաղօթս. զի ոչ գիտէք երբ ժամա֊
նակն իցէ։

34 Որպէս այր մի գնացեալ՚ի տար աշխարհ՝
Թողուցու զտուն իւր, և տայցէ ծա-
ռայից իւրոց իշխանութիւն, և իւրա-
քանչիւր զգործս իւր. և դռնապանին
պատուէր տայցէ զի արթուն լինիցի։
35 Արդ արթուն կացէք, զի ոչ գիտէք ե՞րբ
տէր տանն գայցէ, յերեկորեա՞յ եթէ ՚ի
մէջ գիշերի եթէ ՚ի հաւախօսի եթէ
ընդ առաւօտս։
36 Գուցէ եկեալ յանկարծակի՝ գտանիցէ
զձեզ ՚ի քուն։
37 Բայց զոր ձեզդ ասեմ ամենեցուն ա-
սեմ՝ արթուն կացէք։

ԳԼ. ԺԴ

1 Եւ էր զատիկն և բաղարջակերք յետ ԻԻ
երկուց աւուրց. խնդրէին քահանայա-
պետքն և դպիրք եթէ զիա՞րդ զնա նեն-
գաւ կալեալ սպանանիցեն։
2 Բայց ասէին թէ մի ՚ի տօնի աստ, զի մի
խռովութիւն լինիցի ՚ի ժողովրդեանն։
3 Եւ մինչ էր ՚ի Բեթանիա՝ ՚ի տան Սի-
մովնի բորոտի բազմեալ, եկն կին մի որ
ունէր շիշ իւղոյ նարդեան ազնուի մե-
ծագնոյ, և բեկեալ զշիշն եհեղ ՚ի վե-
րայ գլխոյ նորա։
4 Եւ աշակերտքն զչարէին և ասէին.
ընդէ՞ր եղև կորուստ իւղոյդ այդորիկ։

Մարթ էր զայդ իւղ վաճառել աւելի 5
քան երեք հարիւր դահեկանի, և տալ
աղքատաց. և զայրանային նմա յոյժ:
Եւ Յիսուս ասէ ցնոսա. Թոյլ տուք դմա՝ 6
զի՞ աշխատ առնէք, զի գործ մի բարի
գործեաց դա յիս:
Յամենայն ժամ զաղքատս ընդ ձեզ 7
ունիք, և յորժամ կամիք կարող էք
առնել նոցա բարիս. այլ զիս ոչ յամե֊
նայն ժամ ընդ ձեզ ունիք:
Դա զոր ունէրդ արար, յառաջագոյն 8
խնկեաց զմարմին իմ՚ի նշան պատա֊
նաց:
Ամէն ասեմ ձեզ, ուր և քարոզեսցի ա֊ 9
ւետարանս այս ընդ ամենայն աշխարհ,
և զոր արար դա խօսեսցի վասն յիշա֊
տակի դորին:
Եւ Յուդա Սկարիովտացի մի յերկոտա֊ 10
սանից անտի, գնաց առ քահանայա֊
պետսն զի մատնեսցէ զնա նոցա:
Նոքա իբրև լուան խնդացին, և խոստա֊ 11
ցան տալ նմա արծաթ. և խնդրէր թէ
զիա՞րդ պարապով մատնեսցէ զնա:
Եւ յառաջնում աւուր բաղարջակե֊ 12
րացն՝ յորժամ զզատիկն զենուին, ա֊
սեն ցնա աշակերտքն. ո՞ւր կամիս եր֊
թիցուք պատրաստեսցուք զի կերիցես
զզատիկն:

13 Եւ առաքէ երկուս յաշակերտաց անտի
և ասէ ցնոսա. երթայք ՚ի քաղաք, և ի-
բրև մտանիցէք՚ի քաղաքն՝ պատահեսցէ
ձեզ այր մի որ սափոր ջրոյ յուս ունիցի,
երթայք զհետ նորա։
14 Եւ յոր տուն մտանիցէ, ասասջիք ցտա-
նուտէրն. վարդապետ ասէ, ո՞ւր են ի-
ջավանքն, ուր աշակերտօքս ուտիցեմ
զզատիկն։
15 Եւ նա ցուսցէ ձեզ վերնատուն մի մեծ
զարդարեալ. անդ պատրաստեսջիք մեզ։
16 Եւ գնացին պատրաստել աշակերտքն նո-
րա. եկին ՚ի քաղաքն և գտին որպէս ա-
սացն նոցա, և պատրաստեցին զզատիկն։
17 Եւ իբրև երեկոյ եղև՝ գայ երկոտասա-
նիւքն հանդերձ։
18 Եւ իբրև բազմեցան և դեռ ուտէին,
ասէ Յիսուս. ամէն ասեմ ձեզ, զի մի
ոմն ՚ի ձէնջ մատնելոց է զիս, որ ուտէ
իսկ ընդ իս։
19 Եւ նոքա սկսան տրտմել և ասել մի ըստ
միոջէ. մի՞թէ ե՞ս իցեմ, և միւսն մի՞թէ
ե՞ս իցեմ։
20 Նա պատասխանի ետ և ասէ ցնոսա. մի
յերկոտասանից այտի, որ մխեաց ընդ
իս ՚ի սկաւառակդ։
21 Այլ որդի մարդոյ երթայ որպէս և
գրեալ է վասն նորա. բայց վա՜յ իցէ

մարդոյն այնմիկ՝ յոյր ձեռս որդի մարդոյ
մատնեսցի. լաւ էր նմա թէ չէր իսկ
ծնեալ մարդն այն։
Եւ մինչդեռ ուտէին, առեալ Յիսուսի 22
հաց՝ օրհնեաց և եբեկ ետ նոցա, և
ասէ. առէք՝ այդ է մարմին իմ։
Եւ առեալ բաժակ, գոհացաւ և ետ 23
նոցա, և արբին 'ի նմանէ ամենեքեան։
Եւ ասէ ցնոսա. այս է արիւն իմ նորոյ 24
ուխտի, որ փոխանակ բազմաց հեղանի։
Ամէն ասեմ ձեզ, թէ ոչ ևս յաւելից 25
ըմպել 'ի բերոյ որթոյ, մինչև ցօրն ցայն
յորժամ արբից զնա նոր յարքայու-
թեան Աստուծոյ։
Եւ գոհացեալ՝ ելին 'ի լեառն Ձիթե- 26
ՎԵՐՋ նեաց։
Եւ ասէ ցնոսա Յիսուս. ամենեքին գայ- 27
թագղելոց էք յինէն յայսմ գիշերի, զի
գրեալ է թէ հարից զհովիւն և ոչխար-
քըն ցրուեսցին։
Այլ յետ յարութեան իմոյ յառաջա- 28
գոյն երթայց քան զձեզ 'ի Գալիլեա։
Պատասխանի ետ Պետրոս և ասէ ցնա. 29
թէպէտ և ամենեքին գայթագղեսցին,
այլ ես ոչ։
Եւ ասէ ցնա Յիսուս. ամէն ասեմ քեզ, 30
թէ դու իսկ յայսմ գիշերի մինչ չև հա-
ւու խօսեալ լցէ՝ երիցս ուրասցիս զիս։

31 Իսկ Պետրոս առաւել ևս պնդէր և ա-
սէր. եթէ մեռանել ևս հասանիցէ ընդ
քեզ, զքեզ ոչ ուրացայց. նոյնպէս և
ամենեքեան ասէին:
32 Գան 'ի դեօղն որում անուն էր Գեթ-
սեմանի. և ասէ ցաշակերտսն, նստա-
րուք աստ մինչև ես յաղօթս կացից:
33 Եւ առնու ընդ իւր զՊետրոս և զՅա-
կոբոս և զՅովհաննէս, և սկսաւ տխ-
րել և հոգալ:
34 Յայնժամ ասէ ցնոսա. տրտում է անձն
իմ մինչև 'ի մահ, մնացէք աստ և ար-
թուն կացէք:
35 Եւ մատուցեալ սակաւիկ մի յառաջ,
անկաւ 'ի վերայ երեսաց իւրոց յերկիր.
և կայր յաղօթս, զի եթէ հնար ինչ է՝
անցցէ 'ի նմանէ ժամն:
36 Եւ ասէ. աբբա հայր՝ ամենայն ինչ
քեզ հնարաւոր է, անցո զբաժակս
զայս յինէն. բայց ոչ որպէս ես կամիմ,
այլ որպէս դու կամիս:
37 Եւ գայ գտանէ զնոսա զի ննջէին, և
ասէ ցՊետրոս. Սիմոն ննջե՞ս, ո՞չ կա-
րացեր ժամ մի արթուն կալ:
38 Արթուն կացէք և յաղօթս կացէք, զի
մի մտջիք 'ի փորձութիւն. ոգիս յօժար
է՝ բայց մարմինս տկար:
39 Եւ դարձեալ չոքաւ եկաց յաղօթս, և

զնոյն բանս ասաց:
Դարձաւ միւսանգամ անդրէն, և եգիտ 40
զնոսա 'ի քուն. քանզի էին աչք նոցա
ծանրացեալ, և ոչ գիտէին թէ զինչ
պատասխանի տայցեն նմա:
Գայ երրորդ անգամ և ասէ ցնոսա. 41
Ննջեցէք այսուհետև և հանգերուք,
զի հասեալ է վախճան, եկն ժամ և
ահա մատնի որդի մարդոյ 'ի ձեռս մե-
ղաւորաց:
Ո՛ն արիք գնասցուք, զի ահաւասիկ 42
մերձեցաւ որ մատնելոց է զիս:
Եւ մինչդեռ նա զայն խօսէր՝ գայ Յու- 43
դա Սկարիովտացի՝ մի յերկոտասանից
անտի, և ընդ նմա ամբոխ սուսերօք և
բրօք 'ի քահանայապետից և 'ի դպրաց
և 'ի ծերոց:
Տուեալ էր նշան մատնչին և ասէր, ընդ 44
որում ես համբուրեցից՝ նա է. կալջիք
զնա և տարջիք զգուշութեամբ:
Եւ մատուցեալ վաղվաղակի ասէ ցնա. 45
ռաբբի՛ ռաբբի, և համբուրեաց զնա:
Եւ նոքա արկին 'ի նա ձեռս և կալան 46
զնա:
Եւ մի ոմն յայնցանէ որ զնովաւն կային՝ 47
ձգեաց սուր և եհար զծառայ քահա-
նայապետին, և 'ի բաց եհան զունկն
նորա:

48 Պատասխանի ետ Յիսուս և ասէ ցնո-
սա. իբրև 'ի վերայ աւազակի ելիք սու-
սերօք և բրօք ունել զիս:
49 Համապազ առ ձեզ էի և ուսուցանէի 'ի
տաճարին, և ոչ կալարուք զիս, այլ զի
լցցին գիրք մարգարէիցն:
50 Յայնժամ թողին զնա աշակերտքն ա-
մենեքին և փախեան:
51 Եւ ոմն երիտասարդ զհետ երթայր
նորա՝ արկեալ զիւրև կտաւ մի 'ի մեր-
կուց, ունէին զնա երիտասարդքն:
52 Եւ նորա թողեալ զկտաւն՝ փախեաւ
մերկ 'ի նոցանէ:
53 Եւ տարան զՅիսուս առ քահանայա-
պետն Կայիափա. և գային ընդ նմա ա-
մենայն քահանայապետքն և դպիրք և
ծերք:
54 Եւ Պետրոս երթայր 'ի հեռաստանէ
զհետ նորա մինչև 'ի ներքս իսկ 'ի գա-
ւիթ քահանայապետին, և նստէր ընդ
սպասաւորսն և ջեռնոյր առ լուսովն:
55 Իսկ քահանայապետքն և ամենայն ա-
տեանն խնդրէին հակառակ Յիսուսի
վկայութիւն ինչ, զի սպանանիցեն զնա.
և ոչ գտանէին:
56 Զի բազումք սուտ վկայութիւն վկայ-
էին զնմանէ, և նման միմեանց ոչ էին
վկայութիւնքն:

Այլք յարուցեալ վկայէին սուտ զնմա֊ 57
նէ և ասէին,
Թէ մեք լուաք 'ի դմանէ զի ասէր. Ես 58
քակեցից զտաճարդ զայդ ձեռագործ,
և զերիս աւուրս շինեցից այլ՝ առանց
ձեռագործի:
Սակայն և այնպէս չէր նման վկայու֊ 59
թիւնն նոցա:
Ապա յարուցեալ քահանայապետն 'ի 60
մէջ՝ հարցանէր զՅիսուս և ասէր. ոչ ի՞նչ
տաս պատասխանի, զի՞նչ դոքա դքէն
վկայեն:
Եւ նա լուռ եւեթ կայր և չտայր ինչ 61
պատասխանի: Դարձեալ քահանայա֊
պետն հարցանէր զնա կրկին անգամ և
ասէր. դո՞ւ ես Ք՟ս որդի Ա՟յ օրհնելոյն:
Պատասխանի ետ Յիսուս և ասէ ցնա. 62
դու ասացեր թէ ես եմ, բայց տեսանի֊
ցէք զորդի մարդոյ նստեալ ընդ աջմէ զօ֊
րութե՛ն և եկեալ ընդ ամպս երկնից:
Եւ քահանայապետն պատառեաց վաղ֊ 63
վաղակի զպատմուճանս իւր և ասէ.
զի՞նչ ևս պիտոյ են մեզ վկայք:
Ահա լուայք ամենեքին զհայհոյութիւն 64
'ի բերանոյ դորա, զիա՞րդ թուի ձեզ.
և ամենեքեան դատապարտեցին զնա
թէ մահապարտ է:
Եւ ոմանք սկսան թքանել ընդ երեսս 65

նորա. ձորձ զգլխով արկանել՝ կափել և
ասել, մարգարեաց մեզ Քրիստոս՝ ո՛վ
է այն որ եհարն զքեզ. և սպասաւորքն
ապտակս հանէին նմա:
66 Եւ Պետրոս մինչդեռ էր 'ի խոնարհ 'ի
գաւթին, գայ աղախին մի քահանայա-
պետին:
67 Եւ տեսանէ զնա զի ջեռնոյր. հայեցաւ
ընդ նա և ասէ, և դու ընդ Յիսուսի
Նազովրեցւոյ էիր:
68 Նա ուրացաւ և ասէ. ոչ ճանաչեմ և
ոչ գիտեմ զինչ դուդ ասես. և իբրև
ել յարտաքին գաւիթն, և հաւ խօ-
սեցաւ:
69 Դարձեալ ետես զնա աղախինն. և սկսաւ
ասել ցայնոսիկ որ շուրջն կային, թէ և
սա 'ի նոցանէ է:
70 Եւ նա դարձեալ ուրացաւ. և յետ սա-
կաւ միոյ՝ դարձեալ որ շուրջն կային,
ասեն ցՊետրոս. արդարև և դու 'ի նո-
ցանէ ես, քանզի Գալիլեացի ես՝ և
խօսքդ իսկ քո նման են:
71 Եւ նա սկսաւ նզովել երդնուլ և ա-
սել, թէ ոչ գիտեմ զայրն՝ զորմէ դուքդ
ասէք:
72 Եւ նոյնժամայն կրկին հաւ խօսեցաւ.
և յիշեաց Պետրոս զբանն զոր ասաց
ցնա Յիսուս, թէ չև իցէ հաւու երկիցս

խօսեալ՝ զի դու երիցս ուրասցիս զիս, և
սկսաւ լալ։

ԳԼ. ԺԵ

Եւ վաղվաղակի ընդ առաւօտն խոր- 1
հուրդ արարեալ քահանայապետիցն
հանդերձ ծերովքն և դպրօք և ամե-
նայն ատենանն, կապեցին զՅիսուս և
տարան մատնեցին Պիղատոսի։
Եհարց զնա Պիղատոս և ասէ. դո՞ւ ես 2
Թագաւորն Հրէից. նա պատասխանի
ետ նմա և ասէ, դու ասես։
Եւ չարախօսէին զնմանէ յոյժ քահա- 3
նայապետքն, և նա ոչ ինչ տայր պա-
տասխանի։
Իսկ Պիղատոս դարձեալ հարցանէր ըզ- 4
նա. ոչ ի՞նչ տաս պատասխանի, տես
քանի՞ ամբաստանեն զքէն։
Եւ Յիսուս այնուհետև ոչ ինչ ետ պա- 5
տասխանի, մինչև զարմանալ յոյժ Պի-
ղատոսի։
Բայց ըստ տօնի արձակէր նոցա զմի ոք 6
զկապեալ, զոր ինքեանք խնդրէին։
Եւ էր որում անուն էր Բարաբբաս՝ կա- 7
պեալ ընդ խռովիչսն, որոց 'ի խռովելն՝
այր մի սպանեալ էր։
Ի ձայն բարձր սկսաւ աղաղակել ամ- 8
բոխն և խնդրել՝ որպէս սովոր էր, զի

արձակեսցէ նոցա զԲարաբբայն։
9 Պատասխանի ետ Պիղատոս եւ ասէ ցնո֊
սա. կամի՞ք զի արձակեցից ձեզ զարքայն
Հրէից։
10 Քանզի գիտէր թէ առ նախանձու մատ֊
նեցին զնա քահանայապետքն։
11 Որք եւ զամբոխն հաւանեցուցին զի ար֊
ձակեսցէ նոցա զԲարաբբայն։
12 Դարձեալ պատասխանի ետ Պիղատոս
եւ ասէ ցնոսա. իսկ զի՞նչ կամիք թէ ա֊
րարից զարքայն Հրէից։
13 Եւ նոքա դարձեալ աղաղակէին՝ յու֊
զեալք ՚ի քահանայապետիցն, ՚ի խաչ
հան զդա։
14 Ասէ ցնոսա Պիղատոս, զի՞նչ ինչ չար
արարեալ իցէ դորա. եւ նոքա առաւել
եւս աղաղակէին եւ ասէին, ՚ի խաչ հան
զդա։
15 Իսկ Պիղատոս իբրեւ զմիտս կամեցաւ
հաճել զամբոխին, արձակեաց նոցա
զԲարաբբայն, եւ զՅիսուս գան հարեալ՝
ետ ՚ի ձեռս զի ՚ի խաչ ելանիցէ։
16 Եւ զինուորքն տարան զնա ՚ի ներքս ՚ի
գաւիթն՝ ուր հրապարակն էր. եւ կոչեն
միանգամայն զամենայն զգունդն։
17 Եւ զգեցուցանեն նմա քղամիդ կարմիր
եւ ծիրանիս, եւ եդին ՚ի գլուխ նորա
պսակ արարեալ ՚ի փշոց։

Եւ սկսան ողջոյն տալ նմա և ասել, 18
ողջ եր արքայդ Հրէից։
Եւ ծեծէին զգլուխն եղեգամբ, և 19
թքանէին ընդ երեսս, և 'ի ծունր ի-
ջեալ երկիր պագանէին նմա։
Եւ իբրև կատակեցին զնա՝ մերկացու- 20
ցին զքղամիդն և զծիրանին, և զգեցու-
ցին նմա զիւր հանդերձն, և ածին ար-
տաքս զի 'ի խաչ հանցեն զնա։
Եւ ունէին պահակ զՍիմոն Կիւրենացի՝ 21
որ ընդ այն անցանէր՝ եկեալ յագա-
րակէ, զհայրն Աղեքսանդրի և Ռուփայ.
զի բարձցէ զխաչափայտն նորա։
Եւ ածեն զնա 'ի Գողգոթա՝ տեղի մի, 22
որ թարգմանի տեղի կառափելոյ։
Եւ տային նմա գինի զմուռեալ, և նա ոչ 23
առ, և հանին զնա 'ի խաչ։
Եւ բաժանեցին զհանդերձս նորա, ար- 24
կեալ վիճակս 'ի վերայ թէ ո՛ զինչ առ-
նուցու։
Էր ժամ երրորդ և հանին զնա 'ի խաչ։ 25
Եւ էր գիր վնասու նորա գրեալ թէ 26
թագաւոր է Հրէից։
Եւ ընդ նմա հանին 'ի խաչ երկուս ա- 27
ւազակս, մի ընդ աջմէ և մի ընդ ահեկէ
նորա։
Եւ լցաւ գիրն որ ասէ, թէ ընդ անօ- 28
րէնս համարեցաւ։

29 Եւ որք անցանէինն հայհոյէին զնա,
շարժեալ զգլուխս իւրեանց և ասէին.
վա՜հ, որ քակէիր զտաճարն և զերիս ա-
ւուրս շինէիր.
30 Ապրեցո զանձն քո և էջ 'ի խաչէդ:
31 Նոյնպէս և քահանայապետքն այպն ա-
րարեալ ընդ միմեանս հանդերձ դպ-
րօքն ասէին. զայլս ապրեցոյց, զանձն
ոչ կարէ ապրեցուցանել:
32 Քրիստոս արքայդ Իէլի, իջցէ այժմ 'ի
խաչէ այտի, զի տեսցուք և հաւատաս-
ցուք դմա. և որ ընդ նմա 'ի խաչն ելեալ
էին՝ նախատէին զնա:
33 Եւ իբրև վեց ժամ եղև, խաւար կալաւ
զամենայն երկիր մինչև ցինն ժամ:
34 Եւ յիններորդ ժամուն աղաղակեաց
Յս 'ի ձայն մեծ և ասէ. էլի էլի, լամա
սաբաքթանի. որ թարգմանի, Աստուած
իմ Աստուած իմ՝ ընդէ՞ր թողեր զիս:
35 Եւ ոմանք 'ի նոցանէ որ շուրջն կային
զնովաւ՝ իբրև լուան, ասէին թէ զԵղիա
կարդայ:
36 Եւ ընթացեալ մի ոմն՝ ելից սպունգ մի
քացախով, և հարեալ յեղեգան՝ տայր
ըմպել նմա, և ասէ. թոյլ տուր, տես-
ցուք գա՞յ Եղիա իջուցանել զդա:
37 Եւ Յիսուս արձակեաց ձայն մեծ և
եհան զոգի:

Եւ վարագոյր տաճարին պատառեցաւ 38
յերկուս 'ի վերուստ մինչեւ 'ի խոնարհ։
Եւ տեսեալ հարիւրապետին որ կայր 39
անդ եթէ աղաղակեաց եւ եհան զոգի,
ասէ. արդարեւ այրս այս որդի Ա՟Յ էր։
Էին եւ կանայք որ հայէին 'ի հեռաս- 40
տանէ, յորս էր Մարիամ Մագդաղենա-
ցի եւ Մարիամ Յակովբու փոքրկան եւ
Յովսեայ մայրն եւ Սողովմէ։
Որք յորժամ էին 'ի Գալիլեա՝ զհետ 41
շրջէին նորա եւ պաշտէին զնա. եւ այլ
բազում կանայք՝ որ ընդ նմա իսկ ելեալ
էին յԵրուսաղէմ։
Եւ իբրեւ երեկոյ եղեւ՝ քանզի ուրբաթ 42
էր որ 'ի շաբաթն մտանէր,
Եկեալ Յովսէփ որ յԱրիմաթեայն էր՝ 43
այր պարկեշտ նախարար, որ եւ ինքն իսկ
ակն ունէր արքայութեանն Աստուծոյ.
համարձակեցաւ եմուտ առ Պիղատոս,
եւ խնդրեաց զմարմինն Յիսուսի։
Եւ Պիղատոս զարմացաւ թէ այնչափ 44
վաղ մեռաւ, եւ կոչեցեալ առ ինքն զհա-
րիւրապետն, եհարց զնա եւ ասէ, թէ
արդարեւ այնչափ վա՞ղ մեռաւ։
Եւ իբրեւ ստուգեաց 'ի հարիւրապետէ 45
անտի, շնորհեաց զմարմինն Յովսեփայ։
Եւ Յովսէփ գնեաց կտաւ՝ եւ իջուցեալ 46
զնա պատեաց կտաւովն, եւ եդ 'ի գե-

րեզմանի, զոր էր փորեալ 'ի վիմէ. և
թաւալեցոյց վէմ մի 'ի դուռն գերեզ-
մանին:
47 Իսկ Մարիամ Մագդաղենացի և Մա-
րիամ Յակովբեայ և Յովսեայ, տեսին
զտեղին ուր եդաւ:

ԳԼ. ԺԶ

1 Եւ իբրև անց շաբաթն, Մարիամ
Մագդաղենացի և Մարիամ Յակովբեայ
և Սողովմէ՝ չոքան պատրաստեցին խուն-
կըս, զի եկեսցեն օծցեն զնա:
2 Եւ ընդ առաւօտս միաշաբաթուն գան
'ի գերեզմանն ընդ արևագալն,
3 Եւ ասէին ցմիմեանս. ո՞վ թաւալեցու-
ցէ մեզ զվէմն 'ի դրաց գերեզմանին:
4 Եւ հայեցեալ տեսին զի թաւալեցու-
ցեալ էր զվէմն 'ի գերեզմանէ, քանզի
էր մեծ յոյժ:
5 Եւ մտեալ 'ի ներքս 'ի գերեզմանն՝ տե-
սին երիտասարդ մի զի նստէր ընդ աջմէ
կողմանէ՝ զգեցեալ պատմուճան սպի-
տակ և զարհուրեցան:
6 Եւ նա ասէ ցնոսա. մի՛ երկնչիք, զՅի-
սուս խնդրէք զՆազովրեցի զխաչելեալն,
յարեաւ չէ՛ աստ. ահաւադիկ տեղին
ուր եդին զնա:
7 Այլ երթայք ասացէք ցաշակերտս նո-

րա և ցՊետրոս, եթէ ահա յառաջա-
գոյն երթայ քան զձեզ՚ի Գալիլեա, անդ
տեսանիցէք զնա՝ որպէս ասաց ձեզ:
Եւ իբրև լուան՝ ելին և փախեան՚ի գե- 8
րեզմանէն, քանզի զահի հարեալ էին.
և ոչ ումեք ինչ ասացին, զի երկնչէին:
Յարուցեալ Յիսուս առաւօտուն առա- 9
ջին միաշաբաթուն՝ երևեցաւ Մարիա-
մու Մագդաղենացւոյ, յորմէ հանեալ
էր զեօթն դևսն:
Եւ նա երթեալ պատմեաց այնոցիկ՝ 10
որ ընդ նմայն էին, մինչդեռ սգային և
լային:
Նոքա իբրև լուան թէ կենդանի է՝ և 11
երևեցաւ նմա, ոչ հաւատացին:
Յետոյ երևեցաւ այլով կերպարանաւ 12
որք երթային յանդաստան:
Նոքա չոքան պատմեցին այլոց, և ոչ 13
նոցա հաւատացին:
Յետոյ մինչդեռ բազմեալ էին մետա- 14
սանքն՝ երևեցաւ նոցա, և թշնամանեաց
զանհաւատութիւն նոցա և զխստասըր-
տութիւն, զի որ երևեցաւ նոցա յա-
րուցեալ՚ի մեռելոց՝ և նոքա ոչ հաւա-
տացին:
Եւ ասէ ցնոսա. երթայք յաշխարհ ա- 15
մենայն, և քարոզեցէք զաւետարանն
ամենայն արարածոց:

16 Որ հաւատայ և մկրտեսցի կեցցէ. և որ
ոչն հաւատայ՝ դատապարտեսցի։
17 Նշանք այսոքիկ որ հաւատանն, երթի-
ցեն զհետ այնոցիկ. յանուն իմ դևս
հանիցեն, լեզուս խօսեսցին։
18 Ի ձեռս իւրեանց օձս բարձցեն, և եթէ
մահացու ինչ դեղ արբցեն՝ նոցա ինչ ոչ
վնասեսցէ. 'ի վերայ հիւանդաց ձեռս
դիցեն և բժշկեսցին։
19 Եւ ինքն տէր Յիսուս յետ խօսելոյն
ընդ նոսա՝ համբարձաւ յերկինս, և
նստաւ ընդ աջմէ հօր։
20 Եւ նոքա ելեալ քարոզէին ընդ ամենայն
երկիր՝ տեառն գործակցութեամբ, և
զբանն հաստատէին ամենայն նշանօք
որ երթայր զհետ նոցա։

Ն Ա Խ Ա Դ Ր Ո Ւ Թ Ի Ւ Ն

Ղ Ո Ւ Կ Ա Յ   Ա Ւ Ե Տ Ա Ր Ա Ն Ի Ն

Աւետարանս որ ըստ Ղուկայ գրեալ է։ Նոյն ինքն Ղուկաս աշակերտ էր Պետրոսի, և ձեռնադրեցաւ ընթացակից Պօղոսի, և վկայեցաւ 'ի նմանէ. սա գրեաց զաւետարանս զայս։ Սկիզբն առնէ 'ի ծննդենէն Յովհաննու, և զոր ըստ նմին. պատմէ և զմարմնանալ փրկչին, ազգաթիւ առնէ և ելանէ 'ի Յովսեփայ 'ի Դաւիթ, և 'ի Դաւթայ մինչև յԱդամ։ Պատմէ սա և զմկրտութիւնն Յովհաննու. և լինելով 'ի լեառնն՝ զփորձելն 'ի սատանայէ, և զընտրութիւն աշակերտացն, և այլ եօթանասունս. եցոյց նշանս և արուեստս բազումս եղեալս. և զխորհուրդ մատնութեան և զկատարածն՝ որ մատնեցաւ Պիղատոսի Պոնտացւոյ, և խաչեցաւ մարմնով. զի զինուորքն բաժանեցին զհանդերձս նորա, և որք խաչեցան յերկուց աւազակացն՝ մին ապաշխարեաց խոստովանութեամբ։ Եւ զի մարմին նորա եդաւ 'ի գերեզմանի, և յարեաւ յերրորդ աւուրն. և յետ այսորիկ համբարձաւ յերկինս՝ տեսանելով հրեշտակացն։

Ղուկաս արուեստիւ բժիշկ գոլով, սա աշակերտեցաւ փրկչին, և համարեալ կոչեցաւ 'ի թիւս եօթանասնից։ Իսկ յետոյ աշակերտեցաւ Պօղոսի, վասն որոյ ասի գովութիւն սորա յաւետարանին։ Սա հրամանաւ Պօղոսի գրեաց զաւետարանս իւր յԱնտիոք քաղաքի 'ի լեզու Ասորի՝ զկնի եօթնևտասն ամի համբառնալոյ փրկչին։

Ղուկաս՝ յարութիւն։

ՍԿԻԶԲՆ ԳԼԽՈՑ

ԱՒԵՏԱՐԱՆԻՆ ՈՐ ԸՍՏ ՂՈՒԿԱՅ

	Գլ.	Համ.
Վասն աշխարհագրին	բ.	1
Վասն բացօթեայ հովուացն	բ.	8
Վասն Սիմէովնի.	բ.	25
Վասն մարգարէին Աննայի	բ.	36
Վասն լինելոյ բանին Այ առ Յովհաննէս. .	գ.	2
Վասն որոց հարցանէինն զՅովհաննէս . .	գ.	10
Վասն փորձութեանց փրկչին.	դ.	2
Վասն՝ որ ունէր զհոգին դիւական . . .	դ.	33
Վասն զոքանչին Պետրոսի	դ.	38
Վասն որոց բժշկէին 'ի պէսպէս հիւանդու̃ց	դ.	40
Վասն որսոյ ձկանցն	ե.	4
Վասն բորոտին.	ե.	12
Վասն անդամալուծին.	ե.	15
Վասն Ղեւեայ մաքսաւորին	ե.	27
Վասն գօսացեալ ձեռինն	զ.	6
Վասն առաքելոցն համարոյ	զ.	13
Վասն երանութեանցն.	զ.	20
Վասն հարիւրապետին	է.	2
Վասն որդւոյ այրւոյն	է.	12
Վասն որոց առաքեցանն 'ի Յովհաննէ . .	է.	19
Վասն օծանելոյ զոտերն մեռոնաւն . . .	է.	38
Վասն առակի սերմնացանին	ը.	5
Վասն սաստելոյ ջուրցն	ը.	24
Վասն՝ որ ունէր զլեգէոնն	ը.	27
Վասն դստեր ժողովրդապետին	ը.	41
Վասն տեռատես կնոջն	ը.	43
Վասն առաքելոց զերկոտասանսն	թ.	2
Վասն հինգ հացիցն, և երկու ձկանցն . .	թ.	13
Վասն ցաշակերտան հարցանելոյ	թ.	18
Վասն այլակերպութեանն Յիսուսի . . .	թ.	29
Վասն լուսնահարին	թ.	39

Վասն խորհելոյ թէ ո՛վ մեծ իցէ . . . . . թ̄. 46
Վասն չտալոյն հրաման զկնի երթալ . . . թ̄. 57
Վասն երևեցուցանելոյ զեօթանասունսն . . ժ̄. 1
Վասն հարցանելոյ օրինականին . . . . ժ̄. 25
Վասն անկելոյն 'ի ձեռս աւազակաց . . ժ̄. 36
Վասն Մարիամու և Մարթայի . . . . ժ̄. 38
Վասն յաղօթս կալոյն . . . . ժա̄. 1
Վասն խուլ դիւին. . . . . ժա̄. 14
Վասն՝ որ կինն ձայն եբարձ 'ի ժողովրդեանն. ժա̄. 27
Վասն նշան խնդրելոյն . . . . . . ժա̄. 29
Վասն՝ որ Փարիսեցին կոչեաց զտէրն . . ժա̄. 37
Վասն վայ տալոյ օրինականացն . . . . ժա̄. 46
Վասն խմորոյ Փարիսեցւոցն . . . . . ժբ̄. 12
Վասն բաժանելոյ զինչսն ընդ եղբօրն . . ժբ̄. 13
Վասն պտղաբերելոյ անդոյ մեծատանն . . ժբ̄. 16
Վասն Գալիլեացւոցն՝ և որոց 'ի Սելովամ, և
վասն Թզենւոյն . . . . ժգ̄. 1
Վասն կարկամեալ կնոջն այսահարի . . . ժգ̄. 11
Վասն առակացն . . . . ժգ̄. 19
Վասն՝ թէ սակաւք իցեն որ ապրելոց իցեն. ժգ̄. 23
Վասն՝ որք ասացին ցՅիսուս զՀերովդէ. . ժգ̄. 31
Վասն՝ որ ջրգողեալ էր . . . . . . ժդ̄. 2
Վասն՝ որք սիրեն զնախագահս . . . . ժդ̄. 7
Վասն կոչելոյն յընթրիս. . . . . . ժդ̄. 12
Վասն շինելոյ աշտարակին . . . . . ժդ̄. 28
Վասն հարիւր ոչխարացն . . . . . . ժե̄. 4
Վասն անառակ որդւոյն . . . . . . ժե̄. 11
Վասն անիրաւ տնտեսին . . . . . . ժզ̄. 1
Վասն մեծատանն, և Ղազարու . . . . ժզ̄. 19
Վասն տասն բորոտացն . . . . . . ժէ̄. 12
Վասն անիրաւ դատաւորին . . . . . ժը̄. 2
Վասն Փարիսեցւոյն և մաքսաւորին . . . ժը̄. 10
Վասն հարցանելոյ մեծատանն զՅիսուս . . ժը̄. 18
Վասն կուրին . . . . ժը̄. 35
Վասն Զաքէոսի . . . . ժթ̄. 2
Վասն գնալոյ առնուլ իւր թագաւորութիւն
և դառնալ . . . . ժթ̄. 12

Վասն առնլոյ զտասն մնասն	ժթ.	13
Վասն յաւանակին	ժթ.	30
Վասն հարցանելոյ քահանայիցն զՏէր . .	ի.	1
Վասն առակի այգւոյն	ի.	6
Վասն դահեկանին	ի.	23
Վասն Սադուկեցւոցն	ի.	23
Վասն՝ թէ զիարդ է որդի Դաւթի Քս . .	ի.	41
Վասն երկու լումայի այրւոյն	իա.	2
Վասն հարցման կատարածին	իա.	7
Վասն զատկին	իբ.	1
Վասն վիճելոյն՝ թէ ով մեծ իցէ	իբ.	24
Վասն խնդրելոյն սատանայի փորձել զՍիմոն	իբ.	31
Վասն Նախատանաց Հերովդի	իգ.	11
Վասն կոծելոյ կանանցն	իգ.	27
Վասն ապաշխարելոյ աւազակին	իգ.	40
Վասն խնդրելոյ զտէրունական մարմինն .	իգ.	52
Վասն իւղաբեր կանանցն	իդ.	1
Վասն Կղէովպեանցն	իդ.	13
Վասն համբառնալոյն տեառն	իդ.	51



Ս̃Բ ՂՈՒԿԱՍ ԱՒԵՏԱՐԱՆԻՉ

ԱՒԵՏԱՐԱՆ

ԸՍՏ ՂՈՒԿԱՍՈՒ

Գլ. Ա.

1 Քանզի բազումք յօժարեցին վերըս-
տին կարգել զպատմութիւնս վասն ի-
րացն հաստատելոց 'ի մեզ:
2 Որպէս աւանդեցին մեզ որ 'ի սկզբա-
նէ ականատեսք և սպասաւորք եղեն
բանին:
3 Կամեցաւ և ինձ որ 'ի սկզբանէ զհետ
երթեալ էի ամենայնի՝ ճշմարտութբ
կարգաւ գրել քեզ, քաջդ Թէոփիլէ:
4 Զի ծանիցես զբանիցն՝ որոց աշակեր-
տեցար, զճշմարտութիւնն:
5 Եւ եղև յաւուրս Հերովդի արքայի
Հրէաստանի, քահանայ ոմն անուն Զա-
քարիա 'ի դասակարգէ Աբիայ. և կին
նորա 'ի դստերաց Ահարոնի, և ա-

նուն նորա Եղիսաբեթ։
Եւ էին արդարք երկոքին առաջի Աստու- 6
ծոյ, գնային յամենայն պատուիրանս և
յիրաւունս տեառն անարատք։
Եւ ոչ գոյր նոցա որդեակ, քանզի Եղի- 7
սաբեթ ամուլ էր, և երկոքեան ան-
ցեալ էին զաւուրբք իւրեանց։
Եւ եղև 'ի քահանայանալ նորա ըստ 8
կարգի աւուրցն հասանելոյ առաջի Ա.Յ.
ըստ օրինի քահանայութեանն՝ եհաս 9
նմա խունկ արկանել մտեալ 'ի տաճարն
տեառն։
Եւ ա̃մ բազմութիւն ժողովրդեանն կային 10
յաղօթս արտաքոյ 'ի ժամ խնկոցն։
Եւ երևեցաւ նմա հրեշտակ տեառն, զի 11
կայր ընդ աջմէ սեղանոյ խնկոցն։
Եւ խռովեցաւ Զաքարիա իբրև ետես, 12
և անկաւ ահ 'ի վերայ նորա։
Ասէ ցնա հրեշտակն տեառն. մի երկնչիր 13
Զաքարիա, զի լսելի եղեն աղօթք քո,
և կին քո Եղիսաբեթ ծնցի քեզ որդի
և կոչեսցես զանուն նորա Յովհաննէս։
Եւ եղիցի քեզ ուրախութիւն և ցնծու- 14
թիւն, և բազումք 'ի ծննդեան նորա
խնդասցեն։
Զի եղիցի մեծ առաջի տեառն, և գինի 15
և օղի մի արբցէ, և հոգւով սրբով լցցի
անդստին յորովայնէ մօր իւրոյ։

16 Եւ զբազումս յորդւոցն Իսրայէլի դար-
ձուսցէ ՚ի տէր Աստուած իւրեանց։
17 Եւ ինքն եկեսցէ առաջի նորա հոգւով
զօրութեամբ Եղիայի, դարձուցանել ըզ-
սիրտս հարց յորդիս, և զանհաւանս յի-
մաստութիւն արդարոց, պատրաստել
տեառն ժողովուրդ կազմեալ։
18 Եւ ասէ Զաքարիա ցհրեշտակն. և ի՞ւ
գիտացից զայդ, զի ես ծեր եմ և կին
իմ անցեալ զաւուրբք իւրովք։
19 Պատասխանի ետ հրեշտակն և ասէ
ցնա. ես եմ Գաբրիէլ՝ որ կամ առաջի
Աստուծոյ, և առաքեցայ խօսել ընդ քեզ
և աւետարանել քեզ զայդ։
20 Եւ ահա եղիցիս համր, և մի՛ կարաս-
ցես խօսել մինչև ցօրն յորում այդ լի-
նիցի, փոխանակ զի ոչ հաւատացեր բա-
նից իմոց որք լցցին ՚ի ժամանակի իւ-
րեանց։
21 Եւ ժողովուրդն ակն ունէր Զաքարիայ,
և զարմանային ընդ յամելն նորա ՚ի
տաճարին։
22 Եւ իբրև ել՝ ոչ կարէր խօսել ընդ նոսա.
և իմացան թէ տեսիլ ետես ՚ի տաճա-
րին. և նա նշանացի խօսէր ընդ նոսա և
կայր պապանձեալ։
23 Եւ եղև իբրև լցան աւուրք պաշտաման
նորա, գնաց ՚ի տուն իւր։

Եւ յետ աւուրցն այնոցիկ յղացաւ Ե- 24
ղիսաբեթ կինն նորա, և թաքուցանէր
զանձն ամիսս հինգ և ասէր.
Զինչ գործ գործեաց ընդ իս տէր յա- 25
ւուրս՝ յորս հայեցաւ յիս բառնալ զնա-
խատինս իմ՝ ի մարդկանէ։
Եւ յամսեանն վեցերորդի առաքեցաւ 26
Գաբրիէլ հրեշտակ յԱստուծոյ ՚ի քա-
ղաք մի Գալիլեացւոց, որում անուն էր
Նազարեթ.
Առ կոյս խօսեցեալ առն, որում անուն 27
էր Յովսէփ՝ ՚ի տանէ Դաւթի, և ա-
նուն կուսին Մարիամ։
Եւ եկեալ առ նա ասէ, ուրախ լեր բեր- 28
կրեալդ, տէր ընդ քեզ։
Եւ նա ընդ բանսն խռովեցաւ և խորհէր 29
ընդ միտս թէ որպիսի՞ ինչ իցէ ողջոյնս այս։
Եւ ասէ ցնա հրեշտակն. մի՛ երկնչիր 30
Մարիամ, զի գտեր շնորհս յԱստուծոյ։
Եւ ահա յղասջիր և ծնցես որդի, և 31
կոչեսցես զանուն նորա Յիսուս։
Նա եղիցի մեծ, և որդի բարձրելոյ կո- 32
չեսցի. և տացէ նմա տէր Ած զաթոռն
Դաւթի հօր նորա, և թագաւորեսցէ ՚ի
վերայ տանն Յակոբայ ՚ի յաւիտեանս։
Եւ թագաւորութեան նորա վախճան 33
մի՛ լիցի։
Եւ ասէ Մարիամ ցհրեշտակն, զիա՞րդ 34

լինիցի ինձ այդ, քանզի զայր ոչ գիտեմ։
35 Պատասխանի ետ հրեշտակն եւ ասէ ցնա.
Հոգի սուրբ եկեսցէ 'ի քեզ, եւ զօրու-
թիւն բարձրելոյն հովանի լիցի 'ի վերայ
քո. քանզի եւ որ ծնանելոցն է 'ի քէն՝
սուրբ է, եւ որդի Աստուծոյ կոչեսցի։
36 Եւ ահա Եղիսաբեթ ազգական քո՝ եւ
նա յղի է 'ի ծերութեան իւրում, եւ այս
վեցերորդ ամիս է նորա՝ որ ամուլն կո-
չեցեալ էր։
37 Զի ոչ տկարասցի առ յԱ.յ ա͞մ բան։
38 Եւ ասէ Մարիամ. ահաւասիկ կամ ա-
ղախին տեառն, եղիցի ինձ ըստ բանի
քում. եւ գնաց 'ի նմանէ հրեշտակն։
39 Յարուցեալ Մարիամ յաւուրսն յայնո-
սիկ, գնաց 'ի լեռնակողմն փութապէս
'ի քաղաքն Յուդայ։
40 Եւ եմուտ 'ի տուն Զաքարիայ, եւ ետ
ողջոյն Եղիսաբեթի։
41 Եւ եղեւ իբրեւ լուաւ զողջոյնն Մարիա-
մու Եղիսաբեթ, խաղաց մանուկն յո-
րովայնի նորա. եւ լցաւ Եղիսաբեթ
հոգւով սրբով։
42 Եւ 'ի ձայն բարձր աղաղակեաց եւ ասէ.
օրհնեալ ես դու 'ի կանայս, եւ օրհնեալ
է պտուղ որովայնի քո.
43 Եւ ուստի՞ է ինձ այս զի եկեսցէ մայր
տեառն իմոյ առ իս։

Զի ահաւասիկ իբրեւ եղեւ ձայն ող- 44
ջունի քո յականջս իմ, խաղաց ցնծա-
լով մանուկս յորովայնի իմում:
Եւ երանի՜ որ հաւատայցէ եթէ եղիցի 45
կատարումն ասացելոցս նմա 'ի տեառնէ:
Եւ ասէ Մարիամ. Մեծացուսցէ անձն 46
իմ զտէր,
Եւ ցնծացաւ հոգի իմ յԱծ փրկիչ իմ: 47
Զի հայեցաւ 'ի խոնարհութիւն աղա- 48
խնոյ իւրոյ. զի ահա յայսմ հետէ երա-
նեսցեն ինձ ամենայն ազգք:
Զի արար ինձ մեծամեծս հզօրն, եւ սբ 49
է անուն նորա:
Եւ ողորմութիւն նորա ազգաց յազգս 50
երկիւղածաց իւրոց:
Արար զօրութի բազկաւ իւրով, ցրուեաց 51
զամբարտաւանս մտօք սրտից իւրեանց:
Քակեաց զհզօրս յաթոռոց եւ բար- 52
ձրացոյց զխոնարհս:
Զքաղցեալս լցոյց բարութեամբ, եւ 53
զմեծատունս արձակեաց ունայնս:
Պաշտպանեաց Իսրայելի ծառայի իւ- 54
րում՝ յիշել զողորմութիւնս:
Որպէս խօսեցաւ առ հարս մեր՝ Աբրա- 55
համու եւ զաւակի նորա յաւիտեան:
Եկաց Մարիամ առ նմա իբրեւ ամիս 56
երիս, եւ դարձաւ 'ի տուն իւր:
Եւ Եղիսաբեթի լցան ժամանակք ծը- 57

նանելոյ, և ծնաւ որդի։
58 Եւ լուան որ շուրջ զնովաւ էին՝ և ազ-
գատոհմ նր̃, զի մեծ արար տէր ողոր-
մութ̃ իւր ընդ նմա. և խնդային ընդ նմա։
59 Եւ եղև յաւուրն ութերորդի՝ եկին
թլփատել զմանուկն. և կոչէին զնա
յանուն հօր իւրոյ Զաքարիա։
60 Պատասխանի ետ մայր նորա և ասէ.
ոչ, այլ կոչեսցի Յովհաննէս։
61 Եւ ասեն ցնա. քանզի ոչ ոք է յազգի
քում, որոյ կոչի անուն Յովհաննէս։
62 Ակնարկէին հօրն նորա թէ զի՞նչ կամիցի
կոչել զնա։
63 Եւ խնդրեաց տախտակ, գրեաց և ասէ.
Յովհաննէս է անուն դորա. և զարմա-
ցան ամենեքին։
64 Եւ բացաւ բերան նորա վաղվաղակի և
լեզու նորա, և խօսէր և օրհնէր զԱծ̃։
65 Եւ եղև ահ ՚ի վերայ ամենեցուն որ
լսէին զայս, և որ շուրջ բնակեալ էին
զնոքօք. և ընդ ամենայն լեռնակողմն
Հրէաստանի պատմէին ամենայն բանքս
այսոքիկ։
66 Եւ եդին ամենեքեան որ լսէինն ՚ի
սիրտս իւրեանց, և ասէին. զի՞նչ լինիցի
մանուկս այս. և ձեռն տն̃ էր ընդ նմա։
67 Եւ Զաքարիա հայր նորա լցաւ հոգւով
սրբով, մարգարէացաւ և ասէ.

Օրհնեալ տէր Աստուած Իսրայէլի, զի 68
յայց ել մեզ, և արար փրկութիւն ժո-
ղովրդեան իւրում։
Եւ յարոյց եղջիւր փրկութեան մեզ 'ի 69
տանէ Դաւթի ծառայի իւրոյ։
Որպէս խօսեցաւ բերանով սրբոց՝ որ 70
յաւիտենից մարգարէքն նորա էին։
Փրկութիւն 'ի թշնամեաց մերոց, և 'ի 71
ձեռաց ամենայն ատելեաց մերոց։
Առնել ողորմութիւն ընդ հարս մեր, և 72
յիշել զուխտն իւր սուրբ։
Զերդումն զոր երդուաւ Աբրահամու 73
հօր մերում՝ տալ մեզ։
Առանց երկիւղի, 'ի ձեռաց թշնամեաց 74
մերոց փրկեալս։ Պաշտել զնա
Սրբութեամբ և արդարութեամբ առա- 75
ջի նր զամենայն աւուրս կենաց մերոց։
Եւ դու մանուկ, մարգարէ բարձրելոյ 76
կոչեսջիր. զի երթիցես առաջի երեսաց
տն պատրաստել զճանապարհս նորա։
Տալ գիտութիւն փրկութեան ժողովր- 77
դեան նորա, 'ի թողութն մեղաց նոցա։
Վասն գթութեանց ողորմութեան Աս- 78
տուծոյ մերոյ, որովք այց արասցէ մեզ
արեգակն 'ի բարձանց։
Երևել որոց 'ի խաւարի և 'ի ստուերս 79
մահու նստէին, ուղղել զոտս մեր 'ի ճա-
նապարհս խաղաղութեան։

80 Եւ մանուկն աճէր և զօրանայր հոգւով,
և էր յանապատս մինչև յօր երևելոյ
նորա Իսրայէլի:

ԳԼ. Բ

1 Եւ եղև ընդ աւուրսն ընդ այնոսիկ ել
հրաման յՕգոստոս կայսերէ՝ աշխար-
հագիր առնել ընդ ամենայն տիեզերս:
2 Այս առաջին աշխարհագիր եղև 'ի դա-
տաւորութեան Ասորւոց Կիւրենեայ:
3 Եւ երթային ամենեքեան մտանել յաշ-
խարհագիր յիւրաքանչիւր քաղաքի:
4 Ել և Յովսէփ 'ի Գալիլեէ 'ի քաղաքէ
Նազարեթէ՝ 'ի Հրէաստան 'ի քաղաք
Դաւթի, որ կոչի Բեթղեհէմ. վասն լի-
նելոյ նորա 'ի տանէ և յազգէ Դաւթի.
5 Մտանել յաշխարհագիր Մարեմաւ
հանդերձ՝ զոր խօսեալն էր նմա և էր յղի:
6 Եւ եղև 'ի հասանելն նոցա անդր, լցան
աւուրք ծնանելոյ նորա:
7 Եւ ծնաւ զորդին իւր զանդրանիկ, և
պատեաց 'ի խանձարուրս և եդ զնա 'ի
մսուր, զի ոչ գոյր նոցա տեղի յիջևանին:
8 Եւ հովիւք էին 'ի տեղւոջն յայնմիկ
բացօթեագք, որ պահէին զպահպանու-
թիւնս գիշերոյ հօտից իւրեանց:
9 Եւ հրեշտակ տեառն երևեցաւ նոցա,
և փառք տեառն ծագեցին առ նոսա. և

երկեան երկիւղ մեծ:
Եւ ասէ ցնոսա հրեշտակն. մի՛ երկնչիք, 10
զի ահաւասիկ աւետարանեմ ձեզ ու-
րախութիւն մեծ որ եղիցի ամենայն
ժողովրդեանն:
Զի ծնաւ ձեզ այսօր փրկիչ, որ է օ- 11
ծեալ տէր 'ի քաղաքի Դաւթի:
Եւ այս նշանակ ձեզ. գտանիցէք մանուկ 12
պատեալ 'ի խանձարուրս, և եդեալ 'ի
մսուր:
Եւ յանկարծակի եղև ընդ հրեշտակին 13
ընդ այնմիկ բազմութիւն զօրաց երկնա-
ւորաց, որ օրհնէին զԱստուած և ասէին.
Փառք 'ի բարձունս Ա՟յ, և յերկիր խա- 14
ղաղութիւն, 'ի մարդիկ հաճութիւն:
Եւ եղև իբրև վերացան 'ի նոցանէ 15
հրեշտակքն յերկինս, ասեն ցմիմեանս
հովիւքն. եկայք երթիցուք մինչև
ցԲեթղեհէմ, և տեսցուք զի՞նչ է բանս
այս որ եղև, զոր տէր եցոյց մեզ:
Եւ եկին փութանակի, և գտին զՄա- 16
րիամ և զՅովսէփ և զմանուկն եդեալ
'ի մսուր:
Եւ ծանեան վասն բանին որ ասացաւ 17
նոցա զմանկանէն:
Եւ ամենեքեան որ լսէին, զարմանային 18
վասն բանիցն զոր խօսեցան ընդ նոսա
հովիւքն:

19 Եւ Մարիամ զամենայն զբանս զայսո֊
սիկ պահէր, և խելամուտ լինէր 'ի
սրտի իւրում։
20 Եւ դարձան հովիւքն, փառաւոր առնէին
և օրհնէին զԱստուած, վասն ա՟մի զոր
լուան և տեսին. ո՟պ պատմեցաւ նոցա։
21 Եւ իբրև լցան աւուրք ութ թլփատել
զնա, և կոչեցաւ անուն նորա Յիսուս,
որ կոչեցեալն էր 'ի հրեշտակէն՝ մինչ չև
յղացեալ էր զնա յորովայնի։
22 Եւ իբրև լցան աւուրք սրբութեան նո֊
ցա ըստ օրինացն Մովսեսի, ածին զնա
յԵրուսաղէմ յանդիման առնել տ՟ն։
23 Որպէս և գրեալ է յօրէնս տեառն, թէ
ամենայն արու 'որ բանայ զարգանդ՝
սուրբ տեառն կոչեսցի։
24 Եւ տալ պատարագս՝ ըստ ասացելոյն յօ֊
րէնս տեառն, զոյգս տատրակաց, կամ
երկուս ձագս աղաւնեաց։
25 Եւ ահա այր մի էր յԵ՟էմ, որոյ անուն
էր Սիմէոն. և էր այրն այն արդար և
երկիւղած, և ակն ունէր մխիթարու֊
թեան Իսրայէլի, և Հոգի ս՟բ էր 'ի նմա։
26 Եւ էր նորա հրաման առեալ 'ի Հոգւոյն
սրբոյ՝ մի՛ տեսանել զմահ մինչև տեսցէ
զօծեալն տեառն։
27 Եւ եկն Հոգւովն 'ի տաճարն, և իբրև
ածին ծնողքն զմանուկն Յիսուս՝ առնել

նց՟ ըստ սովորութե՟ օրինացն 'ի վր՟ նր՟։
Եւ նա առընկալաւ զնա 'ի գիրկս իւր, 28
և օրհնեաց զԱստուած և ասէ.
Արդ արձակես զծառայս քո տէր ըստ 29
բանի քում 'ի խաղաղութիւն։
Զի տեսին աչք իմ զփրկութիւն քո, 30
Զոր պատրաստեցեր առաջի ամենայն 31
ժողովրդոց։
Լոյս 'ի յայտնութիւն հեթանոսաց, և 32
փառս ժողովրդեան քում Իսրայէլի։
Եւ էին հայրն և մայր նորա զարմացեալ 33
'ի վերայ բանիցն, որ խօսէին զնմանէ։
Եւ օրհնեաց զնոսա Սիմէօն, և ասէ 34
ցՄարիամ մայր նորա. ահա սա կայ 'ի
գլորումն և 'ի կանգնումն բազմաց 'ի մէջ
Իսրայէլի, և 'ի նշան հակառակութե՟։
Եւ ընդ քո իսկ անձն անցցէ սուր, զի 35
յայտնեսցին 'ի բազում սրտից խոր-
հուրդք։
Եւ անդ էր Աննա մարգարէ՝ դուստր 36
Փանուելի յազգէ Ասերայ. սա ինքն ան-
ցեալ էր զաւուրբք բազմօք՝ կեցեալ ընդ
առն ամս եօթն 'ի կուսութենէ իւրմէ։
Եւ էր այրի ամաց իբրև ութսուն և 37
չորից. որ ոչ մեկնէր 'ի տաճարէն, այլ
պահօք և աղօթիւք պաշտէր զցայգ և
զցերեկ։
Եւ սա 'ի նմին ժամու յարուցեալ գո- 38

հանայր զտեառնէ, եւ խօսէր զնմանէ
ընդ ամենեսին որ ակն ունէին փրկու-
թեանն Երուսաղեմի։
39 Եւ իբրեւ կատարեցին զա՟մ ըստ օրինացն
տեառն, դարձան անդրէն ՚ի Գալիլեա
՚ի քաղաքն իւրեանց Նազարեթ։
40 Եւ մանուկն աճէր եւ զօրանայր լի իմաս-
տութ՟բ. եւ շնորհք Ա՟յ էին ՚ի վ՟ր նորա։
41 Եւ երթային ծնողք նորա ամի ամի յԵ-
րուսաղէմ՝ ՚ի տօն զատկին։
42 Եւ իբրեւ եղեն նորա ամք երկոտասան,
յելանել նոցա յԵրուսաղէմ ըստ սովո-
րութեան տօնին։
43 Եւ կատարել զաւուրսն եւ դառնալ ան-
դրէն, մնաց Յիսուս մանուկն յԵրու-
սաղէմ. եւ ոչ գիտացին ծնողքն նորա։
44 Կարծէին զնմանէ թէ ընդ ուղեկիցսն
իցէ. եկին իբրեւ աւուր միոյ ճանապարհ
եւ խնդրէին զնա ընդ դրացիսն եւ ընդ
ծանօթս։
45 Եւ իբրեւ ոչ գտին, դարձան անդրէն
յԵրուսաղէմ խնդրել զնա։
46 Եւ եղեւ յետ երից աւուրց՝ գտին զնա ՚ի
տաճարին, զի նստէր ընդ վարդապետսն.
լսէր ՚ի նոցանէ եւ հարցանէր զնոսա։
47 Զարմանային ամենեքեան որ լսէին ՚ի
նմանէ՝ ընդ իմաստութիւնն եւ ընդ պա-
տասխանիս նորա։

Եւ իբրեւ տեսին զնա՝ սքանչացան, եւ ա- 48
սէ ցնա մայրն իւր. որդեակ, զի՞նչ գործ
գործեցեր դու ընդ մեզ. ահաւասիկ
հայր քո եւ ես տառապեալք խնդրէաք
զքեզ։
Եւ ասէ ցնոսա. զի՞ խնդրէիք զիս, ո՞չ 49
գիտէիք եթէ 'ի տան հօր իմոյ պարտ է
ինձ լինել։
Եւ նոքա ոչ իմացան զբանն զոր խօսե- 50
ցաւ ընդ նոսա։
Եւ էջ ընդ նոսա, եւ գնաց 'ի Նազա- 51
րեթ. եւ էր նոցա հնազանդ, եւ մայր
նորա պահէր զամենայն զբանսն 'ի սրտի
իւրում։
Եւ Յիսուս զարգանայր իմաստութ͞բ եւ 52
հասակաւ, եւ շնորհօք յԱստուծոյ եւ 'ի
մարդկանէ։

ԳԼ. Գ.

Ի հնգետասաներորդի ամի տէրութ͞ն 1
Տիբերեայ կայսեր, 'ի դատաւորութեան
Հրէաստանի Պիղատոսի Պոնտացւոյ,
եւ 'ի չորրորդապետութեան Գալիլեացւոց
Հերովդի, եւ 'ի Փիլիպպոսի եղբօր նո-
րա չորրորդապետութեան Իտուրացւոց եւ
Տրաքոնացւոց աշխարհին, եւ 'ի չորրորդ-
պետութեան Լիւսանեայ Աբիլենա-
ցւոյ։

2 Եւ 'ի քահանայապետութե՟ Աննայի և
Կայիափայ եղև բան Ա՟յ 'ի վ՟ր Յովհան-
նու որդւոյ Զաքարիայ՝ յանապատի անդ։
3 Եւ եկն յամենայն կողմն Յորդանանու
քարոզել մկրտութիւն ապաշխարութե՟
'ի թողութիւն մեղաց։
4 Որպէս և գրեալ է 'ի գիրս պատգամաց
Եսայեայ մարգարէին. ձայն բարբառոյ
յանապատի, պատրաստ արարէք զճա-
նապարհ տեառն, ուղիղ արարէք զշա-
ւիղս նորա։
5 Ամենայն ձորք լցցին, և ամենայն լերինք
և բլուրք խոնարհեսցին. և եղիցին դը-
ժուարինքն 'ի դիւրինս, և առապարքն
'ի հարթ ճանապարհս։
6 Եւ տեսցէ ամենայն մարմին զփրկու-
թիւն Աստուծոյ։
7 Եւ ասէ ցժողովուրդսն ելեալս մկրտել
'ի նմանէ. ծնունդք իժից, ո՞ եցոյց ձեզ
փախչել 'ի բարկութենէն որ գալոց է։
8 Արարէք այսուհետև պտուղս արժանի
ապաշխարութեան. և մի՛ սկսանիցիք ա-
սել՝ եթէ ունիմք հայր զԱբրահամ.
զայս ասեմ ձեզ, եթէ կարող է Աստուած
'ի քարանցս յայսցանէ յարուցանել որ-
դիս Աբրահամու։
9 Բայց ահաւասիկ տապար առ արմին
ծառոց կայ. ամենայն ծառ որ ոչ առնէ

զպտուղ բարւոք, հատանի եւ ՚ի հուր
արկանի։
Հարցանէին զնա ժողովուրդքն եւ ասէին. 10
իսկ արդ զի՞նչ գործեսցուք։
Պատասխանի ետ եւ ասէ ցնոսա, որ ի֊ 11
ցեն երկու հանդերձք՝ տացէ զմին այնմ
որ ոչն գուցէ. եւ որ կայցէ կերակուր՝
նոյնպէս արասցէ։
Եկին եւ մաքսաւորք մկրտիլ, եւ ա֊ 12
սեն ցնա. վարդապետ, զի՞նչ գործեսցուք։
Եւ նա ասէ ցնոսա. մի՛ ինչ աւելի քան 13
զհրամայեալն ձեզ առնիցէք։
Հարցանէին զնա եւ զինուորքն եւ ա֊ 14
սէին. եւ մեք զի՞նչ գործեսցուք. ասէ
ցնոսա, մի՛ զոք խռովիցէք եւ մի՛ զոք
զրպարտիցէք, շատ լիցին ձեզ թոշակքն
ձեր։
Մինչ ակն ունէր ժողովուրդն եւ խոր֊ 15
հէին ամենեքեան ՚ի սիրտս իւրեանց վն
Յովհաննու միթէ սա իցէ Քրիստոսն.
Պատասխանի ետ ամենեցուն եւ ասէ. 16
ես մկրտեմ զձեզ ջրով, բայց գայ զօրա֊
գոյն քան զիս, զորոյ չեմ բաւական բառ֊
նալ զկօշիկս. նա մկրտեսցէ զձեզ հո֊
գւով սրբով եւ հրով։
Որոյ հեծանոցն ՚ի ձեռին իւրում սրբել 17
զկալ իւր եւ ժողովել զցորեանն ՚ի շտե֊

մարանս իւր, և զյարդն այրեսցէ ան-
շէջ հրով:
18 Բազում և այլ ինչ մխիթարութեամբ
աւետարանէր ժողովրդեանն:
19 Բայց Հերովդէս չորրորդապետ յանդի-
մանեալ 'ի նմանէ վասն Հերովդիայ
կնոջ եղբօր իւրոյ՝ և վասն ամենայն չա-
րեացն զոր գործեաց Հերովդէս.
20 Յաւել և զայն ևս 'ի վերայ ամենայնի,
և եդ 'ի բանտի զՅովհաննէս:
21 Եւ եղև 'ի մկրտել ամենայն ժողովր-
դեանն, և ընդ Յիսուսի մկրտելն և կալ
յաղօթս, բանալ երկնից,
22 Եւ իջանել հոգւոյն սրբոյ մարմնաւոր
տեսլեամբ իբրև զաղաւնի 'ի վերայ նո-
րա. և գալ ձայն յերկնից որ ասէր, դու
ես որդի իմ սիրելի՝ ընդ քեզ հաճեցայ:
23 Եւ ինքն Յիսուս էր ամաց իբրև երես-
նից, սկսեալ՝ որպէս կարծէր որդի
Յովսեփայ: Որ Յակովբայն, որ Հե-
ղեայն, որ Մատաթեայն:
24 Որ Ղևեայն, որ Մեղքեայն, որ Յան-
նեայն, որ Յովսեփայն:
25 Որ Մատաթեայն, որ Ամովսայն, որ Նա-
ւումայն, որ Եսղեայն, որ Նանգեայն:
26 Որ Մաաթայն, որ Մատաթայն, որ
Սեմեայն, որ Յովսեքեայն, որ Յովդայն:
27 Որ Յովնանայն, որ Րեսայն, որ Զօրաբա-

բելին, որ Սաղաթիէլին, որ Ներեայն:
Որ Մելքեայն, որ Ադդեայն, որ Կով֊ 28
սամայն, որ Եղմովդադայն, որ Երայն:
Որ Յեսուայն, որ Եղիազարայն, որ Յով֊ 29
րամայն, որ Մատթայն, որ Ղեւեայն:
Որ Սիմեոնին, որ Յուդային, որ Յովսե֊ 30
փայն, որ Յովնամայն, որ Եղեակիմայն:
Որ Մեղեայն, որ Մեննայն, որ Մատտա֊ 31
թայն, որ Նաթանայն, որ Դաւթին:
Որ Յեսսեայն, որ Ովբեդայն, որ Բոո֊ 32
սայն, որ Սաղմոնին, որ Նաասոնին:
Որ Ամինադաբայն, որ Արամայն, որ 33
Ադմեայն, որ Առնեայն, որ Եսրովմայն,
որ Փարեսին, որ Յուդային:
Որ Յակովբայն, որ Իսահակայն, որ 34
Աբրահամուն, որ Թարային, որ Նա֊
քովրայն:
Որ Սերուքայն, որ Ռագաւայն, որ Փա֊ 35
ղեկայն, որ Եբերայն, որ Սաղային:
Որ Կայնանայն, որ Արփաքսադայն, որ 36
Սեմայն, որ Նոյին, որ Ղամեքայն:
Որ Մաթուսաղային, որ Ենովքայն, որ 37
Յարեդին, որ Մաղաղեելին, որ Կայնա֊
նայն:
Որ Ենովսայն, որ Սեթայն, որ Ադա֊ 38
մայն, որ Աստուծոյն:

ԳԼ. Դ

1 Եւ Յիսուս լի Հոգւով սրբով դարձաւ
’ի Յորդանանէ, եւ վարէր Հոգւովն յա֊
նապատ,
2 Աւուրս քառասուն փորձեալ ’ի սատա֊
նայէ, եւ ոչ եկեր եւ ոչ արբ յաւուրսն
յայնոսիկ. եւ ’ի կատարելն նոցա քաղ֊
ցեաւ։
3 Եւ ասէ ցնա սատանայ. եթէ որդի ես
Ա.Ծ, ասա քարիդ այդմիկ զի հաց լիցի։
4 Պատասխանի ետ նմա Յիսուս եւ ասէ.
գրեալ է եթէ ոչ հացիւ միայն կեցցէ
մարդ, այլ ամենայն բանիւ Աստուծոյ։
5 Եւ հանեալ զնա ’ի լեառն մի բարձր՝
եցոյց նմա զամենայն թագաւորութիւս
աշխարհի ’ի վայրկեան ժամանակի։
6 Եւ ասէ ցնա սատանայ, քեզ տաց զայս
ամենայն իշխանութիւն եւ զփառս սո֊
ցա, զի ինձ տուեալ է՝ եւ ում կամիմ
տամ զսա։
7 Արդ դու եթէ անկեալ երկիր պագանի֊
ցես առաջի իմ, քեզ եղիցի ամենայն։
8 Պատասխանի ետ նմա Յիսուս եւ ասէ.
գրեալ է, երկիր պագցես տեառն Աստու֊
ծոյ քում, եւ զնա միայն պաշտեսցես։
9 Եւ ած զնա յԵրուսաղէմ, եւ կացոյց ’ի
վերայ աշտարակի տաճարին, եւ ասէ

ցնա. եթէ որդի ես Աստուծոյ, արկ
զքեզ աստի ՚ի վայր։
Զի գրեալ է, եթէ հրեշտակաց իւրոց 10
պատուիրեալ է վասն քո՝ պահել զքեզ։
Զի ՚ի վերայ ձեռաց բարձցեն զքեզ, 11
մի՛ երբեք հարցես զքարի զոտն քո։
Պատասխանի ետ նմա Յ̃ս և ասէ. ասա֊ 12
ցեալ է, թէ ոչ փորձեսցես զտէր Ա̃ծ քո։
Եւ կատարեալ զամենայն փորձութիւնն 13
սատանայի, ՚ի բաց եկաց ՚ի նմանէ առ
ժամանակ մի։
ԲԿ Եւ դարձաւ Յիսուս զօրութեամբ հո֊ 14
գւոյն ՚ի Գալիլեա, և ել համբաւ զնմա֊
նէ ընդ ամենայն կողմանս գաւառին։
Եւ նա ուսուցանէր ՚ի ժողովուրդս նոցա 15
փառաւորեալ յամենեցունց։
Եւ եկն ՚ի Նազարեթ՝ ուր սնեալն էր. 16
և եմուտ ըստ սովորութեան իւրում յա֊
ւուրն շաբաթուց ՚ի ժողովուրդն։
Եւ ետուն նմա գիրս զԵսայեայ մար֊ 17
գարէին, և յարեաւ ընթեռնուլ. և ի֊
բրև եբաց զգիրսն՝ եգիտ զայն տեղի
յորում գրեալն էր.
Հոգի տեառն ՚ի վերայ իմ, վասն որոյ 18
և օծ իսկ զիս. աւետարանել աղքատաց
առաքեաց զիս, բժշկել զբեկեալս սըր֊
տիւք։
Քարոզել գերեաց զթողութիւն, և 19

կուրաց տեսանել. արձակել զվիրաւորս
'ի թողութիւն, քարոզել զտարեկան
Տեառն ընդունելի:
20 Եւ խփեալ զգիրսն՝ ետ ցպաշտօնեայն
և նստաւ, և ամենեցուն որ 'ի ժողովր-
դեանն էին աչք՝ 'ի նա հայէին:
21 Եւ սկսաւ ասել ցնոսա. այսօր լցան
գիրքս այս յականջս ձեր:
22 Եւ ամենեքին վկայէին նմա, և զարմա-
նային ընդ բանս շնորհացն որ ելանէին
'ի բերանոյ նորա, և ասէին. ո՞չ սա է
որդին Յովսեփայ:
23 Եւ ասէ ցնոսա. ապաքէն ասիցէք առ
իս զառակս զայս, բժիշկ բժշկեա
զանձն քո. որչափ լուաք զոր արարեր 'ի
Կափառնաում, արա և աստ 'ի քում
գաւառի:
24 Եւ ասէ. ամէն ասեմ ձեզ, թէ չէ մար-
գարէ ընդունելի 'ի քաղաքի իւրում:
25 Արդարև ասեմ ձեզ, զի բազում այրիք
էին յաւուրս Եղիայի 'ի մէջ Իսրայելի՝
յորժամ փակեցանն երկինք զերիս ամս
և զվեց ամիս. և եղև սով մեծ ընդ
ամենայն երկիր:
26 Եւ ոչ առ մի 'ի նոցանէ առաքեցաւ Ե-
ղիա, բայց միայն 'ի Սարեփթայ Սիդով-
նացւոց՝ առ կին մի այրի:
27 Եւ բազում բորոտք էին յԻսրայէլի առ

Եղիսէի մարգարէի, և ոչ ոք'ի նոցանէ
սրբեցաւ, բայց միայն Նեեման Ասորի:
Եւ լցան ամենեքին բարկութեամբ 'ի 28
ժողովրդեանն՝ իբրև լուան զայս:
Եւ յարուցեալ հանին զնա արտաքոյ 29
քաղաքին, և ածին զնա մինչև յար-
տևան լերինն՝ յորոյ վերայ քաղաքն նո-
ցա շինեալ էր, գահավէժ առնել զնա:
Եւ նա անցեալ ընդ մէջ նոցա գնայր: 30
ԲԲ Եւ էջ 'ի Կափառնաում 'ի քաղաքն 31
Գալիլեացւոց, և ուսուցանէր զնոսա 'ի
շաբաթուն:
Եւ զարմանային ընդ վարդապետու- 32
թիւննորա, զի իշխանութեամբ էր բան
նորա:
Եւ էր 'ի ժողովրդեանն այր մի, զոր 33
ունէր այս դիւի պղծոյ, և աղաղակեաց
'ի ձայն մեծ,
Ասէ. Թուլացո, զի՞ կայ մեր և քո՝ Յի- 34
սուս Նազովրեցի, եկիր կորուսանել
զմեզ. գիտեմք զքեզ ո՛վ ես ս՟րբ Ա՟յ:
Սաստեաց 'ի նա Յիսուս և ասէ. պա- 35
պանձեաց և ել 'ի դմանէ. զգետնեաց
զնա դեւն 'ի միջի անդ և ել 'ի նմանէ, և
ինչ ոչ վնասեաց նմա:
Եւ եղեն զարմանալիք 'ի վերայ ամենե- 36
ցուն, խօսէին ընդ միմեանս և ասէին.
զի՞նչ է բանս այս, զի իշխանութեամբ

եւ զօրութեամբ սաստէ այսոց պղծոց՝ եւ ելանեն։

37 Եւ երթայր հռչակ զնմանէ ընդ ամենայն տեղիս շուրջ գաւառաւն։

38 Եւ յարուցեալ ՚ի ժողովրդենէ անտի, եմուտ ՚ի տուն Սիմոնի։

39 Զոքանչ Սիմոնի տագնապէր ջերմամբ մեծաւ, եւ աղաչեցին զնա վասն նորա։

40 Եկաց առ նմա՝ սաստեաց ջերմանն եւ եթող զնա, եւ վաղվաղակի յարեաւ՝ եւ պաշտէր զնոսա։

41 Եւ ընդ արեւուն մտանել, ամենեքեան որոց էին հիւանդք ՚ի պէսպէս ցաւս՝ բերէին զնոսա առ նա։ Եւ նա իւրաքանչիւր ումեք ՚ի նոցանէ դնէր ձեռս եւ բժշկէր զնոսա։

42 Ելանէին դեւք ՚ի բազմաց, աղաղակէին եւ ասէին. եթէ դու ես որդի Աստուծոյ. եւ նա սաստէր եւ ոչ տայր նոցա թոյլ խօսել, զի գիտէին զնա թէ Քրիստոսն է։

43 Եւ իբրեւ տիւ եղեւ, ել գնաց յանապատ ԲԳ.
տեղի, եւ ժողովուրդքն խնդրէին զնա. եկին մինչեւ առ նա եւ արգելուին զնա, զի մի գնասցէ ՚ի նոցանէ։

44 Եւ նա ասէ ցնոսա. եւ այլոց քաղաքաց պարտ է ինձ աւետարանել զարքայութիւնն Ա՟Յ, զի յայն իսկ առաքեցայ։

Եւ քարոզէր ՚ի ժողովուրդսն Գալի- 45
լեացւոց։

ԳԼ. Ե

Եւ եղեւ ՚ի խռնել զնովաւ ժողովրդեանն 1
եւ լսել զբանն Աստուծոյ, եւ ինքն կայր
առ ծովակին Գեննեսարեթայ։
Եւ ետես երկուս նաւս՝ զի կային առ 2
ծովակին, եւ ձկնորսքն ելեալ ՚ի նոցանէ
լուանային զգործիսն։
Ել նա ՚ի մի նաւուցն որ էր Սիմովնի, 3
եւ աղաչեաց զնա սակաւիկ մի տանել ՚ի
ներքս ՚ի ցամաքէն. նստաւ եւ ուսուցա-
նէր ՚ի նաւէ անտի զժողովուրդսն։
Եւ իբրեւ լռեաց ՚ի խօսիցն, ասէ ցՍի- 4
մովն. խաղացո ՚ի խորն, եւ արկէք ըզ-
գործիս ձեր յորս։
Պատասխանի ետ Սիմովն եւ ասէ ցնա. 5
վարդապետ, զամենայն գիշերս աշխատ
եղեաք եւ ոչ ինչ կալաք, բայց վասն քո
բանիդ արկցուք զգործիսս։
Զայս իբրեւ արարին, փակեցին ՚ի ներքս 6
բազմութիւն ձկանց յոյժ, մինչեւ պար-
պատէին ուռկանքն նոցա։
Եւ ակնարկէին որսակցացն ՚ի միւս 7
նաւուն՝ գալ օգնել նոցա. եւ եկին եւ
լցին երկոքին նաւքն՝ մինչեւ մերձ ըն-
կղմել նոցա։

8 Իբրեւ ետես Սիմոն Պետրոս՝ անկաւ առ
ծունկս Յիսուսի եւ ասէ. 'ի բաց գնա
յինէն տէր, զի այր մեղաւոր եմ ես։
9 Քանզի ահ պատեաց զնա եւ զամենե-
սեան որ ընդ նմայն էին, վասն որսոյ
ձկանցն զորս ըմբռնեցին։
10 Նոյնպէս եւ զՅակովբոս եւ զՅովհաննէս՝
զորդիսն Զեբեդեայ, որ էին որսակիցք
Սիմոնի։ Եւ ասէ ցՍիմոն Յիսուս, մի
երկնչիր, յայսմ հետէ զմարդիկ որսայ-
ցես 'ի կեանս։
11 Եւ հանեալ զնաւն 'ի ցամաք, Թողին
զամենայն եւ գնացին զհետ նորա։
12 Եւ եղեւ 'ի հասանելն նորա 'ի մի քաղա- ԲԴ
քացն, ահա այր մի լի բորոտութեամբ
իբրեւ ետես զՅիսուս՝ անկեալ 'ի վերայ
երեսաց աղաչեաց զնա եւ ասէ. տէր,
եթէ կամիս՝ կարող ես զիս սրբել։
13 Ձգեաց զձեռն իւր հասոյց 'ի նա եւ
ասէ. կամիմ, սրբեաց. եւ վաղվաղակի
գնաց 'ի նմանէ բորոտութիւնն։
14 Եւ նա պատուիրեաց նմա մի ումեք ա-
սել, այլ թէ երթ ցոյց զանձն քո քա-
հանային, եւ մատո պատարագ վասն
սրբութեան քո որպէս եւ հրամայեաց
Մովսէս, 'ի վկայութիւն նոցա։
15 Եւ յորդէր առաւել բանն զնմանէ, եւ
ժողովէին ժողովուրդք բազումք լսել

և բժշկել 'ի հիւանդութենէ իւրեանց։
Եւ նա խոյս տայր յանապատ տեղիս, 16
և կայր յաղօթս։
ԲԵ Եւ եղև 'ի միում աւուրց՝ և ինքն ու- 17
սուցանէր, և Փարիսեցիքն և օրինացն
վարդապետք նստէին. որ ժողովեալ էին
յամենայն քաղաքաց Գալիլեացւոց և
Հրէաստանի և Երուսաղեմի. և զօրու-
թիւն Տեառն էր 'ի բժշկել զնոսա։
Եւ ահա արք բերէին մահճօք զայր մի 18
որ էր անդամալոյծ, և խնդրէին զնա
մուծանել 'ի ներքս և դնել առաջի նորա։
Եւ իբրև ոչ գտանէին թէ ընդ որ մու- 19
ծանիցեն զնա 'ի ներքս վասն ամբոխին,
ելին 'ի տանիս և ի ցուոյն կախեցին
զնա, և իջուցին մահճօքն հանդերձ 'ի
մէջ առաջի Յիսուսի։
Եւ տեսեալ զհաւատսն նոցա, ասէ 20
ցնա. այր դու, թողեալ լիցին քեզ
մեղք քո։
Սկսան խորհել դպիրքն և Փարիսե- 21
ցիքն, և ասեն. ո՞ է սա որ խօսի զհայ-
հոյութիւնս, ո՞վ կարէ թողուլ զմեղս՝
բայց միայն Աստուած։
Իբրև գիտաց Յիսուս զխորհուրդս նո- 22
ցա, պատասխանի ետ և ասէ ցնոսա. զի՞
խորհիք 'ի սիրտս ձեր։
Զի՞նչ դիւրագոյն է. ասե՞լ թողեալ 23

լիցին քեզ մեղք քո, եթէ ասել արի և
գնա։
24 Այլ զի գիտասջիք եթէ իշխանութիւն
ունի որդի մարդոյ յերկրի թողուլ զմե-
ղս, ասէ ցանդամալոյծն. քեզ ա-
սեմ, արի առ զմահիճս քո՝ և երթ 'ի
տուն քո։
25 Եւ առժամայն յարուցեալ առաջի ա-
մենեցուն՝ առ զիւրև յորոյ վերայ ան-
կեալ դնէր, գնաց 'ի տուն իւր և փա-
ռաւոր առնէր զԱստուած։
26 Զարմանք կալան զամենեսեան, և փա-
ռաւոր առնէին զԱստուած. լի եղեն ա-
հիւ և ասեն, եթէ տեսաք այսօր նոր
նշան։
27 Եւ յետ այնորիկ ել անտի, և ետես ԲՁ
մաքսաւոր մի՝ որում անուն էր Ղևի, զի
նստէր 'ի մաքսաւորութեան. և ասէ,
եկ զկնի իմ։
28 Եւ թողեալ զամենայն յարեաւ գնաց
զկնի նորա։
29 Եւ արար ընդունելութիւն մեծ նմա
Ղևի 'ի տան իւրում. և էր ժողովուրդ
բազում մաքսաւորաց և այլոց՝ որ էին
բազմեալ ընդ նոսա։
30 Եւ տրտնջէին Փարիսեցիքն և դպիրքն
նոցա զնմանէ առ աշակերտսն նորա և
ասէին. ընդէ՞ր ընդ մաքսաւորս և ընդ

մեղաւորս ուտէք և ըմպէք։
Պատասխանի ետ Յիսուս և ասէ ցնոսա. 31
ոչ ինչ են պիտոյ բժիշկք ողջոց, այլ
հիւանդաց։
Եւ ոչ եկի կոչել զարդարս, այլ զմեղա- 32
ւորս յապաշխարութիւն։
Եւ նոքա ասեն ցնա. ընդէր աշակերտքն 33
Յովհաննու պահեն ստէպ և խնդ-
րուածս առնեն, նոյնպէս և փարիսե-
ցւոցն. և քոյդ ուտեն և ըմպեն։
Եւ նա ասէ ցնոսա. միթէ կարօղ էք 34
մանկանց առագաստի, մինչ փեսայն ընդ
նոսա իցէ, հրաման տալ պահել։
Եկեսցեն աւուրք՝ յորժամ բարձցի 'ի 35
նոցանէ փեսայն, ապա պահեսցեն յա-
ւուրսն յայնոսիկ։
Ասաց և առակ մի առ նոսա, թէ ոչ ոք 36
արկանէ 'ի նոր հանդերձէ 'ի վերայ
հնացեալ ձորձոյ. ապա թէ ոչ՝ և զնորն
պատառէ, և ընդ հնոյն չմիաբանի կա-
պերտն որ 'ի նորոյն։
Եւ ոչ ոք արկանէ գինի նոր 'ի տիկս 37
հինս. ապա թէ ոչ՝ պայթուցանէ գինին
նոր զտիկսն հինս. ինքն հեղու և տիկքն
կորնչին։
Այլ գինի նոր 'ի տիկս նորս արկանելի 38
է, և երկոքին պահին։
Եւ ոչ ոք ըմպէ զհինն և կամիցի ըզ- 39

նորն․ քանզի ասէ, թէ հինն քաղցրա-
գոյն է։

ԳԼ. Զ

1 Եւ եղև 'ի շաբաթու յերկրորդումա- ԲԷ
ռաջնոյն անցանել նմա ընդ արտորայսն.
և աշակերտքն նորա կորզէին հասկ՝
շփէին ընդ ափ և ուտէին։
2 Եւ ոմանք 'ի Փարիսեցւոցն ասէին ցնա.
զի՞նչ գործէք՝ զոր չէ օրէն 'ի շաբաթու։
3 Պատասխանի ետ նոցա Յիսուս և ասէ.
չիցէ՞ ընթերցեալ ձեր զոր արարն Դա-
ւիթ, յորժամ քաղցեաւն ինքն՝ և որ
ընդ նմայն էին։
4 Զիա՞րդ եմուտ նա 'ի տունն Աստուծոյ,
և զհացն զառաջաւորութեան եկեր՝ և
ետ այնոցիկ որ ընդ նմայն էին. զոր ոչ
էր օրէն ուտել, բայց միայն քա-
հանայապետիցն։
5 Եւ ասէ ցնոսա. տէր է որդի մարդոյ և
շաբաթու։
6 Եւ եղև 'ի միւսում շաբաթուն մտանել
նմա 'ի ժողովուրդն և ուսուցանել. և
էր անդ այր մի՝ և ձեռն իւր աջ գօսա-
ցեալ էր։
7 Եւ սպասէին նմա դպիրքն և Փարիսե-
ցիք՝ թէ 'ի շաբաթուն բժշկիցէ, զի
գտանիցեն չարախօսութիւն զնմանէ։

Եւ նա գիտէր զխորհուրդս նոցա, ասէ 8
ցայրն որոյ ձեռնն գօսացեալ էր. արի՛
անց 'ի մէջ. և նա յարուցեալ եկաց:
Ասէ ցնոսա Յիսուս. հարցից ինչ զձեզ. 9
զի՞նչ արժան է 'ի շաբաթու, բարի՞ ինչ
առնել եթէ չար գործել, ոգի՞ մի ապրե-
ցուցանել թէ կորուսանել:
Եւ հայեցեալ շուրջ զամենեքումբք 10
զայրագին՝ ասէ ցնա. ձգեա զձեռն քո.
և նա ձգեաց, և հաստատեցաւ ձեռն
նորա իբրև զմիւսն:
Նոքա լցան յիմարութեամբ, և խօսէին 11
ընդ միմեանս թէ զի՛նչ առնիցեն Յ՟ի:
Գ.Կ Եւ եղև ընդ աւուրսն ընդ այնոսիկ ել 12
'ի լեառն կալ յաղօթս, և հանէր զգի-
շերն 'ի գլուխ յաղօթսն Աստուծոյ:
Եւ իբրև այգ եղև՝ կոչեաց զաշա- 13
կերտսն իւր, և ընտրեաց 'ի նոցանէ եր-
կոտասանս, զորս և առաքեալս անուա-
նեաց:
ԶՍիմոն՝ զոր և Պետրոս անուանեաց, 14
և զԱնդրէաս զեղբայր նորին, և զՅա-
կովբոս և զՅովհաննէս, և զՓիլիպպոս
և զԲարթողիմէոս,
Եւ զՄատթէոս և զԹովմաս, և զՅա- 15
կովբոս Ալփեայ, և զՍիմոն զկոչե-
ցեալն Նախանձայոյզ,
Եւ զՅուդա Յակովբայ, և զՅուդա 16

Իսկարիովտացի՝ որ եղեւ իսկ մատնիչ։
17 Եւ իջեալ նոքօք հանդերձ 'ի տեղի մի
տափարակ, եւ ժողով աշակերտացն նո֊
րա եւ բազմութիւն յոյժ ժողովրդեանն,
յամենայն Հրէաստանէ եւ յԵրուսա֊
ղեմէ՝ եւ յայնմ կողմանէ եւ 'ի ծովեզե֊
րէն Տիւրոսի եւ Սիդովնի։
18 Որ եկին լսել 'ի նմանէ եւ բժշկել 'ի
հիւանդութենէ իւրեանց. եւ նեղեալքն
յայսոց պղծոց բժշկէին։
19 Եւ ա՟մ ժողովուրդն խնդրէր մերձենալ
'ի նա, զի զօրութիւն բազում ելանէր 'ի
նմանէ՝ եւ բժշկէր զամենեսին։
20 Եւ նա ամբարձ զաչս իւր յաշակերտսն
իւր եւ ասէ. Երանի՜ աղքատաց հոգւով,
զի ձեր է արքայութիւնն Աստուծոյ։
21 Երանի որ քաղցեալ են այժմ, զի յա֊
գեսցին։ Երանի որ լան այժմ, զի ծի֊
ծաղեսցին։
22 Երանի է ձեզ յորժամ նախատիցեն
զձեզ մարդիկ, եւ յորժամ որոշիցեն
զձեզ եւ նախատիցեն, եւ հանիցեն ա֊
նուն չար զձէնջ վասն որդւոյ մարդոյ։
23 Ուրախ լիջիք յաւուր յայնմիկ եւ ցնծա֊
ջիք. զի ահա վարձք ձեր բազում են
յերկինս. ըստ դմին օրինակի առնէին
մարգարէիցն հարքն իւրեանց։
24 Բայց վա՜յ ձեզ մեծատանցդ զի ընկա֊

լայք զմխիթարութիւն ձեր։
Վա՜յ ձեզ որ յագեալդ էք այժմ, զի 25
քաղցիցէք. վա՜յ ձեզ որ ծիծաղիքդ
այժմ, զի սգայցէք և լայցէք։
Վա՜յ ձեզ յորժամ բարի ասիցեն զձէնջ 26
ամենայն մարդիկ, զի այդպէս առնէին
սուտ մարգարէիցն հարք նոցա։
Այլ ձեզ ասեմ որ լսէքդ. սիրեցէք 27
զթշնամիս ձեր, բարի արարէք ատե-
լեաց ձերոց։
Օրհնեցէք զանիծիչս ձեր, աղօթս 28
արարէք 'ի վերայ նեղչաց ձերոց։
Որ հարկանէ զծնօտ քո, մատո նմա և 29
զմիւսն. և որ հանէ 'ի քէն զբաճկոն քո,
մի՛ արգելուր 'ի նմանէ և զշապիկս։
Ամենայնի որ խնդրէ 'ի քէն՝ տուր, և 30
զոր ինչ հանէ ոք 'ի քէն՝ մի՛ պահանջեր։
Եւ որպէս կամիք թէ արասցեն ձեզ մար- 31
դիկ, այնպէս արասջիք և դուք նոցա։
Եւ եթէ սիրէք դուք զսիրելիս ձեր 32
զի՞նչ շնորհ է ձեր. զի և մեղաւորք սի-
րեն զսիրելիս իւրեանց։
Եւ եթէ բարի առնէք բարերարաց ձե- 33
րոց՝ ո՞ր շնորհ է ձեր, զի և մեղաւորք
զնոյն գործեն։
Եւ եթէ տայք փոխ այնոցիկ յորոց 34
ակն ունիցիք առնուլ՝ ո՞ր շնորհ է ձեր.
քանզի և մեղաւորք մեղաւորաց փոխ

տամ, զի առցեն անդրէն զկշիռն։
35 Բայց սիրեցէք զթշնամիս ձեր, և բարի
արարէք ատելեաց ձերոց. և տուք փոխ
ուստի ոչ ակն ունիցիք առնուլ. և եղի-
ցին վարձք ձեր բազում, և եղիջիք որ-
դիք բարձրելոյ, զի նա քաղցր է 'ի վե-
րայ չարաց և ապաշնորհաց։
36 Եղերուք գթածք, որպէս և Հայրն ձեր
գթած է։
37 Մի դատէք և ոչ դատիցիք. մի պատ-
ժէք և ոչ պատժիցիք, արձակեցէք և
արձակիցիք։
38 Տուք և տացի ձեզ, չափ բարւոք թա-
թաղուն շարժուն զեղուն՝ տացեն 'ի
գոգս ձեր. նովին չափով որով չափէք՝
չափեսցի ձեզ։
39 Ասաց և առակ մի առ նոսա. միթէ
կարիցէ՞ կոյր կուրի առաջնորդել, ո՞չ
ապաքէն երկոքին 'ի խորխորատ անկա-
նիցին։
40 Ոչ է աշակերտ լաւ քան զվարդապետ
իւր, ամենայն կատարեալն եղիցի իբրև
զվարդապետ իւր։
41 Զի՞ տեսանես զշիւղ յական եղբօր
քո, և 'ի քում ական զգերանդ ոչ
նշմարես։
42 Կամ զիա՞րդ կարես ասել ցեղբայր քո.
եղբայր, թող հանից զշիւղդ յականէ

քումմէ, և դու 'ի քում ական զգե-
րանդ ոչ տեսանես. կեղծաւոր, հան
նախ զգերանդ յականէ քումմէ, և ա-
պա հայեսջիր հանել զշիւղ յականէ
եղբօր քո:
Զի ոչ է ծառ բարի որ առնէ պտուղ 43
չար, և ոչ դարձեալ ծառ չար՝ որ առնէ
պտուղ բարի:
Զի իւրաքանչիւր ծառ 'ի պտղոյ իւրմէ 44
ճանաչի: Զի ոչ եթէ 'ի փշոց քաղեն
թուզ, և ոչ 'ի մորենւոյ կթեն խաղող:
Մարդ բարի՝ 'ի բարի գանձուց սրտի 45
իւրոյ բղխէ զբարի, և մարդ չար՝ 'ի չա-
րէն բղխէ զչար. քանզի 'ի յաւելուածոյ
սրտին խօսի բերան նորա:
Զի՞ կոչէք զիս տէր տէր, և զոր ասեմն 46
ոչ առնէք:
Ամենայն որ գայ առ իս, և լսէ զբանս 47
իմ և առնէ զնոսա, ցուցից ձեզ ում
նման է:
Նման է առն որ շինիցէ տուն, որ փո- 48
րեաց և խորեաց և եդ հիմն 'ի վերայ
վիմի. 'ի յառնել հեղեղաց՝ բաղխեաց
գետ զտունն, և ոչ կարաց շարժել
զնա. զի հաստատեալ էր հիմն 'ի վե-
րայ վիմի:
Իսկ որ լսէ զբանս իմ և ոչ առնէ, նման 49
է առն որ շինիցէ տուն 'ի վերայ հողոյ

առանց հիման, զոր բախեաց գետ և
վաղվաղակի անկաւ. և եղև կործանումն
տանն այնորիկ մեծ:

ԳԼ. Է

1 Եւ իբրև կատարեաց զամենայն ըզ- ԳԲ
բանս իւր’ի լսելիս ժողովրդեանն, եմուտ
’ի Կափառնաում:
2 Հարիւրապետի ուրումն ծառայ չարա-
չար հիւանդացեալ՝ մերձ էր ’ի վախճա-
նել, որ էր նմա պատուական:
3 Իբրև լուաւ զՅիսուսէ, առաքեաց
զծերսն ’ի Հրէից, աղաչէր զնա զի եկես-
ցէ ապրեցուսցէ զծառայն նորա:
4 Եւ նոքա եկեալ առ Յիսուս աղաչէին
զնա ստէպ և ասէին, Թէ արժանի է
որում զշնորհս զայս առնես:
5 Զի սիրէ զազգս մեր, և զժողովրդա-
նոցն նա շինեաց մեզ:
6 Եւ Յիսուս գնաց ընդ նոսա. իբրև ոչ
ինչ կարի հեռի էր ’ի տանէն, յղեաց
առ նա հարիւրապետն բարեկամս և ա-
սէ ցնա. տէր, մի ինչ աշխատ լինիր, զի
չեմ բաւական եթէ ընդ յարկաւ իմով
մտանիցես:
7 Վասն որոյ և ոչ զանձն համարեցայ ար-
ժանի՝ առ քեզ գալոյ. այլ ասա բանիւ և
բժշկեսցի մանուկս իմ:

Քանզի և ես այր մի եմ կարգեալ ընդ 8
իշխանութեամբ. ունիմ ընդ ինև զի-
նուորս, և ասեմ սմա երթ, և երթայ. և
այլում թէ եկ, և գայ. և ծառայի
իմում թէ արա զայս, և առնէ։
Եւ իբրև լուաւ զայս Յիսուս զարմացաւ, 9
դարձաւ առ ժողովուրդն որ երթային
զհետ նորա և ասէ. ամէն ասեմ ձեզ,
թէ և ոչ յԻ՟Էլի այսչափ հաւատս գտի։
Եւ դարձան անդրէն պատգամաւորքն 10
'ի տուն, և գտին զծառայն հիւանդ-
բժշկեալ։
Գ.Գ. Եւ եղև 'ի վաղիւն երթայր 'ի քաղաք 11
մի, որում անուն էր Նային. երթային
ընդ նմա և աշակերտք նորա և ժողո-
վուրդ բազում։
Իբրև մերձ եղև 'ի դուռն քաղաքին, և 12
ահա եհանէր մեռեալ մի որդի միամօր
մօր իւրոյ, և նա էր այրի. և ժողովուրդ-
բազում քաղաքին էր ընդ նմա։
Իբրև ետես զնա տէր, գթացաւ 'ի նա 13
և ասէ, մի՛ լար։
Եւ մատուցեալ մերձեցաւ 'ի դագաղն, 14
և որք բարձեալն տանէին՝ զտեղի ա-
ռին. և ասէ, պատանի դու, քեզ ասեմ
արի՛։
Կանգնեցաւ և նստաւ մեռեալն, և 15
սկսաւ խօսել. և ետ զնա ցմայր իւր։

16 Եւ ահ կալաւ զամենեսին, եւ փառաւոր առնէին զԱստուած եւ ասէին թէ մարգարէ ոմն մեծ յարուցեալ է 'ի միջի մերում, եւ թէ այց արար Աստուած ժողովրդեան իւրում 'ի բարութիւն։

17 Եւ ել զրոյցս այս ընդ ամենայն Հրէաստան վասն նորա եւ ընդ ամենայն կողմանս աշխարհին։

18 Եւ պատմեցին Յովհաննու աշակերտքն իւր վասն ամենայնի այսորիկ։

19 Եւ կոչեաց առ ինքն երկուս ոմանս յաշակերտացն իւրոց Յովհաննէս, առաքեաց առ տէր եւ ասէ. դու ես որ գալոցն ես, եթէ այլում ակն կալցուք։

20 Եւ եկեալ առ նա արքն ասեն. Յովհաննէս Մկրտիչ առաքեաց զմեզ առ քեզ եւ ասէ, դու ես որ գալոցն ես եթէ այլում ակն կալցուք։

21 Եւ 'ի նմին ժամու բժշկեաց զբազումս 'ի հիւանդութեանց եւ 'ի հարուածոց եւ յայսոց չարաց, եւ կուրաց բազմաց շնորհեաց տեսանել։

22 Պատասխանի ետ նոցա եւ ասէ. երթայք պատմեցէք Յովհաննու զոր տեսէքդ եւ լուայք. զի կոյրք տեսանեն, եւ կաղք գնան, բորոտք սրբին, խուլք լսեն, մեռեալք յառնեն, աղքատք աւետարանին։

Եւ երանի իցէ որ ոչ գայթագղեսցի 23
յիս։
Եւ իբրեւ գնացին հրեշտակքն Յովհան- 24
նու, սկսաւ խօսել ընդ ժողովուրդսն
վասն Յովհաննու. զի՞ ելէք յանապատն
տեսանել, եղէ՞գն շարժուն 'ի հողմոյ։
Այլ զի՞նչ ելէք տեսանել, ա՞յր 'ի հան- 25
դերձս փափկութեան զարդարեալ. ա-
հաւանիկ որ 'ի հանդերձս երեւելիս և
'ի փափկութեան են՝ յարքունիս են։
Այլ զի՞նչ ելէք տեսանել, մարգարէ՞. 26
այո ասեմ ձեզ, առաւել ևս քան զմար-
գարէ։
Զի սա է՝ վասն որոյ գրեալն է, թէ 27
ահա առաքեմ զհրեշտակ իմ առաջի քո
որ յարդարեսցէ զճանապարհս քո առա-
ջի քո։
Ամէն ասեմ ձեզ, մեծ 'ի ծնունդս կա- 28
նանց մարգարէ քան զՅովհաննէս ոչ ոք
է. բայց փոքրիկն յարքայութեան Աս-
տուծոյ մեծ է քան զնա։
Եւ ամենայն ժողովուրդն իբրեւ լուաւ և 29
մաքսաւորքն, արդարացուցին զԱԾ. զի
մկրտեցան 'ի մկրտութիւնն Յովհաննու։
Իսկ Փարիսեցիքն և օրինականք զխոր- 30
հուրդն Աստուծոյ անարգեցին յանձինս
իւրեանց, զի ոչ մկրտեցան 'ի նմանէ։
Արդ ո՞ւմ նմանեցուցից զմարդիկ ազգիս 31

այսորիկ և զո՞ւմ իցեն նմանող ։
32 Նման են մանկտւոյ որ 'ի հրապարակս
նստիցին, կարդայցեն զմիմեանս և ասի֊
ցեն. փողս հարաք ձեզ և ոչ կաքաւեցիք,
ողբացաք և ոչ լացիք ։
33 Եկն Յովհաննէս Մկրտիչ՝ ոչ ուտէր և
ոչ ըմպէր, և ասէիք. դև գոյ 'ի նմա ։
34 Եկն որդի մարդոյ՝ ուտէ և ըմպէ, և ա֊
սէք. ահա այր կերող և արբեցող՝ բա֊
րեկամ մաքսաւորաց և մեղաւորաց ։
35 Եւ արդարացաւ իմաստութիւն յորդւոց
իւրոց ։
36 Աղաչէր զնա ոմն 'ի Փարիսեցւոցն զի Գ.Գ.
կերիցէ հաց ընդ նմա, և մտեալ 'ի
տունն Փարիսեցւոյն՝ բազմեցաւ ։
37 Եւ կին մի էր 'ի քաղաքին մեղաւոր.
իբրև գիտաց թէ բազմեալ է 'ի տան
Փարիսեցւոյն, բերեալ շիշ մի իւղոյ
ազնուի,
38 կայր յետոյ առ ոտս նորա՝ լայր, և ար֊
տասուօքն սկսաւ թանալ զոտս նորա և
հերովք գլխոյ իւրոյ ջնջէր, և համբուրէր
զոտս նորա և օծանէր իւղովն ։
39 Եւ տեսեալ Փարիսեցւոյն որ կոչեացն
զնա, ասէր ընդ միտս իւր. սա թէ մար֊
գարէ ոք էր, ապա գիտէր թէ ո՛վ և
որպիսի ոք կին մերձենայ 'ի սա, զի մե֊
ղաւոր է ։

Պատասխանի ետ Յիսուս և ասէ ցնա. 40
Սիմովն, ունիմ ինչ ասել քեզ. և նա ա-
սէ, ասա վարդապետ. և ասէ:

Երկու պարտապանք էին ուրումն փո- 41
խատուի. միոյն պարտէր հինգ հարիւր
դահեկան և միւսն յիսուն:

Եւ իբրև ոչ գոյր նոցա հատուցանել, 42
երկոցունցն շնորհեաց. արդ ասա, ո՞վ
առաւել սիրեսցէ զնա:

Ասէ Սիմովն. ինձ այսպէս թուի եթէ 43
որում զբազումն շնորհեաց. և նա ասէ
ցնա, ուղիղ դատեցար:

Եւ դարձեալ 'ի կինն կողմն, ասէ ցՍի- 44
մովն. տեսանե՞ս զայս կին, մտի 'ի տուն
քո՝ ջուր ոտից իմոց ոչ ետուր, իսկ սա
արտասուօք իւրովք եթաց զոտս իմ, և
հերով իւրով ջնջեաց:

Համբոյր մի դու ոչ ետուր ինձ, սա ա- 45
ւասիկ յորմէ հետէ մտեալ եմ, ոչ դա-
դարեաց 'ի համբուրելոյ զոտս իմ:

Իւղով զգլուխ իմ ոչ օծեր, սա իւղով 46
անուշիւ օծ:

Վասն որոյ ասեմ քեզ. թողեալ լիցին 47
սմա մեղք իւր բազում, զի յոյժ սիրեաց.
զի որում շատ թողուցու՝ շատ սիրէ, և
որում սակաւ՝ սակաւ:

Եւ ասէ ցնա. թողեալ լիցին քեզ 48
մեղք քո:

49 Եւ սկսան՝ որ բազմեալ էին ընդ նմա
ասել ընդ միտս իւրեանց. ո՞վ է սա որ
զմեղս թողու։
50 Եւ նա ասէ ցկինն. հաւատք քո կեցու-
ցին զքեզ, երթ ՚ի խաղաղութիւն։

ԳԼ. Ը

1 Եւ եղեւ յետ այնորիկ եւ ինքն շրջէր ԳԵ
ընդ քաղաքս եւ ընդ գեւղս, քարոզէր եւ
աւետարանէր զարքայութիւն Աստու-
ծոյ, եւ երկոտասանքն ընդ նմա։
2 Եւ կանայք ոմանք որ բժշկեալ էին
յայսոց չարաց եւ ՚ի հիւանդութեանց,
Մարիամ որ կոչէր Մագդաղենացի,
յորմէ եօթն դեւն ելեալ էր։
3 Եւ Յովաննա կին Քուզայ՝ հազարա-
պետին Հերովդի, եւ Շուշան եւ այլք
բազումք. որք պաշտէին զնա յընչից իւ-
րեանց։
4 Եւ ՚ի ժողովել բազում ժողովրդոց, եւ
ըստ քաղաքաց քաղաքաց եկելոց առ նա,
ասէ առակաւ։
5 Ել սերմանացան սերմանել զսերմա-
նիս իւր. եւ ՚ի սերմանելն իւրում՝ էր
որ անկաւ առ ճանապարհաւ եւ եղեւ
կոխան, եւ թռչունք երկնից կերան
զնա։
6 Եւ այլն անկաւ յապառաժի, եւ ընդ

բուսանելըն չորացաւ, առ 'ի չգոյէ հիւ-
թոյ:
Եւ այլն անկաւ 'ի մէջ փշոց, և ընդ- 7
նմին բուսեալ փշոցն հեղձուցին զնա:
Եւ այլն անկաւ յերկիր բարի և պա- 8
րարտ, և բուսեալ արար պտուղ հարիւ-
րապատիկ. զայս իբրև խօսեցաւ, ասէ.
որ ունիցի ականջս լսելոյ լուիցէ:
Հարցանէին զնա աշակերտքն թէ զի՞նչ 9
իցէ առակն:
Եւ նա ասէ. ձեզ տուեալ է գիտել 10
զխորհուրդս արքայութեան Աստուծոյ,
բայց այլոցն առակօք. զի տեսցեն և մի՛
տեսցեն, և լուիցեն և մի՛ իմասցին:
Բայց առակն այս ինչ է. սերմն բանն 11
Աստուծոյ է:
Եւ որք առ ճանապարհաւն, այնոքիկ են 12
որ լսենն, և ապա գայ սատանայ՝ հանէ
զբանն 'ի սրտից նոցա, զի մի՛ հաւատա-
ցեն և ապրեսցին:
Եւ որք յապառաժին, որք յորժամ լսի- 13
ցեն՝ խնդութեամբ ընդունին զբանն, և
արմատս ոչ ունիցին. որք առ ժամանակ
մի հաւատան, և 'ի ժամանակի փորձու-
թեան հեռանան:
Իսկ որ 'ի մէջ փշոյն անկաւ՝ նոքա են, 14
որ իբրև լսեն զբանն՝ և 'ի հոգս և 'ի
մեծութիւն և 'ի ցանկութիւն աշխար-

հիս զբաղեալ հեղձնուն՝ և անպտուղ
լինին:
15 Իսկ որ յերկիրն պարարտ, որոց բար-
ւոք և զուարթագին սրտիւ լուեալ
զբանն՝ ընդունին, և տան պտուղ համ-
բերութեամբ:
16 Ոչ ոք լուցանէ ճրագ և թաքուցանէ ընդ
կարասեաւ՝ կամ դնէ ընդ մահճօք. այլ
՚ի վերայ աշտանակի դնէ, զի որ մտանեն՝
զլոյս տեսցեն:
17 Զի ոչ ինչ ծածուկ որ ոչ յայտ լիցի, և
ոչ գաղտնի որ ոչ ծանիցի և եկեսցէ
՚ի յայտ:
18 Տեսէք այսուհետև զիարդ լսէք. զի
ոյր գուցէ՝ տացի նմա, և ոյր ոչն գու-
ցէ՝ և զոր կարծէն թէ ունիցի՝ բարձցի
՚ի նմանէ:
19 Եկին առ նա մայրն և եղբարք իւր, և
ոչ կարէին հասանել ՚ի նա վասն բազ-
մութեանն:
20 Ազդ եղև նմա և ասեն. մայր քո և եղ-
բարք քո կան արտաքոյ և կամին ըզ-
քեզ տեսանել:
21 Եւ ասէ ցնոսա. մայր իմ և եղբարք
իմ սոքա են, որ զբանն Աստուծոյ լսեն և
առնեն:
22 Եւ եղև ՚ի միում աւուրց ինքն ել ՚ի Գ.Զ
նաւ և աշակերտքն նորա, և ասէ ցնո-

սա. եկայք անցցուք յայնկոյս ծովակիս,
և գնացին։
Եւ մինչդեռ նաւէին՝ 'ի քուն եմուտ. 23
և էջ մրրիկ հողմոյ 'ի ծովակն՝ և ուռ-
նոյր, և տագնապէին։
Մատուցեալ զարթուցին զնա և ասեն. 24
վարդապետ վարդապետ, կորնչիմք ա-
ւասիկ. և նա յարուցեալ սաստեաց հող-
մոյն և խռովութեան ջուրցն՝ և հանդար-
տեցին, և եղև խաղաղութիւն։
Ասէ ցնոսա. ո՞ւր են հաւատք ձեր. և 25
զահի հարեալ զարմացան, և ասէին ցմի-
մեանս. ո՞վ արդեօք իցէ սա, զի և հողմոց
և ջրոց հրաման տայ՝ և հնազանդին սմա։
Եւ նաւեցին իջին յաշխարհն Գերգե- 26
սացւոց, որ է յայնկոյս հանդէպ Գա-
լիլեայ։
Եւ ընդ ելանելն նորա 'ի ցամաք, պա- 27
տահեաց այր մի 'ի քաղաքէն՝ յորում
էին դևք. և բազում ժամանակս չէր
հանդերձ զգեցեալ և ոչ 'ի տան բնա-
կեալ, այլ 'ի գերեզմանս։
Եւ տեսեալ զՅիսուս, աղաղակեաց և 28
անկաւ առաջի նորա, և ասէ մեծաձայն.
զի՞ կայ իմ և քո Յիսուս որդի Աստուծոյ
բարձրելոյ, աղաչեմ զքեզ մի տանջեր
զիս։
Քանզի հրաման տայր այսոյն պղծոյ 29

ելանել՚ի մարդոյ անտի. զի բազում
ժամանակս յափշտակեալ էր զնա, և
կապէր՚ի շղթայս, և պահէր յերկաթս,
և խզէր զկապանսն, և վարէր՚ի դիւէն
յանապատս:
30 Եհարց ցնա Յիսուս և ասէ. զի՞նչ ա-
նուն է քեզ. և նա ասէ, լեգէոն. զի
դևք բազումք մտեալ էին՚ի նա:
31 Եւ աղաչէին զնա զի մի՛ հրաման տացէ
նոցա երթալ յանդունդս:
32 Եւ էր անդ երամակ մի խոզից բազմաց
արօտական՚ի լերինն. և աղաչեցին զնա
զի հրաման տացէ նոցա մտանել՚ի նոսա,
և հրամայեաց նոցա:
33 Եւ ելեալ դևքն յառնէն՝ մտին՚ի խո-
զեանն. և դիմեաց երամակն՚ի գահէ
անտի՚ի ծովակն և հեղձաւ:
34 Իբրև տեսին խոզարածքն զիրսն որ ե-
ղեն՝ փախեան, և պատմեցին՚ի քաղա-
քին և յագարակսն:
35 Եւ իբրև ելին տեսանել զգործսն, և
եկին առ Յիսուս, և գտին զայրն՝ ուստի
դևքն ելեալ էին, զգեցեալ և զգաստա-
ցեալ նստէր առ ոտս Յիսուսի, և եր-
կեան:
36 Պատմեցին նոցա որոց տեսեալն էր՝ թէ
զիա՞րդ փրկեցաւ դիւահարն:
37 Եւ աղաչէր զնա ամենայն բազմութիւնն

շուրջ զկողմամբքն Գերգեսացւոց՝ գնալ
՚ի սահմանացն նոցա, քանզի ահիւ մեծաւ
տագնապէին. և նա մտեալ ՚ի նաւ դար-
ձաւ անդրէն։

Աղաչէր զնա այրն ուստի դևքն ելեալ 38
էին՝ շրջել ընդ նմա. արձակեաց զնա և
ասէ.

Դարձ ՚ի տուն քո, և պատմեա զոր 39
միանգամ արար քեզ Ած. գնաց ՚ի քա-
ղաքն՝ և քարոզէր զոր ինչ արար նմ Յս։

Եւ իբրև դարձաւ անդրէն Յիսուս, ըն- 40
կալաւ զնա ժողովուրդն. քանզի ամենե-
քեան ակն ունէին նմա։

Եւ ահա եկն այր մի որում անուն էր 41
Յայրոս, և նա էր իշխան ժողովր-
դեանն. անկեալ առ ոտն Յիսուսի՝ ա-
ղաչէր զնա մտանել ՚ի տուն նորա։

Զի դուստր միամօր էր նորա՝ ամաց ի- 42
բրև երկոտասանից, և էր մերձ ՚ի մահ.
և ընդ երթալն նորա՝ ժողովուրդքն նե-
ղէին զնա։

Եւ կին մի էր ՚ի տեռատեսութեան ա- 43
րեան յամաց երկոտասանից, (որ ՚ի բժ-
ժիշկս ծախեալ էր զամ ինչս իւր). ո-
րում ոչ էր լեալ հնար յումեքէ բժշկել։

Մատուցեալ յետոյ մերձեցաւ ՚ի քղան- 44
ցս հանդերձի նորա. և նոյն ժամայն ե-
կաց բղխումն արեան նորա։

45 Եւ ասէ Յիսուս. ո՞վ է որ մերձեցաւն յիս. իբրև ամենեքեան ուրանային, ասէ Պետրոս և որ ընդ նմա էին. վարդապետ, ժողովուրդք պնդեն և նեղեն զքեզ:

46 Եւ ասէ Յս. ոմն մերձեցաւ յիս, քանզի գիտացի եթէ զօրութիւն ել յինէն:

47 Իբրև ետես կինն եթէ ոչ ծածկեցաւ 'ի նմանէ, եկն դողալով և անկաւ առաջի նորա, թէ վասն որոյ իրաց մերձեցաւ 'ի նա պատմեաց առաջի ամենայն ժողովրդեանն, և թէ որպէս բժշկեցաւ առժամայն:

48 Եւ ասէ. քաջալերեաց դուստր, հաւատք քո կեցուցին զքեզ, երթ 'ի խաղաղութիւն:

49 Եւ մինչդեռ նա խօսէր, գայ ոմն 'ի տանէ ժողովրդապետին և ասէ ցնա, մեռաւ դուստրն քո, մի՛ ինչ աշխատ առներ զդա:

50 Իսկ Յիսուս իբրև լուաւ, պատասխանի ետ նմա և ասէ. մի՛ երկնչիր, միայն հաւատա և կեցցէ:

51 Եւ մտեալ 'ի տունն՝ ոչ զոք եթող մտանել, բայց միայն զՊետրոս և զՅակովբոս և զՅովհաննէս, և զհայր մանկանն և զմայր նորա:

52 Լային ամենեքեան և կոծէին զնա. և նա ասէ. մի՛ լայք, զի չէ մեռեալ այլ ննջէ:

Եւ նոքա ծաղր առնէին զնա, զի գիտէին 53
թէ մեռաւ:
Եւ նորա հանեալ զամենեսեան արտաքս, 54
Կալաւ զձեռանէ նորա, բարբառեցաւ և 55
ասէ. արի կաց մանուկ դու:
Եւ դարձաւ ոգի նորա և կանգնեցաւ 56
վաղվաղակի, և հրամայեաց տալ նմա
ուտել:
Եւ զարմացան ծնողքն նորա. և նա պա- 57
տուիրէր մի ումեք ասել որ ինչ եղեն:

ԳԼ. Թ

ԳԼ. Եւ կոչեցեալ զերկոտասան առաքեալսն, 1
ետ նոցա զօրութիւն և իշխանութիւն
՚ի վերայ ամենայն դիւաց, և բժշկել
զհիւանդութիւնս:
Եւ առաքեաց զնոսա քարոզել զարքայու- 2
թիւնն Այ և բժշկել զախտաժէտս:
Եւ ասէ ցնոսա. մի ինչ բառնայք ՚ի ճա- 3
նապարհ, մի գաւազան և մի մախաղ,
մի հաց և մի արծաթ, մի երկուս հան-
դերձս ունիցիք:
Եւ յոր տուն մտանիցէք, անդ ագջիք 4
և անտի գնայցէք:
Եւ որք ոչ ընդունիցին զձեզ, յորժամ 5
ելանիցէք ՚ի քաղաքէն յայնմանէ՝ զփո-
շի ոտից ձերոց թօթափեսջիք ՚ի վկայու-
թիւն նոցա:

6 Եւ ելեալ շրջէին ընդ քաղաքս և ընդ
գեօղս, աւետարանէին և բժշկէին ընդ
ամենայն տեղիս։
7 Լուաւ Հերովդէս չորրորդապետ ըզ-
գործսն ամենայն, և զարմանայր վասն
ասելոյն յոմանց,
8 Թէ Յովհաննէս յարեաւ 'ի մեռելոց,
և յոմանց թէ Եղիա յայտնեցաւ, և
յայլոց թէ մարգարէ ոմն յառաջնոցն
յարեաւ։
9 Ասէ Հերովդէս. զՅովհաննէս ես գըլ-
խատեցի. իսկ սա ո՞վ իցէ զորմէ զայս-
պիսի իրս լսեմ. և խնդրէր տեսանել
զնա։
10 Դարձան առաքեալքն և պատմեցին նմա
զամենայն զոր արարին։ Եւ առեալ
զնոսա՝ խուսեաց առանձինն 'ի տեղի
անապատ քաղաքի միոյ՝ որում անուն
էր Բեթսայիդա։
11 Եւ ժողովուրդքն իբրև գիտացին, գը-
նացին զհետ նորա. և ընկալեալ զնոսա՝
խօսէր ընդ նոսա վասն արքայութեան
Աստուծոյ, և որոց պէտք էին բժշկու-
թեան՝ բժշկէր։
12 Եւ օրն սկսաւ տարաժամել. մատեան
երկոտասանքն և ասեն ցնա, արձակեա
զժողովուրդդ, զի երթեալ շուրջ 'ի
գիւղսն և յագարակս հանգիցեն, և

գտցեն կերակուր. զի աստ յանապատ
տեղւոջ եմք:
Ասէ ցնոսա, դուք տուք դոցա ուտել. 13
Եւ նոքա ասեն, ոչ գոյ մեր աւելի քան
զհինգ նկանակ և զերկուս ձկունս, բայց
եթէ երթիցուք գնեսցուք բաւական
ժողովրդեանդ կերակուր:
Քանզի էին արք իբրև հինգ հազար. 14
ասէ ցաշակերտսն, բազմեցուցէք զդոսա
դասս դասս՝ յիսուն յիսուն:
Եւ արարին այնպէս, և բազմեցուցին 15
զամենեսեան:
Եւ առեալ զհինգ նկանակն և զերկուս 16
ձկունսն՝ հայեցաւ յերկինս, օրհնեաց
և եբեկ և տայր ցաշակերտսն արկանել
ժողովրդեանն:
Կերան և յագեցան ամենեքեան, և 17
բարձին զնշխարս կոտորոցն երկոտասան
սակառի:
Դկ Եւ եղև 'ի կալն նորա յաղօթս առան- 18
ձինն, էին ընդ նմա և աշակերտքն նո-
րա. եհարց զնոսա և ասէ. զո՞ ոք ասեն
զինէն ժողովուրդքն թէ իցեմ:
Եւ նոցա պատասխանի տուեալ ասեն. 19
զՅովհաննէս Մկրտիչ, և այլք զԵղիա.
իսկ այլք թէ մարգարէ ոք յառաջնոցն
յարեաւ:
Ասէ ցնոսա. դուք զո՞վ ոք ասէք զինէն 20

թէ իցեմ. պատասխանի ետ Պետրոս և
ասէ, զՔրիստոսն Աստուծոյ։
21 Նա սաստեաց 'ի նոսա և պատուիրեաց
մի ումեք ասել զայն։
22 Եւ ասէ, թէ պարտ է որդւոյ մարդոյ
բազում չարչարիլ և անարգիլ 'ի քա-
հանայապետից և 'ի ծերոց և 'ի դպրաց,
և սպանանիլ և յերիր աւուր յառնել։
23 Եւ ասէր առ ամենեսին. եթէ ոք կա-
մի զկնի իմ գալ, ուրասցի զանձն և
առցէ զխաչ իւր հանապազ և եկեսցէ
զհետ իմ։
24 Զի որ կամիցի զանձն իւր կեցուցանել՝
կորուսցէ զնա, և որ կորուսցէ զանձն
իւր վասն իմ՝ կեցուսցէ զնա։
25 Զի՞նչ օգուտ է մարդոյ եթէ զաշխարհ
շահեսցի, և զանձն իւր կորուսցէ կամ
տուժեսցի։
26 Զի որ ամօթ համարեսցի զիս և զբա-
նս իմ, զնա և որդի մարդոյ յամօթ
արասցէ յորժամ գայցէ փառօք իւրովք
և հօր և հրեշտակաց սրբոց։
27 Բայց արդարև ասեմ ձեզ, եթէ են
ոմանք 'ի դոյանէ որ այդր կան, որք մի
ճաշակեսցեն զմահ մինչև տեսցեն զար-
քայութիւն Աստուծոյ։
28 Եւ եղև յետ այսց բանից իբրև աւուրք
ութ, առեալ զՊետրոս և զՅակովբոս

և զՅովհաննէս՝ ել ՚ի լեառն կալ յա-
ղօթս:
Եւ ՚ի կալ նմա յաղօթս, եղև տեսիլ 29
երեսաց նորա այլակերպ. և փոխե-
ցաւ հանդերձ նորա և եղև սպիտակ
փայլուն:
Եւ ահա արք երկու խօսէին ընդ նմա, 30
որ էին Մովսէս և Եղիա,
Երևեալ փառօք, և ասէին զելիցն նորա 31
զոր կատարելոց էր յԵրուսաղէմ:
Իսկ Պետրոս և որ ընդ նմայն էին ծան- 32
րացեալք ՚ի քնոյ՝ զարթեան, տեսին
զփառսն նորա և զերկուս արսն որ կային
առ նմա:
Եւ եղև ՚ի մեկնելն նոցա ՚ի նմանէ, ա- 33
սէ Պետրոս ցՅիսուս. վարդապետ, բա-
րւոք է մեզ աստ լինել, և արասցուք ե-
րիս տաղաւարս, մի քեզ և մի Մովսեսի
և մի Եղիայի. և ոչ գիտէր զինչ խօսէր:
Եւ իբրև զայս ասաց, եկն ամպ և հո- 34
վանի եղև ՚ի վերայ նոցա, և երկեան ՚ի
մտանելն նոցա ընդ ամպովն:
Ձայն եղև յամպոյն և ասէ. դա է որդի 35
իմ ընտրեալ, դմա լուարուք:
Եւ ընդ լինել բարբառոյն, գտաւ Յի- 36
սուս միայն. և նոքեանք լռեցին և ոչ
ումեք պատմեցին յաւուրսն յայնոսիկ
և ոչ ինչ յորոց տեսինն:

37 Եւ եղեւ 'ի վաղիւն մինչ իջանէին նոքա Դ.Բ.
'ի լեռնէ անտի, ընդ առաջ եղեւ նմա
ժողովուրդ բազում:
38 Եւ ահա այր մի 'ի ժողովրդենէ անտի
աղաղակեաց եւ ասէ. վարդապետ, աղա-
չեմ զքեզ հայեաց յորդի իմ, զի միա-
մօր է ինձ:
39 Եւ ահա այս հարկանի 'ի նմա, եւ յան-
կարծ գոչէ եւ զարկուցանէ զնա եւ թա-
ւալեցուցանէ եւ փրփրեցուցանէ, եւ հա-
զիւ մեկնի 'ի նմանէ խորտակեալ զնա:
40 Եւ աղաչեցի զաշակերտսն քո զի հան-
ցեն զնա, եւ ոչ կարացին:
41 Պատասխանի ետ Յիսուս եւ ասէ. ո՜վ
ազգ անհաւատ եւ թիւր, մինչեւ յե՞րբ
եղէց ընդ ձեզ եւ անսայցեմ ձեզ, մատո
այսր զորդին քո:
42 Եւ մինչդեռ մատչէր, զարկոյց զնա
դեւն եւ շարժլեաց:
43 Սաստեաց Յս̃ այսոյն պղծոյ եւ բժըշ-
կեաց զմանուկն եւ ետ զնա ցհայր իւր:
44 Եւ զարմանային ամենեքեան 'ի վերայ
մեծամեծացն Ա.Յ. եւ 'ի զարմանալն ա-
մենեցուն 'ի վերայ ամենայնի զոր առ-
նէր, ասէ ցաշակերտսն իւր. դի՛ք դուք
'ի լսելիս ձեր զբանս զայսոսիկ, զի որդի
մարդոյ մատնելոց է 'ի ձեռս մարդկան:
45 Եւ նոքա ոչ գիտէին զբանն, եւ էր

*ծածկեալ՝ի նոցանէ զի մի գիտասցեն.
և երկնչէին հարցանել զնա վասն բա֊
նին այնորիկ:*

Եմուտ խորհուրդ՝ի նոսա թէ ո՞ ար֊ 46
դեօք մեծ իցէ՝ի նոցանէ:

Յիսուս իբրև ծանեաւ զխորհուրդս սըր֊ 47
*տից նոցա, ա՛ռ մանուկ մի կացոյց՝ի մէջ
նոցա առ իւր,*

Եւ ասէ ցնոսա. որ ոք ընկալցի զմանուկս 48
*զայս յանուն իմ՝ զիս ընդունի, և որ
զիս ընդունիցի՝ ընդունի զառաքիչն իմ.
զի որ փոքրիկն է յամենեսին՝ի ձեզ՝
նա եղիցի մեծ:*

Պատասխանի ետ Յովհաննէս և ասէ. 49
*վարդապետ, տեսաք զոմն որ յանուն քո
դևս հանէր և արգելաք զնա, զի ոչ
շրջի ընդ քեզ:*

Ասէ ցնոսա Յիսուս. մի արգելուք, զի 50
որ ոչն է ձեր թշնամի՝ ՝ի ձեր կողմն է:

Դ.Գ. *Եւ եղև՝ի կատարել աւուրց վերանա֊* 51
*լոյ նորա՝ և ինքն զերեսս հաստատեաց
երթալ յԵրուսաղէմ:*

Եւ առաքեաց հրեշտակս առաջի երե֊ 52
*սաց իւրոց. և իբրև չոգան, մտին՝ի
գիւղ մի Սամարացւոց պատրաստել ինչ
նմա:*

Եւ ոչ ընկալան զնա, զի դէմ եդեալ էր 53
նորա երթալ յԵրուսաղէմ:

54 Իբրեւ տեսին աշակերտքն Յակովբոս եւ
Յովհաննէս, ասեն. տէր, կամիս զի ա-
սասցուք եւ իջցէ հուր յերկնից՝ եւ սա-
տակեսցէ զնոսա:
55 Դարձաւ սաստեաց 'ի նոսա եւ ասէ, ոչ
գիտէք որո՛յ հոգւոյ էք դուք:
56 Զի որդի մարդոյ ոչ եկն զոգիս մարդ-
կան կորուսանել՝ այլ կեցուցանել. եւ
գնացին յայլ գեօղ:
57 Եւ մինչդեռ երթային նոքա 'ի ճանա-
պարհի, ասէ ոմն ցնա. եկից զկնի քո
յոր վայր եւ երթիցես:
58 Ասէ ցնա Յիսուս. աղուեսուց որջք գոն
եւ թռչնոց երկնից դադարք, եւ որդւոյ
մարդոյ ոչ գոյ ուր դիցէ զգլուխ:
59 Ասէ ցմիւս եւս, եկ զկնի իմ. եւ նա ասէ.
տէր, հրաման տուր ինձ երթալ նախ
թաղել զհայր իմ:
60 Ասէ ցնա Յիսուս. թող զմեռեալսն թա-
ղել զմեռեալս իւրեանց, եւ դու երթ
պատմեա զարքայութիւն Աստուծոյ:
61 Ասէ եւ այլ ոմն. եկից զկնի քո տէր, բայց
նախ հրաման տուր ինձ հրաժարել 'ի
տանէ իմմէ:
62 Ասէ ցնա Յիսուս. ոչ ոք արկանէ ձեռն
զմաճով եւ հայիցի յետս, եթէ յաջո-
ղեալ իցէ արքայութեան Աստուծոյ:

Գլ. Ժ

Դ·Դ· Յետ այսորիկ երևեցոյց տէր և այլ ևս 1
եօթանասուն և երկուս, և առաքեաց
զնոսա երկուս երկուս առաջի իւր յա֊
մենայն քաղաքս և 'ի տեղիս, ուր ինքն
երթալոց էր:
Եւ ասէ ցնոսա. հունձք բազում են և 2
մշակք սակաւ, արդ աղաչեցէք զտէր
հնձոց՝ զի հանցէ մշակս 'ի հունձս իւր:
Երթայք, ահա առաքեմ զձեզ իբրև 3
զգառինս 'ի մէջ գայլոց:
Մի բառնայք քսակ, մի մախաղ, մի կօ֊ 4
շիկս, և 'ի ճանապարհի ումեք ողջոյն
մի տայցէք:
Յոր տուն մտանիցէք՝ նախ ասասջիք թէ 5
ողջոյն տանս այսմիկ:
Եւ եթէ իցէ անդ որդի ողջունի, հան֊ 6
գիցէ 'ի վերայ նորա ողջոյնն ձեր. ապա
թէ ոչ՝ 'ի ձեզ դարձցի:
Եւ 'ի նմին տան ագանիջիք, ուտիջիք 7
և ըմպիջիք 'ի նոցանէ. զի արժանի է
մշակն վարձու իւրոյ. մի փոխիցիք տա֊
նէ 'ի տուն:
Յոր քաղաք մտանիցէք և ընդունիցին 8
զձեզ, ուտիջիք զինչ առաջի դնիցեն
ձեր:
Եւ բժշկեսջիք որ 'ի նմա հիւանդք ի֊ 9

ցեն. և ասասջիք նոցա, մերձեալ է 'ի
վերայ ձեր արքայութիւն Աստուծոյ։
10 Իսկ յոր քաղաք մտանիցէք՝ և ոչ ընդ-
ունիցին զձեզ, ելանիցէք 'ի հրա-
պարակս նորա, ասասջիք.
11 Եւ զփոշիս որ կցեալ է 'ի քաղաքէ
ձերմէ յոտս մեր՝ թօթափեսցուք 'ի
ձեզ. բայց զայս գիտասջիք զի մերձեալ
է արքայութիւն Աստուծոյ։
12 Ասեմ ձեզ, զի Սոդոմացւոց ընդարձա-
կագոյն լիցի յաւուրն յայնմիկ քան քա-
ղաքին այնմիկ։
13 Վայ քեզ Քորազին, վայ քեզ Բեթ-
սայիդա. զի եթէ 'ի Տիւրոս և 'ի Սիդոն
եղեալ էին զօրութիւնքն որ եղեն 'ի
ձեզ, վաղուց ևս արդեօք 'ի խորգ և 'ի
մոխիր նստեալ և ապաշխարեալ էր։
14 Բայց Տիւրոսի և Սիդոնի ընդարձա-
կագոյն լիցի 'ի դատաստանի քան ձեզ։
15 Եւ դու Կափառնաում, որ մինչև յեր-
կինս բարձրացեալ ես, մինչև 'ի դժոխս
իջցես։
16 Որ ձեզ լսէ՝ ինձ լսէ, և որ զձեզ անարգէ
զիս անարգէ. և որ զիս անարգէ՝ զա-
ռաքիչն իմ անարգէ. և որ ինձ լսէ՝ լսէ
այնմիկ որ զիս առաքեաց։
17 Դարձան եօթանասունն և երկուքն
խնդութեամբ և ասեն. Տէր, և դևք

հնազանդին մեզ յանուն քո։
Եւ ասէ ցնոսա. տեսանէի զսատանայ 18
անկեալ յերկնից իբրև զփայլակն։
Ահա ետու ձեզ իշխանութիւն կոխել 19
զօձս և զկարիճս և զամենայն զօրութիւն
թշնամւոյն, և ձեզ ոչ ինչ մեղանչիցեն։
Բայց ընդ այն մի՛ խնդայք եթէ այսք 20
հնազանդին ձեզ, այլ խնդացէք զի ա-
նուանք ձեր գրեալ են յերկինս։
Ի նմին ժամու ցնծացաւ Յիսուս հո- 21
գւովն սրբով և ասէ. գոհանամ զքէն
Հայր, տէր երկնից և երկրի, զի ծածկե-
ցեր զայս յիմաստնոց և 'ի գիտնոց և
յայտնեցեր զայս տղայոց. այո Հայր, զի
այսպէս հաճոյ եղև առաջի քո։
Ամենայն ինչ տուաւ ինձ 'ի Հօրէ իմմէ. 22
և ոչ ոք գիտէ թէ ո՛վ է որդի, եթէ ոչ
Հայր, և ո՛ է Հայր, եթէ ոչ որդի, և ում
կամիցի որդին յայտնել։
Եւ դարձեալ առանձինն առ աշակերտսն 23
ասէ. երանի աչաց որ տեսանիցեն զոր
տեսանէքդ։
Ասեմ ձեզ, զի բազում մարգարէք և 24
թագաւորք կամեցան տեսանել զոր
դուքդ տեսանէք, և ոչ տեսին. և լսել
զոր լսէքդ՝ և ոչ լուան։
ԳԵ Եւ ահա յարեաւ ոմն օրինական՝ փոր- 25
ձէր զնա և ասէր. վարդապետ, զի՞նչ

գործեցից՝ զի զկեանս յաւիտենականս
ժառանգեցից։
26 Եւ նա ասէ ցնա. յօրէնս զի՞նչ գրեալ
է, ո՞րպէս ընթեռնուս։
27 Նա պատասխանի ետ և ասէ. սիրեսցես
զտէր Աստուած քո յամենայն սրտէ
քումմէ և յամենայն անձնէ քումմէ և
յամենայն զօրութենէ քումմէ և յա-
մենայն մտաց քոց, և զընկեր քո իբրև
զանձն քո։
28 Եւ ասէ ցնա. ուղիղ ետուր զպատաս-
խանիդ, զայդ արա և կեցցես։
29 Նա իբրև կամեցաւ զանձն արդարա-
ցուցանել, ասէ ցՅս. և ո՞վ է իմ ընկեր։
30 Պատասխանի ետ Յիսուս և ասէ. այր
մի իջանէր յԵրուսաղեմէ յԵրիքով, և
անկաւ ՚ի ձեռս աւազակաց, որք մերկա-
ցուցին զնա և վէրս ՚ի վերայ եդին,
թողին կիսամահ և գնացին։
31 Դէպ եղև քահանայի միոջ իջանել ընդ
նոյն ճանապարհ, և տեսեալ զնա՝ զանց
արար։
32 Նոյնպէս և Ղևտացի մի եկեալ ընդ
նոյն տեղի՝ ետես և զանց արար։
33 Սամարացի ոմն ճանապարհորդեալ եկն
ընդ նոյն առ նովաւ, և տեսեալ զնա
գթացաւ։
34 Եւ մատուցեալ պատեաց զվէրս նորա,

արկեալ՚ի վերայ ձէթ և գինի. և ե֊
դեալ՚ի վերայ գրաստու իւրոյ՝ած զնա
՚ի պանդոկի մի և դարմանեաց զնա։
Եւ ՚ի վաղիւ անդր իբրև ելանէր անտի, 35
հանեալ ետ ցպանդոկապետն երկուս
դահեկանս և ասէ. դարման տար դմա,
և զոր ինչ ծախեսցես՚ի դա՝ ՚ի միւսան֊
գամ գալստեան իմում հատուցից քեզ։
Արդ ո՞ յերեցունց ՚ի նոցանէ թուի 36
քեզ մերձաւոր լեալ անկելոյն ՚ի ձեռս
աւազակաց։
Եւ նա ասէ, որ արար զողորմութիւնն 37
՚ի վերայ նորա. ասէ ցնա Յիսուս, երթ
և դու արա նոյնպէս։
Եւ եղև ՚ի գնալն նոցա, և ինքն եմուտ 38
՚ի գեւղ մի. և կին ոմն անուն Մարթա
ընկալաւ զնա ՚ի տուն իւրում։
Եւ նորա էր քոյր մի, որում անուն էր 39
Մարիամ, որ և եկն նստաւ առ ոտսն
տեառն և լսէր զբանս նորա։
Եւ Մարթա զբաղեալ էր ՚ի բազում 40
սպասու. եկն եկաց առ նմա և ասէ,
տէր, ոչ ինչ է փոյթ քեզ, զի քոյրդ իմ
միայն եթող զիս ՚ի սպասու. արդ ասա
դմա զի օգնեսցէ ինձ։
Պատասխանի ետ Յիսուս և ասէ. 41
Մարթա Մարթա, դու հոգաս և զբա֊
ղում իւիք զբաղեալ ես։

42 Բայց աստ սակաւ ինչ պիտոյ է. Մա-
րիամ մասն բարի ընտրեաց որ ոչ բարձցի
'ի նմանէ։

ԳԼ. ԺԱ.

1 Եւ եղև 'ի տեղւոջ ուրեք կալ յաղօթս, Գ.Զ
և իբրև դադարեաց՝ ասէ ցնա մի յա-
շակերտացն իւրոց. տէր, ուսո մեզ յա-
ղօթս կալ, որպէս Յովհաննէս ուսոյց
աշակերտաց իւրոց։
2 Ասէ ցնոսա, յորժամ կայցէք յաղօթս՝
ասասջիք. Հայր մեր, սուրբ եղիցի անուն
քո, եկեսցէ արքայութիւն քո։
3 Զհաց մեր հանապազորդ տուր մեզ
զօրըստօրէն։
4 Եւ թող մեզ զմեղս մեր, զի և մեք թո-
ղումք ամենայնի որ պարտիցի մեզ և մի
տանիր զմեզ 'ի փորձութիւն։
5 Եւ ասէ ցնոսա. ո՞վ է 'ի ձէնջ որոյ իցէ
բարեկամ, և երթայցէ առ նա 'ի մէջ
գիշերի և ասիցէ ցնա. բարեկամ, տուր
ինձ փոխ երիս նկանակս։
6 Զի բարեկամ իմ եկն առ իս յուղւոյ,
և ոչ ինչ ունիմ դնել առաջի նորա։
7 Եւ նա 'ի ներքուստ տայցէ պատասխա-
նի և ասիցէ. մի աշխատ առներ զիս,
զի դուրքդ փակեալ են, և մանկունքս
ընդ ինև կան յանկողնի. ոչ կարեմ

յառնել և տալ քեզ։

Ասեմ ձեզ, եթէ ոչ յարուցեալ տայցէ 8
նմա վասն բարեկամութեանն, սակայն
վասն ժտութեանն յարուցեալ տայցէ
նմա զինչ և պիտոյ իցէ։

Եւ ես ասեմ ձեզ, խնդրեցէք և տացի 9
ձեզ, հայցեցէք և գտջիք, բախեցէք և
բացցի ձեզ։

Զի ամենայն որ խնդրէ՝ առնու, և որ 10
հայցէ՝ գտանէ, և որ բախէ՝ բացցի նմա։

Ո՞ ոք 'ի ձէնջ հայր՝ խնդրեսցէ որդի իւր 11
ձուկն, միթէ փոխանակ ձկանն օ՞ձ տայ-
ցէ նմա։

Եւ կամ խնդրեսցէ ձու, միթէ կարի՞ճ 12
տայցէ նմա։

Իսկ եթէ դուք որ չարքդ էք՝ գիտէք 13
պարգևս բարիս տալ որդւոց ձերոց, ո՞ր-
չափ ևս առաւել հայր ձեր յերկնից
տացէ բարիս այնոցիկ որ խնդրեն 'ի
նմանէ։

Դ.Է Եւ հանէր դև մի համր. և եղև յելանել 14
դիւին խօսեցաւ համրն, և զարմացան
ամենայն ժողովուրդքն։

Եւ ոմանք 'ի նոցանէ ասեն. Բէեղզե- 15
բուղաւ իշխանաւն դիւաց հանէ դա
զդևս։

Եւ այլք փորձէին և նշան յերկնից խնդ- 16
րէին 'ի նմանէ։

17 Իսկ նորա գիտացեալ զխորհուրդս նոցա,
ասէ ցնոսա. ամենայն թագաւորութիւն
բաժանեալ յանձն՝ աւերի, և տուն բա-
ժանեալ յանձն կործանի։
18 Ապա եթէ և սատանայ բաժանեցաւ
յանձն, զիա՞րդ կայցէ թագաւորութի̄
նորա. զի ասէք զինէն եթէ Բէեղզեբու-
ղաւ իշխանաւն դիւաց հանէ դա զդևս։
19 Եթէ ես Բէեղզեբուղաւ հանեմ զդևս,
որդիքն ձեր ի՞ւ հանիցեն. վասն այդորիկ
նոքին եղիցին ձեր դատաւորք։
20 Իսկ եթէ մատամբ Աստուծոյ հանեմ
զդևս, ապա հասեալ է 'ի վերայ ձեր
արքայութիւն Աստուծոյ։
21 Յորժամ հզօր վառեալ՝ պահիցէ զտուն
իւր, 'ի խաղաղութեան են ինչք նորա։
22 Բայց եթէ հզօրագոյն քան զնա 'ի վե-
րայ եկեալ յաղթեսցէ նմա, զսպառա-
զինութիւնն հանէ՝ յոր յուսացեալ էր,
և զաւար նորա բաշխեսցէ։
23 Որ ոչ է ընդ իս, հակառակ իմ է, և որ
ոչ ժողովէ ընդ իս, ցրուէ։
24 Յորժամ այսն ելանիցէ 'ի մարդոյ՝ շրջի
ընդ անջրդին տեղիս, խնդրէ հանգիստ.
և իբրև ոչ գտանէ՝ ասէ, դարձայց ան-
դրէն 'ի տուն իմ ուստի ելի։
25 Եւ գայ գտանէ մաքրեալ և յարդա-
րեալ։

Յայնժամ երթայ եւ առնու եօթն այլ 26
այսս չար եւս քան զինքն, եւ մտանէ բնա֊
կէ անդ, եւ լինի յետինն մարդոյն այնո֊
րիկ չար քան զառաջինն։
Եւ եղեւ մինչդեռ խօսէր զայս, ձայն 27
եբարձ կին մի 'ի ժողովրդենէ անտի եւ
ասէ. Երանի է որովայնին որ կրեաց
զքեզ, եւ ստեանցն որ դիեցուցին զքեզ։
Եւ նա ասէ. Նա երանի այնոցիկ է որ 28
լսեն զբանն Աստուծոյ եւ առնեն։
Եւ 'ի դիզանել 'ի վերայ նորա ժողովրր֊ 29
դոցն՝ սկսաւ ասել. ազգս այս ազգ չար
է, նշան խնդրէ եւ նշան յերկնից ոչ
տացի սմա՝ բայց նշանն Յովնանու։
Զի որպէս եղեւ Յովնան նշան Նի֊ 30
նուէացւոց, այնպէս եղիցի եւ որդի մար֊
դոյ ազգիս այսմիկ։
Դշխոյն Հարաւոյ յարիցէ 'ի դատաստա֊ 31
նի ընդ արս ազգիս այսորիկ եւ դատա֊
պարտեսցէ զնոսա, զի եկն 'ի ծագաց
երկրի լսել զիմաստութիւնն Սողոմոնի.
եւ ահա աւելի քան զՍողոմոն է աստ։
Արք Նինուէացիք յարիցեն ի դատաս֊ 32
տանի ընդ ազգիս ընդ այսմիկ եւ դատա֊
պարտեսցեն զսա, զի ապաշխարեցին 'ի
քարոզութեանն Յովնանու. եւ ահա ա֊
ւելի քան զՅովնան է աստ։
ԵԿ Ոչ ոք լուցեալ ճրագ դնէ 'ի թաքըս֊ 33

տեան (և ոչ ընդ գրուանաւ), այլ՚ի
վերայ աշտանակի, զի որ մտանեն՝ լոյս
տեսանիցեն։
34 Ճրագ մարմնոյ ակն է. յորժամ ակնն
առատ է, ամենայն մարմինն լուսաւոր
եղիցի. և երբ ակն չար է, և մարմինն
խաւարին եղիցի։
35 Արդ զգուշ լեր, գուցէ լոյսդ որ՚ի քեզ
է՝ խաւար իցէ։
36 Եթէ մարմինդ քո ամենայն լուսաւոր է
և չգուցէ մասն ինչ խաւարին, եղիցի
լուսաւոր ամենայն. որպէս յորժամ
ճրագն նշուլիւք լուսաւորեսցէ զքեզ։
37 Եւ մինչդեռ խօսէր զայս, աղաչէր զնա
ոմն Փարիսեցի՝ զի ճաշ կերիցէ առ նմա.
և նա մտեալ բազմեցաւ։
38 Իբրև ետես Փարիսեցին՝ զարմացաւ, զի
նախ ոչ մկրտեցաւ յառաջ քան զճաշ։
39 Ասէ ցնա տէր. այժմ դուք Փարիսեցիք
զարտաքին բաժակին և զպնակին սըր-
բէք, և ներքինն ձեր լի է յափշտակու-
թեամբ և չարութեամբ։
40 Անմիտք, ո՞չ ապաքէն որ զարտաքինն
արար՝ և զներքինն նոյն արար։
41 Բայց ադէ զարժանն իսկ՝ տուք ողորմու-
թիւն, և ահա ամենայն սուրբ է ձեր։
42 Այլ վա՜յ ձեզ Փարիսեցւոց, զի տասա-
նորդէք զանանուխ և զփեգենայ և զամե-

նայն բանջար, և անցանէք զիրաւամբք
և զսիրովն Աստուծոյ. զայս արժան էր
առնել, և զայնու ոչ անցանել:
Վայ ձեզ Փարիսեցւոց, զի սիրէք ըղ- 43
բարձրագահս 'ի ժողովուրդս, և զնախ-
ողջոյնս 'ի հրապարակս:
Վայ ձեզ, զի էք դուք իբրև զգերեզ- 44
մանս անյայտս, և մարդիկ գնան 'ի վե-
րայ և ոչ գիտեն:
Պատասխանի ետ ումն յօրինականաց՝ 45
և ասէ ցնա. վարդապետ, զայս բանս
ասելով և զմեզ թշնամանես:
Եւ նա ասէ. և ձեզ վայ օրինականացդ, 46
զի բառնայք մարդկան բեռինս դժուա-
րակիրս, և դուք մատամբ միով 'ի բե-
ռինսն ոչ մերձենայք:
Վայ ձեզ, զի շինէք զշիրիմս մարգա- 47
րէիցն, և հարքն ձեր սպանին զնոսա:
Ապա ուրեմն վկայէք եթէ կամակից էք 48
գործոց հարցն ձերոց. զի նոքա կոտո-
րեցին զնոսա, և դուք զգերեզմանս նո-
ցա շինէք:
Վասն այնորիկ իմաստութիւնն Աստու- 49
ծոյ ասաց. առաքեցից 'ի նոսա մարգա-
րէս և առաքեալս, և 'ի նոցանէ սպա-
նանիցեն և հալածիցեն:
Զի խնդրեսցի արիւն ամենայն մար- 50
գարէից՝ հեղեալ 'ի սկզբանէ աշխարհի՝

յազգէ յայդմանէ,
51 Յարենէն Աբելի մինչև յարիւնն Զա-
քարիայ կորուսելոյ ընդ սեղանն և ընդ
տաճարն. այո ասեմ ձեզ, խնդրեսցի
յազգէ յայդմանէ:
52 Վայ ձեզ օրինականացդ, զի Թաքու-
ցանէք զփականս գիտութեանն. դուք
ոչ մտանէք, և որ մտանելոց են՝ ար-
գելուք:
53 Եւ 'ի խօսելն զայս ամենայն առ նոսա
առաջի ամենայն ժողովրդեանն, զամօ-
թի հարկանէին. և սկսան դպիրքն և
Փարիսեցիք զչարել և գրգռել ընդ նմա
վասն բազում իրաց:
54 Եւ սպասել որսալ ինչ բանս 'ի բերանոյ
նորա, զի չարախօսեսցեն զնմանէ:

ԳԼ. ԺԲ

1 Որովք 'ի կուտել բիւրաւորաց ժողո-
վրդեանն՝ մինչև կոխել զմիմեանս, սկը-
սաւ ասել ցաշակերտսն իւր. Նախ զգոյշ
լերուք անձանց 'ի խմորոյ Փարիսեցւոցն,
որ է կեղծաւորութիւն:
2 Զի ոչ ինչ է 'ի ծածուկ որ ոչ յայտ-
նեսցի, և գաղտնի որ ոչ ծանիցի:
3 Վասն զի զոր ինչ ասիցէք 'ի խաւարի,
լսելի լիցի 'ի լոյս. և զոր յունկանէն
խօսեցարուք 'ի շտեմարանս, քարոզեսցի

'ի վերայ տանեաց:

Բայց ձեզ ասեմ սիրելեաց իմոց, մի 4
զարհուրիցիք յայնցանէ որ սպանանեն
զմարմին, և յետ այնորիկ աւելի ինչ ոչ
ունիցին առնել:

Այլ ցուցից ձեզ յումմէ երկնչիցիք. 5
երկնչիջիք յայնմանէ որ յետ սպանա-
նելոյ ունի իշխանութիւն արկանել'ի
գեհեն. այո ասեմ ձեզ, յայնմանէ եր-
կնչիջիք:

Ո՞չ ապաքէն հինգ ձագ երկուց դանգաց 6
վաճառի, և մի 'ի նոցանէ ոչ է մոռա-
ցեալ առաջի Աստուծոյ:

Այլ ձեր և ամենայն իսկ հեր գլխոյ 7
թուեալ է. մի երկնչիք, զի քան զբա-
զում ձագս լաւ էք դուք:

Ասեմ ձեզ, զի ամենայն որ խոստովանես- 8
ցի յիս առաջի մարդկան, և որդի մար-
դոյ խոստովանեսցի զնմանէ առաջի հրեշ-
տակաց Աստուծոյ:

Եւ որ ուրասցի զիս առաջի մարդկան, 9
ուրացեալ լիցի առաջի հրեշտակաց Այ:

Եւ ամենայն որ ասէ բան զորդւոյ մար- 10
դոյ՝ թողցի նմա. բայց որ զհոգին սուրբ
հայհոյիցէ, մի թողցի նմա:

Այլ յորժամ տանիցեն զձեզ 'ի ժողո- 11
վուրդս և 'ի պետութիւնս և յիշխանու-
թիւնս, մի հոգայցէք որպէս թէ զինչ

պատասխանի տայցէք, կամ զի՛նչ ասի-
ցէք։
12 Զի Հոգի՛ն սուրբ ուսուսցէ ձեզ ՚ի նմին
ժամու՝ զի՛նչ պարտ իցէ խօսել։
13 Ասէ ոմն ՚ի ժողովրդենէն ցնա. վարդա- ԵԲ
պետ, ասա ցեղբայր իմ բաժանել ընդ
իս զժառանգութիւնն։
14 Եւ նա ասէ ցնա. այր դու, ո՞ կացոյց
զիս դատաւոր կամ բաժանարար ՚ի վե-
րայ ձեր։
15 Եւ ասէ ցնոսա. տեսէ՛ք և զգոյշ լերուք
յամենայն ագահութենէ, զի ոչ եթէ ՚ի
մթերից ընչից ուրուք իցեն կեանք նորա-
16 Խօսեցաւ առ նոսա առակ մի և ասէ.
առն ուրումն մեծատան ետուն անդք
տոհմականս։
17 Եւ խորհէր ՚ի միտս իւր և ասէր. զի՞
գործեցից, զի ոչ գոյ տեղի ուր ժողովե-
ցից զարդիւնս իմ։
18 Եւ ասէ, գիտեմ զի՛նչ արարից. քակեցից
զշտեմարանս իմ, և ևս մեծամեծս շի-
նեցից. և անդր ժողովեցից զցորեան և
զամենայն բարութիւնս իմ։
19 Եւ ասացից ցանձն իմ. անձն, ունիս
բազումբարութիւնս համբարեալ ամաց
բազմաց. հանգիր կեր արբ և ուրախ
լեր։
20 Ասէ ցնա Ած. անմիտ, յայսմ գիշերի

զոգիդ 'ի քէն 'ի բաց պահանջիցեն, իսկ
զոր պատրաստեցերն ում լինիցի։
Նոյնպէս և որ գանձէ անձին և ոչ յԱ՟ս- 21
տուած մեծանայցէ։
Ասէ ցաշակերտսն իւր. վասն այդորիկ 22
ասեմ ձեզ, մի՛ հոգայք ընդ ոգւոյ թէ
զի՞նչ ուտիցէք, և մի՛ ընդ մարմնոյ թէ
զի՞նչ զգենուցուք։
Զի ոգի առաւել է քան զկերակուր և 23
մարմին քան զհանդերձ։
Հայեցարուք ընդ ագռաւս, զի ոչ սեր- 24
մանեն և ոչ հնձեն, որոց ոչ գոն շտեմա-
րանք և ոչ համբարանոցք, և Աստուած
կերակրէ զնոսա. որչափ ևս առաւել
զձեզ որ լաւ էք քան զթռչունս։
Ո՞վ 'ի ձէնջ առ հոգալ՝ կարիցէ յաւե- 25
լուլ 'ի հասակ իւր կանգուն մի։
Իսկ արդ եթէ 'ի փոքուն չէք բաւական, 26
վասն այլոցն զի՞ հոգայցէք։
Հայեցարուք ընդ շուշանն՝ որպէս աճէ, 27
ոչ ջանայ և ոչ նիւթէ. ասեմ ձեզ, և ոչ
Սողոմոն յամենայն 'ի փառս իւր զգե-
ցաւ իբրև զմի 'ի նոցանէ։
Իսկ եթէ զխոտն որ այսօր 'ի բացի է 28
և վաղիւ 'ի հնոց արկանելի, Աստուած
այնպէս զգեցուցանէ, որչափ ևս առա-
ւել զձեզ թերահաւատք։
Եւ դուք մի՛ խնդրէք զի՞նչ ուտիցէք կամ 29

զինչ ըմպիցէք, եւ մի՛ զբաղնուք։

30 Զի զայն ամենայն հեթանոսք աշխարհի խնդրեն. այլ ձեր Հայր գիտէ զի պիտոյ է այն ամենայն։

31 Բայց խնդրեցէք զարքայութիւն Աստուծոյ, եւ այն ամենայն յաւելցի ձեզ։

32 Մի՛ երկնչիր հօտ փոքրիկ, զի հաճեցաւ Հայր ձեր տալ ձեզ զարքայութիւն։ ԵԳ

33 Վաճառեցէք զինչս ձեր եւ տուք ողորմութիւն. եւ արարէք ձեզ քսակս առանց հնանալոյ, գանձ անպակաս յերկինս՝ ուր ոչ գող մերձենայ եւ ոչ ցեց ապականէ։

34 Զի ուր գանձն ձեր է, անդ եւ սիրտք ձեր եղիցին։

35 Եղիցին գօտիք ձեր պնդեալ ընդ մէջս, եւ ճրագունք լուցեալք։

36 Եւ դուք նմանողք մարդկան որ ակն ունիցին տեառն իւրեանց թէ երբ դառնայցէ 'ի հարսանեաց. զի յորժամ գայցէ եւ բախիցէ, վաղվաղակի բանայցեն նմա։

37 Երանի՜ իցէ ծառայիցն այնոցիկ զորս եկեալ տէրն գտցէ արթունս. ամէն ասեմ ձեզ, զի գօտի ընդ մէջ ածցէ եւ բազմեցուսցէ զնոսա եւ անցեալ պաշտիցէ զնոսա։

38 Եւ եթէ յերկրորդ կամ յերրորդ պա-

հու եկեսցէ և գտցէ այնպէս, երանելի
են ծառայքն այնոքիկ։
Բայց զայն գիտասջիք եթէ գիտէր տա- 39
նուտէրն յորում ժամու գող գայ՝ (հսկէր
և) չտայր թոյլ ական հատանել 'ի տան
իւրում։
Եւ դուք եղերուք պատրաստք, զի յո- 40
րում ժամու ոչ կարծիցէք՝ գայ որդի
մարդոյ։
Ասէ Պետրոս. տէր, առ մեզ ասացեր 41
զառակդ զայդ եթէ առ ամենեսեան։
Եւ ասէ տէր. ո՞վ իցէ հաւատարիմ 42
տնտես և իմաստուն, զոր կացոյց տէր
իւր 'ի վերայ գերդաստանի իւրոյ տալ
'ի ժամու զկերակուրս։
Երանի՜ իցէ ծառային այնմիկ զոր եկեալ 43
տէր իւր գտանիցէ արարեալ այնպէս։
Արդարև ասեմ ձեզ, զի 'ի վերայ ամե- 44
նայն ընչից իւրոց կացուսցէ զնա։
Ապա եթէ ասիցէ ծառայն այն 'ի սրտի 45
իւրում, յամէ տէր իմ 'ի գալ. և սկսա-
նիցի հարկանել զծառայսն և զաղախ-
նայս, ուտել և ըմպել և արբենալ։
Եկեսցէ տէր ծառային այնորիկ յա- 46
ւուր յորում ակն ոչ ունիցի, և 'ի ժա-
մու յորում ոչ գիտիցէ. ընդ մէջ կտ-
րեսցէ զնա, և զմասն նորա ընդ անհա-
ւատս դիցէ։

47 Եւ ծառայ որ գիտիցէ զկամս տեառն
իւրոյ և ոչ պատրաստեսցէ ըստ կամաց
նորա, արբցէ գան բազում:
48 Եւ որ ոչն գիտիցէ և արժանի գանի
ինչ գործիցէ, արբցէ գան սակաւ. ամե-
նայնի որում շատ տուաւ՝ շատ խըն-
դրեսցի 'ի նմանէ, և որում բազում ա-
ւանդեցաւ՝ առաւել ևս պահանջեսցեն
'ի նմանէ:
49 Հուր եկի արկանել յերկիր, և զի՞նչ՝ ԵԴ
կամիմ թէ արդէր իսկ բորբոքէր:
50 Եւ մկրտութիւն մի ունիմ մկրտիլ, և
զիա՞րդ փութամ մինչև կատարեսցի:
51 Համարի՞ք եթէ խաղաղութիւն եկի
տալ յերկիր, ո՛չ ասեմ ձեզ, այլ բաժինս:
52 Զի եղիցին յայսմ հետէ հինգ 'ի տան
միում բաժանեալք, երեքն յերկուց և
երկուքն յերից:
53 Բաժանեսցի հայր յորդւոյ և որդի 'ի
հօրէ, մայր 'ի դստերէ և դուստր 'ի
մօրէ, սկեսուր 'ի հարսնէ և հարսն 'ի
սկեսրէ իւրմէ:
54 Ասաց և ցժողովուրդսն. յորժամ տե-
սանիցէք ամպ ծագեալ յարևմտից, խա-
կոյն ասէք թէ անձրև գայ, և լինի
այնպէս:
55 Եւ յորժամ հարաւ շնչեալ, ասէք՝ թէ
խորշակ լինի, և լինի այնպէս:

կեղծաւորք, զերեսս երկնի և երկրի 56
գիտէք փորձել, իսկ զժամանակս զայս
զիա՞րդ ոչ փորձէք:
Ընդէ՞ր և յանձանց իսկ ոչ ընտրէք 57
զարժանն:
Յորժամ երթայցես ընդ ոսոխի քում 58
առ իշխան, 'ի ճանապարհի տուր ըղ-
հաշիւն զերծանել 'ի նմանէ. զի գուցէ
քարշիցէ զքեզ առ դատաւորն, և դա-
տաւորն մատնիցէ դահճի, և դահիճն
արկանիցէ 'ի բանտ:
Ասեմ քեզ, ոչ ելանիցես անտի մինչև 59
հատուցանիցես զյետին բնիոնն:

ԳԼ. ԺԳ

Եկին ոմանք 'ի նմին ժամանակի և 1
պատմեցին նմա վասն Գալիլեացւոցն.
որոց զարիւնն Պիղատոս խառնեաց ընդ
զոհս նոցա:
Պատասխանի ետ և ասէ ցնոսա. հա- 2
մարի՞ք եթէ այն Գալիլեացիք եղեն մե-
ղաւոր քան զամենայն Գալիլեացիս, զի
զայնպիսի անցս կրեցին:
Ո՛չ ասեմ ձեզ, այլ եթէ ոչ ապաշխա- 3
րիցէք՝ ամենեքին նոյնպէս կորնչիջիք:
Կամ նոքա ութուտասանքն, յորոց վ՟ր 4
աշտարակն անկաւ 'ի Սելովամ և սպան
զնոսա, համարի՞ք եթէ նոքա պարտա-

պանք եղեն քան զամենայն մարդիկ որ
բնակեալ են յԵրուսաղէմ։
5 Ոչ՝ ասեմ ձեզ, այլ եթէ ոչ ապաշ-
խարիցէք՝ ամենեքեան նոյնպէս կորըն-
չիջիք։
6 Ասաց և զառակս զայս. Թզենի մի էր
ուրումն անկեալ յայգւոջ իւրում. և
եկն խնդրել պտուղ ՚ի նմանէ և ոչ
եգիտ։
7 Ասէ ցայգեգործն. ահա երեք ամք են
յորմէ հետէ գամ խնդրել պտուղ ՚ի
թզենւոջդ և ոչ գտանեմ. արդ կտրեա
զդա, ընդէ՞ր և զերկիրդ խափանէ։
8 Նա պատասխանի ետ և ասէ. տէր,
թող զդա այս ամ ևս, մինչև շուրջ
զդովաւ բրեցից և արկից աղբ։
9 Թերևս արասցէ պտուղ, ապա թէ ոչ՝
յամէ ևս հատցես զդա։
10 Եւ ուսուցանէր ՚ի միում ՚ի ժողովրդա- ԵԵ
նոցացն ՚ի շաբաթս։
11 Եւ ահա կին մի զոր ունէր այս հիւան-
դութեան ամս ութուտասն, և էր կար-
կամեալ և ոչ կարէր ամենևին ՚ի վեր
հայել։
12 Եւ տեսեալ զնա Յիսուսի՝ կոչեաց առ
ինքն և ասէ ցնա. կին դու, արձակեալ
ես ՚ի հիւանդութենէ քումմէ։
13 Եւ եդ ՚ի վերայ նորա ձեռն, և առ-

ժամայն ուղղեցաւ, և փառաւոր առնէր
զԱստուած։

Պատասխանի ետ ժողովրդապետն ցա- 14
սուցեալ թէ ընդէ՞ր ՚ի շաբաթու բժըշ-
կեաց Յիսուս, և ասէ ցժողովուրդն.
վեց օր է յորս արժան է գործել, յայնս
եկայք բժշկեցարուք, և մի՛ յաւուր շա-
բաթու։

Պատասխանի ետ նմա տէր և ասէ. կեղ- 15
ծաւորք, իւրաքանչիւր ոք ՚ի ձէնջ ՚ի շա-
բաթու ո՞չ արձակէ զեզն իւր կամ զէշ
՚ի մսրոյ և տանի տայ ջուր։

Իսկ այս դուստր Աբրահամու էր, զոր 16
կապեաց սատանայ ահաւասիկ ութու-
տասն ամ, ո՞չ էր արժան արձակել՚ի կա-
պանաց անտի՚ի շաբաթու։

Եւ զայս իբրև ասաց, յամօթ լինէին 17
ամենեքին որ հակառակն կային նմա. և
ամենայն ժողովուրդն ուրախ լինէր ՚ի
վերայ ամենայն փառաւորութեանցն որ
գործէին ՚ի նմանէ։

Եւ ասէր. ո՞ւմ նման է արքայութիւն 18
Աստուծոյ, և որո՞ւմ նմանութեան նմա-
նեցուցից զնա։

Նման է հատոյ մանանխոյ, զոր առեալ 19
մարդոյ արկ ՚ի պարտէզ իւր. աճեաց և
եղև ծառ, և թռչունք երկնից բնակեալ
էին յոստս նորա։

20 Եւ դարձեալ ասէ. ո՛ւմ նմանեցուցից
զարքայութիւն Աստուծոյ։
21 Նման է խմորոյ զոր առեալ կնոջ թա-
քոյց յալեւր երից գրուից՝ մինչեւ խմո-
րեցաւ ամենայն։
22 Եւ շրջէր ընդ քաղաքս եւ ընդ գեօղս՝ ԵՁ
ուսուցանէր, եւ ճանապարհ արարեալ
յԵրուսաղէմ։
23 Ասէ ոմն ցնա. Տէր, եթէ սակաւք իցեն
որ ապրելոց իցեն. եւ նա ասէ ցնոսա։
24 Ջանացարուք մտանել ընդ դուռն նեղ.
ասեմ ձեզ զի բազումք խնդրեսցեն մտա-
նել եւ ոչ կարասցեն։
25 Յորմէ հետէ մտցէ տանուտէրն եւ փա-
կեսցէ զդուռնն եւ սկսանիցիք կալ ար-
տաքոյ եւ բախել զդուռնն եւ ասել,
Տէր տէր, բաց մեզ. եւ պատասխանի
տուեալ ասիցէ ձեզ, ոչ գիտեմ զձեզ
ուստի էք։
26 Յայնժամ սկսանիջիք ասել, կերաք ա-
ռաջի քո եւ արբաք, եւ 'ի հրապարակս
մեր ուսուցեր։
27 Եւ ասիցէ. ասեմ ձեզ, ոչ գիտեմ զձեզ
ուստի էք. 'ի բաց կացէք յինէն ամե-
նայն մշակք անիրաւութեան։
28 Անդ եղիցի լալ եւ կրճել ատամանց,
յորժամ տեսանիցէք զԱբրահամ եւ զԻ-
սահակ եւ զՅակոբ՝ եւ զամենայն մար-

գարէս յարքայութեան Աստուծոյ, և
զձեզ հանեալ արտաքս:
Եւ եկեսցեն յարևելից և յարևմտից և 29
'ի հիւսիսոյ և 'ի հարաւոյ, և բազմեսցին
յարքայութեան Աստուծոյ:
Եւ ահա իցեն յետինք որ եղիցին ա- 30
ռաջինք, և իցեն առաջինք որ լինիցին
յետինք:
Ի նմին աւուր մատեան ոմանք Փարի- 31
սեցիք, և ասեն ցնա. ել և գնա աստի,
զի Հերովդէս կամի սպանանել զքեզ:
Եւ ասէ ցնոսա. երթայք ասացէք ա- 32
ղուեսուն այնմիկ. ահաւասիկ հանեմ
դևս և բժշկութիւնս կատարեմ այսօր և
վաղիւ, և յերիր աւուր կատարիմ:
Բայց պարտ է այսօր և վաղիւ և 'ի միւ- 33
սում աւուր գնալ, զի ոչ է մարթ մար-
գարէի կորնչել արտաքոյ քան զԵ̃էմ:
Ե̃էմ Ե̃էմ, որ կոտորէիր զմարգարէս, և 34
քարկոծ առնէիր զառաքեալսն առ քեզ,
քանիցս անգամ կամեցայ ժողովել զոր-
դիս քո, որպէս հաւ զձագս իւր ընդ
թևովք, և ոչ կամեցարուք:
Ահա թողեալ լիցի ձեզ տուն ձեր: 35
Բայց ասեմ ձեզ, եթէ ոչ ևս տեսանի-
ցէք զիս, մինչև ասիցէք օրհնեալ եկեալ
յանուն տեառն:

ԳԼ. ԺԴ

1 Եւ եղև 'ի մտանելն նորա 'ի տուն ու- Եէ
րումն իշխանացն Փարիսեցւոց 'ի շաբա-
թու ուտել հաց, և նոքա սպասէին
նմա։
2 Եւ ահա այր ոմն էր անդ ջրգողեալ ա-
ռաջի նորա։
3 Պատասխանի ետ Յիսուս և ասէ ցօրի-
նաւորսն և ցՓարիսեցիս. եթէ արժա՞ն
իցէ 'ի շաբաթու բժշկել։
4 Եւ նոքա լուռ եղեն, և բուռն հարեալ
զնմանէ բժշկեաց զնա և արձակեաց։
5 Եւ ասէ ցնոսա. ո՞յր ուրուք 'ի ձէնջ էշ
կամ եզն՝ անկանիցի 'ի ջրհոր, և ոչ
վաղվաղակի հանիցէ զնա յաւուր շա-
բաթու։
6 Եւ ոչ կարացին տալ նմա պատասխանի
առ այն։
7 Ասաց և առ կոչնականսն առակ մի,
հայեցեալ թէ զիա՛րդ բարձրնտիր լի-
նէին, ասէ ցնոսա։
8 Յորժամ կոչիցէ ոք զքեզ 'ի հարսա-
նիս կամ 'ի կոչունս, մի՛ բազմիցիս յա-
ռաջին բարձին. գուցէ պատուականա-
գոյն ևս քան զքեզ իցէ կոչեցեալն 'ի
նմանէ։
9 Եւ եկեալ որ զքեզն և զնա կոչեաց՝

ասիցէ ցքեզ, տուր սմա տեղի. եւ ապա
սկսանիցիս ամօթով զյետին տեղին
ունել:

Այլ յորժամ կոչիցիս, երթիջիր բազ- 10
մեսջիր 'ի յետին տեղւոջ. զի յորժամ
գայցէ որ կոչեացն զքեզ, ասիցէ ցքեզ.
բարեկամ, 'ի վեր մատիր. յայնժամ ե-
ղիցին քեզ փառք առաջի բարձակցացն
քոց:

Զի ամենայն որ բարձրացուցանէ զանձն, 11
խոնարհեսցի. եւ որ խոնարհեցուցանէ
զանձն, բարձրասցի:

Ասէ եւ ցկոչնատէրն. յորժամ առնի- 12
ցես ճաշ կամ ընթրիս, մի՛ կոչեր ըզ-
բարեկամս քո եւ մի՛ զեղբարս քո եւ
մի՛ զազգականս քո եւ մի՛ զդրացիս քո
եւ մի՛ զմեծամեծս. զի մի՛ եւ նոքա փո-
խարէն կոչեսցեն զքեզ, եւ լինիցի քեզ
հատուցումն:

Այլ յորժամ առնիցես ընդունելու- 13
թիւն, կոչեա զաղքատս եւ զխեղս եւ ըզ-
կաղս եւ զկոյրս:

Եւ երանելի լինիցիս, զի ոչ ունին փո- 14
խարէն հատուցանելոյ քեզ. եւ հատուս-
ցի քեզ փոխարէն 'ի յարութեան ար-
դարոց:

Իբրեւ լուաւ զայս ոմն 'ի բազմականացն, 15
ասէ ցնա. երանի՛ որ կերիցէ ճաշ յար-

քայութեան Աստուծոյ։

16 Եւ նա ասէ. այր ոմն գործեաց ընթրիս
և հրաւիրեաց զբազումս։

17 Եւ առաքեաց զծառայ իւր 'ի ժամու
ընթրեացն կոչել զհրաւիրեալսն՝ թէ ե-
կայք զի ահաւասիկ պատրաստ է ամե-
նայն ինչ։

18 Եւ սկսան մի ըստ միոջէ ամենեքեան
հրաժարել. առաջինն ասէ, ագարակ
գնեցի, և հարկ է ելանել տեսանել
զնա, աղաչեմ զքեզ կալ զիս հրաժա-
րեալ։

19 Եւ միւսն ասէ. լուծս հինգ եզանց գնե-
ցի, և երթամ փորձել զնոսա, աղաչեմ
զքեզ կալ զիս հրաժարեալ։

20 Եւ միւսն ասէ. կին առի, և վասն այ-
նորիկ ոչ կարեմ գալ։

21 Եւ եկեալ ծառայն պատմեաց զայն
տեառն իւրում։ Յայնժամ բարկացեալ
տանուտէրն՝ ասէ ցծառայն իւր. ել վաղ-
վաղակի 'ի հրապարակս և 'ի փողոցս քա-
ղաքիդ, և զաղքատս և զխեղս և ըզ-
կաղս և զկոյրս մոյծ այսր։

22 Եւ ասէ ծառայն. տէր, եղև զոր հրա-
մայեցերն, և կայ ևս տեղի։

23 Եւ ասէ տէրն ցծառայն, ել 'ի Ճանա-
պարհս և 'ի ցանգս, և արա այսր մտա-
նել, զի լցցի տունս իմ։

Ասեմ ձեզ, զի ոչ ոք յայնց կոչեցելոց 24
ճաշակեսցէ յընթրեաց իմոց:
ԶԿ Եւ երթային ընդ նմա ժողովուրդք բա- 25
զումք, դարձաւ և ասէ ցնոսա.
Եթէ ոք գայ առ իս և ոչ ատեայ ըզ- 26
հայր իւր և զմայր և զկին և զորդիս և
զեղբարս և զքորս, նա և զանձն ևս
իւր, ոչ կարէ իմ աշակերտ լինել:
Զի որ ոչ բառնայ զխաչ իւր և գայ զկնի 27
իմ, ոչ կարէ իմ աշակերտ լինել:
Ո՞վ ոք ՚ի ձէնջ կամիցի շինել աշտարակ, 28
և ոչ նախ նստեալ համարիցի զծախսն՝
եթէ ունիցի՞ բաւական ՚ի կատարումն:
Զի գուցէ իբրև արկանիցէ հիմն և 29
ոչ կարիցէ կատարել, ամենեքին որ
տեսանիցեն՝ սկսանիցին ծաղր առնել
զնա,
Եւ ասել. Թէ այս այր սկսաւ շինել և 30
ոչ կարաց կատարել:
Կամ ո՞ր թագաւոր երթեալ տայցէ պա- 31
տերազմ ընդ այլում թագաւորի, և ոչ
նստեալ նախ խորհիցի եթէ կարո՞ղ
իցէ տասն հազարաւ զդէմ ունել զայնո-
րիկ՝ որ գայցէ ՚ի վերայ նորա քսան
հազարաւ:
Ապա թէ ոչ, մինչդեռ հեռագոյն իցէ՝ 32
հրեշտակութիւն առաքեալ աղաչեսցէ
՚ի խաղաղութիւն:

33 Արդ այսպէս ամենայն ոք ՚ի ձէնջ որ ոչ
հրաժարեսցէ յամենայն ընչից իւրոց,
ոչ կարէ իմ աշակերտ լինել։
34 Բարւոք է աղ, ապա թէ աղն ան-
համեսցի՝ ի՞ւ համեմեսցի։
35 Ոչ յերկիր և ոչ յաղբ է պիտանացու,
այլ ընկենուլ զնա արտաքս. որ ունիցի
ականջս լսելոյ լուիցէ։

ԳԼ. ԺԵ

1 Եւ էին մերձ առ նա ամենայն մաքսա-
ւորք և մեղաւորք լսել ՚ի նմանէ։
2 Տրտնջէին Փարիսեցիքն և դպիրքն՝ և ա-
սէին. ընդէ՞ր սա զմեղաւորս ընդունի և
ուտէ ընդ նոսա։
3 Ասաց առ նոսա զառակս զայս։
4 Ո՞վ ոք իցէ ՚ի ձէնջ մարդ՝ որոյ իցէ հա-
րիւր ոչխար, և կորուսանիցէ մի ՚ի նո-
ցանէ. ո՞չ թողուցու զիննսուն և զինն
յանապատի, և երթայցէ զհետ կորու-
սելոյն մինչև գտանիցէ։
5 Եւ իբրև գտանէ, դնէ զնա ՚ի վերայ
ուսոց իւրոց խնդալով,
6 Եւ երթայ ՚ի տուն, կոչէ զբարեկամս
և զդրացիս և ասէ ցնոսա. ուրախ եղե-
րուք ընդ իս, զի գտի զոչխարս իմ զկո-
րուսեալ։
7 Ասեմ ձեզ, զի այսպէս է ուրախութիւն

յերկինս վասն միոյ մեղաւորի որ ա-
պաշխարիցէ, քան վասն իննսուն և ինն
արդարոց որոց չիցէ պիտոյ ապաշխարու-
թիւն։
Կամ ո՞վ իցէ կին, որոյ իցեն դրամք 8
տասն. և եթէ կորուսանիցէ դրամ մի,
ո՞չ լուցանիցէ ճրագ, և ածիցէ աւել
'ի տան և խնդրիցէ ստէպ՝ մինչև գտա-
նիցէ։
Եւ իբրև գտանէ, կոչէ զբարեկամս և 9
զդրացիս և ասէ. ուրախ լերուք ընդ իս,
զի գտի զդրամն իմ զոր կորուսի։
Այնպէս ասեմ ձեզ, ուրախութիւն ե- 10
ղիցի առաջի հրեշտակաց Աստուծոյ 'ի վե-
րայ միոյ մեղաւորի որ ապաշխարիցէ։
Եւ ասէ. առն միոջ էին երկու որդիք։ 11
Ասէ կրտսերն 'ի նոցանէ ցհայրն. հայր, 12
տուր ինձ բաժին՝ որ անկանի յընչիցդ.
և նա բաժանեաց նոցա զկեանսն։
Եւ յետ ոչ բազում աւուրց ժողովեալ 13
զամենայն կրտսեր որդւոյն գնաց յաշ-
խարհ հեռի և անդ վատնեաց զինչս իւր,
զի կեայր անառակութեամբ։
Եւ իբրև սպառեաց զամենայն, եղև 14
սով սաստիկ յաշխարհին յայնմիկ և
սկսաւ ինքն չքաւորել։
Եւ գնացեալ յարեցաւ 'ի մի ոմն 'ի քա- 15
ղաքացւոց աշխարհին այնորիկ, և յղեաց

զնա յագարակ իւր արածել խոզս:
16 Եւ ցանկայր լնուլ զորովայն իւր յեղ-
ջերէն զոր խոզքն ուտէին, և ոչ ոք տայր
նմա:
17 Եւ եկեալ 'ի միտս իւր ասէ. քանի՞ վարձ-
կանք իցեն 'ի տան հօր իմոյ հացալիցք,
և ես աստ սովամահ կորնչիմ:
18 Յարուցեալ գնացից առ հայր իմ, և ա-
սացից ցնա. հա՛յր, մեղայ յերկինս և ա-
ռաջի քո:
19 Եւ ոչ ևս եմ արժանի կոչել որդի քո,
արա զիս իբրև զմի 'ի վարձկանաց քոց:
20 Եւ յարուցեալ եկն առ հայր իւր. և
մինչդեռ հեռագոյն էր, ետես զնա
հայրն և գթացաւ, յարեաւ և ընթա-
ցաւ ընդ առաջ, անկաւ զպարանոցաւն
նորա և համբուրեաց զնա:
21 Եւ ասէ ցնա որդին. հա՛յր, մեղայ յեր-
կինս և առաջի քո, ոչ ևս եմ արժանի
կոչել որդի քո:
22 Ասէ հայրն ցծառայս իւր. վաղվաղակի
հանէք զպատմուճանն առաջին, և ագու-
ցէք նմա, և տուք զմատանին 'ի ձեռս
նորա և կօշիկս յոտս նորա:
23 Եւ ածէք զեզն պարարակ, զենէք, կե-
րիցուք և ուրախ լիցուք:
24 Զի այս որդի իմ մեռեալ էր և եկեաց,
կորուսեալ էր և գտաւ. և սկսան

ուրախ լինել։

Եւ էր երէց որդին նորա յագարակի. և 25
մինչդեռ գայր՝ և մերձ եղև 'ի տունն,
լուաւ զձայն երգոց և զպարուց։

Եւ կոչեցեալ առ ինքն զմի 'ի ծառայիցն՝ 26
հարցանէր թէ զի՞նչ իցէ այն։

Եւ նա ասէ ցնա. զի եղբայր քո եկեալ 27
է, և եզեն հայր քո զեզն պարարակ, զի
ողջամբ ընկալաւ զնա։

Բարկացաւ և ոչ կամէր մտանել. և 28
հայրն ելեալ արտաքս՝ աղաչէր զնա։

Պատասխանի ետ և ասէ ցհայրն. այս 29
քանի՞ ամք են զի ծառայեմ քեզ, և եր-
բէք զպատուիրանաւ քով ոչ անցի. ուլ
մի երբէք ոչ ետուր ինձ զի ուրախ եղէց
ընդ բարեկամս իմ։

Յորժամ եկն որդիդ քո այդ որ եկեր 30
զկեանս քո ընդ պոռնիկս, զեներ դմա
զեզն պարարակ։

Եւ ասէ ցնա. որդեակ, դու հանապազ 31
ընդ իս ես, և ամենայն որ ինչ իմ
է՝ քո է։

Այլ ուրախ լինել և խնդալ պարտ էր, 32
զի եղբայր քո այս մեռեալ էր և եկեաց,
կորուսեալ էր և գտաւ։

ԳԼ. ԺԶ

1 Եւ ասէ առ աշակերտսն. այր մի էր ԶԲ
մեծատուն, որոյ էր տնտես. և եղև ըդ-
նմանէ ամբաստանութիւն որպէս թէ
վատնիցէ զինչս նորա։
2 Կոչեաց և ասէ ցնա. զի՞նչ է այս զոր
լսեմ զքէն, տուր զհամար տնտեսու-
թեանն քո. զի ոչ ևս կարես լինել տնտես։
3 Ասէ ընդ միտս իւր տնտեսն. զի՞նչ գոր-
ծեցից, զի տէր իմ հանէ զտնտեսու-
թիւնս. գործել ոչ կարեմ՝ մուրանալ
ամաչեմ։
4 Գիտեմ զի՞նչ արարից. զի յորժամ 'ի
բաց լինիցիմ 'ի տնտեսութենէս՝ ընկալ-
ցին զիս 'ի տունս իւրեանց։
5 Եւ կոչեցեալ առ ինքն մի ըստ միոջէ 'ի
պարտապանաց տեառն իւրոյ, ասէ ցա-
ռաջինն. քանի՞ ինչ պարտիս տեառն
իմում։
6 Եւ նա ասէ, հարիւր մար ձիթոյ. ասէ
ցնա, կա զգիր քո և նիստ գրեա վաղվա-
ղակի յիսուն։
7 Դարձեալ ասէ ցմիւսն, դու քանի՞ ինչ
պարտիս. և նա ասէ, հարիւր քոռ ցորե-
նոյ. և ասէ ցնա, կա զգիր քո և նիստ
գրեա ութսուն։
8 Եւ գովեաց տէրն զտնտեսն անիրաւու-

թեան, զի իմաստութե՟ արար. զի որդիք
աշխարհիս այսորիկ իմաստնագոյնք են
քան զորդիս լուսոյ յազգս իւրեանց:
Եւ ես ձեզ ասեմ, արարէք ձեզ բարե֊ 9
կամս ՚ի Մամոնայէ անիրաւութեան. զի
յորժամ պակասիցէ այն՝ ընկալցին զձ֊
ձեզ ՚ի յարկսն յաւիտենականս:
Որ ՚ի փոքուն հաւատարիմ է, և ՚ի բազ֊ 10
մին հաւատարիմ է. և որ ՚ի փոքուն ան֊
իրաւ է, և ՚ի բազմին անիրաւ է:
Իսկ արդ եթէ յանիրաւ Մամոնային 11
չեղէք հաւատարիմք, զճշմարիտն ձեզ ո՞
հաւատասցէ:
Եւ եթէ յօտարին չեղէք հաւատարիմք, 12
զձերն ո՞ տացէ ձեզ:
Ոչ ոք ծառայ կարէ երկուց տերանց ծա֊ 13
ռայել. զի եթէ զմին ատիցէ և զմիւսն
սիրիցէ, կամ զմին մեծարիցէ և զմիւսն
արհամարհիցէ. ոչ կարէք Աստուծոյ ծա֊
ռայել և Մամոնայի:
Իբրև լսէին զայս ամենայն Փարիսեցիքն՝ 14
քանզի արծաթասէրք էին, և անգոս֊
նէին զնա:
Եւ ասէ ցնոսա. դուք էք որ արդարացու֊ 15
ցանէք զանձինս առաջի մարդկան, սա֊
կայն Աստուած գիտէ զսիրտս ձեր. զի
որ առաջի մարդկան բարձր է, պիղծ է
առաջի Աստուծոյ:

16 Օրէնքն և մարգարէք մինչև ցՅովհան-
նէս, յայնմ հետէ արքայութիւն Աս-
տուծոյ աւետարանի, և ամենայն ոք զնա
բռնաբարէ։
17 Դիւրին լիցի երկնից և երկրի անցա-
նել, քան յօրինացն միոյ նշանախեցի
անկանել։
18 Ամենայն որ արձակէ զկին իւր և առնէ
այլ, շնայ. և որ զարձակեալն առնէ, շնայ։
19 Այր ոմն էր մեծատուն և ագանէր բե-
հեզս և ծիրանիս, և ուրախ լինէր հա-
նապազ առատապէս։
20 Եւ աղքատ ոմն անուն Ղազարոս ան-
կեալ դնէր առ դրան նորա վիրաւորեալ։
21 Եւ ցանկայր յագել 'ի փշրանացն որ
անկանէին 'ի սեղանոյ մեծատանն. այլ
և շունք ևս գային և լեզուին զվէրս
նորա։
22 Եւ եղև մեռանել աղքատին, և տա-
նել հրեշտակաց զնա 'ի գոգն Աբրա-
համու. մեռաւ և մեծատունն և թա-
ղեցաւ։
23 Եւ 'ի դժոխսն ամբարձ զաչս իւր մինչ
'ի տանջանսն էր, ետես զԱբրաամ 'ի
հեռաստանէ, և զՂազարոս 'ի գոգ նո-
րա հանգուցեալ։
24 Եւ նա աղաղակեաց և ասէ. հայր Աբ-
րահամ, ողորմեաց ինձ և առաքեա

զՂազարոս, զի թացցէ զծագ մատին
իւրոյ 'ի ջուր և զովացուսցէ զլեզու իմ,
զի պապակիմ 'ի տապոյ աստի:
Եւ ասէ ցնա Աբրահամ. որդեակ, յի- 25
շեա զի ընկալար անդէն զբարիս քո 'ի
կեանս քում, և Ղազարոս նոյնպէս ըզ-
չարչարանս. արդ սա աստ մխիթարի, և
դու այդր պապակիս:
Եւ 'ի վերայ այսր ամենայնի՝ վիհ մեծ է 26
ընդ մեզ և ընդ ձեզ. եթէ կամիցին աս-
տի առ ձեզ անցանել ոչ կարեն, և ոչ
այտի ոք առ մեզ անցանել:
Եւ ասէ. արդ աղաչեմ զքեզ հայր, զի 27
արձակեսցես զդա 'ի տուն հօր իմոյ:
Են իմ անդ եղբարք հինգ, որպէս զի 28
տացէ նոցա վկայութիւն, զի մի և նոքա
գայցեն յայս տեղի տանջանաց:
Եւ ասէ Աբրահամ. ունին զՄովսէս և 29
զմարգարէս, նոցա լուիցեն:
Եւ նա ասէ. ոչ հայր Աբրահամ, բայց 30
եթէ 'ի մեռելոց ոք երթիցէ առ նոսա
և ապաշխարեսցեն:
Եւ ասէ ցնա. եթէ Մովսեսի և մար- 31
գարէիցն ոչ լսեն, և ոչ թէ 'ի մեռելոց
ոք յառնիցէ՝ հաւատասցեն:

Գլ. ԺԷ

1 Ասաց և առ աշակերտսն իւր. ոչ է Զգ.
մարթ չգալ գայթագղութեան, բայց
վայ այնմիկ է յոյր ձեռն գայցէ։
2 Լաւ էր նմա թէ վէմ երկանաքար կա-
խէր զպարանոցէ նորա և անկանէր 'ի
ծով, քան թէ գայթագղեցուցանէ զմի
ոք 'ի փոքրկանցս յայսցանէ։
3 Զգոյշ կայցէք անձանց. եթէ մեղիցէ
եղբայր քո, սաստեա նմա. և եթէ ա-
պաշխարիցէ, թող նմա։
4 Եւ եթէ եօթն անգամ մեղիցէ քեզ և
եօթն անգամ դարձցի 'ի քեզ և ասիցէ՝
ապաշխարեմ, թողցես նմա։
5 Եւ ասեն առաքեալքն ցտէր, յաւել
մեզ հաւատս։
6 Եւ ասէ տէր. եթէ ունիցիք հաւատս
քան զհատ մանանխոյ, և ասիցէք թը-
թենւոյս այսմիկ. խլեաց և տնկեաց 'ի
ծովու, և հնազանդեսցի ձեզ։
7 Իսկ ո՞վ ոք 'ի ձէնջ որ ունիցի ծառայ
հողագործ կամ հովիւ, որ իբրև մտա-
նիցէ յագարակէ՝ ասիցէ ցնա վաղվա-
ղակի, թէ անց բազմեաց։
8 Այլ ոչ ասիցէ ցնա, թէ պատրաստեա
զինչ ընթրելոց իցեմ, և գօտի ածեալ
պաշտեա զիս՝ մինչև կերայց և արբից,

և ապա կերիցես և արբցես դու։
Միթէ շնո՞րհ ինչ ունիցի ծառային այն_ 9
միկ, զի արար զամենայն հրամանսն։
Նոյնպէս և դուք յորժամ առնիցէք զա_ 10
մենայն հրամայեալսն ձեզ, ասասջիք թէ
ծառայք անպիտանք եմք, զոր պարտէաքն
առնել՝ արարաք։
Եւ եղև մինչև երթայր նա յԵրուսա_ 11
ղէմ, և ինքն անցանէր ընդ մէջ Սամա_
րեայ և Գալիլեացւոց։
Եւ մինչդեռ մտանէր 'ի գեօղ ուրեմն, 12
պատահեցին նմա տասն այր բորոտ՝ որք
կացին 'ի հեռաստանէ,
Բարձին զձայնս և ասեն. Յիսուս վար_ 13
դապետ, ողորմեաց մեզ։
Եւ իբրև ետես զնոսա, ասէ ցնոսա. 14
երթայք ցուցէք զանձինս քահանայիցն.
և եղև իբրև գնացին՝ առժամայն սըր_
բեցան։
Մի ոմն 'ի նոցանէ իբրև ետես եթէ 15
բժշկեցաւ, դարձաւ անդրէն 'ի ձայն
մեծ փառաւոր առնէր զԱստուած։
Անկաւ 'ի վերայ երեսաց իւրոց առ ոտս 16
նորա, և գոհանայր զնմանէ. և ինքն էր
Սամարացի։
Պատասխանի ետ Յիսուս և ասէ, ո՞չ 17
տասն սոքա սրբեցան, իսկ արդ ինունքն
ո՞ւր են։

18 Զի ոչ գտան դառնալ տալ փառս Աս-
տուծոյ, բայց միայն այլազգիս այս։
19 Եւ ասէ ցնա. արի գնա, զի հաւատք
քո կեցուցին զքեզ։
20 Իբրեւ հարցաւ 'ի Փարիսեցւոցն թէ Երբ ՁԴ.
գայցէ արքայութիւնն Աստուծոյ, պա-
տասխանի ետ նոցա եւ ասէ. ոչ գայ ար-
քայութիւն Աստուծոյ խտրանօք։
21 Եւ չասիցեն թէ ահաւասիկ աստ է կամ
անդ. զի ահա արքայութիւն Աստուծոյ
'ի ներքս 'ի ձեզ է։
22 Ասաց եւ առ աշակերտսն. եկեսցեն ա-
ւուրք ցանկանալոյ ձեզ մի յաւուրցն
որդւոյ մարդոյ տեսանել եւ ոչ տեսա-
նիցէք։
23 Եւ եթէ ասիցեն ձեզ եթէ ահաւասիկ
է կամ անդ, մի՛ երթայցէք զհետ։
24 Զի որպէս փայլակն փայլատակեալ 'ի
ներքոյ երկնից ընդ երկնիւք ծագիցէ,
նոյնպէս եւ որդի մարդոյ յաւուրն իւրում։
25 Բայց նախ պարտ է նմա բազում չար-
չարիլ եւ խոտիլ յազգէս յայսմանէ։
26 Եւ որպէս եղեւ յաւուրսն Նոյի, նոյն-
պէս եղիցի եւ յաւուրս որդւոյ մարդոյ։
27 Ուտէին ըմպէին կանայս առնէին եւ ա-
րանց լինէին՝ մինչեւ յօրն յորում եմուտ
Նոյ 'ի տապանն, եւ եկն ջրհեղեղն եւ կո-
րոյս զամենեսին։

Նոյնպէս և որպէս յաւուրսն Ղովտայ 28
եղև, ուտէին ըմպէին գնէին վաճա֊
ռէին, տնկէին շինէին։
Եւ յորում աւուր ել Ղովտ 'ի Սոդո֊ 29
մայ, տեղաց հուր և ծծումբ յերկնից և
կորոյս զամենեսին։
Ըստ նմին օրինակի եղիցի և յաւուրն՝ 30
յորում որդի մարդոյ յայտնելոց է։
Յայնմ աւուր որ կայցէ 'ի տանիս և 31
կարասի իւր 'ի տան, մի՛ իջցէ առնուլ
զայն. և որ յանդի իցէ, նոյնպէս մի՛
դարձցի յետս։
Յիշեցէք զկնոջն Ղովտայ։ 32
Որ խնդրիցէ զանձն իւր ապրեցուցանել՝ 33
կորուսցէ զնա. և որ կորուսցէ՝ ապրե֊
ցուսցէ զնա։
Ասեմ ձեզ, յայնմ գիշերի թէ եղիցին 34
երկու 'ի մի մահիճս, մին առցի և միւսն
թողցի։
Եւ եթէ եղիցին երկու՝ աղալ 'ի միա֊ 35
սին, մին առցի և միւսն թողցի. և եթէ
իցեն երկու յանդի, մին առցի և միւսն
թողցի։
Պատասխանի ետուն և ասեն ցնա. յո՞ 36
տէր։
Եւ նա ասէ ցնոսա, ուր մարմին է՝ անդր 37
և արծուիք ժողովեսցին։

ԳԼ. ԺԸ

1 Ասաց և առակ մի նոցա առ այն թէ ՁԵ
պարտ է յամենայն ժամ կալ նոցա յա-
ղօթս և մի՛ ձանձրանալ։
2 Ասէ. դատաւոր մի էր ՚ի քաղաքի ու-
րեմն, յԱստուծոյ ոչ երկնչէր և ՚ի մարդ-
կանէ ոչ ամաչէր։
3 Եւ այրի մի էր ՚ի նմին քաղաքի, գայր
առ նա և ասէր. դատ արա ինձ յոսոխէ
իմմէ։
4 Եւ ոչ կամէր ՚ի բազում ժամանակս.
յետ այնորիկ ասէ ՚ի միտս իւրում, եթէ
և յԱստուծոյ ոչ երկնչիմ, և ՚ի մարդ-
կանէ ոչ ամաչեմ.
5 Գոնէ վասն աշխատ առնելոյ զիս այ-
րւոյն՝ արարից նմա դատ, զի մի՛ ՚ի սպառ
եկեալ թախանձիցէ զիս։
6 Եւ ասէր, լուարուք զի՛նչ դատաւորն
անիրաւութեան ասէր։
7 Իսկ Աստուած ո՞չ առնիցէ վրէժխնդրու-
թիւն ծառայից իւրոց որ աղաղակեն ա-
ռ նա ՚ի տուէ և ՚ի գիշերի. և երկայնամի՞տ
միայն լինիցի առ նոսա։
8 Այո ասեմ ձեզ, զի արասցէ վրէժխնդրու-
թիւն նոցա վաղվաղակի. իսկ որդի
մարդոյ եկեալ գտանիցէ՞ արդեօք հա-
ւատս յերկրի։

Ասաց և առ ոմանս պանծացեալս յան- 9
ձինս թէ արդարք իցեն և խոտէիցեն
զբազումս, զառակս զայս:
Արք երկու ելին 'ի տաճարն կալ յա- 10
ղօթս, մին Փարիսեցի և միւսն մաք-
սաւոր:
Փարիսեցին կայր մեկուսի և զայս ա- 11
ւանձինն աղօթս մատուցանէր. Աս-
տուած իմ, գոհանամ զքէն զի ոչ եմ
իբրև զայլս 'ի մարդկանէ, զյափշտա-
կողս և զանիրաւս և զշունս, կամ ի-
բրև զայս մաքսաւոր:
Այլ պահեմ երկիցս 'ի շաբաթու, և 12
տամ տասանորդս յամենայն ստացուա-
ծոց իմոց:
Եւ մաքսաւորն կայր մեկուսի, և ոչ կա- 13
մէր և ոչ զաչսն ընդ երկինս ամբառնալ.
այլ կոծէր զկուրծս իւր և ասէր. Աս-
տուած, քաւեա զիս զմեղաւորս:
Ասեմ ձեզ, էջ սա արդարացեալ 'ի 14
տուն իւր քան զնա. զի ամենայն որ
բարձրացուցանէ զանձն իւր՝ խոնար-
հեսցի, և որ խոնարհեցուցանէ զանձն՝
բարձրասցի:
ԶԶ Մատուցանէին առ նա մանկտի զի 15
մերձենայցէ 'ի նոսա. իբրև տեսին ա-
շակերտքն՝ սաստէին նոցա:
Իսկ Յիսուս կոչեցեալ զնոսա առ ինքն՝ 16

ասէ. Թոյլ տուք մանկտւոյդ գալ առ իս
և մի՛ արգելուք զդոսա. զի այդպիսեացդ
է արքայութիւն Աստուծոյ:
17 Ամէն ասեմ ձեզ, որ ոչ ընդունիցի զար-
քայութիւն Աստուծոյ իբրև զմանուկ,
ոչ մտցէ 'ի նա:
18 Եւ եհարց զնա ոմն իշխան և ասէ.
վարդապետ բարի, զի՞նչ գործեցից
զի զկեանսն յաւիտենականս ժառան-
գեցից:
19 Ասէ ցնա Յիսուս. զի՞ ասես զիս բարի,
չի՛ք ոք բարի՝ բայց մի Աստուած:
20 Զպատուիրանսն գիտես. մի՛ շնար, մի՛
սպանաներ, մի՛ գողանար, մի՛ սուտ
վկայեր, պատուեա զհայր քո և զմայր:
21 Եւ նա ասէ. զայդ ամենայն պահեցի
'ի մանկութենէ իմմէ:
22 Իբրև լուաւ զայն Յիսուս՝ ասէ ցնա.
միւս ևս պակաս է քեզ. զամենայն ինչ
զոր ունիս վաճառեա և տուր աղքատաց, և
ունիցիս գանձս յերկինս, և եկ զկնի իմ:
23 Նա իբրև լուաւ զայս՝ տրտմեցաւ, քան-
զի էր մեծատուն յոյժ:
24 Իբրև ետես զնա Յիսուս տրտմեալ՝ ասէ,
ո՞րպէս դժուարաւ որ ինչս ունիցին մտա-
նիցեն յարքայութիւն Աստուծոյ:
25 Դիւրագոյն իցէ մալխոյ ընդ ծակ աս-
ղան անցանել, քան մեծատան յար-

քայութիւն Աստուծոյ մտանել։

Եւ որ լուանն ասէին, և ո՞ կարիցէ ապրել։ 26

Եւ նա ասէ, անհնարինք առ 'ի մարդկանէ՝ հնարաւորք են յԱստուծոյ։ 27

Եւ ասէ Պետրոս. ահաւասիկ մեք թողաք զամենայն ինչ զմեր և եկաք զկնի քո։ 28

Եւ նա ասէ ցնոսա. ամէն ասեմ ձեզ, եթէ ոչ ոք է որ եթող զտունս կամ զծնողս կամ զեղբարս կամ զկին կամ զորդիս վասն արքայութեան Աստուծոյ, 29

Եթէ ոչ առնուցու բազմապատիկ 'ի ժամանակի յայսմիկ, և յաշխարհին որ գալոցն է՝ զկեանսն յաւիտենականս ժառանգեսցէ։ 30

Եւ առեալ զերկոտասանսն առանձինն՝ ասէ ցնոսա. ահաւասիկ ելանեմք յԵրուսաղէմ, և կատարեսցին ամենայն գրեալքն մարգարէիւք վասն որդւոյ մարդոյ։ 31

Զի մատնեսցի հեթանոսաց և կատակեսցի։ 32

Եւ հարկանիցեն և սպանանիցեն զնա, և յերիր աւուր յարիցէ։ 33

Եւ նոքա ոչ ինչ իմացան յայնցանէ, այլ էր բանն ծածկեալ 'ի նոցանէ. և ոչ գիտէին զասացեալսն։ 34

35 Եւ եղեւ 'ի մօտենալն նորա յԵրիքով, կոյր Ձէ
մի նստէր առ ճանապարհաւն մու-
րացիկ։
36 Իբրեւ լուաւ զանցանել ժողովրդեան,
հարցանէր թէ զի՞նչ իցէ այն։
37 Եւ պատմեցին նմա թէ Յիսուս Նա-
զովրեցի անցանէ։
38 Աղաղակեաց եւ ասէ. Յիսուս որդի
Դաւթի, ողորմեա ինձ։
39 Եւ որ առաջին երթային՝ սաստէին նմա
զի լռեսցէ. եւ նա եւս առաւել աղաղա-
կէր, որդի Դաւթի՝ ողորմեա ինձ։
40 Զտեղի առ Յիսուս եւ հրամայեաց ա-
ծել զնա առ իւր. եւ իբրեւ մերձ եղեւ առ
նա, եհարց զնա եւ ասէ.
41 Զի՞նչ կամիս դու զի արարից քեզ. եւ
նա ասէ. տէր, զի բացցին աչք իմ եւ
տեսից։
42 Եւ Յիսուս ասէ ցնա. հայեաց, հաւատք
քո կեցուցին զքեզ։
43 Եւ առժամայն ետես, երթայր զհետ
նորա եւ փառաւոր առնէր զԱստուած. եւ
ամենայն ժողովրդեանն տեսեալ՝ տային
օրհնութիւն Աստուծոյ։

ԳԼ. ԺԹ

1 Եւ մտեալ շրջէր ընդ Երիքով։
2 Եւ ահա այր մի անուն կոչեցեալ Զա-

քէոս, և նա էր մաքսապետ և ինքն մե-
ծատուն։
Եւ խնդրէր տեսանել եթէ ո՛վ իցէ Յի- 3
սուս, և ոչ կարէր ՚ի բազմութենէն՝ զի
կարճ էր հասակաւ։
Եւ ընթացեալ յառաջս՝ ել ՚ի ժան- 4
տաթզենին զի տեսանիցէ զնա, քանզի
ընդ այն իսկ անցանելոց էր։
Իբրև եկն ՚ի տեղին, հայեցաւ ՚ի վեր 5
Յիսուս և ասէ ցնա. Զակքէ, փութա
էջ այտի, զի այսօր ՚ի տան քում արժան
է ինձ օթևանել։
Փութացաւ և էջ և ընկալաւ զնա ուրա- 6
խութեամբ։
Իբրև տեսին ամենեքին, տրտնջէին և 7
ասէին՝ թէ առ առն մեղաւորի եմուտ
լուծանել։
Եկն եկաց Զակքէոս և ասէ ցտէր. տէր 8
ահա զկէս ընչից իմոց տաց աղքատաց.
և եթէ զոք զրկեցի, հատուցից չո-
րեքկին։
Եւ ասէ ցնա Յիսուս. այսօր եղև փրր- 9
կութիւն տանս այսմիկ. քանզի և սա
որդի Աբրահամու է։
Զի եկն որդի մարդոյ խնդրել և կեցու- 10
ցանել զկորուսեալն։
Եւ մինչդեռ նոքա զայն լսէին, յաւել 11
առակ մի և ասէ, վասն մերձենալոյ նո-

րա յԵրուսաղէմ, եւ համարելոյ նոցա
եթէ առժամայն յայտնելոց է արքայու-
թիւն Աստուծոյ:
12 Ասէ. այր ոմն ազնուական գնաց յաշ-
խարհ հեռի առնուլ իւր թագաւորու-
թիւն եւ դառնալ:
13 Եւ կոչեցեալ զծառայս իւր՝ ետ նոցա
տասն մնաս. եւ ասէ ցնոսա. յարգեցէք
զայդ մինչեւ եկից:
14 Եւ քաղաքացիքն նորա ատէին զնա,
առաքեցին հրեշտակս զկնի նորա եւ ա-
սեն, թէ ոչ կամիմք թագաւորել դմա
'ի վերայ մեր:
15 Եւ եղեւ դառնալ նմա առեալ զթագա-
ւորութիւնն, եւ կոչեալ զծառայսն որոց
տուեալ էր զարծաթն, զի գիտասցէ թէ
ո՛ զինչ շահեցաւ:
16 Եկն առաջինն եւ ասէ. տէր, մնասն քո՝
տասն մնաս արար:
17 Եւ ասէ ցնա. ազնիւ ծառայ եւ բարի,
զի 'ի փոքու հաւատարիմ եղեր, լիջիր
իշխանութիւն ունել 'ի վերայ տասն
քաղաքի:
18 Եկն երկրորդն եւ ասէ. մնասն քո արար
հինգ մնաս:
19 Ասէ եւ ցնա. եւ դու լիջիր 'ի վերայ հինգ
քաղաքաց:
20 Եկն միւսն եւ ասէ. տէր, ահա մնասն

քո զոր ունէի ծրարեալ 'ի վարշամակի։
Երկնչէի 'ի քէն, զի այր ստամբակ ես. 21
բառնաս զոր ոչ եդիր, և հնձես զոր ոչ
սերմանեցեր։
Եւ ասէ ցնա. 'ի բերանոյ քումմէ դա- 22
տեցայց զքեզ ծառայ անհաւատ. գի-
տէիր թէ ես այր մի ստամբակ եմ,
բառնամ զոր ոչ եդի, և հնձեմ ուր ոչ
սերմանեցի։
Եւ ընդէ՞ր ոչ ետուր զարծաթն իմ 'ի 23
սեղանաւորս, և եկեալ ես տոկոսեօք
պահանջէի։
Եւ ասէ ցսպասաւորսն. առէք 'ի դմանէ 24
զմնասն, և տարայք տուք այնմ որ ունիցի
զտասն մնասն։
Եւ ասեն ցնա. տէր, ունի տասն մնաս։ 25
Ասեմ ձեզ, եթէ ամենայնի որ ունիցի՝ 26
տացի, և յայնմանէ որ ոչն ունիցի՝ և
զոր ունիցին բարձցի 'ի նմանէ։
Բայց զթշնամիսն իմ զայնոսիկ, որ ոչն 27
կամէին զիս թագաւորել 'ի վերայ նո-
ցա, ածէք այսր և սպանէք առաջի իմ։
Եւ իբրև զայս ասաց, գնաց յառաջ ե- 28
լանել յԵրուսաղէմ։
ԻԿ Եւ եղև իբրև մերձեցաւ 'ի Բեթփագէ 29
և 'ի Բեթանիա, մօտ 'ի լեառն որ կոչի
Ձիթենեաց, առաքեաց երկուս յաշա-
կերտացն իւրոց և ասէ.

30 Երթայք դուք 'ի գեօղն որ հանդէպ
մեր կայ, յոր իբրև մտանիցէք՝ գտանիցէք
յաւանակ կապեալ, յորում ոք 'ի մարդ-
կանէ երբէք ոչ նստաւ. լուծէք զնա և
ածէք:
31 Եւ եթէ ոք հարցանիցէ զձեզ թէ ընդ-
է՞ր լուծանէք, այսպէս ասասջի՛ք ցնա թէ
տեառն խրում պիտոյ է:
32 Իբրև չոգան որ առաքեցանն, գտին որ-
պէս ասացն ցնոսա, կայր յաւանակն:
33 Եւ մինչդեռ լուծանէին զյաւանակն,
ասեն տեարքն նորա ցնոսա. զի՞ լուծա-
նէք զյաւանակդ:
34 Եւ նոքա ասեն. տ̃ն խրում պիտոյ է:
35 Եւ ածին զնա առ Յիսուս. և արկին
զնովաւ հանդերձս և հեծուցին զՅ̃ս:
36 Եւ մինչդեռ երթայր, զհանդերձս իւ-
րեանց տարածանէին զճանապարհաւն:
37 Եւ իբրև այն ինչ մերձ եղև 'ի զառ 'ի
վայր լերինն Ձիթենեաց, սկսաւ ամե-
նայն բազմութիւն աշակերտացն ուրա-
խութ̃բ օրհնել զԱ̃ծ 'ի ձայն մեծ վասն
ա̃մ եղելոց զօրութեանցն զոր տեսին:
38 Եւ ասէին, օրհնեալ որ գայ թագաւորդ
յանուն տեառն. խաղաղութիւն յեր-
կինս և փառք 'ի բարձունս:
39 Եւ ոմանք 'ի Փարիսեցւոցն յամբոխէ
անտի ասեն ցնա, վարդապետ սաստեա

աշակերտացդ քոց։
Պատասխանի ետ եւ ասէ. ասեմ ձեզ, 40
զի եւ թէ դոքա լռեսցեն, քարինքդ աղա-
ղակեսցեն։
Եւ իբրեւ մերձեցաւ, տեսեալ զքաղաքն 41
ելաց ՚ի վերայ նորա եւ ասէ.
Եթէ գիտէիր դու գոնէ յաւուրս յայս- 42
միկ զխաղաղութիւնն քո, բայց այժմ
ծածկեցաւ յերեսաց քոց։
Զի եկեսցեն աւուրք ՚ի վերայ քո եւ 43
պատեսցեն զքեւ թշնամիք քո պատնէշ.
եւ պաշարեսցեն զքեզ եւ նեղեսցեն զքեզ
յամենայն կողմանց։
Եւ յատակեսցեն զքեզ եւ զորդիս քո 44
՚ի քեզ, եւ ոչ թողուցուն քար ՚ի քարի
վերայ յամենայնի ՚ի քեզ. փոխանակ
զի ոչ ծանեար զժամանակ այցելու-
թեան քո։
Եւ մտեալ ՚ի տաճարն՝ սկսաւ հանել 45
զաղաւնեվաճառսն եւ զգնողս, եւ զսե-
ղանս հատավաճառացն ցրուեաց։
Եւ ասէ ցնոսա. գրեալ է, եւ եղիցի տուն 46
իմ տուն աղօթից, եւ դուք արարէք զդա
այրս աւազակաց։
Եւ ուսուցանէր զնոսա հանապազ ՚ի տա- 47
ճարին. իսկ քահանայապետք եւ դպիրք
եւ գլխաւորք ժողովրդեանն խնդրէին
զնա կորուսանել։

48 Եւ ոչ գտանէին թէ զինչ արասցեն, զի
ժողովուրդն ամենայն կախեալ կային
զնմանէ 'ի լսել:

ԳԼ. Ի

1 Եւ եղեւ 'ի միում աւուրցն յայնցանէ, ԷԲ
մինչդեռ ուսուցանէր զժողովուրդն 'ի
տաճարի անդ եւ աւետարանէր, հասին
'ի վերայ քահանայապետքն եւ դպիրք
ծերովքն հանդերձ:
2 Եւ ասեն ցնա. ասա մեզ, որո՞վ իշխա-
նութեամբ գործես դու զայդ, կամ ո՞վ է
որ ետ քեզ զայդ իշխանութիւն:
3 Պատասխանի ետ եւ ասէ ցնոսա. հար-
ցից եւ ես զձեզ բան մի եւ ասացէք ինձ:
4 Մկրտութիւնն Յովհաննու յերկնի՞ց
էր եթէ 'ի մարդկանէ:
5 Եւ նոքա խորհեցան 'ի միտս իւրեանց
եւ ասեն.
6 Եթէ ասեմք յերկնից, ասէ. իսկ ընդ-
է՞ր ոչ հաւատացէք նմա. եւ եթէ ասեմք
'ի մարդկանէ, ամենայն ժողովուրդն
քարկոծ առնեն զմեզ. զի հաստատեալ
է 'ի միտս զՅովհաննէ թէ մարգարէ է:
7 Եւ պատասխանի ետուն չգիտել թէ
ուստի՞ իցէ:
8 Եւ Յս ասէ ցնոսա. եւ ոչ ես ասեմ ձեզ
որով իշխանութեամբ առնեմ զայս:

ԷԳ Ապա առեալ առ ժողովուրդն զառակս 9
զայս. այր ոմն տնկեաց այգի և ետ զնա
մշակաց, և ինքն գնաց 'ի ճանապարհ
ժամանակս բազումս:
Եւ 'ի ժամու առաքեաց առ մշակսն ծա- 10
ռայ, զի 'ի պտղոյ այգւոյն տացեն նմա.
և մշակքն գան հարին զնա և արձակե-
ցին ունայն:
Եւ յաւել միւս ևս ծառայ յղել. նոքա 11
և զնա ևս գան հարին՝ անարգեցին, և
առաքեցին ունայն:
Եւ յաւել զերրորդն առաքել. նոքա և 12
զնա վիրաւորեցին և հանին արտաքս:
Ասէ տէր այգւոյն. զի՞նչ արարից, առա- 13
քեցից զորդի իմ սիրելի, թերևս 'ի սմա-
նէ պատկառեսցեն:
Իբրև տեսին զնա մշակքն, խորհեցան 14
ընդ միմեանս և ասեն. սա է ժառանգն,
սպանցուք զսա զի մեր լինիցի ժառան-
գութիւնն:
Եւ հանին զնա արտաքս քան զայգին և 15
սպանին. արդ զի՞նչ արասցէ ընդ նոսա
տէր այգւոյն:
Ո՞չ ապաքէն գայցէ և կորուսանիցէ 16
զմշակսն զայնոսիկ, և տացէ զայգին այ-
լոց. իբրև լուան, ասեն. քաւ՝ մի՛ լիցի:
Եւ նա հայեցեալ ընդ նոսա ասէ, իսկ 17
զի՞նչ իցէ այն որ գրեալն է, թէ զվէմ

զոր անարգեցին շինողքն, նա եղեւ գըլ-
լուխ անկեան։
18 Ամենայն որ ընդ-հարցի ընդ վէմն ընդ-
այս՝ խորտակեսցի, եւ յորոյ վերայ անկ-
ցի՝ հոսեսցէ զնա։
19 Եւ խնդրէին դպիրքն եւ քահանայա-
պետք արկանել 'ի նա ձեռս 'ի նմին ժա-
մու, եւ երկեան 'ի ժողովրդենէն. զի
գիտացին թէ առ նոսա ասաց զառակն
զայն։
20 Եւ ապա սպասեցին, եւ առաքեցին դա-
ւաճանս կեղծաւորեալս զանձինս առ-
արդարս ունել. զի ըմբռնեսցեն զնա բա-
նիւք, առ 'ի մատնել զնա պետութեան
եւ իշխանութեան դատաւորին։
21 Հարցին զնա եւ ասեն. վարդապետ, գի-
տեմք եթէ ուղիղ խօսիս եւ ուսուցանես,
եւ ոչ առնուս ակն՝ այլ ճշմարտութեամբ
զճանապարհն Աստուծոյ ուսուցանես։
22 Արժա՞ն է մեզ կայսեր հարկս տալ
թէ ոչ։
23 Եւ նայեցեալ ընդ խորամանկութիւն
նոցա ասէ ցնոսա.
24 Ցուցէք ինձ զդահեկանն. եւ նոքա ցու-
ցին. եւ ասէ, զո՞յր պատկեր եւ զգիր
ունի. պատասխանի ետուն եւ ասեն,
զկայսեր։
25 Եւ նա ասէ ցնոսա. արդ երթայք տուք

զկայսերն կայսեր, և զԱստուծոյն Աս-
տուծոյ:
Եւ ոչ կարացին զնա ըմբռնել բանիւք 26
առաջի ժողովրդեանն. և զարմացեալ
ընդ պատասխանին նորա՝ լռեցին:
ԷԳ Մատուցեալ ոմանք 'ի Սադուկեցւոցն, 27
որք հակառակէին չլինել յարութեան,
հարցին զնա,
Եւ ասեն. վարդապետ, Մովսէս գրեաց 28
մեզ, եթէ ուրուք եղբայր մեռանիցի,
որոյ իցէ կին և անորդի իցէ, զի առնու-
ցու եղբայր նորա զկինն և յարուցէ
զաւակ եղբօր իւրում:
Արդ եօթն եղբարք էին, և առաջնոյն 29
առեալ կին՝ մեռաւ անորդի:
Առ զնա և երկրորդն, մեռաւ և նա ան- 30
որդի:
Առ զնա և երրորդն. նոյնպէս և եօթա- 31
նեքին. և ոչ թողին որդիս:
Մեռաւ և կինն: 32
Արդ 'ի յարութեան ում 'ի նոցանէ լինի- 33
ցի կին. զի եօթանեքին կալան զնա կին:
Պատասխանի ետ նոցա Յիսուս և ասէ. 34
որդիք աշխարհիս այսորիկ կանայս առ-
նեն և արանց լինին:
Իսկ որ արժանի լինիցին այնմ աշխարհի 35
հասանել և յարութեանն որ 'ի մեռելոց,
ոչ կանայս առնեն և ոչ արանց լինին:

36 Քանզի և ոչ մեռանել ևս կարեն, զի
հաւասար հրեշտակաց են և որդիք Աս-
տուծոյ․ քանզի յարութեան որդիք են։
37 Այլ զի յառնեն մեռեալք և Մովսէս
գուշակեաց 'ի մորենւոջն, որպէս ասէ
զտեառնէ ԱԾ Աբրահամու և զԱստուծոյ
Սահակայ և զԱստուծոյ Յակոբայ։
38 Եւ Աստուած չէ մեռելոց՝ այլ կենդա-
նեաց, զի ամենեքին նմա կենդանի են։
39 Պատասխանի ետուն ոմանք 'ի դպրացն
և ասեն․ վարդապետ, բարւոք ասացեր։
40 Եւ ոչ ևս ոք իշխէր հարցանել զնա և
ոչ ինչ։
41 Ասէ և առ նոսա․ զիա՞րդ ասեն զՔրիս- ԻԵ
տոսէ թէ որդի է Դաւթի։
42 Զի ինքն Դաւիթ ասէ 'ի գիրս սաղմո-
սաց․ ասաց տէր ցտէր իմ, նիստ ընդ աջ-
մէ իմմէ,
43 Մինչև եդից զթշնամիս քո պատուան-
դան ոտից քոց։
44 Իսկ արդ եթէ Դաւիթ զնա տէր կոչէ,
զիա՞րդ որդի նորա իցէ։
45 Եւ լու 'ի լու ամենայն ժողովրդեանն
ասէ ցաշակերտսն․
46 Զգոյշ լերուք 'ի դպրացն որ կամին
պատմուճանօք շրջել, և սիրեն ողջոյնս
'ի հրապարակս և զնախաթոռս 'ի ժո-
ղովուրդս և զբարձերէցս յընթրիս։

Որ ուտեն զտունս այրեաց, և պատճառ- 47
անօք յերկարեն զաղօթս. նոքա ըն-
կալցին աւելի դատաստանս։

ԳԼ. ԻԱ.

Եւ հայեցեալ ետես զմեծատունսն որ 1
արկանէին զտուրս իւրեանց ՚ի գանձա-
նակն։
Ետես և զկին ոմն այրի աղքատ, որ արկ 2
անդր երկուս լումայս։
Եւ ասէ. արդարև ասեմ ձեզ, զի այ- 3
րին այն աղքատ աւելի արկ քան զա-
մենեսին։
Ամենեքին նոքա ՚ի մթերից իւրեանց 4
արկին յընծայսն Աստուծոյ. բայց նա ՚ի
կարօտութենէ իւրմէ զամենայն զկեանս
իւր զոր ունէր՝ արկ։
ԻԶ Եւ յասել ոմանց զտաճարէն թէ գեղե- 5
ցիկ վիմօք և աշտարակօք զարդարեալ
է, ասէ.
Զայդ ամենայն զոր տեսանէք, եկեսցեն 6
աւուրք յորս ոչ թողցի այդր քար ՚ի
քարի վերայ որ ոչ քակտեսցի։
Հարցին ցնա և ասեն. վարդապետ, Ե՞րբ 7
լինիցի այդ և զի՞նչ նշան իցէ յորժամ
այդ լինելոց իցէ։
Եւ նա ասէ. զգոյշ կացէք, մի՛ խաբի- 8
ցիք. զի բազումք գայցեն յանուն իմ

և ասիցեն թէ ես եմ. և մերձեցաւ
ժամանակ, մի՛ երթայցէք զկնի նոցա։
9 Եւ յորժամ լսիցէք պատերազմունս և
խռովութիւնս մի՛ զարհուրիցիք, զի
պարտ է նախ այնմ լինել. այլ ոչ առժա֊
մայն կատարած։
10 Յայնժամ ասէ ցնոսա. յարիցէ ազգ
յազգի վերայ և թագաւորութիւն 'ի
թագաւորութեան վերայ։
11 Եւ շարժմունք մեծամեծք, և 'ի տեղիս
տեղիս սովք և սրածութիք, եղիցին ար֊
հաւիրք և նշանք մեծամեծք յերկնից։
12 Բայց յառաջ քան զայս ա՟մ, մխեսցեն
զձեռս իւրեանց 'ի ձեզ և հալածեսցեն.
մատնեսցեն 'ի ժողովուրդս և 'ի բանտս,
և տանիցին առաջի դատաւորաց և թա֊
գաւորաց վասն անուան իմոյ։
13 Եւ լինիցի ձեզ այն 'ի վկայութիւն։
14 Արդ դիք 'ի սիրտս ձեր՝ մի՛ յառաջա֊
գոյն կրթել տալոյ պատասխանի։
15 Զի ես տաց ձեզ բերան և իմաստու֊
թիւն, որում ոչ կարիցեն կալ հակա֊
ռակ՝ կամ տալ պատասխանի ամենայն
հակառակորդքն ձեր։
16 Մատնեսջիք և 'ի ծնողաց և յեղբարց
և յազգականաց և 'ի բարեկամաց, և
սպանանիցեն 'ի ձէնջ։
17 Եւ եղիջիք ատեցեալք յամենեցունց

վասն անուան իմոյ:
Եւ մազ մի 'ի գլխոյ ձերմէ ոչ կորիցէ. 18
Եւ համբերութեամբ ձերով ստասջիք 19
զոգիս ձեր:
Այլ յորժամ տեսանիցէք շուրջ պա- 20
տեալ զօրօք զԵրուսաղէմ, յայնժամ
գիտասջիք թէ մերձ է աւեր նորա:
Յայնժամ որ 'ի Հրէաստանի իցեն՝ փա- 21
խիցեն 'ի լերինս, եւ որ 'ի մէջ նորա ի-
ցեն՝ խուսեսցեն, եւ որ 'ի գաւառս ի-
ցեն՝ մի՛ մտցեն 'ի նա:
Զի աւուրք վրէժխնդրութեան են այ- 22
նոքիկ՝ առ 'ի կատարելոյ ա̃մ գրելոց:
Բայց վա՜յ իցէ յղեաց եւ ստնտուաց յա- 23
ւուրսն յայնոսիկ. զի եղիցի տագնապ
մեծ 'ի վերայ երկրի, եւ բարկութիւն
ժողովրդեանն այնմիկ:
Եւ անկցին 'ի սուր սուսերի, եւ գերեսցին 24
յամենայն հեթանոսս. եւ Երուսաղէմ
եղիցի կոխան յազգաց՝ մինչեւ կատարես-
ցին ժամանակք հեթանոսաց:
Եւ եղիցին նշանք յարեգական եւ 'ի լու- 25
սին եւ յաստեղս. եւ յերկրի տագնապ
հեթանոսաց՝ յահեղ բարբառոյ իբրեւ
ծովու եւ խռովութեան:
Ցելանելոյ ոգւոց մարդկան յերկիւղէ 26
եւ 'ի կարծեաց եկելոց 'ի վերայ տիեզե-
րաց. զի զօրութիւնք երկնից շարժեսցին:

27 Եւ յայնժամ տեսցեն զորդի մարդոյ՝ ե-
կեալ ամպովք զօրութեամբ և փառօք
բազմօք։
28 Եւ յորժամ սկսանիցի այս լինել, ամ-
բարձջիք և բարձրացուսջիք զգլուխս
ձեր. զի մերձ է փրկութիւն ձեր։
29 Եւ ասաց առակ մի նոցա. տեսէք զթզե-
նիդ և զամենայն ծառ։
30 Յորժամ ցուցանիցեն զպտուղ իւրեանց,
տեսանէք և 'ի նոցանէ ճանաչէք եթէ
մերձ է ամառն։
31 Նոյնպէս և դուք յորժամ տեսանիցէք
զայս ամենայն եղեալ, գիտասջիք թէ
մերձ է արքայութիւնն Աստուծոյ։
32 Ամէն ասեմ ձեզ, թէ ոչ անցցէ ազգս
այս, մինչև այս ամենայն լինիցի։
33 Երկինք և երկիր անցցեն, և բանք իմ
ոչ անցանիցեն։
34 Զգոյշ լերուք անձանց, գուցէ ծանրա-
նայցեն սիրտք ձեր շուայտութեամբ և
արբեցութեամբ և հոգովք աշխարհա-
կանօք, և յանկարծակի հասանիցէ 'ի
վերայ ձեր օրն այն։
35 Զի իբրև զորոգայթ հասանիցէ 'ի վե-
րայ ամենեցուն, որ բնակեալ են ընդ ա-
մենայն երեսս երկրի։
36 Արթուն կացէք այսուհետև, յամե-
նայն ժամ աղօթս արարէք. զի արժա-

նի լինիջիք զերծանել յայնմ յամենայ-
նէ որ լինելոց է, և կալ առաջի որդւոյ
մարդոյ։
Եւ 'ի տուէ 'ի տաճարին ուսուցանէր և 37
զգիշերս ելեալ ագանէր 'ի լերինն որ կո-
չէր Ձիթենեաց։
Եւ ամենայն ժողովուրդն կանխէր ընդ 38
առաւօտս առ նա 'ի տաճարն՝ լսել 'ի
նմանէ։

ԳԼ. ԻԲ

ԻԷ Մերձեցաւ տօն բաղարջակերացն որ 1
կոչէր Պասքա։
Եւ խնդրէին քահանայապետքն և դը- 2
պիրք թէ որպէս սպանանիցեն զնա·
բայց երկնչէին 'ի ժողովրդենէ անտի։
Ապա եմուտ սատանայ 'ի Յուդա 'ի կո- 3
չեցեալն Իսկարիովտացի, որ էր 'ի
թուոյ երկոտասանիցն։
Զոգաւ եդ բանս ընդ քահանայապետ- 4
սըն և ընդ դպիրս և ընդ իշխանս ժողո-
վրդեանն, զի մատնեսցէ զնա նոցա։
Եւ խնդացին և խոստացան տալ նմա 5
արծաթ։
Եւ յանձն առ, և խնդրէր պարապ մատ- 6
նել զնա նոցա՝ մեկուսի յամբոխէն։
Եկն օր բաղարջակերացն, յորում օրէն 7
էր զենուլ զպասեքն։

8 Եւ առաքեաց զՊետրոս և զՅովհաննէս
և ասէ. երթայք պատրաստեցէք մեզ
զպասեքն զի կերիցուք։
9 Եւ նոքա ասեն. ուր կամիս զի պատրաս-
տեսցուք։
10 Եւ ասէ ցնոսա. ահա իբրև մտանիցէք
'ի քաղաքն, պատահեսցէ ձեզ այր մի
բարձեալ սափոր ջրոյ. երթիջիք զհետ
նորա 'ի տունն՝ յոր մտանիցէ։
11 Եւ ասասջիք ցտանուտէր տանն. վար-
դապետ ասէ քեզ, ուր են վանքն իմ՝
յորում զպասեքն ուտիցեմ աշակերտօքս
հանդերձ։
12 Եւ նա ցուցցէ ձեզ վերնատուն մի մեծ
զարդարեալ, և անդ պատրաստեսջիք։
13 Եւ գնացեալ գտին որպէս և ասացն նո-
ցա, և պատրաստեցին զպասեքն։
14 Եւ իբրև ժամ եղև՝ բազմեցաւ, և եր-
կոտասան առաքեալքն ընդ նմա։
15 Եւ ասէ ցնոսա. ցանկանալով ցանկա-
ցայ զայս պասեք ուտել ընդ ձեզ մինչ չև
չարչարեալ իցեմ։
16 Բայց ասեմ ձեզ, թէ ոչ ևս կերայց 'ի
սմանէ՝ մինչև լցցի յարքայութեան Աս-
տուծոյ։
17 Եւ ընկալեալ բաժակ գոհացաւ և ասէ.
առէք զայդ և բաժանեցէք 'ի ձեզ։
18 Ասեմ ձեզ, թէ յայսմ հետէ ոչ արբից

'ի բերոյ որթոյ՝ մինչև եկեսցէ արքայու-
թիւն Աստուծոյ։

Եւ առեալ հաց գոհացաւ եբեկ և ետ 19
նոցա՝ և ասէ. այս է մարմին իմ, որ
վասն բազմաց տուեալ. զայս արասջիք
առ իմոյ յիշատակի։

Նոյնպէս և զբաժակն յետ ընթրեացն 20
առ և ասէ. այս բաժակ է նոր ուխտ ի-
մով արեամբ վասն ձեր հեղլոյ։

Բայց աւասիկ ձեռն մատնչի իմոյ ընդ 21
իս 'ի սեղանս։

Եւ որդի մարդոյ ըստ սահմանելոյն եր- 22
թայ, բայց վա՜յ մարդոյն այնմիկ յոյր
ձեռն մատնիցի։

Եւ նոքա սկսան խնդրել ընդ միմեանս, 23
թէ ո՞վ է 'ի նոցանէ որ զայն գործելոց
իցէ։

Եւ եղև հակառակութիւն 'ի մէջ նոցա, 24
թէ ո՛ ի նոցանէ համարիցի մեծ։

Եւ նա ասէ ցնոսա. թագաւորք ազգաց 25
տիրեն նոցա, և որ իշխենն նոցա՝ բա-
րերարք կոչին։

Այլ դուք ոչ այնպէս. այլ որ մեծն է 'ի 26
ձեզ՝ եղիցի իբրև զկրտսերն, և առաջ-
նորդն իբրև զսպասաւորն։

Ո՞վ է մեծ, բազմեա՞լն եթէ սպասա- 27
ւորն. ո՞չ ապաքէն բազմեալն. բայց ես
եմ 'ի միջի ձերում իբրև սպասաւոր։

28 Եւ դուք էք՝ որ ցանդ կայիք ընդ իս 'ի
փորձութիւնս իմ։
29 Եւ ես ուխտեմ ձեզ՝ որպէս և հայր իմ
ուխտեաց ինձ զարքայութիւն։
30 Զի ուտիցէք և ըմպիցէք 'ի սեղան իմ
յարքայութեանն իմում, և նստիցիք
յերկոտասան աթոռ՝ դատել զերկոտա-
սան ազգ Իսրայէլի։ ՎԵՐՋ
31 Եւ ասէ տէր. Սիմոն Սիմոն, ահա սա-
տանայ խնդրեաց զձեզ խարբալել իբրև
զցորեան։
32 Այլ ես աղաչեցի վասն քո զի մի պա-
կասեսցէ հաւատք քո, և դու երբեմն
դարձցիս և հաստատեսցես զեղբարս քո։
33 Եւ նա ասէ ցնա. տէր, ընդ քեզ պա-
տրաստ եմ և 'ի բանտ և 'ի մահ երթալ։
34 Եւ նա ասէ ցնա. ասեմ քեզ Պետրէ,
չիցէ այսօր հաւու խօսեալ՝ մինչև երիցս
ուրասցիս զիս չգիտել։
35 Եւ ասէ ցնոսա. յորժամ առաքեցի ըզ-
ձեզ առանց քսակի և մախաղի և կօշ-
կաց, միթէ կարօտացա՞յք իմիք։
36 Եւ նոքա ասեն, և ոչ իմիք. ապա ասէ,
այլ այժմ որ ունիցի քսակ՝ բարձցէ,
նոյնպէս և մախաղ. և որ ոչն ունիցի,
վաճառեսցէ զձորձս իւր և գնեսցէ իւր
սուսեր։
37 Բայց ասեմ ձեզ, զի այս ևս որ գրեալ

է՝ պարտ է զի կատարեսցի յիս, թէ ընդ
անօրէնս համարեցաւ. զի որ վասն իմ
ինչ է՝ վճարեալ է:

Եւ նոքա ասեն. տէր ահաւասիկ են 38
աստ երկու սուրք. և նա ասէ ցնոսա,
բաւական են:

Եւ ելեալ գնաց ըստ սովորութեանն 'ի 39
լեառն Ձիթենեաց. գնացին զհետ նորա
և աշակերտքն:

Իբրև եհաս 'ի տեղին՝ ասէ ցնոսա. յա- 40
ղօթս կացէք չմտանել 'ի փորձութիւն:

Եւ ինքն մեկնեցաւ 'ի նոցանէ իբրև 41
քարընկէց մի, եդ ծունր կայր յաղօթս,

Եւ ասէր. հայր, եթէ կամիս՝ անցո ըզ- 42
բաժակս զայս յինէն. բայց ոչ իմ կամք՝
այլ քոյդ լիցին:

Եւ երևեցաւ նմա հրեշտակ յերկնից և 43
զօրացուցանէր զնա. և էր 'ի տագնապի,
և մտադիւրութեամբ ևս կայր յաղօթս:

Եւ հոսէին 'ի նմանէ՝ քրտունք իբրև 44
զկայլակս արեան՝ ոլոռն ոլոռն, հեղեալ
յերկիր:

Եւ յարուցեալ յաղօթիցն՝ եկն առ ա- 45
շակերտսն, եգիտ զնոսա 'ի քուն 'ի
տրտմութենէն:

Եւ ասէ ցնոսա. զի՞ ննջէք, արիք կա- 46
ցէք յաղօթս, զի մի՛ մտանիցէք 'ի փոր-
ձութիւն:

47 Եւ մինչդեռ խօսէր, ահաւասիկ ամ-
բոխ. և որ կոչէրն Յուդա՝ մի յերկոտա-
սանիցն՝ առաջնորդէր նոցա. իբրև մեր-
ձեցաւ առ Յիսուս՝ համբուրեաց զնա.
քանզի զայն նշան տուեալ էր նոցա, թէ
ընդ որում ես համբուրեցից, նա է՝ զնա
ունիցիք:

48 Ասէ ցնա Յիսուս. Յուդա, համբուրե-
լո՞վ մատնես զորդի մարդոյ:

49 Իբրև տեսին որ զնովաւն էին՝ որ ինչ
եղեն, ասեն ցնա. տէր, հարցուք զնոսա
սրով:

50 Եւ եհար մի ոմն ՚ի նոցանէ զքահանայա-
պետին ծառայ, և ՚ի բաց եհան զաջոյ
ունկն նորա:

51 Պատասխանի ետ Յիսուս և ասէ, թոյլ
տուք մինչև ցայդ վայր. և մատուցեալ
յունկնն՝ բժշկեաց զնա:

52 Եւ ասէ ցեկեալսն ՚ի վերայ նորա՝ ցքա-
հանայապետսն և ցիշխանս տաճարին և
ցծերս. իբրև ՚ի վերայ աւազակի ելիք
սուսերօք և բրօք:

53 Հանապազ ընդ ձեզ էի ՚ի տաճարին, և
ոչ ձգեցիք ձեռս յիս. այլ այս է ձեր
ժամ և իշխանութիւն խաւարի:

54 Եւ կալեալ զնա ածին և մուծին ՚ի տուն
քահանայապետին, և Պետրոս երթայր
զկնի նորա հեռագոյն:

Իբրեւ լուցին կրակ 'ի մէջ գաւթին եւ 55
նստան շուրջ, նստաւ եւ Պետրոս 'ի մէջ
նոցա։
Ետես զնա աղախին մի զի նստէր առ 56
լուսն, հայեցաւ ընդ նա եւ ասէ. եւ սա
ընդ նոսա էր՝ որ ընդ նմայն էին։
Իսկ Պետրոս ուրացաւ եւ ասէ. ոչ գի- 57
տեմ զնա կին դու։
Եւ յետ սակաւ միոյ այլ ոմն ետես ըզ- 58
նա եւ ասէ, եւ դու 'ի նոցանէ ես. եւ
Պետրոս ասէ. այր դու, չեմ 'ի նո-
ցանէ։
Եւ իբրեւ ժամ մի անց 'ի վերայ, այլ ոմն 59
վիճէր եւ ասէր. ստոյգ եւ սա ընդ նմա
էր, քանզի Գալիլեացի է։
Ասէ Պետրոս. այր դու, չգիտեմ զինչ 60
խօսիդ. եւ առժամայն մինչդեռ նա զայն
ասէր, խօսեցաւ հաւ։
Դարձաւ տէր եւ հայեցաւ 'ի Պետրոս, 61
եւ յիշեաց Պետրոս զբանն տեառն՝ զոր
ասաց ցնա. մինչ չեւ հաւու խօսեալ իցէ,
երիցս ուրասցիս՝ չգիտել զիս։
Եւ ելեալ արտաքս ելաց դառնապէս։ 62
Եւ արքն որ պահէին զնա՝ այպն առ- 63
նէին զնովաւ եւ հարկանէին։
Ծածկէին զերեսս նորա եւ տանջէին. 64
եւ հարցանէին ցնա եւ ասէին, մարգա-
րեաց, ո՞վ է որ եհարն զքեզ։

65 Եւ այլ բազում ինչ հայհոյութեամբ
խօսէին 'ի նա։
66 Եւ իբրեւ այգ եղեւ, ժողովեցաւ ծերա֊
կոյտ ժողովրդեանն՝ քահանայապետքն
և դպիրք, և հանին ածին զնա յատեանն
իւրեանց և ասեն, եթէ դու ես Քրիս֊
տոսն՝ ասա մեզ։
67 Ասէ ցնոսա. եթէ ասացից ձեզ, սակայն
ոչ հաւատայք
68 Եւ եթէ հարցից ինչ զձեզ, չտայք ինձ
պատասխանի կամ արձակիցէք։
69 Բայց յայսմ հետէ նստցի որդի մարդոյ
ընդ աջմէ զօրութեանն Աստուծոյ։
70 Եւ ասեն ամենեքեան. ուրեմն դո՞ւ ես
որդին Աստուծոյ. և նա ասէ ցնոսա,
դուք ասէք թէ ես եմ։
71 Եւ նոքա ասեն. զի՞նչ ևս պիտոյ է մեզ
վկայութիւն, զի մեզէն իսկ լուաք 'ի
բերանոյ դորա։

Գլ. ԻԳ

1 Եւ յարուցեալ ամենայն բազմութիւ֊
նքն նոցա, ածին զնա առ Պիղատոս։
2 Եւ սկսան չարախօս լինել զնմանէ և
ասել. գտաք զսա զի թիւրէր զազգս մեր,
և արգելոյր 'ի տալոյ հարկս կայսեր, և
ասէր զանձնէ եթէ Քրիստոսն իցէ
թագաւոր։

Իսկ Պիղատոս եհարց զնա և ասէ. դո՞ւ 3
ես Թագաւորն Հրէից. Նա պատասխա-
նի ետ նմա և ասէ. դու ասացեր:
Ասէ Պիղատոս ցքահանայապետսն և 4
ցժողովուրդսն. չգտանեմ ինչ վնաս
յառնս յայսմիկ:
Եւ նոքա պնդէին և ասէին, եթէ խռո- 5
վէ զժողովուրդս, ուսուցանէ ընդ ամե-
նայն Հրէաստան՝ սկսեալ ՚ի Գալիլեէ
մինչև ցայսր:
Իսկ Պիղատոս իբրև լուաւ զԳալիլեէ, 6
եհարց եթէ Գալիլեացի՞ իցէ այրն:
Եւ իբրև գիտաց թէ յիշխանութենէ 7
Հերովդի է, ետ տանել զնա առ Հե-
րովդէս. քանզի և նա յԵրուսաղէմ էր
յաւուրսն յայնոսիկ:
Եւ Հերովդէս իբրև ետես զՅ՟ս, ուրախ 8
եղև յոյժ. զի ցանկայր ՚ի բազում ժա-
մանակաց տեսանել զնա. քանզի լսէր
բազում անգամ զնմանէ, և ակն ունէր
նշան ինչ լեալ՝ տեսանել ՚ի նմանէ:
Հարցանէր զնա բանիւք բազմօք. և նա 9
ոչ ինչ ետ նմա պատասխանի:
Կային քահանայապետքն և դպիրքն՝ և 10
պնդագոյնս չարախօսէին զնմանէ:
Արհամարհեաց զնա և Հերովդէս հան- 11
դերձ իւրովք զօրականօքն. և այպն ա-
րարեալ՝ արկ զնովաւ հանդերձս սպի-

տակս, և ետ տանել անդրէն առ Պի-
ղատոս:
12 Եւ եղեն բարեկամք Պիղատոս և Հե-
րովդէս յաւուր յայնմիկ. քանզի յառաջ
թշնամիք էին միմեանց:
13 Կոչեաց Պիղատոս զքահանայապետսն և
զիշխանս և զժողովուրդն,
14 Եւ ասէ ցնոսա. ածիք մատուցիք ինձ
զայրս զայս իբրև զխոտորեցուցիչ ժողո-
վրդեանն. և ահաւասիկ առաջի ձեր դա-
տեցայ, և վնաս ինչ ոչ գտի յառնս յայ-
միկ՝ զորոյ դուք չարախօսէքդ զդմանէ:
15 Այլ և ոչ Հերովդէս, քանզի ետու տա-
նել զդա առ նա. և արդ ոչ ինչ՝ մահու
արժանի է գործեալ դորա:
16 Խրատեցից զդա և արձակեցից:
17 Զի հարկ էր մի մի ըստ տօնի արձակել
նոցա:
18 Եւ նոքա աղաղակէին ամենայն բազմու-
թեամբն և ասէին. բարձ զդա և արձա-
կեա մեզ զԲարաբբա:
19 Որ էր վասն խռովութեան իրիք եղելոյ
'ի քաղաքին և սպանութեան մտեալ 'ի
բանտ:
20 Դարձեալ Պիղատոս սկսաւ խօսել, քան-
զի կամէր արձակել զՅիսուս:
21 Եւ նոքա անդրէն աղաղակէին և ա-
սէին. 'ի խաչ հան զդա:

Եւ նա երիցս ասէ ցնոսա. զի՞նչ չար 22
արար սա. ոչ ինչ վնաս մահու գտի 'ի
սմա, խրատեցից զսա և արձակեցից:
Եւ նոքա ստիպէին մեծաձայն և խըն- 23
դրէին զնա 'ի խաչ հանել. և զօրանային
բարբառք նոցա և քահանայապետիցն:
Եւ Պիղատոս հաւանեցաւ առնել ըղ- 24
հայցուածս նոցա:
Արձակեաց նոցա զԲարաբբայն՝ զոր վն 25
խռովութեան և սպանութեան արկեալ
էր 'ի բանդ՝ զոր և խնդրէինն իսկ. և
զՅիսուս մատնեաց կամաց նոցա:
Իբրև առին գնացին զնա, ըմբռնեցին 26
զոմն Սիմոն Կիւրենացի՝ որ գայր յան-
դէ. եդին 'ի վերայ նորա զխաչն բերել
զկնի Յիսուսի:
Եւ երթայր զհետ նորա բազմութիւն 27
ժողովրդեանն, և կանանց որ կոծէին և
աշխարէին զնա:
Դարձաւ Յիսուս և ասէ ցնս. դստերք 28
Երուսաղեմի, մի՛ լայք 'ի վերայ իմ, այլ
լացէք 'ի վերայ անձանց և 'ի վերայ որ-
դւոց ձերոց:
Զի եկեսցեն աւուրք յորս ասիցեն թէ 29
երանի՛ ամլոց և որովայնից որ ոչ ծնան,
և ստեանց որ ոչ դիեցուցին:
Յայնժամ սկսանիցեն ասել լերանց թէ 30
անկերուք 'ի վերայ մեր, և բլրոց թէ

ծածկեցէք զմեզ։
31 Զի եթէ ընդ փայտ դալար զայս առ-
նեն, ընդ չորն զի՞նչ լինիցի։
32 Ածին և այլ երկուս չարագործս՝ սպա-
նանել ընդ նմա։
33 Իբրև չոգան 'ի տեղին՝ կոչեցեալ գա-
գաթն, անդ հանին զնա 'ի խաչ. և ըզ-
չարագործսն զոմն ընդ աջմէ և զոմն ընդ
ձախմէ խաչեցին։
34 Եւ Յիսուս ասէ. հայր, թող դոցա, զի
ոչ գիտեն զի՞նչ գործեն։ Եւ 'ի բաժա-
նել զհանդերձս նորա, արկին վիճակս։
35 Եւ կայր ժողովուրդն հայեցեալ. անգոս-
նէին զնա իշխանքն հանդերձ նոքօք և
ասէին. զայլս ապրեցոյց՝ ապրեցուսցէ և
զանձն եթէ դա է Քրիստոս որդի Աս-
տուծոյ ընտրեալն։
36 Այպն առնէին զնա և զինուորքն, եկեալ
առաջի՝ մատուցանէին նմա քացախ։
37 Եւ ասէին, եթէ դու ես թագաւորն
Հրէից՝ փրկեա զանձն քո։
38 Եւ էր գիր գրեալ 'ի վերայ նորա՝ յու-
նարէն և դաղմատերէն և եբրայեցերէն
գրով, եթէ սա է արքայն Հրէից։
39 Իսկ մի ոմն 'ի կախելոց չարագործացն
հայհոյէր զնա և ասէր. ո՞չ դու ես Քրիս-
տոսն, փրկեա զանձն քո և զմեզ։
40 Պատասխանի ետ ընկերն սաստելով

Նմա և ասէ. չերկնչիս դու յԱստուծոյ՛
զի 'ի նմին պատժի կաս:
Եւ մեք յիրաւի, զի արժանի՝ որոց գոր- 41
ծեցաքն առնումք զհատուցումն, և սա
ապիրատ ինչ ոչ գործեաց:
Եւ ասէ ցՅիսուս. յիշեա զիս տէր՝ յոր- 42
ժամ գայցես արքայութեամբ քով:
Եւ ասէ ցնա Յիսուս. ամէն ասեմ քեզ, 43
այսօր ընդ իս իցես 'ի դրախտին:
Եւ էր իբրև վեցերորդ ժամ, և խա- 44
ւար եղև 'ի վերայ ամենայն երկրի մին-
չև ցիններորդ ժամ. խաւարեցաւ ա-
րեգակն:
Եւ հերձաւ վարագոյր տաճարին ընդ 45
մէջ:
Եւ կարդաց Յիսուս 'ի ձայն մեծ և ասէ. 46
հայր, 'ի ձեռս քո աւանդեմ զհոգի իմ.
զայս իբրև ասաց, եհան զոգի:
Եւ տեսեալ հարիւրապետին զոր ինչ 47
եղեն, փառաւոր արար զԱստուած և
ասէ. արդարև այրս այս արդար էր:
Եւ ամենայն ժողովուրդք որ եկեալ 48
էին, և տեսանէին զտեսիլն զայն և ըդ-
գործ, բախէին զկուրծս և դառնային:
Կային և ամենայն ծանօթքն նորա 'ի 49
հեռաստանէ, և կանայք որ եկեալ էին
զհետ նորա 'ի Գալիլեէ՝ տեսանէին զայն:
Եւ ահա այր մի անուն Յովսէփ, որ էր 50

Նախարար՝ այր բարեգործ և արդար։
51 Սա չէր միաբանեալ ընդ խորհուրդս և
ընդ գործս նոցա․ յԱրիմաթեայ քա-
ղաքէ Հրէից, որ և ինքն իսկ ակն ունէր
արքայութեան Աստուծոյ։
52 Սա մատուցեալ առ Պիղատոս՝ խնդրեաց
զմարմինն Յիսուսի։
53 Եւ իջուցեալ զնա՝ պատեաց պաստառա-
կալաւ, և եդ 'ի կառածոյ գերեզմանին,
ուր չէր բնաւ զոք եդեալ։
54 Եւ օրն էր ուրբաթ, և շաբաթ լու-
սանայր։
55 Եւ երթային զհետ նորա կանայքն՝ որ
եկեալ էին ընդ նմա 'ի Գալիլեէ․ տեսին
զգերեզմանն, և ո՟պ եդաւ մարմինն նորա։
56 Դարձան և պատրաստեցին խունկս և
իւղս, և 'ի շաբաթուն հանդարտեցին
վասն պատուիրանին։

ԳԼ․ ԻԴ

1 Բայց 'ի միաշաբաթուն վաղ քաջ ընդ
առաւօտն եկին 'ի գերեզմանն․ բերին
զխունկսն զոր պատրաստեցին, և այլ
կանայք ընդ նոսա։
2 Եւ գտին զվէմն թաւալեցուցեալ 'ի
գերեզմանէ անտի։
3 Եւ մտեալ 'ի ներքս՝ ոչ գտին զմարմինն
տեառն Յիսուսի։

Եւ եղեւ ընդ հիանալն նոցա վասն այ- 4
նորիկ, և ահա արք երկու հասին առ
նոսա 'ի հանդերձս լուսաւորս:
Եւ իբրեւ զահի հարան և խոնարհե- 5
ցուցին զերեսս իւրեանց յերկիր, ասեն
ցնոսա. զի՞ խնդրէք զկենդանին ընդ մե-
ռեալս:
Չէ աստ, այլ յարեաւ. յիշեցէք որպէս 6
խօսեցաւ ընդ ձեզ մինչ էրն 'ի Գալիլիա.
Եւ ասէր թէ պարտ է որդւոյ մարդոյ 7
մատնիլ 'ի ձեռս մարդոց մեղաւորաց, և
'ի խաչ ելանել և յերրորդ աւուր
յառնել:
Եւ յիշեցին զբանսն նորա: 8
Եւ դարձան պատմեցին զայս ամենայն 9
մետասանիցն և այլոցն ամենեցուն:
Եւ էին Մարիամ Մագդաղենացի և 10
Յովհաննա և Մարիամ Յակովբայ, և
այլք ընդ նոսա որ պատմեցին զայս ա-
ռաքելոցն:
Եւ երեւեցան առաջի նոցա շաղփաղ- 11
փութիւն բանքն նոցա՝ և չհաւատային
նոցա:
Բայց Պետրոս յարուցեալ ընթացաւ 'ի 12
գերեզմանն, և հայեցեալ տեսանէ ըղ-
կտաւսն լոկ՝ զի կային. և գնաց ընդ միտս
զարմացեալ թէ զի՞նչ եղեւ:
Եւ ահա երկուք 'ի նոցանէ երթային 'ի 13

նմին աւուր 'ի գեօղ մի, որ հեռի էր յԵ-
րուսաղեմէ հարիւր և վաթսուն ասպա-
րիսաւ, և էր անուն նորա Եմմաւուս։
14 Եւ նոքա խօսէին ընդ միմեանս վասն
ամենայն անցիցն անցելոց։
15 Եւ եղև ընդ խօսելն նոցա և ընդ վիճել՝
և ինքն իսկ Յիսուս մերձեցաւ և եր-
թայր ընդ նոսա։
16 Եւ նոցա աչք կալեալ էին առ 'ի չճա-
նաչելոյ զնա։
17 Եւ ասէ ցնոսա. զի՞նչ են բանքդ՝ վասն
որոց վիճիքդ ընդ միմեանս՝ մինչդեռ գը-
նայքդ, և տրտմեալ էք։
18 Պատասխանի ետ մի ոմն 'ի նոցանէ՝ ո-
րում անուն էր Կղէովպաս, և ասէ ցնա.
դո՞ւ միայն կաս յԵրուսաղէմ, որ ոչ գի-
տացեր զինչ գործեցաւ 'ի նմա յաւուրսս
յայսոսիկ։
19 Եւ ասէ ցնոսա, զի՞նչ. և նոքա ասեն,
զՅիսուսէ Նազովրեցւոյ, որ եղև այր
մարգարէ՝ հզօր արդեամբք և բանիւք
առաջի Աստուծոյ և ամենայն ժողո-
վրդեանն։
20 Ո՞րպէս մատնեցին զնա քահանայա-
պետքն և իշխանքն մեր 'ի դատաստան
մահու՝ և հանին զնա 'ի խաչ։
21 Մեք ակն ունէաք թէ նա է որ փրկե-
լոցն իցէ զԻսրայէլ. այլ և համդերձ

այսու ամենայնիւ, այս երրորդ օր է՝
յորմէ հետէ այն գործեցաւ։
Այլ և կանայք ոմանք 'ի մէնջ զարմա- 22
ցուցին զմեզ, որք կանխեալ ընդ առա-
ւօտս չոգան 'ի գերեզմանն,
Եւ ոչ գտին զմարմինն նորա. եկին և 23
ասեն, թէ և տեսիլ ևս հրեշտակաց
տեսին, որք ասէին զնմանէ թէ կեն-
դանի է։
Եւ գնացին ոմանք 'ի մէնջ 'ի գերեզ- 24
մանն, և գտին նոյնպէս որպէս և կա-
նայքն ասացին. բայց զնա ոչ տեսին։
Եւ նա ասէ ցնոսա. ո՜վ անմիտք և հեղ- 25
գասիրտք 'ի հաւատալ ամենայնի, զոր
խօսեցան մարգարէքն։
Ո՞չ զնոյն պարտ էր չարչարել Քրիս- 26
տոսի, և մտանել 'ի փառս իւր։
Եւ սկսեալ 'ի Մովսէսէ և յամենայն 27
մարգարէից, մեկնէր նոցա որ ինչ յա-
մենայն գիրս գրեալ է զնմանէ։
Իբրև մերձեցան 'ի գեօղն յոր երթային, 28
և նա պատճառէր հեռագոյն ևս ուրեք
երթալ։
Եւ բռնադատեցին զնա և ասեն. առ 29
մեզ ագիր, զի ընդ երեկս է և տարա-
ժամեալ է օրս. և եմուտ ագանել ընդ
ընդ նոսա։
Եւ եղև 'ի բազմելն նորա ընդ նոսա, 30

առեալ զհացն օրհնեաց, եբեկ եւ ետ
նոցա։
31 Եւ նոցա բացան աչք եւ ծանեան զնա,
եւ նա եղեւ 'ի նոցանէ աներեւոյթ։
32 Եւ ասեն ցմիմեանս. ո՞չ իսկ եւ սիրտք
մեր ջմլէին 'ի մեզ՝ մինչ խօսէրն ընդ
մեզ զճանապարհայն, եւ ո՞րպէս բանայր
մեզ զգիրս։
33 Եւ յարուցեալ նոյնժամայն դարձան
յԵրուսաղէմ, եւ գտին ժողովեալ ըզ-
մետասանսն՝ եւ զորս ընդ նոսայն էին։
34 Եւ ասեն. թէ արդարեւ յարեաւ տէր՝ եւ
երեւեցաւ Սիմոնի։
35 Եւ նոքա պատմէին զայն որ զճանա-
պարհայնն, եւ թէ զիարդ ետ ծանօթս
նոցա 'ի բեկանել հացին։
36 Մինչդեռ զայն խօսէին, ինքն իսկ Յի-
սուս եկաց 'ի մէջ նոցա եւ ասէ ցնոսա.
խաղաղութիւն ընդ ձեզ, ես եմ՝ մի
երկնչիք։
37 Եւ զահի հարեալ երկնչէին, եւ համա-
րէին ոգի ինչ տեսանել։
38 Եւ ասէ ցնոսա. զի՞ խռովեալ էք եւ ընդ-
է՞ր խորհուրդք ելանեն 'ի սիրտս ձեր։
39 Տեսէք զձեռս իմ եւ զոտս, զի ես նոյն
եմ. շօշափեցէք զիս եւ տեսէք, զի ոգի՝
մարմին եւ ոսկերս ոչ ունի, որպէս զիս
տեսանէք զի ունիմ։

Եւ զայս ասացեալ՝ եցոյց նոցա զձեռսն 40
և զոտս:
Եւ մինչդեռ տակաւին չհաւատային 'ի 41
խնդութենէն՝ և զարմացեալ էին, ասէ
ցնոսա. ունի՞ք ինչ կերակուր աստ:
Եւ նոքա ետուն նմա ձկան խորովելոյ 42
մասն, և խորիսխ մեղու:
Եւ առ եկեր առաջի նոցա, և զմնա- 43
ցորդսն ետ նոցա:
Եւ ասէ ցնոսա. այս բանք են զոր խօ- 44
սեցայ ընդ ձեզ մինչ առ ձեզն էի, թէ
պարտ է լնուլ ամենայն գրելոցն յօրէն-
սըն Մովսէսի և 'ի մարգարէս և 'ի
սաղմոսն վասն իմ:
Յայնժամ եբաց զմիտս նոցա իմանալ 45
զգիրս:
Եւ ասէ ցնոսա, թէ այսպէս պարտ էր 46
չարչարիլ Քրիստոսի, և յառնել 'ի
մեռելոց յաւուր երրորդի:
Եւ քարոզել յանուն նորա ապաշխա- 47
րութիւն և թողութիւն մեղաց յամե-
նայն ազգս՝ սկսեալ յԵրուսաղեմէ:
Եւ դուք էք վկայք այսոցիկ: 48
Եւ ահա ես առաքեմ զաւետիս հօր իմոյ 49
'ի ձեզ, և դուք նստարուք 'ի քաղաքիս
յԵրուսաղէմ, մինչև զգենուցուք զօրու-
թիւն 'ի բարձանց:
Եհան զնոսա մինչև 'ի Բեթանիա, և 50

ամբարձեալ զձեռս իւր՝ օրհնեաց զնոսա։
51 Եւ եղեւ յօրհնելն նորա զնոսա, մեկ-
նեցաւ 'ի նոցանէ, և վերանայր յեր-
կինս։
52 Եւ նոքա երկիր պագեալ նմա՝ դարձան
յԵրուսաղէմ ուրախութեամբ մեծաւ։
53 Եւ էին հանապազ 'ի տաճարին, գո-
վէին և օրհնէին զԱստուած։

ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆ
ՅՈՎՀԱՆՆՈՒ ԱՒԵՏԱՐԱՆԻՆ

Յովհաննու աւետարանն գրեալ է Յովհաննու, որ եղբայր է Յակովբայ Զեբեդեայ. որ անկաւ 'ի վերայ լանջացն տեառն. նոյն սա գրեաց զաւետարանս զայս: Եւ սկիզբն առնէ յաստուածական Բանէն և զըստ մարմնոյ ծննդեանն յիշատակէ յասելն՝ և Բանն մարմին եղև: Եւ յիշատակէ զմկրտութիւնն Յովհաննու և զընտրութիւն աշակերտացն. այլ և զնշանս և զարուեստս որ եղեն. և զկատարածն, որ մատնեցաւ Պոնտացւոյ Պիղատոսի և խաչեցաւ, յորում և զինուորքն բաժանեցին զհանդերձս նորա, և 'ի վերայ պատմուճանի նորա վիճակ արկին, և մարմին նորա եդաւ 'ի գերեզմանի, և յարեաւ յերրորդ աւուր. երևեցաւ աշակերտացն ինքն:
Յովհաննէս՝ որ և որդի որոտման, զվերինն որոտալով պատմեաց մեզ: Սա զկնի յիսուն և երեք ամի համբառնալոյ փրկչին գրեաց զաւետարանս իւր յԵփեսոս քաղաքի, 'ի խնդրոյ եկեղեցւոյն Ասիոյ՝ 'ի լեզու յոյն:
Յովհաննէս՝ հնազանդութիւն:

ՍԿԻԶԲՆ ԳԼԽՈՑ

ԱՒԵՏԱՐԱՆԻՆ ՈՐ ԸՍՏ ՅՈՎՀԱՆՆՈՒ

	գլ.	համր.
Վասն՝ զի անսկիզբն է Բանն Աստուած . .	ա.	1
Վասն Յովհաննու վկայելոյն Բանին Այ . .	ա.	15
Վասն գալոյն առ նա գառինն Աստուծոյ .	ա.	29
Վասն աշակերտացն առ Յիսուս ազանելոյն.	ա.	39
Վասն գտանելոյն զՄեսիայն	ա.	41
Վասն 'ի Կանա հարսանեացն	բ.	1
Վասն արտաքս հանելոյ 'ի տաճարէն. . .	բ.	15
Վասն Նիկոդիմոսի.	դ.	1
Վասն 'ի Յայենովն մկրտելոյն.	դ.	23
Վասն խնդիր լինելոյ վասն սրբութեան . .	դ.	25
Վասն կնոջն Սամարացւոյ.	դ.	7
Վասն Թագաւորազինն	դ.	46

Վասն երեսունեւութամեայ հիւանդին . . ե. 5
Վասն՝ զի հայր սիրէ զորդի . . . . . ե. 20
Վասն հինգ հացին, եւ երկու ձկանն . . . զ. 9
Վասն գնալոյ՟ն ՚ի վերայ ծովուն . . . . զ. 19
Վասն մարտնչելոյն ընդ միմեանս Հրէից . . զ. 41
Վասն շրջելոյն Յիսուսի ՚ի Գալիլէ, եւ խրատու եղբարցն . . . . է. 1
Վասն խնդրելոյն Հրէից ունել զՅիսուս . . է. 30
Վասն ՚ի ծնէ կուրին . . . . թ. 1
Վասն դնելոյն Յ՟ի զանձն ՚ի վ՟ր ոչխարացն . ժ. 15
Վասն նաւակատեացն յԵրուսաղէմ . . . ժ. 22
Վասն Ղազարու յարութեանն . . . . . ժա. 1
Վասն օծանելոյն զոտսն . . . . ժբ. 3
Վասն՝ որ ասաց Յուդա զիւղոյն . . . . ժբ. 5
Վասն յովանակին . . . . ժբ. 14
Վասն ելելոց հեթանոսացն առ տէր . . . ժբ. 21
Վասն հատին ցորենոյն . . . . ժբ. 24
Վասն Յ՟ի լոյս գալոյն յաշխարհ . . . . ժբ. 46
Վասն ընթրեացն եւ լուանալոյ զոտս աշակերտացն . . . . ժգ. 11
Վասն չարչարանաց տեառն, եւ սփոփելոյ զաշակերտսն . . . . ժդ. 15
Վասն գալոյ հոգւոյն եւ մխիթարելոյ զաշակերտսն . . . . ժդ. 26
Վասն մատնութեանն Յիսուսի . . . . . ժը. 5
Վասն ուրացուե՟ Պետրոսի, եւ հաւուն խօսելոյ . ժը. 25
Վասն ածելոյն զՅ՟ի ՚ի վանացն Կայիափայ . ժը. 28
Վասն տանելոյն զՅիսուս ՚ի Գողգոթա . . ժթ. 17
Վասն աւանդելոյն Յիսուսի զհոգին . . . ժթ. 30
Վասն խնդրելոյն զտէրունական մարմինն . ժթ. 38
Վասն բերելոյն Նիկոդիմոսի զմուռս . . . ժթ. 39
Վասն գալոյ կանանցն ՚ի գերեզմանն . . . ի. 1
Վասն դրօքն փակելովք մտանելոյն Յիսուսի առ աշակերտսն . . . . ի. 19
Վասն զԹովմաս հաստատելոյ . . . . . . ի. 27
Վասն ուտելոյն ը՟նա՟, եւ հարցանելոյն զՊետրոս իա. 15
Վասն սիրելւոյ աշակերտին, եւ գրելոյ զաւետարանն . . . . իա. 24

Ս̃Բ ՅՈՎՀԱՆՆԷՍ ԱՒԵՏԱՐԱՆԻՉ

ԱՒԵՏԱՐԱՆ

ԸՍՏ ՅՈՎՀԱՆՆՈՒ

ԳԼ. Ա.

1 Իսկզբանէ էր բանն, և բանն էր առ ԲԿ
Աստուած, և Աստուած էր բանն։
2 Նա էր ՚ի սկզբանէ առ Աստուած։
3 Ամենայն ինչ նովաւ եղև, և առանց նո-
րա եղև և ոչ ինչ որ ինչ եղև։
4 Նովաւ կեանք էր, և կեանքն էր լոյս
մարդկան։
5 Եւ լոյսն ՚ի խաւարի անդ լուսաւորէ, և
խաւար նմա ոչ եղև հասու։
6 Եղև այր մի առաքեալ յԱստուծոյ, ա-
նուն նմա Յովհաննէս։
7 Սա եկն ՚ի վկայութիւն՝ զի վկայեսցէ
վասն լուսոյն, զի ամենեքին հաւա-
տասցեն նովաւ։

Ոչ էր նա լոյսն, այլ զի վկայեսցէ վասն 8
լուսոյն։
Էր լոյսն ճշմարիտ, որ լուսաւոր առնէ 9
զա՟մ մարդ որ գալոց է յաշխարհ։
Յաշխարհի էր, եւ աշխարհ նովաւ եղեւ 10
եւ աշխարհ զնա ոչ ծանեաւ։
Յիւրսն եկն, եւ իւրքն զնա ոչ ընկալան։ 11
Իսկ որք ընկալանն զնա՝ ետ նոցա իշ- 12
խանութիւն որդիս Աստուծոյ լինել,
որոց հաւատասցեն յանուն նորա։
Որք ոչ յարենէ եւ ոչ ՚ի կամաց մարմնոյ 13
եւ ոչ ՚ի կամաց առն, այլ յԱ՟յ ծնան։
Եւ բանն մարմին եղեւ եւ բնակեաց ՚ի 14
մեզ, եւ տեսաք զփառս նորա՝ զփառս ի-
բրեւ զմիածնի առ ՚ի հօրէ, լի շնորհօք եւ
ճշմարտութեամբ։
Յովհաննէս վկայէ վասն նորա, աղա- 15
ղակեաց եւ ասէ. սա է զորմէ ասէի, որ
զկնի իմ գալոցն էր՝ առաջի իմ եղեւ. զի
նախ քան զիս էր։
Զի ՚ի լրութ՟է անտի նորա մեք ամենե- 16
քին առաք շնորհս փոխանակ շնորհաց։
Զի օրէնքն ՚ի ձեռն Մովսէսի տուան, 17
շնորհքն եւ ճշմարտութիւն ՚ի ձեռն Յի-
սուսի Քրիստոսի եղեն։
ԲԲ Զաստուած ոչ ոք ետես երբէք, բայց 18
միածինն որդի որ է ՚ի ծոց հօր՝ նա պատ-
մեաց։

19 Եւ այս է վկայութիւնն Յովհաննու,
յորժամ առաքեցին առ նա Հրէայքն
յԵրուսաղեմէ քահանայս և Ղեւտա-
ցիս, զի հարցցեն զնա թէ դու ո՞ ես։
20 Եւ խոստովան եղեւ և ոչ ուրացաւ, խոս-
տովան եղեւ եթէ ես ոչ եմ Քրիստոսն։
21 Եւ հարցին զնա. իսկ ո՞վ ես դու, Եղիա՞
ես. և ասէ, ոչ եմ։ Իսկ մարգարէ՞ն ես
դու. պատասխանի ետ թէ ոչ։
22 Իսկ ասա մեզ՝ դու ո՞վ ես, զի պատաս-
խանի տարցուք որոց առաքեցինն զմեզ.
զի՞ ասես վասն քո։
23 Ասէ. ես ձայն բարբառոյ յանապատի,
ուղիղ արարէք զճանապարհս տեառն,
որպէս ասաց Եսայի մարգարէ։
24 Եւ որք առաքեցանն՝ 'ի Փարիսեցւոց
անտի էին։
25 Հարցին զնա և ասեն. իսկ զի՞ մկրտես
եթէ դու չես Քրիստոսն, և ոչ Եղիա,
և ոչ մարգարէն։
26 Պատասխանի ետ նոցա Յովհաննէս և
ասէ. ես մկրտեմ զձեզ ջրով, 'ի մէջ
ձերում կայ, զոր դուքն ոչ գիտէք։
27 Որ զկնի իմ գալոցն է, որում չեմ ար-
ժանի եթէ լուծից զխրացս կօշկաց նր̅։
28 Այս 'ի Բեթաբրայ եղեւ յայնկոյս Յոր-
դանանու, ուր էր Յովհաննէս և մկր-
տէր։

ԲԳ. Ի վաղիւ անդր տեսանէ զՅիսուս զի 29
գայր առ նա, և ասէ. ահաւասիկ գառնն
Աստուծոյ որ բառնայ զմեղս աշխարհի։
Սա է վասն որոյ եսն ասէի, զկնի իմ 30
գայ այր՝ որ առաջի իմ եղև, զի յառաջ
իսկ էր քան զիս։
Եւ ես ոչ գիտէի զնա, այլ զի յայտնի 31
լինիցի Իսրայէլի, վասն այնորիկ եկի ես
ջրով մկրտել։
Վկայեաց Յովհաննէս և ասէ, թէ տե- 32
սանէի զՀոգին զի իջանէր իբրև զաղաւ-
նի յերկնից, և հանգչէր ՚ի վերայ նորա։
Եւ ես ոչ գիտէի զնա, այլ որ առաքեացն 33
զիս մկրտել ջրով՝ նա ասաց ցիս. յոր
վերայ տեսանիցես զՀոգին, զի իջանիցէ
և հանգչիցի ՚ի վերայ նորա, նա է որ
մկրտէ Հոգւովն սրբով։
Եւ ես տեսի և վկայեցի եթէ սա է որ- 34
դին Աստուծոյ։
ԲԳ. Ի վաղիւ անդր կայր Յովհաննէս, և 35
յաշակերտաց անտի նորա երկու։
Եւ նայեցեալ ընդ Յսի զի զգնայր՝ ա- 36
սէ. ահաւասիկ Քս գառն Աստուծոյ։
Լուան ՚ի նմանէ երկու աշակերտքն զի 37
խօսէր, և գնացին զհետ Յիսուսի։
Իբրև դարձաւ Յիսուս և ետես զնոսա 38
զի երթային զհետ նորա, ասէ ցնոսա.
զի՞նչ խնդրէք. նոքա ասեն ցնա. ռաբ-

բի, որ թարգմանեալ կոչի վարդապետ,
ո՞ւր են օթեւանք քո։
39 Ասէ ցնոսա. եկայք և տեսէք. եկին և
տեսին ուր էին օթեւանք նորա. և առ
նմա ագան այն օր, զի ժամ էր իբրև
տասներորդ։
40 Էր Անդրէաս եղբայր Սիմոնի վիմի, մի
յերկուց անտի, որ լուանն՚ի Յովհաննէ
և գնացին զկնի նորա։
41 Գտանէ սա նախ զեղբայր իւր զՍիմոն,
և ասէ ցնա. գտաք զՄեսիայ որ թարգ-
մանի Քրիստոս։
42 Սա ած զնա առ Յիսուս. հայեցեալ ընդ-
նա Յիսուսի ասէ, դու ես Սիմոն որդի
Յովնանու. դու կոչեսցիս Կեփաս, որ
թարգմանի Պետրոս։
43 Ի վաղիւ անդր կամեցաւ ելանել՚ի ԲՆ
Գալիլեա. գտանէ զՓիլիպպոս և ասէ
ցնա Յիսուս. եկ զկնի իմ։
44 Եւ էր Փիլիպպոս ՚ի Բեթսայիդայ, ՚ի
քաղաքէ Անդրեայ և Պետրոսի։
45 Գտանէ Փիլիպպոս զՆաթանայէլ, և
ասէ ցնա. զորմէ գրեաց Մովսէս յօ-
րէնսն՝ և մարգարէքն, գտաք զՅիսուս
զորդի Յովսեփայ ՚ի Նազարեթէ։
46 Ասէ ցնա Նաթանայէլ. իսկ ՚ի Նազա-
րեթէ մա՞րթ ինչ իցէ բարւոյ իմիք լի-
նել. ասէ ցնա Փիլիպպոս, եկ և տես։

Իբրեւ ետես Յս զՆաթանայէլ զի գայր 47
առ նա, ասէ վասն նորա. ահա արդարեւ
Իսրայելացի յորում նենգութիւն ոչ գոյ:
Ասէ ցնա Նաթանայէլ. ուստի՞ ճանաչես 48
զիս. պատասխանի ետ Յիսուս եւ ասէ
ցնա. մինչ չեւ էր Փիլիպպոսի կոչեցեալ
զքեզ՝ զի էիր ՚ի ներքոյ թզենւոյ, տեսի
զքեզ:
Պատասխանի ետ նմա Նաթանայէլ եւ 49
ասէ. ռաբբի, դու ես որդի Աստուծոյ,
դու ես թագաւորն Իսրայէլի:
Պատասխանի ետ նմա Յիսուս եւ ասէ. 50
փոխանակ զի ասացի քեզ թէ տեսի ՚ի
ներքոյ թզենւոյն՝ հաւատաս, մեծա-
մեծս եւս քան զայս տեսցես:
Եւ ասէ ցնա. ամէն ամէն ասեմ ձեզ, 51
տեսանիցէք զերկինս բացեալ եւ ըզ-
հրեշտակս Աստուծոյ զի ելանիցեն եւ ի-
ջանիցեն ՚ի վերայ որդւոյ մարդոյ:

Գ.Լ. Բ

ԲՁ Եւ յաւուրն երրորդի հարսանիք էին 1
՚ի Կանա Գալիլեացւոց, եւ անդ էր
մայրն Յիսուսի:
Կոչեցաւ եւ Յիսուս եւ աշակերտքն նո- 2
րա ՚ի հարսանիսն:
Եւ ՚ի պակասել գինւոյն, ասէ մայրն 3
ցՅիսուս. գինի ոչ ունին:

4 Եւ ասէ ցնա Յիսուս. զի՞ կայ իմ եւ քո կին
դու, չեւ է հասեալ ժամանակ իմ:
5 Ասէ մայրն նորա ցսպասաւորսն, որ զինչ
ասիցէ ձեզ արասջիք:
6 Անդ էին Թակոյկք կճեայք վեց՝ ըստ
սրբութեան Հրէից. տանէին մի մի 'ի
նոցանէ մարս երկուս կամ երիս:
7 Ասէ ցնոսա Յիսուս. լցէք զթակոյկսդ
ջրով. եւ լցին զնոսա մինչեւ 'ի վեր:
8 Եւ ասէ ցնոսա. արդ առէք եւ բերէք
տաճարապետին. եւ նոքա բերին:
9 Եւ իբրեւ ճաշակեաց տաճարապետն
զջուրն գինի եղեալ, եւ ոչ գիտէր ուս-
տի իցէ. բայց սպասաւորքն գիտէին որք
արկին զջուրն. խօսի ընդ փեսային տա-
ճարապետն,
10 Եւ ասէ. ամենայն մարդ զանոյշ գինին
յառաջագոյն պաշտէ. եւ յորժամ արբե-
նան, յայնժամ զյոռին. դու պահեցեր
զանոյշ գինիդ մինչեւ ցայժմ:
11 Զայս արար սկիզբն նշանաց Յ՟ս 'ի Կանա
Գալիլեացւոց, եւ յայտնեաց զփառս իւր.
եւ հաւատացին 'ի նա աշակերտքն նորա:
12 Յետ այսորիկ էջ Յիսուս 'ի Կափառ- Բէ
նաում, ինքն եւ մայր իւր եւ եղբարք իւր.
եւ անդ լինէր ոչ բազում ինչ աւուրս:
13 Եւ էր մերձ զատիկն Հրէից, եւ ել Յի-
սուս յԵրուսաղէմ:

Եւ եգիտ ՚ի տաճարին զի վաճառէին 14
զարջառս և զոչխարս և զաղաւնիս, և
զլումայափոխսն՝ որ նստէին։
Եւ արար խարազան չուանեայ, և ե- 15
հան զամենեսին ՚ի տաճարէն, զոչխար-
սըն և զարջառս, զպղինձս հատավա-
ճառացն ցրուեաց, և զսեղանսն կործա-
նեաց։
Եւ որ զաղաւնիսն վաճառէին՝ ասէ ցնո- 16
սա. առէք զայդ աստի, և մի առնէք
զտուն Հօր իմոյ՝ տուն վաճառի։
Ապա յիշեցին աշակերտքն նորա թէ 17
գրեալ է, Նախանձ տան քո կերիցէ զիս։
Պատասխանի ետուն Հրէայքն և ասեն 18
ցնա. զի՞նչ նշան ցուցանես դու մեզ՝ զի
զայդ առնես։
Պատասխանի ետ Յիսուս և ասէ ցնո- 19
սա. քակեցէք զտաճարդ զայդ, և զերիս
աւուրս կանգնեցից զդա։
Ասեն ցնա Հրէայքն. զքառասուն և 20
զվեց ամ շինեցաւ տաճարս, և դու զե-
րիս աւուրս կանգնես զդա։
Բայց նա ասէր վասն տաճարի մարմնոյն 21
իւրոյ։
Իսկ յորժամ յարեաւ ՚ի մեռելոց, յի- 22
շեցին աշակերտքն նորա թէ այս է զոր
ասացն, և հաւատացին գրոյն և բանին
զոր ասաց Յիսուս։

23 Եւ իբրեւ էր յԵրուսաղէմ՝ 'ի զատկին Գ.Կ
'ի տօնի, բազումք հաւատացին յանուն
նորա. զի տեսանէին զնշանսն զոր
առնէր:
24 Բայց ինքն Յս ոչ հաւատայր զանձն
նոցա. քանզի ինքն գիտէր զամենայն:
25 Եւ զի ոչ էր պիտոյ եթէ ոք վկայեսցէ
վասն մարդոյ, զի ինքն իսկ գիտէր զինչ
կրէր 'ի մարդն:

Գ.Լ. Գ.

1 Եւ էր այր մի 'ի փարիսեցւոց անտի՝
Նիկոդեմոս անուն նորա՝ իշխան Հրէից:
2 Սա եկն առ նա գիշերի և ասէ ցնա.
ռաբբի, գիտեմք եթէ յԱստուծոյ ե-
կեալ ես վարդապետ. զի ոչ ոք կարէ
զայդ նշանսդ առնել՝ զոր դուդ առնես,
եթէ ոչ Աստուած իցէ ընդ նմա:
3 Պատասխանի ետ Յիսուս և ասէ ցնա.
ամէն ամէն ասեմ քեզ, եթէ ոչ ոք ծնցի
վերստին՝ ոչ կարէ տեսանել զարքայու-
թիւն Աստուծոյ:
4 Ասէ ցնա Նիկոդեմոս. զիա՞րդ կարէ
մարդ ծնանել որ ծերն իցէ, միթէ մա՞րթ
ինչ իցէ անդրէն յորովայն մօր իւրոյ
կրկին մտանել և ծնանել:
5 Պատասխանի ետ Յիսուս և ասէ. ա-
մէն ամէն ասեմ քեզ, եթէ ոչ ոք ծնցի

՚ի ջրոյ և ՚ի Հոգւոյ, ոչ կարէ մտանել
յարքայութիւնն Աստուծոյ։
Զի ծնեալն ՚ի մարմնոյ՝ մարմին է, և 6
ծնեալն ՚ի Հոգւոյ՝ հոգի է։
Դու մի՛ զարմանար թէ ասացի քեզ՝ 7
պարտ է ձեզ ծնանել վերստին։
Զի հողմ ուր կամի շնչէ, և զձայն նորա 8
լսես. այլ ոչ գիտես՝ ուստի՛ գայ կամ յո՛
երթայ. սոյնպէս և ամենայն ծնեալն ՚ի
Հոգւոյն։
Պատասխանի ետ Նիկոդեմոս և ասէ 9
ցնա. զիա՞րդ մարթի այդմ լինել։
Պատասխանի ետ Յիսուս և ասէ ցնա. 10
դու ես վարդապետ Իսրայէլի, և զայդ
ո՞չ գիտես։
Ամէն ամէն ասեմ քեզ, զի զոր ինչ գի- 11
տեմք՝ խօսիմք, և զոր տեսաք՝ վկայեմք.
և զվկայութիւն մեր ոչ ընդունիք։
Իսկ արդ՝ եթէ զերկրաւորս ասացի ձեզ 12
և ոչ հաւատայք, զիա՞րդ եթէ զերկնա-
ւորսն ասացից՝ հաւատայցէք։
Գ.Բ Եւ ոչ ոք ել յերկինս, եթէ ոչ որ էջն 13
յերկնից՝ որդին մարդոյ, որ էն յեր-
կինս։
Եւ որպէս Մովսէս բարձրացոյց զօձն 14
յանապատին, նոյնպէս բարձրանալ
պարտ է որդւոյ մարդոյ։
Զի ամենայն որ հաւատայ ՚ի նա՝ (մի՛ 15

կորիցէ, այլ) ընկալցի զկեանս յաւի-
տենականս։
16 Զի այնպէս սիրեաց Աստուած զաշխարհ՝
մինչև զորդին իւր միածին ետ. զի ա-
մենայն որ հաւատայ 'ի նա՝ մի կորիցէ,
այլ ընկալցի զկեանսն յաւիտենականս։
17 Զի ոչ առաքեաց Աստուած զորդի իւր
յաշխարհ՝ թէ դատեսցի զաշխարհ, այլ
զի փրկեսցի աշխարհ նովաւ։
18 Որ հաւատայ 'ի նա, ոչ դատապարտես-
ցի. և որ ոչ հաւատայ 'ի նա՝ արդէն իսկ
դատապարտեալ է. զի ոչ հաւատաց
յանուն միածնի որդւոյն Աստուծոյ։
19 Եւ այս իսկ է դատաստան, զի լոյս եկն
յաշխարհ՝ և սիրեցին մարդիկ զխաւար
առաւել քան զլոյս. զի էին գործք ի-
րեանց չարութեան։
20 Զի ամենայն որ զչար գործէ՝ ատեայ
զլոյս. և ոչ գայ առ լոյսն, զի մի յանդի-
մանեսցին գործք նորա։
21 Իսկ որ առնէ զճշմարտութիւն՝ գայ առ
լոյսն, զի յայտնի լիցին գործք նորա թէ
Աստուծով գործեցան։
22 Յետ այսորիկ եկն Յիսուս և աշակերտ- Գ.Գ.
քն նորա յերկիրն Հրէաստանի. և անդ
շրջէր նոքօք հանդերձ և մկրտէր։
23 Մկրտէր և Յովհաննէս 'ի Յայենովն
մերձ առ Սաղիմ, զի ջուրք բազումք

էին անդ, և գային և մկրտէին։
Զի չև ևս էր արկեալ Յովհաննէս 'ի 24
բանտ։
Եւ եղև խնդիր յաշակերտացն Յով- 25
հաննու ընդ Հրէի՝ վասն սրբութեան։
Եկին առ Յովհաննէս և ասեն ցնա. 26
ռաբբի, որ էրն ընդ քեզ յայնկոյս Յոր-
դանանու, որում դուն վկայեցեր, ա-
հաւանիկ նա մկրտէ և ամենեքին գան
առ նա։
Պատասխանի ետ Յովհաննէս և ասէ, 27
ոչ կարէ մարդ առնուլ յանձնէ և ոչ
ինչ՝ եթէ ոչ իցէ տուեալ նմա յերկնից
'ի վերուստ։
Դուք ձեզէն վկայէք ինձ, զի ասացի 28
ձեզ թէ չեմ ես Քրիստոսն, այլ թէ
առաքեալ եմ առաջի նորա։
Որ ունի հարսն՝ նա է փեսայ, իսկ բա- 29
րեկամ փեսային որ կայ և լսէ նմա, ու-
րախութեամբ ուրախ լինի վասն ձայնի
փեսային. արդ այս ուրախութիւն որ
իմն է, լցեալ է։
Նմա պարտ է աճել և ինձ մեղմանալ։ 30
Որ 'ի վերուստն գայ, 'ի վերոյ է քան 31
զամենայն. որ յերկրէ աստի է, յերկրէ
է և յերկրէ խօսի։
Որ յերկնից գայ, զոր ինչ ետես և զոր 32
լուաւ՝ վկայէ, և զվկայութիւն նորա ոչ

ոք ընդունի։

33 Որ ընդունի զվկայութիւն նորա՝ կնքեաց թէ Աստուած ճշմարիտ է։

34 Զի զոր Աստուածն առաքեաց՝ զբանս Աստուծոյ խօսի. զի ոչ եթէ չափով տայ Աստուած զհոգին։

35 Հայր սիրէ զորդի, և զամենայն ինչ ետ ՚ի ձեռս նորա։

36 Որ հաւատայ յորդի, ընդունի զկեանսն յաւիտենականս. և որ ոչ հնազանդի որդւոյ, ոչ տեսցէ զկեանս. այլ բարկութիւն Աստուծոյ մնայ ՚ի վերայ նորա։

ԳԼ. Դ.

1 Իբրև գիտաց Յ̃ն եթէ լուան Փարիսեցիքն եթէ Յիսուս բազում աշակերտս առնէ և մկրտէ քան զՅովհաննէս. Գ.Գ.

2 Քանզի ոչ եթէ Յիսուս ինքնին մկրտէր՝ այլ աշակերտքն նորա,

3 Եթող զՀրէաստան երկիր, և եկն միւսանգամ ՚ի Գալիլեա։

4 Եւ էր նմա անցանել ընդ Սամարիա։

5 Գայ նա ՚ի քաղաք մի Սամարացւոց՝ որում անուն էր Սիւքար. մերձ ՚ի գեօղն զոր ետ Յակովբ որդւոյ իւրում Յովսեփայ։

6 Եւ անդ էր աղբիւր մի Յակոբայ, և Յ̃ս վաստակեալ ՚ի ճանապարհէն, նստէր ՚ի վ̃ր աղբերն. և էր ժամ իբրև վեցերորդ։

Գայ կին մի 'ի Սամարեայ հանել ջուր. 7
ասէ ցնա Յիսուս. տուր ինձ ըմպել:
Զի աշակերտքն նորա երթեալ էին 'ի 8
քաղաք անդր զի կերակուրս գնեսցեն:
Ասէ ցնա կինն Սամարացի. դու որ 9
Հրէայդ ես, զիա՞րդ յինէն ըմպել
խնդրես 'ի կնոջէ Սամարացւոյ. զի ոչ
երբէք խառնակին Հրէայք ընդ Սամա-
րացիս:
Պատասխանի ետ նմա Յիսուս և ասէ. 10
եթէ գիտէիր դու զպարգևսն Աստուծոյ,
և ո՞վ է որ ասէդ ցքեզ թէ տուր ինձ
ըմպել, դու արդեօք խնդրէիր 'ի նմանէ
և տայր քեզ ջուր կենդանի:
Ասէ ցնա կինն. տէր, դու քանզի և 11
դոյլ իսկ ոչ ունիս, և ջրհորս խոր է.
իսկ արդ՝ ուստի՞ ունիցիս զջուրն կեն-
դանի:
Միթէ դու մե՞ծ ինչ ոք իցես քան ըզ- 12
հայրն մեր Յակոբ՝ որ զայս ջրհոր ետ
մեզ. և ինքն աստի արբ և որդիք նորա,
և խաշինք նորա:
Պատասխանի ետ նմա Յիսուս և ասէ. 13
ամենայն որ ըմպէ 'ի ջրոյ յայդմանէ՝
միւսանգամ ծարաւէ. բայց որ ըմպէ 'ի
ջրոյն զոր ես տաց նմա, մի՛ ծարաւեսցէ
յաւիտեան:
Այլ ջուրն զոր ես տաց նմա, եղիցի 14

նմա աղբիւր ջրոյ բղխելոյ 'ի կեանս
յաւիտենականս։

15 Ասէ ցնա կինն. Տէր, տուր ինձ զջուրն
զայն, զի մի՛ ծարաւեցից. և մի՛ եկից
այսր հանել ջուր։

16 Ասէ ցնա Յիսուս. երթ կոչեա զայր' քո
և եկ այսր։

17 Պատասխանի ետ նմա կինն և ասէ,
չիք իմ այր. ասէ ցնա Յիսուս, բարւոք
ասացեր թէ չիք իմ այր։

18 Զի հինգ այր փոխեալ է քո, և զոր
այժմունիս, չէ՛ քո այր. զայդ արդար
ասացեր։

19 Ասէ ցնա կինն. Տէր, թուի ինձ թէ
մարգարէ իցես դու։

20 Հարքն մեր 'ի լերինս յայսմիկ երկիր
պագին. և դուք ասէք եթէ յԵրուսա-
ղէմ ևեթ է տեղի ուր արժան իցէ եր-
կիր պագանել։

21 Ասէ ցնա Յիսուս. կին դու, հաւատա
ինձ, զի եկեսցէ ժամանակ՝ յորժամ ոչ
'ի լերինս յայսմիկ և ոչ յԵրուսաղէմ
երկիր պագանիցեն Հօր։

22 Դուք երկիր պագանէք որում ոչն գի-
տէք, մեք երկիր պագանեմք որում գի-
տեմքն. զի փրկութիւն 'ի Հրէից է։

23 Այլ եկեսցէ ժամանակ և այժմ իսկ է,
յորժամ ճշմարիտքն երկրպագուք՝ երկիր

պագանիցեն Հօր՝ հոգւով և ճշմարտու-
թեամբ. քանզի և Հայր այնպիսի երկըր-
պագուս իւր խնդրէ։
ԳԵ Հոգի է Աստուած, և երկրպագուաց 24
նորա՝ հոգւով և ճշմարտութեամբ պարտ
է երկիր պագանել։
Ասէ ցնա կինն, գիտեմք զի Մեսիայ 25
գայ անուանեալն Քրիստոս. յորժամ
եկեսցէ նա, պատմեսցէ մեզ զամենայն։
Ասէ ցնա Յիսուս. ես եմ որ խօսիմս 26
ընդ քեզ։
Եւ յայն բան եկին աշակերտքն նորա, 27
և զարմանային զի ընդ կնոջն խօսէր.
բայց ոչ ոք ասաց ’ի նոցանէ թէ զի՞նչ
խնդրես, կամ զի՞նչ խօսիս ընդ դմա։
Եթող կինն զսափորն իւր և չոգաւ ’ի 28
քաղաքն, և ասէ ցմարդիկն.
Եկայք տեսէք զայր մի, որ ասաց ինձ 29
զամենայն որ ինչ իմ գործեալ է. միթէ
նա՞ իցէ Քրիստոսն։
Ելին ’ի քաղաքէն և գային առ նա։ 30
Եւ մինչ չև եկեալ էին նոքա, աղաչէին 31
զնա աշակերտքն և ասէին. ռաբբի,
հաց կեր։
Նա ասէ ցնոսա. ես կերակուր ունիմ 32
ուտել, զոր դուքն ոչ գիտէք։
Ասէին աշակերտքն ընդ միմեանս. միթէ 33
եբե՞ր ինչ ոք դմա ուտել։

34 Ասէ ցնոսա Յիսուս. իմ կերակուր այն է
զի արարից զկամս այնորիկ որ առաքեացն
զիս, և կատարեցից զգործն նորա:
35 Ո՞չ դուք ասէք եթէ այլ ևս չորք ամիսք
են, և հունձք գան. ահաւասիկ ես ա-
սեմ ձեզ. ամբարձէ՛ք զաչս ձեր, և տե-
սէք զարտորայսն զի սպիտակացեալ են
և 'ի հունձս հասեալ:
36 Եւ որ հնձէն՝ վարձս առնու, և ժողովէ
զպտուղ 'ի կեանսն յաւիտենականս. զի
որ սերմանէն և որ հնձէ՝ հաւասարակ ցըն-
ծասցեն:
37 Յայսմ իսկ է բանն ճշմարիտ. զի այլ է
որ սերմանէ, և այլ է որ հնձէ:
38 Ես առաքեցի զձեզ հնձել՝ զոր ոչ դուք
վաստակեցէք. այլք վաստակեցին, և
դուք 'ի վաստակս նոցա մտէք:
39 Եւ 'ի քաղաքէն յայնմանէ Սամարա-
ցւոց՝ բազումք հաւատացին 'ի նա, վասն
բանի կնոջն վկայելոյ՝ եթէ ասաց ինձ
զամենայն, որ ինչ իմ գործեալ էր:
40 Իսկ իբրև եկին առ նա Սամարացիքն,
աղաչէին զնա լինել առ նոսա. և եղև
անդ աւուրս երկուս:
41 Եւ ևս բազումք հաւատացին 'ի նա
վասն բանին նորա:
42 Եւ ասէին ցկինն, թէ ոչ այսուհետև
վասն քո խօսիցդ հաւատամք, զի մեզէն

իսկ լուաք 'ի դմանէ. և գիտեմք եթէ
դա է ճշմարտիւ փրկիչ աշխարհաց:
Գ.Զ Եւ յետ երկուց աւուրց ել անտի և 43
գնաց 'ի Գալիլեա:
Զի ինքն իսկ Յիսուս վկայեաց եթէ 44
մարգարէ յիւրում գաւառի պատիւ ոչ
ունի:
Այլ յորժամ եկն նա 'ի Գալիլեա, ըն- 45
կալան զնա Գալիլեացիքն. զի տեսեալ
ևս էր զամենայն նշանսն, զոր արար
յԵրուսաղէմ 'ի տօնին, քանզի և նոքա
եկեալ էին 'ի տօնն:
Եկն դարձեալ 'ի Կանա Գալիլեացւոց՝ 46
ուր արար զջուրն գինի. և անդ էր թա-
գաւորազն մի, որոյ որդի նորա հիւանդ
կայր 'ի Կափառնաում:
Նա իբրև լուաւ եթէ Յիսուս եկեալ է 47
'ի Հրէաստանէ 'ի Գալիլեա, եկն առ նա
և աղաչէր, զի իջցէ և բժշկեսցէ զորդի
նորա. քանզի մերձ էր 'ի մեռանել:
Ասէ ցնա. եթէ ոչ նշանս ինչ և արուես- 48
տս տեսանէք՝ ոչ հաւատայք:
Ասէ ցնա թագաւորազն. տէր, էջ մինչ 49
չև մեռեալ իցէ մանուկն իմ:
Ասէ ցնա Յիսուս. երթ, որդին քո կեն- 50
դանի է. և հաւատաց այրն բանին զոր
ասաց նմա Յիսուս և գնաց:
Եւ մինչդեռ իջանէր, ընդառաջ եղեն 51

նմա ծառայքն նորա. աւետիս ետուն և
ասեն, թէ մանուկն նորա կենդանի է։
52 Հարցանէր ցնոսա վասն ժամուն՝ յո–
րում ապաքինեաց. և ասեն ցնա, երէկ
յեօթներորդ ժամու եթող զնա ջերմն։
53 Գիտաց հայրն նորա եթէ յայնմ ժա–
մու՝ յորում ասացն ցնա Յիսուս թէ
որդին քո կենդանի է. և հաւատաց ին–
քըն և ամենայն տունն իւր։
54 Զայս դարձեալ երկրորդ նշանս արար
Յիսուս՝ եկեալ ՚ի Հրէաստանէ ՚ի Գա–
լիլեա։

ԳԼ. Ե

1 Յետ այսորիկ տօն էր Հրէից. և ել Գլ.
Յիսուս յԵրուսաղէմ։
2 Եւ էր յԵրուսաղէմ ՚ի Պրոբատիկէ ա–
ւազանին, որ կոչէր եբրայեցերէն Բեթ–
հեզդա, հինգ սրահ։
3 Յորս անկեալ դնէր բազմութիւն յոյժ
հիւանդաց՝ կուրաց կաղաց գօսացելոց,
որ ակն ունէին ջրոյն յուզելոյ։
4 Եւ հրեշտակ Տն իջանէր ըստ ժամա–
նակի յաւազանն և յուզէր զջուրսն. և
որ նախ ՚ի շարժումն ջուրցն իջանէր՝
բժշկէր, ոչ ունելով նշան հիւանդութե։
5 Եւ անդ էր այր մի, որոյ երեսուն և ութ
ամ էր ՚ի հիւանդութեան իւրում։

Զնա իբրեւ ետես Յիսուս զի անկեալ 6
դնէր, եւ գիտաց եթէ բազում ժամա-
նակք են այնուհետեւ, ասէ ցնա. կամի՞ս
ողջ լինել։
Պատասխանի ետ նմա հիւանդն. տէր, 7
ոչ զոք ունիմ, թէ յորժամ ջուրքն յու-
զիցին արկցէ զիս յաւազանն. եւ մինչ
ես դանդաղիմ, այլ ոք քան զիս յառա-
ջագոյն իջանէ։
Ասէ ցնա Յիսուս, արի՛ առ զմահիճս քո 8
եւ գնա։
Եւ ողջացաւ այրն, եւ յարեաւ առ ըզ- 9
մահիճս իւր եւ շրջէր. եւ էր շաբաթ
յաւուրն յայնմիկ։
Ասէին Հրէայքն ցբժշկեալն. շաբաթ է եւ 10
ոչ է արժան քեզ առնուլ զմահիճս քո։
Պատասխանի ետ նոցա եւ ասէ. որ 11
բժշկեացն զիս, նա ասաց ցիս, առ ըզ-
մահիճս քո եւ գնա։
Հարցին ցնա եւ ասեն. ո՞վ է այրն որ ա- 12
սաց ցքեզ, առ զմահիճս քո եւ շրջեաց։
Եւ բժշկեալն ոչ գիտէր թէ ո՞վ իցէ. 13
քանզի Յիսուս խոյս ետ վասն ամբոխին
'ի տեղւոջէ անտի։
Յետ այսորիկ գտանէ զնա Յիսուս 'ի 14
տաճարին, եւ ասէ ցնա. ահաւադիկ
ողջացար՝ մի՛ եւս մեղանչեր, զի մի՛ չար
եւս ինչ լինիցի քեզ։

15 Գնաց այրն և պատմեաց Հրէիցն, եթէ
Յիսուս էր որ բժշկեացն զնա:
16 Եւ վասն այնորիկ հալածէին զՅիսուս
Հրէայքն, զի զայն առնէր 'ի շաբաթու:
17 Եւ Յ̄ն պատասխանի ետ նոցա. հայր
իմ մինչև ցայժմ գործէ և ես գործեմ:
18 Վասն այնորիկ առաւել խնդրէին Հր-
էայքն սպանանել զնա. զի ոչ միայն
լուծանէր զշաբաթս, այլ և հայր իւր
կոչէր զԱստուած, և հաւասար առնէր
զանձն Աստուծոյ:
19 Պատասխանի ետ Յիսուս և ասէ ցնոսա. Դ.Կ
ամէն ամէն ասեմ ձեզ, ոչ կարէ որդի
մարդոյ առնել յանձնէ և ոչ ինչ, եթէ
ոչ տեսանիցէ զհայրն զի առնէ. զի զոր
նայն առնէ, զնոյն և որդին նմին նման
գործէ:
20 Զի հայր սիրէ զորդի, և զամենայն ինչ
ցուցանէ նմա՝ զոր ինքն առնէ. և մեծա-
մեծս ևս քան զսոյնս ցուցանէ նմա ըզ-
գործս, ընդ որ դուք զարմանայք:
21 Զի որպէս հայր յարուցանէ զմեռեալս
և կենդանի առնէ, նոյնպէս և որդի՝
զորս կամի կենդանի առնէ:
22 Եւ ոչ եթէ հայր դատի զոք, այլ զա-
մենայն դատաստան ետ որդւոյ իւրոյ:
23 Զի ամենեքեան պատուեսցեն զորդի
որպէս պատուեն զհայր. որ ոչ պատուէ

զորդին, ոչ պատուէ զՀայր զառաքիչն
նորա։
Ամէն ամէն ասեմ ձեզ, զի որ զբանն իմ 24
լսէ և հաւատայ այնմ որ առաքեացն զիս,
ընդունի զկեանսն յաւիտենականս, և
'ի դատաստան ոչ մտանէ, այլ փոխեցաւ
'ի մահուանէ 'ի կեանս։
Ամէն ամէն ասեմ ձեզ, զի գայ ժամանակ 25
և արդէն իսկ է, յորժամ մեռեալք լուի-
ցեն ձայնի որդւոյն Աստուծոյ, և որք
լուիցենն կեցցեն։
Զի որպէս Հայր ունի կեանս յանձին 26
իւրում, նոյնպէս ետ և որդւոյ ունել
կեանս յանձին իւրում։
Եւ իշխանութիւն ետ նմա դատաստան 27
առնել. և զի որդի մարդոյ է,
Ընդ այն զի՞ զարմանայք. զի եկեսցէ 28
ժամանակ՝ յորում ամենեքին որ 'ի գե-
րեզմանս կայցեն, լուիցեն ձայնի նորա,
Եւ եկեսցեն արտաքս. որոց բարիս գոր- 29
ծեալ իցէ՝ 'ի յարութիւն կենաց. և
որոց զչար արարեալ՝ 'ի յարութիւն
դատաստանաց։
Ոչ կարեմ ես յանձնէ առնել և ոչ ինչ. 30
այլ որպէս լսեմ՝ դատիմ, և դատաս-
տանն իմ արդար է. զի ոչ խնդրեմ
զկամս իմ, այլ զկամս այնորիկ որ առա-
քեացն զիս։

31 Եթէ ես վկայեմ վասն իմ, վկայու- Գ.Բ
թիւնն իմ չէ ճշմարիտ։
32 Այլ է որ վկայէ վասն իմ, և դուք գի-
տէք եթէ ճշմարիտ է վկայութիւնն զոր
վկայեաց վասն իմ։
33 Դուք առաքեցիք առ Յովհաննէս, և
վկայեաց ճշմարտութեանն։
34 Այլ ես ոչ եթէ 'ի մարդկանէ առնում
վկայութիւն, այլ զայս ասեմ զի դուք
ապրեսջիք։
35 Նա էր ճրագն որ լուցեալ էր և ծագէր,
և դուք կամեցարուք ցնծալ առ ժամա-
նակ մի 'ի լոյս նորա։
36 Այլ ես ունիմ վկայութիւն՝ մեծ ևս քան
զՅովհաննու. զգործսն զորս ետ ցիս
Հայր՝ զի կատարեցից զնոսա, նոքին իսկ
գործքն զոր գործեմ, վկայեն վասն իմ
եթէ Հայր առաքեաց զիս։
37 Եւ որ առաքեացն զիս Հայր՝ նա վը-
կայեաց վասն իմ։ Դուք ոչ զձայն նորա
երբէք լուարուք, և ոչ զտեսիլ նորա
տեսէք։
38 Եւ ոչ զբան նորա ունիք 'ի ձեզ բնա-
կեալ. զի զոր նա առաքեաց՝ դուք նմա
ոչ հաւատայք։
39 Քննեցէք զգիրս, զի դուք համարիք
նոքօք ունել զկեանսն յաւիտենականս.
և նոքին իսկ են որ վկայեն վասն իմ,

որովք համարիք ունել կեանս։
Եւ դուք ոչ կամիք գալ առ իս՝ զի ըզ- 40
կեանսն ունիցիք։
Ես փառս 'ի մարդկանէ ոչ առնում։ 41
Այլ գիտեմ զձեզ թէ զսէրն Աստուծոյ 42
ոչ ունիք յանձինս։
Ես եկի յանուն Հօր իմոյ, և ոչ ընդու- 43
նիք զիս. եթէ այլ ոք եկեսցէ յիւր ա-
նուն, զնա ընդունիցիք։
Զիա՞րդ կարէք դուք հաւատալ. զի 44
փառս 'ի միմեանց առնուք, և զփառս
զառ 'ի միոյն Աստուծոյ ոչ խնդրէք։
Մի՛ համարիք եթէ ես չարախօս ինչ 45
իցեմ զձէնջ առ Հօր. գոյ որ չարախօս
կայ զձէնջ, Մովսէս՝ յոր դուքն յուսա-
ցեալ էք։
Զի եթէ հաւատայիք դուք Մովսեսի, 46
հաւատայիք արդեօք և ինձ. զի նա
վասն իմ իսկ գրեաց։
Զի եթէ նորա գրոյն ոչ հաւատայք, 47
զիա՞րդ իմոց բանիցս հաւատայցէք։

ԳԼ. Զ

Դ.Գ. Յետ այսորիկ գնաց Յիսուս յայնկոյս 1
ծովուն Գալիլեացւոց Տիբերեայ։
Եւ զհետ երթայր նորա ժողովուրդ բա- 2
զում. զի տեսանէին զնշանսն զոր առնէր
'ի վերայ հիւանդաց։

3 Ել'ի լեառն Յիսուս, և անդ նստէր ա-
շակերտօքն հանդերձ։
4 Եւ էր մերձ զատիկ տօնն Հրէից։
5 Բարձ'ի վեր զաչս իւր Յիսուս և ետես,
զի ժողովուրդ բազում գայր առ նա. ասէ
ցՓիլիպպոս, ուստի՞ գնեսցուք հաց զի
կերիցեն դոքա։
6 Զայս ասէր փորձելով զնա, այլ ինքն
գիտէր զինչ առնելոցն էր։
7 Պատասխանի ետ նմա Փիլիպպոս. եր-
կերիւր դահեկանի հաց չէ դոցա բաւա-
կան, թէպէտ և իւրաքանչիւր ոք սակաւ
ինչ առնուցու։
8 Ասէ ցնա մի յաշակերտացն նորա, Ան-
դրէաս եղբայր Սիմօնի վիմի.
9 Է աստ պատանեակ մի, որ ունի հինգ
նկանակ գարեղէն և երկուս ձկունս.
այլ այն զի՛նչ է առ այդչափ մարդիկ։
10 Ասէ Յիսուս. բազմեցուցէք զմարդիկդ.
և էր խոտ յոյժ'ի տեղւոջն, և բազմեցան
մարդիկն թուով իբրև հինգ հազար։
11 Եւ առ զհացն Յիսուս, և գոհացաւ և
բաշխեաց բազմականացն. նոյնպէս և'ի
ձկանցն որչափ և կամեցան։
12 Եւ իբրև յագեցան, ասէ ցաշակերտսն.
ժողովեցէք զնշխարեալ կոտորսդ, զի մի՛
ինչ կորիցէ։
13 Ժողովեցին և լցին երկոտասան սակառի

զկոտորոցն, 'ի հինգ գարեղէն նկանակէ
անտի՝ որ յաւելաւ ի կերողացն:
Իսկ մարդիկն իբրև տեսին զնշանսն զոր 14
արար՝ ասէին թէ սա է Ճշմարիտ մար-
գարէն որ գալոց էր յաշխարհ:
Դ.Դ Յիսուս իբրև գիտաց եթէ գալոց են 15
յափշտակել զնա՝ զի արասցեն զնա
թագաւոր, գնաց դարձեալ 'ի լեառն
միայն:
Եւ իբրև երեկոյ եղև, իջին աշակերտքն 16
նորա 'ի ծովեզրն:
Եւ մտեալ 'ի նաւ՝ գային յայնկոյս ծո- 17
վուն 'ի Կափառնաում. և իբրև նսեմա-
ցաւ, և չև ևս եկեալ էր առ նոսա Յս.
Եւ ծովն 'ի սաստիկ հողմոյ շնչելոյ 18
յուզէր:
Եւ վարեալ իբրև ասպարէզս քսան և 19
հինգ կամ երեսուն, տեսանէին զՅի-
սուս զի գնայր 'ի վերայ ծովուն և մերձ
էր 'ի նաւն, զարհուրեցան յոյժ:
Նա ասէ ցնոսա. ես եմ, մի երկնչիք: 20
Եւ կամէին ընդունել զնա 'ի նաւն, և 21
վաղվաղակի եհաս նաւն յերկիրն յոր
երթային:
Դ.Ե Ի վաղիւ անդր ժողովուրդն որ կայր 22
յայնկոյս ծովուն, տեսանէր թէ այլ
նաւ ոչ գոյր անդ՝ բայց միայն 'ի միոյն,
յոր մտին աշակերտքն Յիսուսի. և զի

չէր մտեալ Յիսուս ընդ աշակերտսն իւր
'ի նաւն, բայց միայն աշակերտքն նորա
գնացին։
23 Իբրեւ այլ նաւք գային 'ի Տիբերիայ՝ մօտ
յայն տեղին ուր զհացն կերան։
24 Իսկ իբրեւ ետես ժողովուրդն եթէ Յի-
սուս ոչ է անդ եւ ոչ աշակերտքն նորա,
առին նոքա զնաւսն, եւ եկին 'ի Կափառ-
նաում խնդրել զՅիսուս։
25 Եւ իբրեւ գտին զնա յայնկոյս ծովուն,
ասեն ցնա. ռաբբի, ե՞րբ եկիր այսր։
26 Պատասխանի ետ նոցա Յիսուս եւ ասէ.
ամէն ամէն ասեմ ձեզ, խնդրէք զիս,
իբր ոչ եթէ զի նշանս ինչ տեսէք, այլ զի
կերայք 'ի հացէ անտի եւ յագեցարուք։
27 Երթայք գործեցէք մի զկորստական
կերակուրն, այլ զկերակուրն որ մնայ
'ի կեանսն յաւիտենականս, զոր որդին
մարդոյ տացէ ձեզ. քանզի զնա հայր
կնքեաց Աստուած։
28 Ասեն ցնա. զի՞նչ առնիցեմք զի զգործսն
Աստուծոյ գործեսցուք։
29 Պատասխանի ետ Յիսուս եւ ասէ ցնո-
սա. այս է գործն Աստուծոյ, զի հաւա-
տասջիք յայն որ առաքեացն զիս։
30 Ասեն ցնա. զի՞նչ նշան առնիցես զի
տեսցուք եւ հաւատասցուք, զի՞նչ գործի-
ցես։

Հարքն մեր կերան զմանանայն յանա_ 31
պատի անդ, որպէս և գրեալ է՝ Հաց
յերկնից ետ նոցա ուտել։

Ասէ ցնոսա Յիսուս. ամէն ամէն ասեմ 32
ձեզ, եթէ ոչ Մովսէս ետ ձեզ զհացն
յերկնից, այլ հայրն իմ տայ ձեզ զհացն
յերկնից զճշմարիտ։

Զի հաց յԱստուծոյ է որ իջանէ յերկ_ 33
նից և կեանս տայ աշխարհի։

Ասեն ցնա. տէր, յամենայն ժամ տուր 34
մեզ զհացն զայն։

Ասէ ցնոսա Յիսուս, ես եմ հացն կենաց. 35
որ գայ առ իս՝ ոչ քաղցիցէ, և որ հաւա_
տայ յիս՝ ոչ երբէք ծարաւեսցի։

Այլ ասացի ձեզ, թէ տեսէք զիս և ոչ 36
հաւատայք։

Զամենայն զոր տայ ինձ հայր, առ իս 37
եկեսցէ. և որ գայ առ իս, ոչ հանից
արտաքս։

Զի իջի ես յերկնից՝ ոչ զի զկամս իմ 38
արարից, այլ զկամս այնորիկ որ առա_
քեացն զիս։

Դ.Զ Այս են կամք հօր իմոյ որ առաքեացն 39
զիս, զի զամենայն զոր ետ ցիս հայր՝ ոչ
կորուսից ՚ի նմանէ, այլ յարուցից զնա
յաւուրն յետնում։

Այս են կամք հօր իմոյ, զի ամենայն որ 40
տեսանիցէ զորդի և հաւատայցէ ՚ի նա,

ընկալցի զկեանսն յաւիտենականս. և
ես յարուցից զնա յաւուրն յետնում։
41 Տրտնջէին զնմանէ Հրէայքն, զի ասաց
թէ ես եմ հացն իջեալ յերկնից։
42 Եւ ասէին, ո՞չ սա է Յիսուս որդին
Յովսեփու, զորոյ մեք գիտեմք զհայրն
և զմայր. իսկ արդ զիա՞րդ ասէ թէ ես
յերկնից իջի։
43 Պատասխանի ետ Յիսուս և ասէ ցնո-
սա. մի՛ քրթմնջէք ընդ միմեանս։
44 Ոչ ոք կարէ գալ առ իս, եթէ ոչ հայրն
որ զիս առաքեաց՝ ձգեսցէ զնա, և ես
յարուցից զնա յաւուրն յետնում։
45 Գրեալ է 'ի մարգարէս, և եղիցին ամե-
նեքեան ուսեալք յԱստուծոյ. ամենայն
որ լսէ 'ի հօրէ և ուսանի, գայ առ իս։
46 Ոչ եթէ զհայր՝ ուրուք տեսեալ
իցէ, եթէ ոչ որ էն յԱստուծոյ, նա
ետես զհայր։
47 Ամէն ամէն ասեմ ձեզ, զի որ հաւատայ,
ընդունի զկեանսն յաւիտենականս։
48 Ես եմ հացն կենաց։
49 Հարքն ձեր կերան զմանանայն յանա-
պատին և մեռան։
50 Այս է հացն, որ յերկնից իջեալ է. զի
որ ուտիցէ ոք 'ի սմանէ՝ մի՛ մեռանիցի։
51 Ես եմ հացն կենդանի, որ յերկնից
իջեալ։

Եթէ ոք ուտիցէ 'ի հացէ յայսմանէ՝ 52
կեցցէ 'ի յաւիտեան, և հացն զոր ես
տաց՝ մարմին իմ է, զոր ես տաց վասն
կենաց աշխարհի։
Մարտնչէին ընդ միմեանս Հրէայքն և 53
ասէին, զիա՞րդ կարէ սա տալ մեզ ըզ-
մարմին իւր յուտել։
Ասէ ցնոսա Յիսուս. ամէն ամէն ասեմ 54
ձեզ, եթէ ոչ կերիջիք զմարմին որդւոյ
մարդոյ և արբջիք զարիւն նորա, ոչ
ունիք կեանս յանձինս։
Որ ուտէ զմարմին իմ և ըմպէ զարիւն 55
իմ, ունի զկեանսն յաւիտենականս. և
ես յարուցից զնա յաւուրն յետնում։
Զի մարմին իմ ճշմարիտ կերակուր է, 56
և արիւն իմ ճշմարիտ ըմպելի է։
Որ ուտէ զմարմին իմ և ըմպէ զարիւն 57
իմ, յիս բնակեսցէ և ես 'ի նմա։
Որպէս առաքեաց զիս կենդանին Հայր, 58
և ես կենդանի եմ վասն Հօր. և որ ու-
տէն զիս, և նա կեցցէ վասն իմ։
Այս է հացն որ յերկնից իջեալ. ոչ 59
որպէս կերան հարքն ձեր զմանանայն
և մեռան. որ ուտէ զհացս զայս՝ կեցցէ
յաւիտեան։
Զայս ասաց 'ի ժողովրդեանն՝ յուսու- 60
ցանէրն 'ի Կափառնաում։
Եւ բազումք յաշակերտացն իբրև լուան 61

ասեն. խիստ է բանդ այդ, ո՞ կարէ լսել
դմա։
62 Իբրև գիտաց Յիսուս յանձն իւր եթէ
տրտնջեն վասն այնորիկ աշակերտքն նո-
րա, ասէ ցնոսա. այդ գայթագղեցուցա-
նէ՞ զձեզ։
63 Իսկ արդ եթէ տեսանիցէք զՈրդի մար-
դոյ, զի ելանիցէ ուր էր զառաջինն։
64 Հոգին է կենդանարար, մարմին ինչ ոչ
օգնէ. զբանն զոր ես խօսեցայ ընդ ձեզ՝
հոգի է և կեանք։
65 Այլ են ոմանք 'ի ձէնջ որ ոչ հաւատան.
քանզի գիտէր Յիսուս 'ի սկզբանէ, ո՛վ
են այնոքիկ որ ոչն հաւատան, և ո՛վ է
այն որ մատնելոցն է զնա, և ասէր.
66 վասն այնորիկ ասացի ձեզ թէ ոչ ոք
կարէ գալ առ իս, եթէ ոչ իցէ տուեալ
նմա 'ի Հօրէ իմմէ։
67 Յայսմանէ բազումք յաշակերտացն նորա
չոգան յետս, և ոչ ևս շրջէին ընդ նմա։
68 Ասէ Յիսուս ցերկոտասան աշակերտսն.
միթէ և դուք կամիք երթալ։
69 Պատասխանի ետ նմա Սիմոն Պետրոս.
տէր, առ ո՞վ երթիցուք. բանս կենաց
յաւիտենականաց ունիս։
70 Եւ մեք հաւատացաք և ծանեաք եթէ
դու ես Քրիստոս որդի Աստուծոյ։
71 Պատասխանի ետ նոցա Յիսուս. ո՞չ ես

զձեզ զերկոտասանսդ ընտրեցի, և միդ
'ի ձէնջ սատանայ է։
Եւ ասէր զՍիմովնեան Յուդայէ Սկա֊ 72
րիովտացւոյ, զի նա իսկ մատնելոց էր
զնա և մի էր յերկոտասանիցն։

Գլ. Է

Դէ Եւ յետ այսորիկ շրջէր Յիսուս 'ի 1
Գալիլեա. քանզի ոչ կամէր 'ի Հրէաս֊
տանի շրջել, զի խնդրէին զնա Հրէայքն
սպանանել։
Եւ էր մերձ տօնն Հրէից տաղաւարա֊ 2
հարաց։
Ասեն ցնա եղբարքն նորա. գնա աստի 3
և երթ 'ի Հրէաստան. զի և աշակերտքն
քո տեսցեն զգործսդ քո զոր գործես։
Զի ոչ ոք է որ 'ի ծածուկ ինչ գործէ՝ 4
և խնդրէ ինքն համարձակ լինել. եթէ
զայդ գործես, յայտնեա զանձն քո
աշխարհի։
Քանզի և եղբարքն իսկ չէին հաւա֊ 5
տացեալ 'ի նա։
Ասէ ցնոսա Յիսուս. ժամանակ իմ չև է 6
հասեալ, բայց ձեր ժամանակ յամենայն
ժամու պատրաստ է։
Ոչ կարէ աշխարհս ատել զձեզ. բայց 7
զիս ատեայ, զի ես վկայեմ վասն նորա
եթէ գործքն իւր չարութեան են։

8 Դուք երթայք 'ի տօնն յայն, ես ոչ երթամ 'ի տօնն յայն. զի իմ ժամանակ չեւ է լցեալ:

9 Զայս իբրեւ ասաց, ինքն մնաց անդէն 'ի Գալիլեա:

10 Իբրեւ ելին եղբարքն նորա, ապա եւ ինքն ել 'ի տօնն, ոչ յայտնի այլ իբրեւ 'ի ծածուկ:

11 Եւ Հրէայքն խնդրէին զնա 'ի տօնի անդ եւ ասէին, ո՞ւր իցէ նա:

12 Եւ քրթմնջիւն էր զնմանէ 'ի ժողովուրդսն. կէսքն ասէին թէ բարւոք է. այլքն ասէին, ո՛չ այլ մոլորեցուցանէ զժողովուրդն:

13 Եւ ոչ ոք համարձակ խօսէր զնմանէ վասն երկիւղին Հրէից:

14 Իբրեւ տօնն ընդմիջեցաւ, ել Յիսուս 'ի ԵԿ
տաճարն եւ ուսուցանէր:

15 Զարմանային Հրէայքն եւ ասէին, զիա՞րդ զգիրս գիտէ սա, զի ուսեալ ընաւ չիք:

16 Պատասխանի ետ նոցա Յիսուս եւ ասէ. իմ վարդապետութիւնս չէ իմ, այլ այնորիկ որ առաքեացն զիս:

17 Եթէ ոք կամի զկամս նորա առնել, գիտասցէ վասն վարդապետութեանս, յԱստուծո՞յ իցէ արդեօք եթէ ես ինչ յանձնէ իմմէ խօսիմ:

Որ յանձնէ իւրմէ խօսի՝ փառս անձին 18
իւրում խնդրէ. իսկ որ խնդրէ զփառս
այնորիկ որ առաքեացն զնա՝ նա ճշմա֊
րիտ է, եւ անիրաւութիւն ոչ գոյ 'ի նմա։
Ո՞չ Մովսէս ետ ձեզ զօրէնսն, եւ ոչ ոք 'ի 19
ձէնջ առնէ զօրէնսն։
Զի՞ խնդրէք զիս սպանանել. պատաս֊ 20
խանի ետ ժողովուրդն եւ ասէ. դեւ գոյ
'ի քեզ, ո՞վ խնդրէ զքեզ սպանանել։
Պատասխանի ետ նոցա Յիսուս եւ ասէ, 21
գործ մի գործեցի եւ ամենեքին զարմա֊
ցեալ էք։
Վասն այնորիկ Մովսէս ետ ձեզ թլփա֊ 22
տութիւն, զի ոչ եթէ 'ի Մովսիսէ էր,
այլ 'ի հարց անտի. եւ 'ի շաբաթու թլ֊
փատէք զմարդ։
Իսկ արդ եթէ թլփատութիւն առնու 23
մարդ 'ի շաբաթու, զի մի՛ օրէնքն Մով֊
սեսի լուծցին, ընդ իս ցասուցեալ էք զի
ողջոյն իսկ մարդ բժշկեցի 'ի շաբաթու։
ԵԲ Մի՛ ըստ աչս դատէք, այլ ուղիղ դատաս֊ 24
տան արարէք։
Ասէին ոմանք յԵրուսաղէմացւոց անտի. 25
ո՞չ նա է սա զոր խնդրէինն սպանանել։
Եւ աւասիկ յայտնապէս խօսի, եւ չա֊ 26
սեն ինչ ընդ դմա. գուցէ արդեօք եւ
իշխանքն գիտացին թէ սա իցէ Քրիս֊
տոսն։

27 Այլ զսա գիտեմք ուստի է. իսկ Քրիս֊
տոսն յորժամ գայցէ, ոչ ոք գիտէ ուս֊
տի է։
28 Աղաղակեաց Յիսուս ՚ի տաճարին, ու֊
սուցանէր և ասէր. և զիս գիտէք, և ուս֊
տի եմ գիտէք. և յանձնէ իմմէ ոչ եմ
եկեալ, այլ է ճշմարիտ որ առաքեացն
զիս՝ զոր դուքն ոչ գիտէք։
29 Ես գիտեմ զնա, զի ՚ի նմանէ իսկ եմ,
և նա առաքեաց զիս։
30 Խնդրէին զնա ունել և ել ՚ի ձեռաց նո֊
ցա, և ոչ ոք արկ ՚ի նա ձեռն, զի չև էր
հասեալ ժամ նորա։
31 Եւ բազումք ՚ի ժողովրդենէն հաւատա֊
ցին ՚ի նա, և ասէին. Քրիստոսն յոր֊
ժամ գայցէ՝ միթէ աւելի՞ ինչ նշանս առ֊
նիցէ քան զոր սայս առնէ։
32 Եւ լուան Փարիսեցիքն զտրտունջ ժո֊
ղովրդեանն զնմանէ, և առաքեցին քա֊
հանայապետքն և Փարիսեցիք սպաս֊
ւորս զի կալցին զնա։
33 Ասէ Յիսուս. փոքր մի ևս ժամանակ
ընդ ձեզ եմ, և երթամ առ այն որ առա֊
քեացն զիս։
34 Խնդրեցէք զիս և ոչ գտանիցէք, և ուր
եսն երթամ, դուք ոչ կարէք գալ։
35 Ասեն Հրէայքն ընդ միմեանս. իսկ յո՞
երթայցէ դա զի մեք ոչ գտանիցեմք զդա.

միթէ 'ի սփիւռս հեթանոսաց երթայցէ
և ուսուցանիցէ զհեթանոսս:
Զի՞նչ է բանն այն զոր ասաց. խնդրի- 36
ցէք զիս և ոչ գտանիցէք, և ուր եմն
երթամ՝ դուք ոչ կարէք գալ:
ԵԳ. Ի վերջնում աւուր մեծի տօնին կայր 37
Յիսուս աղաղակէր և ասէր. եթէ ոք
ծարաւի իցէ՝ եկեսցէ առ իս և արբցէ:
Որ հաւատայ յիս, որպէս և ասեն գիրք, 38
գետք յորովայնէ նորա բղխեսցեն ջրոց
կենդանութեան:
Զայս ասէր վասն հոգւոյն զոր ընդու- 39
նելոց էին որ հաւատային 'ի նա, զի չև
էր հոգի, քանզի Յիսուս չև էր փառա-
ւորեալ:
Ոմանք 'ի ժողովրդենէն իբրև լուին ըզ- 40
բանս զայս, ասէին. սա է ճշմարիտ մար-
գարէն:
Այլքն ասէին, սա է Քրիստոսն. իսկ 41
կէսքն ասէին, միթէ 'ի Գալիլեէ՞ գա-
լոց իցէ Քրիստոսն:
Ո՞չ գիրք ասեն եթէ 'ի զաւակէ Դաւ- 42
թի և 'ի Բեթղեհէմ գեղջէ՝ ուր Դա-
ւիթն էր, գալոց է Քրիստոս:
Եւ եղև հերձուած 'ի մէջ ժողովըր- 43
դեանն վասն նորա:
Եւ ոմանք 'ի նոցանէ կամէին ունել 44
զնա. այլ ոչ ոք մխեաց 'ի նա ձեռս:

45 Եւ եկին անդրէն սպասաւորքն առ քա-
հանայապետսն և Փարիսեցիս, և ասեն
նոքա ցնոսա. ընդէ՞ր ոչ ածէք զնա
այսր։
46 Պատասխանի ետուն սպասաւորքն և ա-
սեն. ոչ երբէք այնպէս խօսեցաւ մարդ
որպէս այրն այն։
47 Պատասխանի ետուն Փարիսեցիքն և
ասեն. միթէ և դո՞ւք մոլորեցարուք։
48 Միթէ ոք յիշխանացն հաւատա՞ց 'ի նա
կամ 'ի Փարիսեցւոց։
49 Այլ այն խաժամուժ ամբոխ, որ ոչ
գիտէ զօրէնս, և նզովեալք են։
50 Ասէ Նիկոդեմոս ցնոսա՝ որ եկեալն էր
առ նա 'ի գիշերի յառաջագոյն, և մի
էր 'ի նոցանէ։
51 Միթէ օրէնքն մեր դատի՞ն զմարդ՝ ե-
թէ ոչ լուեն ինչ նախ 'ի նմանէ, կամ
գիտեն զի՞նչ գործէ։
52 Պատասխանի ետուն նմա և ասեն. մի-
թէ և դո՞ւ ես 'ի Գալիլեէ իցես. քըն-
նեա և տես, զի մարգարէ 'ի Գալիլեէ
ոչ յառնէ։
53 Եւ գնացին իւրաքանչիւր ոք 'ի տեղի
իւր։

Գլ. Ը

Իսկ Յիսուս գնաց 'ի լեառն Ձիթե- 1
նեաց։
Եւ ընդ առաւօտն դարձեալ եկն 'ի տա- 2
ճարն. և գայր առ նա ամենայն ժողո-
վուրդն. և նստեալ ուսուցանէր զնոսա։
Ածին առ նա դպիրքն և քահանայա- 3
պետքն և Փարիսեցիք՝ կին մի ըմբռնեալ
'ի շնութեան. և կացուցեալ զնա ա-
ռաջի,
Ասեն ցնա. վարդապետ, կինս այս ըմ- 4
բռնեալ՝ ինքն յայտնապէս շնացեալ է։
Եւ յօրէնս Մովսէս մեզ պատուիրեաց 5
զայսպիսիս քարկոծել. արդ դու զի՞նչ
ասես վասն դորա։
Զայս ասէին փորձելով զնա՝ զի ունի- 6
ցին ամբաստանութիւն զնմանէ. իսկ
Յիսուս 'ի խոնարհ նայելով գրէր մա-
տամբն յերկրի։
Իսկ իբրև ստիպեցին հարցանելով ցնա, 7
հայեցեալ 'ի վեր ասէ ցնոսա. անմեղն
'ի ձէնջ՝ նախ նա ընկեսցէ քար 'ի վերայ
դորա։
Եւ դարձեալ 'ի խոնարհ նայելով՝ գրէր 8
յերկրի։
Եւ լուեալ ելանէին մի ըստ միոջէ՝ 9
սկսեալ յառաջնոցն մինչև 'ի վերջինս.

և մնաց միայն Յիսուս, և կինն կայր ա-
ռաջի նորա։
10 Պատասխանի ետ Յիսուս և ասէ ցնա.
կին դու, ո՞ւր են, ոչ ոք զքեզ դատա-
պարտեաց։
11 Եւ ասէ, ոչ տէր. և ասէ Յիսուս, և ոչ
ես դատապարտեմ զքեզ, երթ յայսմ
հետէ մի մեղանչեր։
12 Դարձեալ խօսեցաւ ընդ նոսա Յիսուս ԵԴ
և ասէ. ես եմ լոյս աշխարհի. որ գայ
զկնի իմ, ընդ խաւար մի գնասցէ. այլ
ընկալցի զլոյսն կենաց։
13 Ասեն ցնա Փարիսեցիքն. դու վասն ան-
ձին քո վկայես, և վկայութիւն քո չէ
ճշմարիտ։
14 Պատասխանի ետ Յիսուս և ասէ ցնո-
սա. թէպէտ և ես վկայեմ վասն անձին
իմոյ, վկայութիւն իմ ճշմարիտ է. զի
գիտեմ ուստի եկի և յո՞ երթամ, բայց
դուք ոչ գիտէք ուստի գամ կամ յո՛
երթամ։
15 Դուք ըստ մարմնոյ դատիք, ես ոչ դա-
տիմ և ոչ զոք։
16 Թէպէտ և դատիմ ես զոք՝ դատաստանն
իմ ճշմարիտ է. զի չեմ միայն, այլ ես և
որ առաքեացն զիս Հայր։
17 Եւ յօրէնսն իսկ ձեր գրեալ է՝ թէ եր-
կուց մարդոց վկայութիւն ճշմարիտ է։

Ես եմ որ վկայեմ վասն իմ, և վկայէ 18
վասն իմ որ առաքեացն զիս Հայր։
Ասէին ցնա. ո՞ւր է Հայր քո. պատաս- 19
խանի ետ Յիսուս և ասէ ցնոսա. ոչ
զիս գիտէք և ոչ զՀայրն իմ. եթէ զիս
գիտէիք և զՀայրն իմ թերևս գի-
տէիք։
Զայս բան խօսեցաւ ՚ի տան գանձին՝ 20
յորժամ ուսուցանէր ՚ի տաճարի անդ.
և ոչ ոք կալաւ զնա, զի չև ևս հասեալ
էր ժամ նորա։
ԵԵ Ասէ դարձեալ ցնոսա Յիսուս. ես եր- 21
թամ, և խնդրիցէք զիս և ՚ի մեղս ձեր
մեռանիցիք. զի ուր ես երթամ, դուք
ոչ կարէք գալ։
Ասէին Հրեայքն. միթէ զիւրովի՞ն եր- 22
թայցէ, զի ասէ թէ ուր ես երթամ՝
դուք ոչ կարէք գալ։
Եւ ասէ ցնոսա. դուք ՚ի ներքոյ աստի 23
էք, և ես ՚ի վերուստ անտի եմ. դուք
յաշխարհէ աստի էք, ես չեմ յայսմ
աշխարհէ։
Բայց ասացի ձեզ թէ ՚ի մեղս ձեր մե- 24
ռանիցիք. զի թէ ոչ հաւատայցէք թէ
ես եմ, մեռանիցիք ՚ի մեղս ձեր։
Ասեն ցնա, դու ո՞վ ես. ասէ ցնոսա Յի- 25
սուս, Նախ զի և խօսիմ իսկ ընդ ձեզ։
Բազում ինչ ունիմ վասն ձեր խօսել և 26

դատել. այլ որ առաքեացն զիս՝ ճշմարիտ
է, և ես զոր լուայ 'ի նմանէ՝ զայն խօսիմ
յաշխարհի:
27 Եւ ոչ գիտացին թէ զՀօրէ ասէր ցնոսա:
28 Ասէ ցնոսա Յիսուս. յորժամ բարձրա-
ցուցանիցէք զորդի մարդոյ՝ յայնժամ
գիտասջիք թէ ես եմ. և յանձնէ իմմէ
ինչ ոչ առնեմ, այլ որպէս ուսոյց զիս
հայրն իմ, զայն խօսիմ:
29 Եւ որ առաքեացն զիս՝ ընդ իս է. ոչ
եթող զիս միայն, զի ես զհաճոյս նորա
առնեմ հանապազ:
30 Իբրև զայս խօսեցաւ՝ բազումք հաւա-
տացին 'ի նա:
31 Եւ ասէր Յիսուս առ Հրէայսն հաւա- ԵԶ
տացեալս. եթէ դուք կացջիք 'ի բանի
իմում, ճշմարիտ աշակերտք իմ էք:
32 Եւ ծանիջիք զճշմարտութիւնն, և ճշ-
մարտութիւնն ազատեսցէ զձեզ:
33 Պատասխանի ետուն նմա և ասեն.
զաւակ Աբրահամու եմք, և ոչ ումեք
երբէք ծառայեցաք. զիա՞րդ ասես թէ
ազատք լինիջիք:
34 Պատասխանի ետ նոցա Յիսուս. ամէն
ամէն ասեմ ձեզ, եթէ ամենայն որ առ-
նէ զմեղս՝ ծառայ է մեղաց:
35 Եւ ծառայն ոչ յաւիտեան կայ 'ի տան,
իսկ որդին յաւիտեան կայ:

Իսկ արդ՝ եթէ որդին զձեզ ազատեսցու֊ 36
ցէ, ճշմարիտ ազատք լինիջիք։
Գիտեմ զի զաւակ Աբրահամու էք. այլ 37
խնդրէք սպանանել զիս, զի բանին իմոյ
չիք տեղի ՚ի ձեզ։
Ես զոր տեսի առ Հօր իմում՝ խօսիմ. 38
և դուք զոր լուարուք ՚ի Հօրէն ձերմէ՝
առնէք։
Պատասխանի ետուն նմա և ասեն, Հայր 39
մեր Աբրահամ է. ասէ ցնոսա Յիսուս,
եթէ որդիք Աբրահամու էիք՝ զգործս
Աբրահամու գործէիք։
Այլ այժմիկ խնդրէք սպանանել զիս, 40
զայր մի՝ որ ձեզ զճշմարտութիւն խօ֊
սեցայ, զոր լուայ ՚ի Հօրէ իմմէ. զայդ
Աբրահամ ոչ արար։
Դուք առնէք զգործս հօրն ձերոյ. ասեն 41
ցնա, մեք ՚ի պոռնկութենէ չեմք ծնեալ,
մի է Հայր մեր Աստուած։
Ասէ ցնոսա Յիսուս. եթէ Աստուած էր 42
Հայր ձեր, սիրէիք արդեօք զիս. զի ես
յԱստուծոյ ելի և եկի, և ոչ եթէ յան֊
ձնէ ինչ եկի, այլ նա առաքեաց զիս։
Ընդէ՞ր զխօսս իմ ոչ գիտէք դուք. վասն 43
զի ոչ կարէք լսել զբանն իմ։
Դուք ՚ի հօրէ ՚ի սատանայէ էք. և 44
զցանկութիւնս հօրն ձերոյ կամիք առ֊
նել. զի նա մարդասպան էր ՚ի սկզբա֊

նէ, և 'ի ճշմարտութեան ոչ եկաց, զի
ոչ գոյ ճշմարտութիւն 'ի նմա. յորժամ
խօսիցի սուտ՝ յիւրոց անտի խօսի. զի
սուտ է և հայր նորա:
45 Իսկ ես զի զճշմարտութիւն խօսիմ, ոչ
հաւատայք ինձ:
46 Ո՞ 'ի ձէնջ յանդիմանէ զիս վասն մե-
ղաց. եթէ զճշմարիտն ասեմ, ընդէ՞ր ոչ
հաւատայք ինձ:
47 Որ էն յԱ՟յ՝ զբանս Ա՟յ լսէ, և դուք
վ՟ն այնորիկ ոչ լսէք՝ զի չէք յԱստուծոյ:
48 Պատասխանի ետուն Հրէայքն և ասեն
ցնա. ո՞չ բարւոք ասեմք մեք եթէ Սա-
մարացի ես դու, և դև գոյ 'ի քեզ:
49 Պատասխանի ետ Յիսուս և ասէ. յիս
դև ոչ գոյ, այլ պատուեմ զհայր իմ, և
դուք անարգէք զիս:
50 Ես ոչ խնդրեմ զփառս իմ. է որ խնդրէն
և դատի:
51 Ամէն ամէն ասեմ ձեզ, եթէ ոք զբանն
իմ պահեսցէ՝ զմահ մի տեսցէ 'ի յաւի-
տեան:
52 Ասեն ցնա Հրէայքն, արդ գիտացաք
թէ դև գոյ 'ի քեզ. Աբրահամ մեռաւ
և մարգարէքն, և դու ասես՝ եթէ ոք
զբանն իմ պահեսցէ, մի ճաշակեսցէ
զմահ 'ի յաւիտեան:
53 Միթէ դու մե՞ծ ինչ ոք իցես քան զհայր

մեր Աբրահամ՝ որ մեռաւ, և մարգա-
րէքն մեռան. արդ դու զո՞ առնես զքեզ։
Պատասխանի ետ Յիսուս. եթէ ես 54
փառաւորեմ զանձն իմ, փառքն իմ ոչ
ինչ են. է հայր որ փառաւորէ զիս, զոր-
մէ դուքն ասէք թէ Աստուած մեր է։
Եւ ոչ ճանաչէք զնա, բայց ես գիտեմ 55
զնա. և թէ ասեմ, թէ ոչ գիտեմ զնա՝
ձեզ նման սուտ լինիմ. այլ գիտեմ զնա,
և զբան նորա պահեմ։
Աբրահամ հայր ձեր ցնծացաւ տեսա- 56
նել զօր իմ, ետես և ուրախ եղև։
Ասեն ցնա Հրէայքն. յիսուն ամ չև ևս 57
է քո, և զԱբրահա՞մ տեսեր։
Ասէ ցնոսա Յս. ամէն ամէն ասեմ ձեզ, 58
յառաջ քան զլինելն Աբրահամու եմ ես։
Վէմս առին զի արկցեն ՚ի վ՛ր ն՛ր, և Յս 59
խոյս ետ և ել գնաց ՚ի տաճարէ անտի։

Գլ. Թ

ԵԷ Եւ մինչդեռ անցանէր, ետես այր մի 1
կոյր ՚ի ծնէ։
Եւ հարցին ցնա աշակերտքն նորա և ա- 2
սեն. ռաբբի, ո՞յր մեղս է, սորա՝ թէ հօր
և մօր իւրոյ, զի կոյր ծնցի։
Պատասխանի ետ Յիսուս. ոչ դորա 3
մեղս է, և ոչ հօր և մօր իւրոյ. այլ զի
յայտնի լիցին գործքն Աստուծոյ՚ի դմա։

4 Եւ ինձ պարտ է գործել զգործս այնո-
րիկ որ առաքեացն զիս, մինչ աւուր
կայ․ գայ գիշեր՝ յորժամ ոչ ոք կարէ
գործել։
5 Մինչդեռ յաշխարհի եմ, լոյս եմ աշ-
խարհի։
6 Զայս իբրեւ ասաց, եթուք ՚ի գետին և
արար կաւ ՚ի թքոյն, և ծեփեաց զկաւն
՚ի վերայ աչաց կուրին։
7 Եւ ասէ ցնա, երթ լուա յաւազանին
Սելովմայ, որ թարգմանի առաքեալ․
չոգաւ լուացաւ, եկն և տեսանէր։
8 Իսկ դրացիքն՝ և որոց տեսեալն էր զնա
յառաջագոյն թէ մուրացիկ էր, ասէին․
ոչ սա էր որ նստէրն և մուրանայր․ կէսքն
ասէին․ նա է։
9 Այլքն ասէին․ ոչ, այլ նման է նմա․ և
ինքն ասէր թէ ես եմ։
10 Ասեն ցնա, իսկ զիարդ բացան աչք քո։
11 Նա ետ պատասխանի․ այր մի որում
Յիսուսն ասեն, կաւ արար և ծեփեաց
զաչս իմ, և ասէ ցիս․ երթ ՚ի Սելովամ
և լուա․ չոգայ լուացայ և տեսանեմ։
12 Ասեն ցնա, ուր է նա․ ասէ ցնոսա, ոչ
գիտեմ։
13 Ածին առ Փարիսեցիսն զնա որ երբեմն
կոյրն էր։
14 Եւ էր շաբաթ յորժամ զկաւն արար

Յիսուս և եբաց զաչս կուրին։
Դարձեալ հարցանէին զնա Փարիսե- 15
ցիքն թէ զիա՞րդ տեսանես. և նա ասէ
ցնոսա. կաւ եդ 'ի վերայ աչաց իմոց, և
լուացայ և տեսանեմ։
Ասեն ոմանք 'ի Փարիսեցւոցն. ոչ է 16
այրն այն յԱստուծոյ, զի զշաբաթս ոչ
պահէ. կէսքն ասէին, իսկ զիա՞րդ կարէ
մարդ մեղաւոր այսպիսի նշանս առնել.
և էին հերձուածք 'ի մէջ նոցա։
Ասեն դարձեալ ցկոյրն. դու զի՞ ասես 17
վասն նորա զի եբաց զաչս քո. և նա ա-
սէ, թէ մարգարէ է։
Եւ ոչ հաւատային Հրէայքն զնմանէ 18
թէ կոյր էր և բացաւ, մինչև կոչեցին
զծնողս բացելոյն։
Հարցին ցնոսա և ասեն, սա՞ է որդին 19
ձեր, զորմէ դուքն ասէիք եթէ կոյր
ծնաւ. արդ զիա՞րդ տեսանէ։
Պատասխանի ետուն նոցա ծնողքն նորա 20
և ասեն. գիտեմք զի սա է որդին մեր,
և զի կոյր ծնաւ։
Բայց զիա՞րդ այժմ տեսանէ ոչ գի- 21
տեմք. կամ թէ ո՞ եբաց զաչս դորա՝ մեք
ոչ գիտեմք. ցդա իսկ հարցէք, ինքնին 'ի
չափ հասեալ է. ինքն իսկ խօսեսցի վասն
իւր։
Զայս ասացին ծնողքն նորա, զի երկըն- 22

չէին ՚ի Հրէիցն. քանզի ուխտ եդեալ էր
Հրէից, եթէ որ խոստովանեսցի զնա
Ք͞ն՝ ՚ի բաց կացցէ ՚ի ժողովրդենէն։
23 Վասն այնորիկ ասացին ծնողքն նորա,
թէ ինքնին ՚ի չափ հասեալ է, զնա իսկ
հարցէք։
24 Դարձեալ կրկին անգամ կոչեցին զայրն
որ կոյրն էր, և ասեն ցնա. տուր փառս
Աստուծոյ, մեք գիտեմք զի այրն այն
մեղաւոր է։
25 Եւ նա ասէ. թէ մեղաւոր իցէ՝ ես ոչ
գիտեմ. բայց զայս գիտեմ, զի կոյր էի
և արդ տեսանեմ։
26 Դարձեալ ասեն ցնա. զի՞նչ արար քեզ,
զիա՞րդ եբաց զաչս քո։
27 Պատասխանի ետ նոցա. այժմ ասացի ձեզ
և ոչ լուարուք, զի՞ կամիք միւսանգամ
լսել. միթէ և դո՞ւք կամիք աշակերտել նմա՞։
28 Նոքա հայհոյէին զնա և ասէին. դու
լիջիր նորա աշակերտ, մեք Մովսիսի ա-
շակերտք եմք։
29 Մեք գիտեմք զի ընդ Մովսիսի խօսե-
ցաւ Ա͞ծ. զսա ոչ գիտեմք ուստի իցէ։
30 Պատասխանի ետ այրն և ասէ ցնոսա.
այդ իսկ են սքանչելիք, զի դուք ոչ գի-
տէք ուստի իցէ, և զիմ զաչս եբաց։
31 Գիտեմք զի Աստուած մեղաւորաց ոչ
լսէ. բայց եթէ աստուածապաշտ ոք իցէ

և զկամս նորա առնիցէ, նմա լսէ։
Ի յաւիտենից ոք ոչ լուաւ եթէ եբաց 32
ոք զաչս կուրի 'ի ծնէ կոյր ծնելոյ։
Եթէ ոչ յԱստուծոյ էր այրն այն, ոչ 33
կարէր առնել ինչ։
Պատասխանի ետուն և ասեն ցնա. 'ի 34
մեղս իսկ ծնեալ ես ամենևին, և դու
վարդապետ լինիս մեր. և հանին զնա
արտաքս։
Լուաւ Յիսուս եթէ հանին զնա ար- 35
տաքս, և իբրև եգիտ զնա ասէ ցնա. դու
հաւատա՞ս յորդի Աստուծոյ։
Նա պատասխանի ետ և ասէ. տէր, ո՞վ 36
է զի հաւատացից 'ի նա։
Ասէ ցնա Յիսուս. և տեսեր զնա, և որ 37
խօսիդ ընդ քեզ նա է։
Եւ նա ասէ, հաւատամ տէր, և երկիր 38
եպագ նմա։
ՁԿ Եւ ասէ Յիսուս. 'ի դատաստան եկի 39
յաշխարհս յայս, զի որ ոչն տեսանեն
տեսցեն, և որք տեսանենն կուրասցին։
Լուան ոմանք 'ի փարիսեցւոցն՝ որք ընդ 40
նմա էին, և ասեն ցնա. միթէ և մեք
կո՞յրք իցեմք։
Ասէ ցնոսա Յիսուս. եթէ կոյրք էիք, 41
ոչ էր ձեր մեղ. բայց արդ ասէք եթէ
տեսանեմք, և մեղքն ձեր 'ի ձեզ հաս-
տատեալ են։

Գլ. Ժ

1 Ամէն ամէն ասեմ ձեզ, որ ոչ մտանէ
ընդ դուռն ՚ի գաւիթ ոչխարաց, այլ
ընդ այլ ելանէ՝ նա գող է եւ աւազակ։
2 Իսկ որ մտանէ ընդ դուռն, հովիւ է
ոչխարաց։
3 Նմա դռնապանն բանայ, եւ ոչխարքն
ձայնի նորա լսեն. եւ զիւր ոչխարսն կոչէ
յանուանէ, եւ հանէ զնոսա։
4 Եւ յորժամ զիւրսն զամենայն հանիցէ՝
առաջի նոցա երթայ, եւ ոչխարքն զհետ
նորա երթան, զի ճանաչեն զձայն նորա։
5 Զօտարի զհետ ոչ երթիցեն, այլ փա-
խիցեն ՚ի նմանէ, զի ոչ ճանաչեն զձայն
օտարաց։
6 Զայս առակ ասաց նոցա Յիսուս, եւ
նոքա ոչ գիտէին եթէ զի՞նչ էր որ խօսէրն
ընդ նոսա։
7 Դարձեալ ասէ ցնս Յիսուս. ամէն ամէն
ասեմ ձեզ, զի ես եմ դուռն ոչխարաց։
8 Ամենեքեան որ յառաջ քան զիս եկին,
գողք էին եւ աւազակք. այլ ոչ լուան նո-
ցա ոչխարքն։
9 Ես եմ դուռն. ընդ իս եթէ ոք մտանիցէ,
կեցցէ՝ մտցէ եւ ելցէ, եւ ճարակ գտցէ։
10 Գող ոչ գայ՝ եթէ ոչ զի գողասցի եւ
սպանցէ եւ կորուսցէ. ես եկի զի զկեանս

ունիցին, և առաւել ևս ունիցին։

ԶԲ *Ես եմ հովիւն քաջ. հովիւ քաջ զանձն* 11
իւր դնէ 'ի վերայ ոչխարաց։
Իսկ վարձկանն որ ոչ է հովիւ, որոյ ոչ 12
իւր են ոչխարքն, իբրև տեսանէ զգայլն
զի գայ՝ թողու զոչխարսն և փախչի. և
գայլն յափշտակէ զնոսա և ցրուէ։
Քանզի վարձկան է, և չէ փոյթ նմա 13
վասն ոչխարացն։
Ես եմ հովիւն քաջ, և ճանաչեմ զիմսն 14
և ճանաչիմ յիմոցն։
Որպէս գիտէ զիս Հայր, գիտեմ և ես 15
զՀայր. և զանձն իմ դնեմ 'ի վերայ ոչ-
խարաց։
Նաև այլ ևս ոչխարք են իմ, որ ոչ են 16
յայսմ գաւթէ. և զայն ևս պարտ է ինձ
ածել այսր. և ձայնի իմում լուիցեն, և
եղիցին մի հօտ և մի հովիւ։
Վասն այնորիկ սիրէ զիս Հայր իմ, զի ես 17
դնեմ զանձն իմ. զի միւսանգամ առից
զնա։
Ոչ ոք հանէ զնա յինէն. այլ ես դնեմ 18
զնա անձամբ իմով. իշխանութիւն ունիմ
դնել զնա, և իշխանութիւն ունիմ միւս-
անգամ առնուլ զնա. զայս պատուէր
առի 'ի Հօրէ իմմէ։
Դարձեալ հերձուած լինէր 'ի մէջ Հր- 19
րէից վասն բանիցս այսոցիկ։

20 Եւ ասէին բազումք ՚ի նոցանէ. դեւ գոյ
՚ի նմա եւ մոլեգնի, զի՞ բնաւ լսէք նմա։
21 Կէսքն ասէին, այսպիսի բանք ոչ դիւա-
հարի են, միթէ դեւ կարէ՞ զաչս կուրի
բանալ։
22 Եղեն յայնժամ նաւակատիքն յԵրու- Ձգ.
սաղէմ, եւ ձմեռն էր։
23 Եւ շրջէր Յիսուս ՚ի տաճարին ՚ի սրա-
հին Սողոմոնի։
24 Շուրջ եղեն զնովաւ Հրէայքն եւ ասեն.
մինչեւ յե՞րբ թափես զոգիս մեր, եթէ
դու ես Քո̄ն՝ ասա մեզ համարձակ։
25 Պատասխանի ետ նոցա Յիսուս եւ ասէ.
ասացի ձեզ եւ ոչ հաւատայք ինձ. ընդ-
գործսն զոր ես գործեմ յանուն Հօր իմոյ՝
նոքին իսկ վկայեն վասն իմ։
26 Այլ դուք ոչ հաւատայք, զի չէք յոչ-
խարաց անտի իմոց։
27 Ոչխարք իմ ձայնի իմում լսեն, եւ ես
ճանաչեմ զնոսա, եւ զկնի իմ գան։
28 Եւ ես տամ նոցա զկեանսն յաւիտե-
նականս. եւ մի կորիցեն յաւիտեան,
եւ մի ոք յափշտակեսցէ զնոսա ՚ի ձեռաց
իմոց։
29 Հայրն իմ որ ետ ինձ զնոսա, մեծ է
քան զամենայն, եւ ոչ ոք կարէ յափշտա-
կել ՚ի ձեռաց Հօր իմոյ։
30 Ես եւ Հայր իմ մի եմք։

Վէմս առին Հրեայք զի քարկոծ արա֊ 31
ցեն զնա։
Պատասխանի ետ նոցա Յիսուս. բա֊ 32
զում գործս բարիս ցուցի ձեզ ՚ի Հօրէ
իմմէ, վասն որոյ գործոյ ՚ի նոցանէ քար֊
կոծ առնէք զիս։
Պատասխանի ետուն նմա Հրեայքն. 33
վասն բարւոյ գործոյ ոչ առնեմք զքեզ
քարկոծ, այլ վն հայհոյութեան. և զի
դու մարդ ես, և զանձն քո Ած առնես։
Պատասխանի ետ նց Յս. ո՛չ յօրէնսն ձեր 34
գրեալ է, ես ասացի թէ աստուածք իցէք։
Իսկ եթէ զնոսա աստուածս ասէ առ որս 35
բանն Աստուծոյ եղև, և չէ մարթ եղ֊
ծանել գրոյն։
Իսկ զոր Հայր սրբեաց և առաքեաց յաշ֊ 36
խարհ, դուք ասէք թէ հայհոյես. զի
ասացի թէ որդի Աստուծոյ եմ։
Եթէ ոչ գործեմ զգործս Հօր իմոյ, մի՛ 37
հաւատայք ինձ։
Ապա թէ գործեմ, թէ և ինձ ոչ հաւա֊ 38
տայք, սակայն գործոցն հաւատացէք.
զի գիտասջիք և ծանիջիք եթէ Հայր
յիս և ես ՚ի Հայր։
Դարձեալ խնդրէին զնա ունել, և ել ՚ի 39
ձեռաց նոցա։
Եւ գնաց միւսանգամ յայնկոյս Յորդա֊ 40
նանու՝ ՚ի տեղին ուր էր Յովհաննէս

զառաջինն և մկրտէր, և անդ լինէր։
41 Եկին բազումք առ նա և ասէին. զի
Յովհաննէս նշան ինչ ոչ արար։
42 Բայց զամենայն զոր ասաց Յովհաննէս
վասն նորա, ճշմարիտ էր. և բազումք
հաւատացին 'ի նա անդ։

ԳԼ. ԺԱ.

1 Եւ էր ոմն հիւանդ Ղազարոս 'ի Բե- ՁԴ·
թանիա, 'ի գեղջէ Մարեմայ և Մար-
թայի քեռ նորա։
2 Այս այն Մարիամ էր որ օծ զտէրն իւ-
ղով և ջնջեաց զոտս նորա հերով իւրով,
որոյ եղբայրն Ղազարոս հիւանդ էր։
3 Առաքեցին առ նա քորքն նորա և ասեն.
տէր, ահաւասիկ զոր դուն սիրէիր հի-
ւանդացեալ է։
4 Իբրև լուաւ Յիսուս, ասէ. այն հիւան-
դութիւն չէ 'ի մահ, այլ վասն փառացն
Աստուծոյ. զի փառաւոր լիցի որդի Աս-
տուծոյ այնուիկ։
5 Եւ սիրէր Յիսուս զՄարթա և զքոյր
նորա զՄարիամ և զՂազար։
6 Իբրև լուաւ թէ հիւանդացեալ է, զտեղի
կալաւ անդէն ուր էրն՝ աւուրս երկուս։
7 Ապա յետ այնորիկ ասէ ցնոսա. եկայք
երթիցուք միւսանգամ 'ի Հրէաստան։
8 Ասեն ցնա աշակերտքն. ռաբբի, այժմ

Եւ խնդրէին զքեզ Հրեայքն քարկոծ
առնել, և դարձեա՞լ երթաս անդրէն:
Պատասխանի ետ Յիսուս. ո՞չ երկոտա- 9
սան ժամ է աւուր. եթէ ոք գնայ 'ի
տուընջեան՝ ոչ գայթագղի, զի զլոյս աշ-
խարհիս այսորիկ տեսանէ.
Ապա թէ ոք գնայ գիշերի՝ գայթագղի, 10
զի լոյս ոչ գոյ ընդ նմա:
Զայս իբրև ասաց, յետ այսորիկ ասէ 11
ցնա. Ղազարոս բարեկամ մեր ննջեաց,
այլ երթամ զի զարթուցից զնա:
Ասեն ցնա աշակերտքն. տէր, եթէ նըն- 12
ջեաց՝ ապա ապրի:
Այլ Յիսուս վասն մահուն նորա ասէր. 13
նոցա այսպէս թուեցաւ թէ վասն ննջե-
լոյ քնոյն ասէ:
Յայնժամ ասէ ցնոսա Յիսուս յայտ- 14
նապէս. Ղազարոս մեռաւ:
Եւ ես ուրախ եմ վասն ձեր, զի դուք 15
հաւատասջիք ինձ, զի ես չէի անդ. բայց
արդ եկայք երթիցուք առ նա:
Ասէ Թովմաս անուանեալն Երկուո- 16
րեակ ցաշակերտակիցսն. ո՛ն եկայք և
մեք՝ զի ընդ նմա մեռցուք:
Եկն Յիսուս եգիտ զնա չորեքօրեայ 'ի 17
գերեզմանի.
Եւ էր Բեթանիա մերձ յԵրուսաղէմ, 18
իբրև ասպարիսօք հնգետասան:

19 Բազումք 'ի Հրէից անտի եկեալ էին
առ Մարթա եւ Մարիամ, զի մխիթա֊
րեսցեն զնոսա վասն եղբօրն։
20 Մարթա իբրեւ լուաւ թէ Յիսուս գայ,
ընդ առաջ գնաց նորա. բայց Մարիամ
նստէր անդէն 'ի տան։
21 Ասէ Մարթա ցՅիսուս. տէր, եթէ
աստ լեալ էիր, եղբայրն իմ չէր մեռեալ։
22 Այլ եւ արդ գիտեմ, եթէ զոր ինչ խըն֊
դրեսցես յԱստուծոյ՝ տացէ քեզ Ած։
23 Ասէ ցնա Յիսուս. յարիցէ եղբայրն քո։
24 Ասէ ցնա Մարթա. գիտեմ զի յարիցէ
'ի յարութեան յաւուրն յետնում։
25 Ասէ ցնա Յիսուս. ես իսկ եմ յարու֊
թիւն եւ կեանք. որ հաւատայ յիս, թէ֊
պէտ եւ մեռանի՝ կեցցէ։
26 Եւ ամենայն որ կենդանի է եւ հաւատայ
յիս, մի՛ մեռցի 'ի յաւիտեան. հաւա֊
տա՞ս այսմիկ։
27 Ասէ ցնա. այո տէր, ես հաւատացի ե֊
թէ դու ես Քրիստոսն որդի Աստուծոյ,
որ յաշխարհ գալոց էիր։
28 Եւ զայս իբրեւ ասաց, գնաց եւ կոչեաց
զՄարիամ զքոյր իւր լռելեայն եւ ասէ.
վարդապետ եկեալ է եւ կոչէ զքեզ։
29 Նա իբրեւ լուաւ, յարեաւ վաղվաղակի
եւ եկն առ նա։
30 Չեւ եւս էր եկեալ Յիսուս 'ի գեօղն.

այլ էր անդէն 'ի տեղւոջն՝ ուր ընդ առաջ եղեւ նմա Մարթա։

Իսկ Հրէայքն որ էին ընդ նմա 'ի տան 31
անդ եւ մխիթարէին զնա, իբրեւ տեսին
զՄարիամ թէ յարեաւ վաղվաղակի եւ
գնաց, գնացին եւ նոքա զհետ նորա. համարէին
թէ 'ի գերեզմանն երթայ զի
լայցէ անդ։

Իսկ Մարիամ իբրեւ եկն ուր էրն Յի- 32
սուս եւ ետես զնա, անկաւ առ ոտս նորա
եւ ասէ. տէր, եթէ աստ էիր դիպեալ՝
ոչ էր մեռեալ եղբայրն իմ։

Յիսուս իբրեւ ետես զնա զի լայր, եւ որ 33
ընդ նմա էին Հրէայք լային, խռովեցաւ
յոգի իւր իբրեւ զայրացեալ։

Եւ ասէ. ո՞ւր եդիք զնա. ասեն ցնա. 34
տէր, եկ եւ տես։

Եւ արտասուեաց Յիսուս։ 35

Ասէին Հրէայքն. տեսէք, ո՛րչափ սիրէր 36
զնա։

Կէսքն 'ի նոցանէ ասէին. ո՞չ կարէր սա, 37
որ եբաց զաչս կուրին, առնել զի եւ սա
մի՛ մեռցի։

Յիսուս դարձեալ զայրացեալ ընդ միտս 38
իւր, գայ 'ի գերեզմանն. եւ էր այր մի,
եւ վէմ մի եդեալ 'ի վերայ նորա։

Եւ ասէ Յս. 'ի բաց արարէք զվէմդ. 39
ասէ ցնա Մարթա քոյր մեռելոյն. տէր,

արդ հոտեալ իցէ, քանզի չորեքօրեայ է։
40 Ասէ ցնա Յիսուս. ո՞չ ասացի քեզ՝ եթէ
հաւատասցես տեսցես զփառսն Այ։
41 Եւ իբրև 'ի վեր առին զվէմն, Յիսուս
ամբարձ զաչս իւր 'ի վեր և ասէ. Հայր,
գոհանամ զքէն, զի լուար ինձ։
42 Եւ ես գիտէի զի յամենայն ժամ լսես
ինձ. այլ վասն ժողովրդեանս որ շուրջ
կան առնեմ, զի հաւատասցեն թէ դու
առաքեցեր զիս։
43 Զայս իբրև ասաց, 'ի ձայն մեծ աղա-
ղակեաց և ասէ. Ղազարէ, արի եկ ար-
տաքս։
44 Եւ ել մեռեալն ոտիւք կապելովք և
ձեռօքն երիզապնդօք, և երեսօքն վար-
շամակապատօք. և ասէ ցնոսա Յիսուս,
լուծէք զդա և թողէք երթալ։
45 Բազումք 'ի Հրէիցն որ եկեալ էին առ
Մարեմանս, իբրև տեսին զոր արարն՝
հաւատացին 'ի նա։
46 Եւ ոմանք 'ի նոցանէ գնացին առ Փարի-
սեցիսն, և պատմեցին նոցա՝ զոր արարն
Յիսուս։
47 Ժողովեցին քահանայապետքն և Փարի- ՂՂ
սեցիք ատեան, և ասեն. զի՞նչ արասցուք,
զի այրն այն բազում նշանս առնէ։
48 Եթէ թողումք զնա այնպէս, ամենե-
քին հաւատան 'ի նա. և գայցեն Հռ-

ռոմք և բառնայցեն զազգս մեր և
զտեղի։
Մի ոմն ՚ի նոցանէ անուն Կայիափա, որ 49
քահանայապետ էր տարւոյն այնորիկ,
ասէ ցնոսա. դուք ոչ ինչ գիտէք.
Եւ ոչ ընաւ խորհել իսկ, թէ լաւ է մեզ 50
զի այր մի մեռանիցի ՚ի վերայ ժողովըր-
դեանս, և մի՛ ամենայն ազգս կորիցէ։
Զայս ոչ յանձնէ ինչ ասաց. այլ զի քա- 51
հանայապետ էր տարւոյն այնորիկ, մար-
գարէացաւ եթէ մեռանելոց էր Յիսուս
՚ի վերայ ազգին։
Եւ ոչ ՚ի վերայ ազգին միայն, այլ զի և 52
զորդիսն Աստուծոյ զցրուեալսն ժողո-
վեսցէ ՚ի մի։
Ապա յայնմ օրէ խորհուրդ արարին զի 53
սպանցեն զնա։
Եւ Յս այնուհետև ոչ եթէ համարձակ 54
շրջէր ՚ի մէջ Հրէիցն. այլ գնաց անտի
յերկիր մի որ մերձ էր յանապատ, ՚ի
քաղաք մի որում անուն էր Եփրայիմ,
և անդ լինէր աշակերտօքն հանդերձ։
Ձե Եւ էր մերձ զատիկն Հրէից, և բազումք 55
ելին յԵրուսաղէմ ՚ի գաւառէ անտի
յառաջագոյն քան զզատիկն, զի սրբես-
ցեն զանձինս իւրեանց։
Խնդրէին զՅիսուս, և ասէին ընդ մի- 56
մեանս մինչ կային ՚ի տաճարին. զիա՞րդ

թուի ձեզ՝ եթէ ո՞չ գայցէ 'ի տօն այսր.
պատուէր տուեալ էր քահանայապե-
տիցն և Փարիսեցւոց, զի թէ ոք գիտաս-
ցէ թէ ուր է, գուշակեսցէ զնմանէ՝ զի
կալցին զնա:

Գլ. ԺԲ

1 Իսկ Յս՟ վեց աւուրբ յառաջ քան զզա-
տիկն եկն 'ի Բեթանիա, ուր էր Ղա-
զար մեռեալն, զոր յարոյցն 'ի մեռելոց:
2 Եւ արարին անդ նմա ընթրիս, և 'ի
սպասու կայր Մարթա, և Ղազար մի
էր 'ի բազմելոց ընդ նմա:
3 Իսկ Մարեմայ առեալ լիտր մի իւղոյ
Նարդեան ազնուի մեծագնոյ, օծ զոտսն
Յս՟ի, և հերով իւրով մաքրէր զոտս նո-
րա, և տունն լի եղև 'ի հոտոյ իւղոյն:
4 Ասէ մի ոմն յաշակերտաց անտի՝ Յուդա
Իսկարիովտացի, որ մատնելոցն էր զնա:
5 Ընդէ՞ր ոչ իւղդ այդ վաճառեցաւ երեք
հարիւր դենարի, և տուաւ աղքատաց:
6 Զայս ասաց՝ ոչ զի զաղքատաց ինչ փոյթ
էր նմա, այլ զի գող էր և զարկղն ինքն
ունէր, և որ ինչ անկանէր՝ նա կրէր:
7 Ասէ Յիսուս. Թոյլ տուք դմա, զի յօրն
պատանաց իմոց պահեսցէ զայդ:
8 Զաղքատս յամ ժամ ընդ ձեզ ունիք.
զիս ոչ հանապազ ընդ ձեզ ունիք:

Իբրեւ գիտաց ժողովուրդ բազում՚ի Հր-
րէից թէ անդ է՝ եկին, ոչ միայն վասն 9
Յիսուսի, այլ զի և զՂազար տեսցեն,
զոր յարոյց ՚ի մեռելոց։
Խորհուրդ արարին քահանայապետքն՝ 10
զի և զՂազար սպանցեն։
Քանզի բազումք ՚ի Հրէից երթային 11
և հաւատային ՚ի Յիսուս։
ԷԿ Ի վաղիւ անդր ժողովուրդ բազում որ 12
եկեալ էր ՚ի տօնն, իբրեւ լուան թէ գայ
Յիսուս յԵրուսաղէմ,
Առին ոստս արմաւենեաց և ելին ընդ 13
առաջ նորա, աղաղակէին և ասէին. ով-
սաննայ, օրհնեալ որ գաս յանուն տեա-
ռըն՝ Թագաւորդ Իսրայելի։
Եւ գտեալ Յիսուսի էշ մի, նստաւ ՚ի 14
վերայ նորա, որպէս և գրեալ է.
Մի երկնչիր դուստր Սիոնի, ահաւա- 15
դիկ Թագաւոր քո գայ նստեալ՚ի վերայ
յաւանակի իշոյ։
Եւ զայն ինչ ոչ գիտացին աշակերտքն 16
նորա զառաջինն, այլ յորժամ փառաւո-
րեցաւ Յիսուս, յայնժամ յիշեցին եթէ
այն էր որ գրեալն էր վասն նորա, և զայն
արարին նմա։
Եւ ժողովուրդն վկայէր որ էր ընդ նմա, 17
թէ զՂազար կոչեաց ևեթ ՚ի գերեզ-
մանէն, և յարոյց զնա ՚ի մեռելոց։

18 Եւ վասն այնորիկ ընդ առաջ եղեւ նմա
ժողովուրդն, զի լուան եթէ զայն նշանս
արարեալ էր նորա։
19 Իսկ Փարիսեցիքն ասէին ընդ միմեանս.
տեսանէ՞ք զի ոչ ինչ օգտիք, ահաւասիկ
աշխարհ ամենայն զկնի նորա գնաց։
20 Էին անդ ոմանք եւ հեթանոսք յելելոցն
անդր, զի երկիր պագանիցեն ՚ի տօնին։
21 Նոքա մատեան առ Փիլիպպոս որ ՚ի
Բեթսայիդա Գալիլեացւոյն էր, աղա-
չէին զնա եւ ասէին. տէր, կամիմք զՅի-
սուս տեսանել։
22 Գայ Փիլիպպոս եւ ասէ ցԱնդրէաս. Ան-
դրէաս եւ Փիլիպպոս ասեն ցՅիսուս։
23 Եւ Յիսուս պատասխանի ետ նոցա եւ
ասէ. եհաս ժամ զի փառաւորեսցի որդի
մարդոյ։
24 Ամէն ամէն ասեմ ձեզ, եթէ ոչ հատն ԻԲ
ցորենոյ անկեալ յերկիր մեռանիցի,
25 ինքն միայն կայ. ապա եթէ մեռանիցի՝
բազում արդիւնս առնէ։ Որ սիրէ զանձն
իւր՝ արձակէ զնա, եւ որ ատեայ զանձն
իւր յաշխարհիս յայսմիկ՝ ՚ի կեանսն
յաւիտենականս պահեսցէ զնա։
26 Եթէ ոք զիս պաշտիցէ, զկնի իմ եկե-
սցէ. եւ ուր եմ ես՝ անդ եւ պաշտօնեայն
իմ եղիցի. եթէ ոք զիս պաշտիցէ, պա-
տուեսցէ զնա հայրն իմ։

ԺԲ. Բայց այժմ անձն իմ խռովեալ է, և 27
զի՞նչ ասացից եթէ Հայր ապրեցո զիս 'ի
ժամէ աստի յայսմանէ. այլ վասն այնո-
րիկ եկի 'ի ժամս յայս։
Հայր, փառաւորեա զանուն քո. եկն 28
բարբառ յերկնից. և փառաւոր արարի,
և դարձեալ փառաւոր արարից։
Եւ ժողովուրդն որ կայր և լսէր՝ ասէին 29
որոտումն լինել. կէսքն ասէին, Հրեշ-
տակ խօսեցաւ ընդ նմա։
Պատասխանի ետ Յս և ասէ. ոչ վն իմ 30
ինչ եկն բարբառս այս, այլ վասն ձեր։
Այժմիկ դատաստան է աշխարհիս այ- 31
սորիկ. այժմիկ իշխան աշխարհիս այ-
սորիկ ընկեսցի արտաքս։
Եւ ես յորժամ բարձրացայց յերկրէ, 32
զամենեսին ձգեցից առ իս։
Զայս ասէր, նշանակեալ թէ որով 33
մահու մեռանելոց իցէ։
Պատասխանի ետ նմա ժողովուրդն. մեք 34
լուաք յօրինաց եթէ Քրիստոս յա-
ւիտեան կայ, և դու զիա՞րդ ասես թէ
պարտ է բարձրանալ որդւոյ մարդոյ. ո՞վ
է այն որդին մարդոյ։
Ասէ ցնա Յս. փոքր մի ևս ժամանակ 35
լոյս ընդ ձեզ է. գնացէք մինչդեռ զլոյսն
ունիք, զի մի խաւար ձեզ հասցէ. զի որ
գնայ 'ի խաւարի, ոչ գիտէ յո՞ երթայ։

36 Մինչդեռ զլոյսն ընդ ձեզ ունիք՝ հաւա-
տացէք ՚ի լոյսն, զի որդիք լուսոյ եղիջիք.
զայս խօսեցաւ Յիսուս, և չոգաւ թա-
քեաւ ՚ի նոցանէ:
37 Եւ այնչափ նշանս արարեալ էր առաջի
նոցա, և նոքա ոչ հաւատային ՚ի նա:
38 Զի լցցի բանն Եսայեայ մարգարէի զոր
ասացն. տէր, ո՞ հաւատաց ՚ի լուր մեր,
և բազուկ տեառն ո՞ւմ յայտնեցաւ:
39 Վասն այնորիկ ոչ կարէին հաւատալ, զի
միւսանգամ ասէ Եսայի,
40 Թէ կուրացոյց զաչս ն̃ց և ապշեցոյց զսիր-
տըս ն̃ց. զի մի՛ տեսցեն աչօք, և իմասցին
սրտիւք, և դարձցին և բժշկեցից զն̃ս:
41 Զայս ասաց Եսայի՝ զի ետես զփառս
նորա, և խօսեցաւ վասն նորա:
42 Բայց սակայն և յիշխանաց անտի բա-
զումք հաւատացին ՚ի նա. այլ վասն Փա-
րիսեցւոցն ոչ յայտնէին, զի մի՛ ՚ի ժո-
ղովրդենէն ելանիցեն:
43 Քանզի սիրեցին զփառս մարդկան՝ ա-
ռաւել քան զփառսն Աստուծոյ:
44 Եւ Յիսուս աղաղակէր և ասէր. որ ԻԴ.
հաւատայ յիս՝ ոչ հաւատայ յիս, այլ
յայն որ առաքեացն զիս:
45 Եւ որ տեսանէ զիս, զայն տեսանէ՝ որ
առաքեացն զիս:
46 Ես լոյս յաշխարհ եկի, զի ամենայն որ

հաւատայ յիս՝ 'ի խաւարի մի՛ մնասցէ։
Եւ եթէ ոք լուիցէ բանից իմոց և ոչ 47
պահեսցէ, ես ոչ դատիմ զնա. քանզի ոչ
եկի թէ դատեցայց զաշխարհ, այլ զի
փրկեցից զաշխարհ։
Որ անարգէ զիս և ոչ ընդունի զբանս 48
իմ, գոյ որ դատի զնա. բանն զոր ես խօ-
սեցայ՝ նա դատի զնա յաւուրն յետնում։
Զի ես յանձնէ իմմէ ոչ խօսեցայ. այլ 49
որ առաքեացն զիս Հայր, նա ետ ինձ
պատուէր՝ զի՛նչ ասացից և զի՛նչ խօսե-
ցայց։
Եւ գիտեմ եթէ պատուէրն այն կեանք 50
են յաւիտենականք. արդ զոր ես խօ-
սիմ, որպ՟ ասաց ինձ Հայրն՝ այնպէս խօսիմ։

ԳԼ. ԺԳ

ԻՆ Յառաջագոյն քան զտօնն զատկի, գի- 1
տաց Յիսուս թէ հասեալ է ժամ նորա
զի փոխեսցի յաշխարհէ աստի առ Հայր,
սիրեաց զիւրսն որ յաշխարհի աստ էն.
'ի սպառ սիրեաց զնոսա։
Եւ 'ի լինել ընթրեացն, սատանայի իսկ 2
արկեալ էր 'ի սիրտ՝ զի մատնեսցէ զնա
Յուդա Սիմովնի Իսկարիովտացւոյ։
Գիտաց Յիսուս զի զամենայն ինչ ետ 3
Հայր 'ի ձեռս նորա, և թէ յԱստուծոյ
ել և առ Աստուած երթայ։

4 Յառնէ յընթրեաց անտի, և դնէ զհան-
դերձսն, և առեալ զենջակ մի սփածաւ:
5 Եւ ապա առեալ ջուր՝ արկ 'ի կոնք, և
սկսաւ լուանալ զոտս աշակերտացն, և
սրբէր զենջակաւն զոր սփածեալ էր:
6 Գայ առ Սիմովն Պետրոս. և նա ասէ
ցնա. տէր, դո՞ւ զիմ զոտս լուանաս:
7 Պատասխանի ետ նմա Յիսուս և ասէ.
զոր ինչ ես գործեմ, դու այժմ ոչ գի-
տես. բայց ապա գիտասջիր:
8 Ասէ ցնա Պետրոս, ոչ լուասցես զոտս
իմ յաւիտեան. պատասխանի ետ նմա
Յիսուս, եթէ ոչ լուացից զքեզ՝ ոչ ունիս
ընդ իս մասն:
9 Ասէ ցնա Սիմոն Պետրոս. տէր, մի՛ միայն
զոտս իմ, այլ և զձեռս և զգլուխ:
10 Ասէ ցնա Յիսուս. լուացելոյն չէ ինչ
պիտոյ՝ բայց զի զոտսն լուանայցէ. քան-
զի ամենևին սուրբ է. և դուք սուրբ էք,
այլ ոչ ամենեքին:
11 Զի գիտէր զայն որ մատնելոցն էր զնա.
վասն այնորիկ ասաց թէ ոչ ամենեքին
սուրբ էք:
12 Եւ յորժամ լուաց զոտս նոցա, առ զհան-
դերձսն իւր և դարձեալ բազմեցաւ, և
ասէ ցնոսա. գիտէ՞ք զինչ արարի ձեզ:
13 Դուք կոչէք զիս վարդապետ և տէր. և
բարւոք ասէք, քանզի եմ իսկ:

Իսկ արդ եթէ ես լուացի զոտս ձեր 14
տէրս և վարդապետս, և դուք պարտիք
զմիմեանց ոտս լուանալ։
Զի օրինակ մի ետու ձեզ, զի որպէս ես 15
ձեզ արարի, և դուք առնիջիք։
Է.Զ Ամէն ամէն ասեմ ձեզ, ոչ է ծառայ մեծ 16
քան զտէր իւր, և ոչ առաքեալ մեծ քան
զայն որ առաքեացն զնա։
Եթէ զայս գիտէք, երանելի և էք ե- 17
թէ առնիցէք զայս։
Ոչ վասն ամենեցուն ձեր ասեմ. զի ես 18
գիտեմ, զորս ընտրեցի. այլ զի լցցի
գիրն, թէ որ ուտէր ընդ իս հաց՝ արար
ինձ խաբէութիւն։
Յայսմհետէ իսկ ասեմ ձեզ մինչչև ե- 19
ղեալ, զի յորժամ լինիցի՝ հաւատասջիք
թէ ես եմ։
Ամէն ամէն ասեմ ձեզ, որ ընդունի զոր 20
ոք ես առաքեցից՝ զիս ընդունի, և որ
զիս ընդունի, ընդունի զայն որ առա-
քեացն զիս։
Զայս իբրև ասաց Յս, խռովեցաւ յոգի 21
իւր, վկայեաց և ասէ. ամէն ամէն ասեմ
ձեզ, զի մի ոմն ՚ի ձէնջ մատնելոց է զիս։
Հայէին ընդ միմեանս աշակերտքն տա- 22
րակուսեալք թէ զումմէ ասիցէ։
Եւ էր մի ոմն յաշակերտացն բազմեալ 23
առ Յիսուսիւ, զոր սիրէրն Յիսուս։

24 Ակնարկէ նմա Սիմոն Պետրոս՝ հարցա-
նել ո՞վ իցէ վասն որոյ ասէն։
25 Եւ նա անկեալ զլանջօքն Յիսուսի, ա-
սէ ցնա. տէր, ո՞վ է։
26 Պատասխանի ետ Յիսուս և ասէ. այն
է՝ որում ես թացից զպատառն և տաց. և
թացեալ զպատառն տայ Յուդայի Սկա-
րիովտացւոյ։
27 Եւ յետ պատառոյն՝ ապա եմուտ ՚ի նա
սատանայ. և ասէ ցնա Յիսուս. արդ զոր
ինչ առնելոց ես, արա վաղվաղակի։
28 Եւ զայս ոչ ոք իմացաւ ՚ի բազմականաց
անտի, թէ առ ի՞նչ ասաց ցնա։
29 Զի ոմանք համարէին, թէ զի զարկ-
ղըն ունէր Յուդա, ասաց նմա Յիսուս.
գնեա ինչ որ պիտոյ իցէ մեզ ՚ի տօնիս,
և կամ զի աղքատաց ինչ տացէ։
30 Իսկ նորա առեալ զպատառն ել արտաքս
վաղվաղակի և էր գիշեր։
31 Եւ իբրև ել, ասէ Յիսուս. այժմ փա- Լէ
ռաւորեցաւ որդի մարդոյ, և Աստուած
փառաւորեցաւ ի նմա։
32 Զի եթէ Աստուած փառաւորեցաւ ՚ի
նմա, և Ա՛ծ փառաւորեսցէ զնա յանձն
իւր, և վաղվաղակի փառաւորեսցէ զնա։
33 Որդեակք իմ, փոքր ինչ ժամանակ ընդ
ձեզ եմ. խնդրեսջիք զիս, և ո՛պ ասացի
ցՀրէայսն՝ եթէ ուր ես երթամ դուք

ոչ կարէք գալ, և արդ ձեզ ասեմ։
Պատուէրան նոր տամ ձեզ, զի սիրիցէք 34
զմիմեանս. որպէս սիրեցի ես զձեզ, զի
և դուք սիրեսջիք զմիմեանս։
Յայսմ գիտասցեն ամենեքեան եթէ 35
իմ աշակերտք էք եթէ սիրիցէք զմի-
մեանս։
Ասէ ցնա Սիմոն Պետրոս. տէր, յո՞ւ եր- 36
թաս. պատասխանի ետ Յիսուս, ուր եմն
երթամ դու ոչ կարես այժմ գալ զկնի
իմ, բայց ապա եկեսցես զկնի իմ։
Ասէ ցնա Պետրոս. տէր, ընդէ՞ր ոչ կա- 37
րիցեմ գալ այժմ զկնի քո. արդէն զանձն
իմ իսկ եդից 'ի վերայ քո։
Պատասխանի ետ Յիսուս. զա՞նձն քո 38
դիցես 'ի վերայ իմ. ամէն ամէն ասեմ
քեզ, չև իցէ հաւու խօսեալ, մինչ դու
երիցս ուրասցիս զիս։

ԳԼ. ԺԴ

Մի խռովեսցին սիրտք ձեր, այլ հա- 1
ւատացէք յԱստուած և յիս հաւատա-
ցէք։
Ի տան հօր իմոյ օթևանք բազումեն. 2
ապա թէ ոչ՝ ասացեալ էր իմ ձեզ, թէ
երթամ պատրաստեմ ձեզ տեղի։
Եւ եթէ երթամ և պատրաստեմ ձեզ 3
տեղի, դարձեալ գամ և առնում զձեզ

առ իս. զի ուր եմն իցեմ, և դուք անդ
իցէք:
4 Եւ ուր երթամն գիտիցէք, և զճանա-
պարհն գիտիցէք:
5 Ասէ ցնա Թովմաս. տէր, ոչ գիտեմք յո՞
երթաս, և զիա՞րդ զճանապարհն կա-
րասցուք գիտել:
6 Ասէ ցնա Յիսուս. ես եմ ճանապարհ և
ճշմարտութիւն և կեանք. ոչ ոք գայ առ
հայր եթէ ոչ ինև:
7 Եթէ զիս գիտէիք, ապա և զհայրն իմ
գիտէիք, և այսուհետև գիտասջիք զնա:
8 Ասէ ցնա Փիլիպպոս. տէր, ցոյց մեզ
զհայր և շատ է մեզ:
9 Ասէ ցնա Յիսուս. այսչափ ժամանակս
ընդ ձեզ եմ, և ո՞չ ծանեար զիս Փիլիպ-
պէ. որ ետեսն զիս՝ ետես զհայրն, և դու
զիա՞րդ ասես եթէ ցոյց մեզ զհայր:
10 Ո՞չ հաւատաս եթէ ես 'ի հայր, և հայր
յիս է. զբանս զոր ես խօսիմ ընդ ձեզ,
ոչ եթէ յանձնէ ինչ խօսիմ. այլ հայրն՝
որ յիս բնակեալ է, նա գործէ զգործսն:
11 Հաւատայք ինձ եթէ ես 'ի հայր և
հայր յիս:
12 Ապա թէ ոչ՝ գոնէ վասն գործոցն հաւ-
ատայցէք ինձ. ամէն ամէն ասեմ ձեզ,
թէ որ հաւատայն յիս, զգործսն զոր ես
գործեմ և նա գործեսցէ, և մեծամեծս

եւ քան զնոյնս գործեսցէ, զի ես առ
Հայր երթամ։
Եւ զոր ինչ խնդրիցէք յանուն իմ, ա- 13
րարից զայն։
Զի փառաւորեսցի Հայր յՈրդի։ 14
ՎԵՐՋ Եթէ սիրէք զիս՝ զպատուիրանս իմ 15
պահեսջիք։
Եւ ես աղաչեցից զՀայր, եւ այլ մխի- 16
թարիչ տացէ ձեզ. զի ընդ ձեզ բնակես-
ցէ 'ի յաւիտեան։
Զհոգին ճշմարտութեան զոր աշխարհս 17
ոչ կարէ ընդունել, զի ոչ տեսանէ զնա,
եւ ոչ ճանաչէ զնա. բայց դուք ճանաչէք
զնա, զի առ ձեզ բնակեսցէ եւ ընդ ձեզ
եղիցի։
Ոչ թողից զձեզ որբս. գամ առ ձեզ։ 18
Փոքր միւս եւ՝ եւ աշխարհս ոչ եւս տեսանէ 19
զիս, բայց դուք տեսանիցէք զիս. զի ես
կենդանի եմ, եւ դուք կենդանի լինե-
լոց էք։
Յայնմ աւուր գիտասջիք դուք զի ես 'ի 20
Հօր իմում՝ եւ դուք յիս եւ ես 'ի ձեզ։
Որ ունի զպատուիրանս իմ եւ պահէ 21
զնոսա, նա է որ սիրէ զիս. եւ որ սիրէն
զիս՝ սիրեսցի 'ի Հօրէ իմմէ. եւ ես սիրե-
ցից զնա եւ երեւեցուցից նմա զիս։
Ասէ ցնա Յուդա ոչ Սկարիովտացին. 22
Տէր, զի՞ եղեւ զի մեզ յայտնելոց ես

զքեզ և ոչ աշխարհի։
23 Պատասխանի ետ Յս և ասէ ցնա. եթէ
ոք սիրէ զիս՝ զբանն իմ պահեսցէ, և
Հայր իմ սիրեսցէ զնա. և առ նա եկես-
ցուք և օթևանս առ նմա արասցուք։
24 Եւ որ ոչն սիրէ զիս՝ զբանս իմ ոչ պահէ.
և բանն իմ զոր լուէք ոչ է իմ, այլ Հօրն՝
որ առաքեացն զիս։
25 Զայս խօսեցայ ընդ ձեզ մինչ առ
ձեզս եմ։
26 Իսկ մխիթարիչն Հոգին սուրբ զոր ա-
ռաքեսցէ Հայր յանուն իմ, նա ուսուսցէ
ձեզ զամենայն, և յիշեցուսցէ զամե-
նայն որ ինչ ասացի ձեզ։
27 Խաղաղութիւն թողում ձեզ, զխաղա-
ղութիւն զիմ տամ ձեզ. ոչ որպէս աշ-
խարհս տայ՝ տամ ես ձեզ. մի խռովես-
ցին սիրտք ձեր, և մի զանգիտեսցեն։
28 Լուայք զի ասացի ես ձեզ թէ երթամ,
և գամ առ ձեզ. եթէ սիրէիք զիս՝ ապա
ուրախ լեալ էր ձեր թէ ես առ Հայր
երթամ, զի Հայր իմ մեծ է քան զիս։
29 Եւ այժմ ասացի ձեզ մինչ չև եղեալ,
զի յորժամ լինիցի հաւատասջիք։
30 Ոչ ևս այլ շատ խօսեցայց ընդ ձեզ. գայ
իշխան աշխարհիս այսորիկ և յիս ինչ
ոչ գտանէ։
31 Այլ զի ծանիցէ աշխարհ, եթէ սիրեմ

զՀայր, և որպէս պատուիրեաց ինձ
Հայր՝ այնպէս առնեմ. օն արիք գնաս-
ցուք աստի։

Գլ. ԺԵ

Ես եմ որթն ճշմարիտ, և Հայր իմ 1
մշակ է։
Ամենայն ուռ որ յիս է՝ և ոչ բերէ պը- 2
տուղ, կտրէ զնա. և ա̃մ որ բերէ պտուղ՝
սրբէ զնա, զի առաւել ևս պտղաբեր լիցի։
Դուք արդէն իսկ սուրբ էք վասն բա- 3
նին զոր խօսեցայ ընդ ձեզ։
Կացէք յիս և ես 'ի ձեզ. որպէս ուռն 4
ոչ կարէ պտուղ բերել յանձնէ իւրմէ,
եթէ ոչ իցէ հաստատեալ յորթն, նոյն-
պէս և դուք եթէ ոչ յիս հաստատեալ
իցէք։
Ես եմ որթ և դուք ուռ, որ հաստա- 5
տեալ է յիս՝ և ես 'ի նա, նա բերէ
պտուղ յոյժ. զի առանց իմ ոչ ինչ կա-
րէք առնել։
Եթէ ոք ոչ է հաստատեալ յիս, ել նա 6
արտաքս իբրև զուռն և ցամաքեցաւ,
և ժողովեն զնա և 'ի հուր արկանեն
և այրի։
Եթէ կայցէք յիս և բանք իմ 'ի ձեզ 7
կայցեն, որ ինչ կամիցիք խնդրեսջիք և
լինիցի ձեզ։

8 Յայսմիկ փառաւորեցաւ Հայր իմ. զի
պտուղ յոյժ բերիցէք. և եղիջիք իմ
աշակերտք։
9 Որպէս սիրեաց զիս Հայր, և ես սիրեցի
զձեզ. հաստատուն կացէք ՚ի սէր իմ։
10 Եթէ պահիցէք զպատուիրանս իմ, կաց-
ջիք ՚ի սէր իմ. որպէս ես զպատուիրանս
Հօր իմոյ պահեցի, և կամ ՚ի սէր նորա։
11 Զայս խօսեցայ ընդ ձեզ, զի ուրախու-
թիւնն իմ ՚ի ձեզ լիցի, և ձեր ուրախու-
թիւն լցեալ եղիցի։
12 Այս է պատուէր իմ, զի սիրեսջիք ըզ-
միմեանս, որպէս և ես զձեզ սիրեցի։
13 Մեծ ևս քան զայս սէր ոչ ոք ունի, եթէ
զանձն իւր դիցէ ՚ի վերայ բարեկամաց
իւրոց։
14 Դուք բարեկամք էք իմ, եթէ առնիցէք
զոր ես պատուիրեմ ձեզ։
15 Ոչ ևս կոչեմ զձեզ ծառայս, զի ծառայն
ոչ գիտէ զինչ գործէ տէրն նորա. այլ
զձեզ կոչեցի բարեկամս, զի զամենայն
զոր լուայ ՚ի Հօրէ իմմէ՝ ծանուցի ձեզ։
16 Ոչ եթէ դուք ընտրեցիք զիս, այլ ես
ընտրեցի զձեզ և եդի զձեզ. զի դուք
երթայցէք և պտղաբերք լինիցիք, և
պտուղն ձեր կացցէ. և զոր ինչ խըն-
դրիցէք ՚ի Հօրէ իմմէ յանուն իմ՝ տացէ
ձեզ։

Զայս պատուիրեմ զի սիրեսջիք զմի- 17
մեանս:
Եթէ աշխարհ զձեզ ատեայ, գիտաս- 18
ջիք զի նախ զիս ատեաց:
Եթէ յաշխարհէ աստի էիք՝ աշխարհ 19
զիւրսն սիրէր արդեօք. բայց զի չէք յաշ-
խարհէ, այլ ես ընտրեցի զձեզ յաշխար-
հէ, վ՟ն այնորիկ ատեայ զձեզ աշխարհ:
Յիշեցէք զբանն զոր ասացի ձեզ, թէ 20
ոչ է ծառայ մեծ քան զտէր իւր. եթէ
զիս հալածեցին, ապա և զձեզ հալա-
ծեսցեն. եթէ զբանն իմ պահեցին, ապա
և զձերն պահեսցեն:
Այլ զնոյն արասցեն ընդ ձեզ վասն ա- 21
նուան իմոյ. զի ոչ գիտեն զայն որ առա-
քեացն զիս:
Իմեթէ չէր եկեալ և խօսեցեալ ընդ 22
նոսա, մեղ ինչ ոչ գոյր նոցա. բայց արդ
չիք պատճառք վասն մեղաց իւրեանց:
Որ զիս ատեայ՝ և զհայրն իմ ատեայ: 23
Եթէ զգործսն չէր գործեալ՚ի նոսա, 24
զոր ոչ այլ ոք գործեաց, մեղ ինչ ոչ գոյր
նոցա. բայց արդ տեսին և ատեցին և
զիս և զհայր իմ:
Այլ զի լցցի բանն, որ յօրէնս ն՟ց գրեալ 25
է, թէ ատեցին զիս տարապարտուց:
Բայց յորժամ եկեսցէ մխիթարիչն՝ զոր 26
ես առաքեցից ձեզ՚ի հօրէ՝ զհոգին ճըշ-

մարտութեան, որ 'ի Հօրէ ելանէ, նա վկայեսցէ վասն իմ։

27 Եւ դուք վկայէք զի 'ի սկզբանէ ընդ իս էք։

ԳԼ. ԺԶ.

1 Զայս խօսեցայ ընդ ձեզ՝ զի մի գայթագղեսջիք։

2 Ի ժողովրդոց խուրեանց հանիցեն զձեզ. այլ եկեսցէ ժամանակ՝ զի ամենայն որ սպանանիցէ զձեզ, համարիցի պաշտօն մատուցանել Աստուծոյ։

3 Եւ զայս արասցեն ընդ ձեզ. քանզի ոչ ծանեան զՀայր և ոչ զիս։

4 Այլ և զայս խօսեցայ ընդ ձեզ, զի յորժամ եկեսցէ ժամանակ՝ յիշիցէք թէ ես ասացի ձեզ։

5 Զայս 'ի սկզբանէ ոչ ասացի ձեզ, քանզի ընդ ձեզ էի. բայց արդ երթամ ես առ առաքիչն իմ, և ոչ ոք 'ի ձէնջ հարցանէ ցիս թէ յո՞ երթաս։

6 Այլ զի զայս խօսեցայ ընդ ձեզ, տրտմութիւն ելից զսիրտս ձեր։

7 Այլ ես զճշմարիտն ասեմ ձեզ, լաւ է ձեզ եթէ ես երթամ. զի եթէ ես ոչ երթայց՝ մխիթարիչն ոչ եկեսցէ առ ձեզ. ապա եթէ երթամ, առաքեցից զնա առ ձեզ։

Եւ նա եկեալ յանդիմանեսցէ զաշխարհ 8
վասն մեղաց եւ վասն արդարութեան եւ
վասն դատաստանի։
Վասն մեղաց՝ զի ոչ հաւատան յիս։ 9
Վասն արդարութեան՝ զի առ հայր իմ 10
երթամ, եւ ոչ եւս տեսանէք զիս։
Վասն դատաստանի՝ զի իշխան աշխար- 11
հիս այսորիկ դատապարտեալ է։
Եւս բազում ինչ ունիմ ասել ձեզ, այլ 12
ոչ կարէք հանդարտել այժմիկ։
Յորժամ եկեսցէ նա՝ հոգին ճշմարտու- 13
թեան, առաջնորդեսցէ ձեզ ամենայն
ճշմարտութեամբ. զի ոչ եթէ յանձնէ
ինչ խօսիցի, այլ զոր լուիցէ խօսիցի, եւ
զգալոցն պատմեսցէ ձեզ։
Նա զիս փառաւորեսցէ, զի յիմմէ անտի 14
առնուցու եւ պատմեսցէ ձեզ։
Զամենայն ինչ զոր ունի հայր՝ իմ է. 15
վասն այնորիկ ասացի ձեզ, թէ յիմմէ
անտի առնուցու եւ պատմեսցէ ձեզ։
Փոքր մի եւ ոչ եւս տեսանէք զիս, եւ ապա 16
սակաւիկ մի եւ տեսանիցէք զիս, եւ ես
երթամ առ հայր։
Ասէին ոմանք յաշակերտաց անտի ցմի- 17
մեանս. զինչ է այս զոր ասէ ցմեզ, թէ
փոքր մի եւ ոչ տեսանէք զիս. եւ դար-
ձեալ սակաւիկ մի եւ տեսանիցէք զիս, եւ
թէ ես առ հայր երթամ։

18 Եւ ասէին, զի՞նչ իցէ այն փոքր միւս
եւս, չգիտեմք զի՞նչ խօսի։
19 Գիտաց Յիսուս եթէ կամէին ցնա հար-
ցանել, եւ ասէ ցնոսա. վասն այդորիկ
խնդրէք ընդ միմեանս զի ասացի թէ
փոքր մի եւ ոչ տեսանէք զիս, եւ դարձեալ
սակաւիկ միւս եւս եւ տեսանիցէք զիս։
20 Ամէն ամէն ասեմ ձեզ, զի լայջիք եւ ող-
բասջիք դուք, եւ աշխարհ խնդասցէ.
դուք տրտմեսջիք, այլ տրտմութիւնն ձեր
յուրախութիւն եղիցի։
21 Կին յորժամ ծնանիցի՝ տրտմութիւն է
նմա, զի հասեալ է ժամ նորա. այլ յոր-
ժամ ծնցի զմանուկն, ոչ եւս յիշէ զնե-
ղութիւնն վասն խնդութեանն, զի ծնաւ
մարդ յաշխարհ։
22 Եւ դուք այժմ տրտմութիւն ունիք. այլ
դարձեալ տեսից զձեզ, եւ ուրախ լիցին
սիրտք ձեր. եւ զուրախութիւնն ձեր ոչ
ոք հանիցէ 'ի ձէնջ։
23 Եւ յայնմ աւուր զիս ինչ ոչ հարցանիցէք։
Ամէն ամէն ասեմ ձեզ, զի զոր ինչ խնդ-
րիցէք 'ի հօրէ իմմէ յանուն իմ տացէ
ձեզ։
24 Մինչեւ ցայժմ ոչ ինչ խնդրեցիք յանուն
իմ. խնդրեցէք եւ առնուցուք. զի ուրա-
խութիւնն ձեր լցեալ իցէ։
25 Զայս առակօք խօսեցայ ընդ ձեզ. ե-

կեսցէ ժամանակ՝ յորժամ ոչ ևս առա-
կօք խօսեցայց ընդ ձեզ. այլ յայտնա-
պէս զՀօրէ պատմեցից ձեզ։
Յայնմ աւուր խնդրեսջիք յանուն իմ, 26
և ոչ ասեմ ձեզ եթէ ես աղաչեցից ըզ-
Հայր վասն ձեր։
Զի ինքն իսկ Հայր սիրէ զձեզ՝ զի դուք 27
զիս սիրեցիք, և Հաւատացիք եթէ ես
յԱստուծոյ ելի։
Ելի՛ ի Հօրէ և եկի յաշխարհ, դարձեալ 28
թողում զաշխարհ և երթամ առ Հայր։
Ասեն ցնա աշակերտքն. ահա արդ յայտ- 29
նուք խօսիս, և առակ և ոչ մի ինչ ասես։
Այժմիկ գիտեմք եթէ գիտես զամե- 30
նայն. և ոչ ինչ պիտոյ է եթէ ոք Հար-
ցանիցէ զքեզ. յայսմիկ Հաւատամք ե-
թէ յԱստուծոյ ելեր։
Պատասխանի ետ նոցա Յիսուս, և ա- 31
սէ. ա՞յժմ Հաւատայք։
Ահա եկեսցէ ժամ, և եկեալ իսկ է, զի 32
ցրուեսջիք յիւրաքանչիւր տեղիս, և զիս
միայն թողուցուք, և չեմ միայն՝ զի
Հայր ընդ իս է։
Զայս խօսեցայ ընդ ձեզ, զի ընդ իս խա- 33
ղաղութիւն ունիցիք. յաշխարհի աստ
նեղութիւն ունիցիք, այլ քաջալերեցա-
րուք, զի ես յաղթեցի աշխարհի։

ԳԼ. ԺԷ

1 Զայս իբրեւ խօսեցաւ Յիսուս, ամ-
բարձ զաչս իւր յերկինս եւ ասէ. Հայր,
հասեալ է ժամ, փառաւորեա զորդի քո,
զի եւ որդի քո փառաւորեսցէ զքեզ:
2 Որպէս ետուր նմա իշխանութիւն ամե-
նայն մարմնոյ, զի ամենայնի զոր ետուր
նմա տացէ զկեանս յաւիտենականս:
3 Այս են յաւիտենական կեանք, զի ճա-
նիցեն զքեզ միայն ճշմարիտ Աստուած,
եւ զոր առաքեցեր զՅիսուս Քրիստոս:
4 Ես զքեզ փառաւորեցի յերկրի, զգործ-
սըն կատարեցի, զոր ետուր ցիս՝ զի ա-
րարից:
5 Եւ այժմ փառաւորեա զիս, Հայր, առ՚ի
քէն փառօքն՝ զոր ունէի յառաջ քան
զլինելն աշխարհի առ՚ի քէն:
6 Յայտնեցի զանուն քո մարդկան՝ զորս
ետուր ինձ յաշխարհէ. քո էին, եւ ինձ
ետուր զնոսա. եւ զբանն քո պահեցին:
7 Արդ գիտացին եթէ զամենայն ինչ զոր
ետուր ինձ, առ՚ի քէն են:
8 Զի զբանն զոր ետուր ինձ, ետու նոցա.
եւ նոքա ընկալան, եւ ծանեան ճշմար-
տութեամբ թէ առ՚ի քէն ելի. եւ հա-
ւատացին եթէ դու առաքեցեր զիս:
9 Արդ ես վասն նոցա աղաչեմ, եւ ոչ վասն

աշխարհի աղաչեմ. այլ վասն նոցա՝ զոր
ետուրն ինձ, զի քո են։
Եւ որ ինչ իմ է, ա̃մ քո է. և որ ինչ քո 10
է, այն իմ է. և փառաւորեալ եմ՝ ի նոսա։
Եւ ես ոչ ևս եմ յաշխարհի, և նոքա 11
յաշխարհի են, և ես առ քեզ գամ.
Հայր սուրբ, պահեա զնոսա յանուն քո,
որով ետուրն ինձ. զի եղիցին մի, որպէս
և մեք մի եմք։
Մինչ էի յաշխարհի ընդ նո̃, ես պահէի 12
զնոսա յանուն քո՝ որով ետուրն ինձ, և
պահեցի. և ոչ ոք 'ի նոցանէ կորեաւ,
բայց որդին կորստեան՝ զի գիրն լցցի։
Բայց արդ առ քեզ գամ և զայս խօսիմ 13
յաշխարհի, զի ունիցին զուրախութիւնն
իմ լիով յանձինս իւրեանց։
Ես ետու նոցա զբանն քո, և աշխարհս 14
ատեաց զնոսա. զի չեն յաշխարհէ, որ-
պէս և ես չեմ յաշխարհէ։
Ոչ զայս աղաչեմ, զի բարձցես զնոսա 15
յաշխարհէ. այլ զի պահեսցես զնոսա
'ի չարէ։
Յաշխարհէ աստի չեն, որպէս և ես չեմ 16
յաշխարհէ։
Սուրբ արա զնոսա ճշմարտութեամբ 17
քով, զի քո բանդ ճշմարտութիւն է։
Որպէս զիս առաքեցեր յաշխարհ, և ես 18
առաքեցի զնոսա յաշխարհ։

19 Եւ 'ի վերայ նոցա ես սուրբ առնեմ զանձն իմ, զի եղիցին և նոքա սրբեալք ճշմարտութեամբ։

20 Այլ ոչ վասն նոցա միայն աղաչեմ, այլ և վասն ամենայն հաւատացելոց բանիւն նոցա յիս։

21 Զի ամենեքին մի իցեն, որպէս դու Հայր յիս և ես 'ի քեզ, զի և նոքա 'ի մեզ իցեն. զի և աշխարհ հաւատասցէ եթէ դու առաքեցեր զիս։

22 Եւ ես՝ զփառսն զոր ետուր ինձ՝ ետու նոցա, զի իցեն մի՝ որպէս և մեք մի եմք։

23 Ես 'ի նոսա և դու յիս, զի եղիցին կատարեալք 'ի մի. և գիտասցէ աշխարհ՝ եթէ դու առաքեցեր զիս. և սիրեցի զնոսա որպէս դու զիս սիրեցեր։

24 Հայր, զորս ետուրն ինձ, կամիմ զի ուր եմ ես, և նոքա իցեն ընդ իս. զի տեսանիցեն զփառսն իմ, զոր ետուրն ցիս. զի սիրեցեր զիս յառաջ քան զլինելն աշխարհի։

25 Հայր արդար, և աշխարհ զքեզ ոչ ծանեաւ. այլ ես զքեզ ծանեայ, և նոքա ծանեան եթէ դու առաքեցեր զիս։

26 Եւ ծանուցի նոցա զանունն քո, և ծանուցից. զի սէրն զոր սիրեցեր զիս 'ի նոսա իցէ, և ես 'ի նոսա։

ԳԼ. ԺԸ

Զայս իբրեւ ասաց Յիսուս, ել աշա- 1
կերտօքն հանդերձ յայնկոյս ձորոյն
Կեդրոնի ուր էր պարտէզ, յոր եմուտ
ինքն եւ աշակերտքն իւր:
Գիտէր եւ Յուդա, որ զնա մատնելոց 2
էր՝ զտեղին. զի բազում անգամ ժողո-
վեալ էր անդր Յիսուսի աշակերտօքն
հանդերձ:
Եւ Յուդայի առեալ ընդ իւր զգունդն, 3
եւ 'ի քահանայապետից եւ 'ի փարիսե-
ցւոց սպասաւորս, գայ անդր ջահիւք եւ
լապտերօք եւ զինուք:
Իսկ Յ̃ն իբրեւ ետես զայն ա̃մ եկեալ'ի 4
վ̃ր նորա, ել եւ ասէ ցնոսա. զո՞ խնդրէք:
Պատասխանի ետուն նմա. զՅ̃ն Նա- 5
զովրեցի. ասէ ցնոսա Յիսուս, ես եմ.
կայր ը̃ նո̃ եւ Յուդա՝ որ մատնէրն զնա:
Իբրեւ ասաց թէ ես եմ, յետս յետս չո- 6
գան եւ զարկան զգետնի:
Դարձեալ եհարց զնոսա. զո՞ խնդրէք. 7
եւ նոքա ասեն, զՅիսուս Նազովրեցի:
Պատասխանի ետ նոցա Յիսուս. ասացի 8
ձեզ թէ ես եմ, արդ եթէ զիս խնդրէք՝
թոյլ տուք դոցա երթալ:
Զի լցցի բանն զոր ասաց, թէ զոր ե- 9
տուրն ցիս ոչ կորուսից 'ի նոցանէ եւ ոչ զոք:

10 Իսկ Սիմոն Պետրոս քանզի ունէր սուր,
ձգեաց զնա և եհար զքահանայապետին
ծառայ, և 'ի բաց առ զունկն նորա զա-
ջոյ, և էր անուն ծառային Մաղքոս:
11 Ասէ Յիսուս ցՊետրոս. արկ զսուրդ-
անդրէն 'ի պատեանս իւր. զբաժակն
զոր ետ ինձ Հայր, ո՞չ ըմպիցեմ զնա:
12 Իսկ գունդն և հազարապետն և սպա-
սաւորք Հրէիցն կալան զՅ՜ս և կապեցին:
13 Եւ ածին զնա նախ առ Աննա որ էր ա-
ներ Կայիափայի, որ քահանայապետն
էր տարւոյն այնորիկ:
14 Այս այն Կայիափա էր որ խրատն ետ
Հրէից՝ եթէ լաւ է առն միում մեռա-
նել 'ի վերայ ժողովրդեանն:
15 Եւ երթային զհետ Յիսուսի Սիմոն
Պետրոս և միւս աշակերտն: Եւ աշա-
կերտն այն քանզի ծանօթ էր քահանա-
յապետին՝ եմուտ ընդ Յիսուսի 'ի գա-
ւիթ քահանայապետին:
16 Եւ Պետրոս կայր առ դրանն արտաքոյ.
Ել միւս աշակերտն որ էր ծանօթ քա-
հանայապետին, և ասաց դռնապանն և
եմոյծ 'ի ներքս զՊետրոս:
17 Ասէ աղջիկն որ դռնապանն էր ցՊետ-
րոս, միթէ և դու յաշակերտաց առնն
այնորիկ իցես. և նա ասէ, ոչ եմ:
18 Կային անդ ծառայքն և սպասաւորք

խարոյկ արկեալ, քանզի ցուրտ էր, և
ջեռնուին. կայր ընդ նոսա և Պետրոս և
ջեռնոյր:

Եւ քահանայապետն եհարց զՅս վն ա- 19
շակերտացն և վն վարդապետութե նր:
Պատասխանի ետ նմա Յս. ես յայտնա- 20
պէս խօսեցայ յաշխարհի, ես յամ ժամ
ուսուցի ՚ի ժողովրդեանն, և ՚ի տաճարի
անդ՝ ուր ամենայն Հրէայք ժողովեալ
էին, և ՚ի ծածուկ ինչ ոչ խօսեցայ:
Զի՞ հարցանես զիս, հա՛րց զայնոսիկ որ 21
լուանն թէ զի՞նչ խօսեցայ ընդ նոսա.
ահաւանիկ նք գիտեն զի՞նչ ասացի ես:
Իբրև նա զայն ասաց, մի ոմն ՚ի սպա- 22
սաւորացն որ անդ կայր, ած ապտակ
Յիսուսի և ասէ. ա՞յդպէս պատասխանի
տաս քահանայապետին:
Եւ Յիսուս ասէ ցնա. եթէ չար ինչ 23
խօսեցայ՝ վկայեա վասն չարին, իսկ եթէ
բարի՝ ընդէ՞ր հարկանես զիս:
Եւ առաքեաց զնա Աննա կապեալ առ 24
Կայիափա քահանայապետ:
Եւ Սիմոն Պետրոս կայր անդ և ջեռ- 25
նոյր. ասեն ցնա, մի՞թէ և դո՛ւ յաշա-
կերտաց անտի նորա իցես. նա ուրացաւ
և ասէ թէ չեմ:
Եւ ասէ մի ոմն ՚ի ծառայից քահանայա- 26
պետին ազգական այնորիկ զորոյ զունկն

եհատ Պետրոս, ո՞չ ես իսկ տեսի զքեզ
'ի պարտիզի անդ ընդ նմա:

27 Դարձեալ ուրացաւ Պետրոս, և վաղ-
վաղակի հաւ խօսեցաւ:

28 Եւ ածեն զՅ՟ս 'ի վանացն Կայիափայ
յապարանս դատաւորին, և էր այգուց.
և նոքա ոչ մտին յապարանսն, զի մի
պղծեսցին, այլ զի ուտիցեն զզատիկն:

29 Ել առ նոսա Պիղատոս արտաքս և
ասէ. զի՞նչ չարախօսութիւն մատուցա-
նէք զառնէն զայնմանէ:

30 Պատասխանի ետուն և ասեն ցնա. ե-
թէ չէր չարագործ այրն այն, ապա ոչ
մատնէաք զնա քեզ:

31 Ասէ ցնոսա Պիղատոս. առէք զնա դուք,
և ըստ ձերոց օրինացն դատեցարուք. ա-
սեն ցնա Հրէայքն, մեզ ոչ է արժան
սպանանել զոք:

32 Զի լցցի բանն Յ՟սի զոր ասաց, նշանա-
կեալ թէ որով մահու մեռանելոց իցէ:

33 Եմուտ միւսանգամ յապարանսն Պի-
ղատոս, կոչեաց զՅիսուս և ասէ ցնա.
դո՞ւ ես թագաւորն Հրէից:

34 Պատասխանի ետ Յիսուս. 'ի քէ՞ն ասես
զայդ եթէ այլք ասացին քեզ զինէն:

35 Պատասխանի ետ Պիղատոս. միթէ և ես
Հրէա՞յ իցեմ, ազգն քո և քահանայա-
պետք մատնեցին զքեզ ինձ, զի՞նչ

դործ գործեալ է քո։
Պատասխանի ետ Յիսուս, իմ արքայու֊ 36
թիւն չէ յայսմ աշխարհէ. եթէ յաշ֊
խարհէ աստի էր արքայութիւնն իմ,
սպասաւորքն իմ մարտնչէին արդեօք զի
մի՛ մատնեցայց Հրէից. բայց արդ թա֊
գաւորութիւնն իմ չէ աստի։
Ասէ ցնա Պիղատոս. ապա թէ այդպէս 37
իցէ, թագաւոր ոմն ես դու: Պատաս֊
խանի ետ Յիսուս. դու ասես թէ թա֊
գաւոր իցեմ, բայց ես յայդ իսկ ծնեալ
եմ, և 'ի դոյն իսկ եկեալ եմ յաշխարհ,
զի վկայեցից ճշմարտութեան. ամենայն
որ 'ի ճշմարտութենէ է՝ լսէ բարբառոյ
իմոյ։
Ասէ ցնա Պիղատոս, զի՞նչ է ճշմարտու֊ 38
թիւն. զայս իբրև ասաց, դարձեալ ել
առ Հրէայսն և ասէ ցնոսա. ես և ոչ մի
ինչ պատճառս գտանեմ 'ի նմա։
Բայց է ձեր սովորութիւն զի զմի ոք ար֊ 39
ձակեցից ձեզ 'ի զատկիս. արդ կամի՞ք
զի արձակեցից ձեզ զթագաւորն Հրէից։
Աղաղակեցին ամենեքեան և ասէին, մի՛ 40
զդա, այլ զԲարաբբա. և էր Բարաբ֊
բան այն աւազակ։

Գլ. ԺԹ

1 Յայնժամ առ Պիղատոս զՅիսուս եւ
գան եհար։
2 Եւ զինուորացն արարեալ պսակ 'ի փշոց՝
եդին 'ի գլուխ նորա, եւ զգեցուցին նմա
հանդերձ ծիրանի։
3 Եւ գային առ նա, եւ ասէին. ողջ
եր արքայ Հրէից, եւ հանէին նմա
ապտակս։
4 Ել դարձեալ Պիղատոս արտաքս եւ ասէ
ցնոսա. ահա ածեմ զնա արտաքս առ
ձեզ, զի գիտասջիք թէ ես վնաս ինչ 'ի
նմա ոչ գտանեմ։
5 Ել Յիսուս արտաքս, եւ ունէր պսակ 'ի
փշոց եւ հանդերձ ծիրանի. եւ ասէ ցնո-
սա. ահա այրդ ցձեզ։
6 Իբրեւ տեսին զնա քահանայապետքն եւ
սպասաւորք զաղաղակ բարձին եւ ասեն,
'ի խաչ հան 'ի խաչ հան զդա. ասէ
ցնոսա Պիղատոս. առէք զդա 'ի ձեզ,
եւ ձեզէն հանէք 'ի խաչ. զի ես 'ի դմա
վնաս ինչ ոչ գտանեմ։
7 Պատասխանի ետուն նմա Հրէայքն.
մեք օրէնս ունիմք, եւ ըստ օրինաց մե-
րոց պարտի մեռանել. զի զանձն իւր որ-
դի Աստուծոյ արար։
8 Իբրեւ լուաւ զբանս զայս Պիղատոս, ա-

ռաւել եւս երկեաւ։
Եմուտ դարձեալ անդրէն յապարանսն, 9
եւ ասէ ցՅիսուս. ուստի՞ ես դու. եւ Յի-
սուս ոչ ետ նմա պատասխանի։
Ասէ ցնա Պիղատոս. ընդ իս ո՞չ խօսիս, 10
ո՞չ գիտես եթէ իշխանութիւն ունիմ
հանել զքեզ 'ի խաչ, եւ իշխանութիւն
ունիմ արձակել զքեզ։
Պատասխանի ետ Յիսուս. ոչ ունէիր 11
դու իշխանութիւն 'ի վերայ իմ եւ ոչ մի,
եթէ ոչ էր տուեալ քեզ 'ի վերուստ.
վասն այնորիկ որ մատնեաց զիս քեզ,
նորա մեծ մեղք են։
Եւ յայնմանէ Պիղատոս խնդրէր ար- 12
ձակել զնա, եւ Հրէայքն աղաղակէին
եւ ասէին. եթէ զդա արձակես՝ չես բա-
րեկամ կայսեր. ամենայն ոք որ թա-
գաւոր կոչէ զանձն իւր, հակառակ է
կայսեր։
Իսկ Պիղատոս իբրեւ լուաւ զբանս զայ- 13
սոսիկ, ած զՅիսուս արտաքս. եւ նստաւ
'ի վերայ բեմին, 'ի տեղւոջն որ կոչէր
քարայատակ, եւ եբրայեցերէն Կապ-
պաթա։
Էր ուրբաթն զատկի, եւ էր ժամ ի- 14
բրեւ վեցերորդ, եւ ասէ ցՀրէայսն. ահա
թագաւորդ ձեր ցձեզ։
Եւ նոքա աղաղակէին, բարձ 'ի մէնջ 15

բարձ 'ի մէնջ և հան զդա 'ի խաչ. ասէ
ցնոսա Պիղատոս, ես զթագաւորդ ձեր
'ի խա՞չ հանիցեմ. պատասխանի ետուն
քահանայապետքն, չիք մեր թագաւոր
բաց 'ի կայսերէ:

16 Յայնժամ ետ զնա 'ի ձեռս նոցա, զի 'ի
խաչ ելանիցէ:

17 Եւ նոքա առեալ տանէին զնա. և բար-
ձեալ էր ինքնին զխաչափայտն, և ելա-
նէր 'ի տեղին որ անուանեալ էր գա-
գաթան, և կոչէր եբրայեցերէն Գող-
գոթա:

18 Ուր և 'ի խաչն իսկ հանին զնա, և ընդ-
նմա երկուս ևս այլս աստի և անտի, և
'ի միջի զՅիսուս:

19 Գրեաց և տախտակ մի Պիղատոս, և
եդ 'ի վերայ խաչին, և էր գրեալ. Յի-
սուս Նազովրեցի թագաւոր Հրէից:

20 Զայն տախտակ ընթերցան բազումք
'ի Հրէից, զի մօտ էր 'ի քաղաք անդր
տեղին ուր խաչեցաւն Յիսուս. և էր
գրեալ եբրայեցերէն, դաղմատերէն և
յունարէն:

21 Ասեն ցՊիղատոս քահանայապետքն
Հրէից. մի՛ գրեր թագաւոր Հրէից,
այլ թէ նա ասաց՝ թագաւոր եմ
Հրէից:

22 Պատասխանի ետ Պիղատոս. զոր ինչ

գրեցի՝ գրեցի։

Իսկ զինուորքն իբրև հանին ՚ի խաչ 23
զՅիսուս՝ առին զհանդերձս նորա և ա-
րարին չորս մասունս, իւրաքանչիւր զի-
նուորի մասն. իսկ զպատմուճանն՝ քան-
զի էր առանց կարանի՝՚ի վերուստ փոր-
անկեալ ամենևին.

Ասեն ցմիմեանս, մի պատառեսցուք 24
զայդ, այլ արկցուք վիճակս ՚ի վերայ
դորա ում և ելցէ. զի լցցի գիրն որ
ասէ, բաժանեցին զհանդերձս իմ յիւ-
րեանս և ՚ի վերայ պատմուճանի իմոյ
վիճակս արկին։ Զինուորքն զայս ինչ
գործեցին։

Եւ կային առ խաչին Յիսուսի մայրն 25
նորա, և քոյր մօր նորա Մարիամ Կղ-
ղէովպայ, և Մարիամ Մագդաղենացի։
Յիսուս իբրև ետես զմայրն և զաշա- 26
կերտն զոր սիրէր, զի կայր մօտ. ասէ
ցմայրն, կին դու՝ ահա որդի քո։
Ապա ասէ ցաշակերտն, ահա մայր քո. 27
և յայնմ ժամանակէ առ աշակերտն զնա
առ իւր։
Յետ այսորիկ իբրև գիտաց Յիսուս ե- 28
թէ ահա ամենայն ինչ կատարեալ է,
զի կատարեսցի գիրն, ասէ. Ծարա-
ւի եմ։
Եւ անդ կայր աման ինչ լի քացախով, 29

և նոցա սպունգ լցեալ քացախով ընդ
լեղւոյ՝ շուրջ եդեալ զմշտկաւ զոպայի
մատուցին 'ի բերան նորա։

30 Իբրև առ Յիսուս զքացախն համդերձ
լեղւովն՝ ասէ. ամենայն ինչ կատարեալ
է. և խոնարհեցուցեալ զգլուխն աւան-
դեաց զոգին։

31 Իսկ Հրէայքն քանզի ուրբաթ էր, զի
մի՛ անդէն 'ի խաչին ագանիցին մար-
մինքն մինչև ցշաբաթն, զի էր օր մեծ
շաբաթուն այնորիկ. աղաչեցին զՊիղա-
տոս զի խորտակեսցեն զբարձս նոցա, և
բարձցին։

32 Եկին զինուորքն և զառաջնոյն խորտա-
կեցին զբարձս, նոյնպէս և զմիւսոյն որ
ընդ նմա 'ի խաչն ելեալ էր։

33 Բայց իբրև եկին առ Յիսուս և տեսին
զի այն ինչ մեռեալ էր, ոչ խորտակեցին
զբարձս նորա։

34 Այլ մի ոմն 'ի զինուորացն տիգաւ խո-
ցեաց զկողս նորա, և ել վաղվաղակի
արիւն և ջուր։

35 Եւ որ ետեսն՝ վկայեաց, և ճշմարիտ
է վկայութիւն նորա. և նա գիտէ
թէ ճշմարիտ ասէ, զի և դուք հաւա-
տասջիք։

36 Այս եղև զի լցցի գիրն՝ եթէ ոսկր նորա
մի՛ փշրեսցի։

Եւ դարձեալ միւս գիր ասէ, եթէ 37
Հայեսցին ՚ի նա յոր խոցեցինն։
Յետ այսորիկ աղաչեաց զՊիղատոս 38
Յովսէփ, որ յԱրիմաթեայ էր աշա-
կերտ Յիսուսի ՚ի ծածուկ վասն ահին
Հրէից, զի բարձցէ զմարմինն Յիսուսի.
և հրամայեաց Պիղատոս, եկն և եբարձ
զնա։
Եկն և Նիկոդեմոս որ եկեալն էր առ 39
Յիսուս ՚ի գիշերի զառաջինն, և եբեր
զմուռս խառն ընդ հալուէս իբրև լտերս
հարիւր։
Առին զմարմինն Յիսուսի և պատեցին 40
կտաւովք խնկովքն հանդերձ, որպէս
օրէն էր Հրէից պատել։
Եւ էր ՚ի տեղւոջն յորում խաչեցաւ՝ 41
պարտէզ, և ՚ի պարտիզի անդ գերեզման
նոր, յորում ոչ ոք երբէք էր եդեալ։
Անդ վասն ուրբաթուն Հրէից զի մօտ 42
էր գերեզմանն եդին զՅիսուս։

ԳԼ. Ի

Եւ ՚ի միաշաբաթոջն Մարիամ Մագ- 1
դաղենացի գայ առաւօտուն ընդ արշա-
լոյսն ՚ի գերեզման անդր, և տեսա-
նէ զվէմն բարձեալ ՚ի դրաց գերեզ-
մանին։
Ապա ընթանայ և գայ առ Սիմոն 2

Պետրոս և առ միւս աշակերտն զոր սի-
րէրն Յիսուս, և ասէ ցնոսա. բարձին
զտէր'ի գերեզմանէ անտի, և ոչ գիտեմ
ուր եդին զնա։
3 Ել Պետրոս և միւս աշակերտն և գային
'ի գերեզմանն։
4 Ընթանային երկոքեան 'ի միասին, և
միւս աշակերտն յառաջեաց ընթացաւ
վաղագոյն քան զՊետրոս և եկն նախ 'ի
գերեզմանն։
5 Եւ խոնարհեալ տեսանէ զի կային անդ
կտաւքն, բայց 'ի ներքս ոչ եմուտ։
6 Եկն և Սիմովն Պետրոս որ գայրն զկնի
նորա և եմուտ 'ի գերեզմանն, և տե-
սանէ զկտաւսն զի կային անդ։
7 Եւ վարշամակն որ էր 'ի գլուխ նորա՝
ոչ ընդ այլ կտաւսն կայր, այլ ուրոյն ծա-
լեալ'ի մի կողմն։
8 Յայնժամ եմուտ և միւս աշակերտն, որ
եկեալն էր յառաջագոյն'ի գերեզմանն,
ետես և հաւատաց։
9 Զի չև ևս գիտէին զգիրս թէ պարտ է
նմա 'ի մեռելոց յառնել։
10 Չոգան դարձեալ առ միմեանս աշա-
կերտքն։
11 Բայց Մարիամ կայր արտաքոյ գերեզ-
մանին և լայր. և մինչդեռ լայր՝ խոնար-
հեցաւ 'ի գերեզմանն,

Եւ տեսանէ երկուս հրեշտակս 'ի սպի- 12
տակս, զի նստէին մի 'ի սնարից և մի
յանոտից ուր կայր մարմինն Յիսուսի:
Եւ նոքա ասեն ցնա. կին դու, զի՞ լաս. 13
ասէ ցնոսա, զի բարձին զտէրն իմ 'ի գե-
րեզմանէ անտի, և ոչ գիտեմ ուր եդին
զնա:
Զայս իբրև ասաց, դարձաւ 'ի թիկունս 14
կոյս, և տեսանէ զՅիսուս զի կայր. և
ոչ գիտէր թէ Յիսուս իցէ:
Ասէ ցնա Յիսուս. կին դու, զի՞ լաս, զո՞ 15
խնդրես. նմա այսպէս թուեցաւ թէ
պարտիզպանն իցէ, ասէ ցնա. տէր, ե-
թէ դու բարձեր զնա, ասա ինձ ուր ե-
դիր զնա, զի ես առից զնա:
Ասէ ցնա Յիսուս, Մարիամ. և նա դար- 16
ձաւ և ասէ ցնա եբրայեցերէն, ռաբու-
նի, որ թարգմանի վարդապետ:
Ասէ ցնա Յիսուս. մի՛ մերձենար յիս, 17
զի չև ևս ելեալ եմ առ հայր իմ. այլ
երթ դու առ եղբարսն իմ, և ասա ցնո-
սա. ելանեմ ես առ հայրն իմ և առ հայր
ձեր, և Աստուածն իմ և Աստուած ձեր:
Գայ Մարիամ Մագդաղենացի և պատ- 18
մէ աշակերտացն եթէ ետես նա զտէր,
և զայս ինչ ասաց ցնա:
Եւ էր երեկոյ 'ի միաշաբաթոջ աւուրն, 19
և դրօք փակելովք ուր էին աշակերտքն

ժողովեալ վասն ահին Հրէից, եկն Յի-
սուս և եկաց 'ի միջի նոցա, և ասէ ցնո-
սա. ողջոյն ընդ ձեզ:
20 Իբրև զայս ասաց, եցոյց նոցա զձեռսն և
զկողս իւր. և խնդացին աշակերտքն ի-
բրև տեսին զտէր:
21 Ասէ ցնոսա դարձեալ. ողջոյն ընդ ձեզ,
որպէս առաքեաց զիս Հայր իմ՝ և ես ա-
ռաքեմ զձեզ:
22 Եւ զայս իբրև ասաց, փչեաց 'ի նոսա և
ասէ. առէք Հոգի սուրբ:
23 Եթէ ումեք թողուցուք զմեղս՝ թողեալ
լիցի նոցա, եթէ զուրուք ունիցիք՝ կա-
լեալ լիցի:
24 Իսկ Թովմաս մի յերկոտասանիցն՝ ա-
նուանեալն Երկուորեակ, ոչ էր ընդ նոսա
յորժամ եկն Յիսուս:
25 Ասէին ցնա այլ աշակերտքն եթէ տե-
սաք զտէր. և նա ասէ ցնոսա, եթէ ոչ
տեսից 'ի ձեռս նորա զնշան բևեռացն,
և արկից զմատունս իմ 'ի տեղիս բևե-
ռացն, և մխեցից զձեռս իմ 'ի կողս նո-
րա, ոչ հաւատամ:
26 Եւ յետ ութ աւուր դարձեալ էին 'ի
ներքս աշակերտքն, և Թովմաս ընդ
նոսա. գայ Յիսուս դրօքն փակելովք, և
եկաց 'ի մէջ և ասէ. ողջոյն ընդ ձեզ:
27 Ապա ասէ ցԹովմաս. բեր զմատունս

քո և արկ այսր, և տես զձեռս իմ, և
բեր զձեռն քո՝ և մխեա 'ի կողս իմ,
և մի՛ լինիր անհաւատ, այլ հաւատա-
ցեալ։

Պատասխանի ետ Թովմաս և ասէ ցնա. 28
տէր իմ և Աստուած իմ։

Ասէ ցնա Յիսուս. այդ զի տեսեր զիս 29
և հաւատացեր, երանի որոց ոչ իցէ տե-
սեալ և հաւատասցեն։

Բազում և այլ նշանս արար Յիսուս ա- 30
ռաջի աշակերտաց իւրոց, որ ոչ է գրեալ
'ի գիրս յայսմիկ։

Այլ այս այնչափ ինչ գրեցաւ՝ զի հաւա- 31
տայցէք եթէ Յիսուս Քրիստոս է որ-
դի Աստուծոյ. և զի հաւատայցէք, և
զկեանսն յաւիտենականս ընդունիցիք
յանուն նորա։

ԳԼ. ԻԱ.

Յետ այսորիկ դարձեալ յայտնեաց 1
զանձն իւր Յիսուս աշակերտացն իւրոց
առ ծովեզերբն Տիբերեայ, և յայտ-
նեաց այսպէս։

Էին 'ի միասին Սիմովն Պետրոս և 2
Թովմաս անուանեալն Երկուորեակ, և
Նաթանայէլ որ 'ի Կանայ Գալիլեացւոց՝
և որդիքն Զեբեդեայ, և այլք յաշա-
կերտաց անտի երկու։

3 Ասէ ցնոսա Սիմոն Պետրոս, երթամ
ձուկն որսալ. ասեն ցնա, գամք և մեք
ընդ քեզ. գնացին և մտին 'ի նաւ, և
յայնմ գիշերի կալան և ոչ ինչ։
4 Իբրև այգ եղև՝ կայր Յիսուս յեզր ծո-
վուն, բայց ոչ ծանեան աշակերտքն թէ
Յիսուս իցէ։
5 Ասէ ցնոսա Յիսուս. մանկունք, միթէ
ունի՞ք ինչ ուտելոյ. պատասխանի ետուն
և ասեն ցնա, ոչ։
6 Ասէ ցնոսա. արկէք յաջակողմն նաւին
զուռկանդ և գտանիցէք. արկին, և ոչ
կարէին ձգել 'ի բազմութենէ անտի
ձկանցն։
7 Ասէ աշակերտն այն զոր սիրէրն Յիսուս
ցՊետրոս, տէր է այն։ Սիմոն Պետրոս
իբրև լուաւ թէ տէր է, արկաւ զիւրև
զփածանելին՝ քանզի մերկ էր, և ըն-
կէց զինքն 'ի ծովն։
8 Եւ այլ աշակերտքն նաւաւն իսկ գային,
քանզի չէին հեռի 'ի ցամաքէն. այլ իբրև
երկերիւր կանգնաւ, քարշէին զգործին
հանդերձ ձկամբն։
9 Իբրև ելին 'ի ցամաք, տեսանեն կրա-
կետղ կայծականց, և ձուկն մի 'ի վե-
րայ և հաց։
10 Ասէ ցնոսա Յիսուս. բերէք 'ի ձկանց
այտի զոր դուքդ կալարուք այժմիկ։

Եմուտ Սիմովն Պետրոս, և ձգէր ըզ- 11
գործին 'ի ցամաք լի մեծամեծ ձը-
կամբք, հարիւր յիսուն և երիւք. և
այնչափ ինչ կայր և ոչ պատառեցաւ
գործին:

Ասէ ցնոսա Յիսուս, եկայք ճաշեցէք. 12
և ոչ ոք յաշակերտացն իշխէր հարցա-
նել թէ դու ո՞վ ես, զի գիտէին թէ
տէրն է:

Գայ Յիսուս և առնու զհացն և տայ 13
նոցա, նոյնպէս և զձուկնն:

Զայս երիցս անգամ երևեցաւ Յիսուս 14
աշակերտացն յարուցեալ 'ի մեռելոց:

Եւ իբրև ճաշեցին, ասէ ցՍիմոն Պետ- 15
րոս Յիսուս. Սիմովն Յովնանու, սիրե՞ս
զիս առաւել քան զդոսա. ասէ ցնա, այո
տէր, և դու գիտես զի սիրեմ զքեզ.
ասէ ցնա, արածեա զգառինս իմ:

Դարձեալ ասէ ցնա, Սիմովն Յովնանու 16
սիրե՞ս զիս. ասէ ցնա, այո տէր, և դու
գիտես զի սիրեմ զքեզ. ասէ ցնա, ա-
րածեա զոչխարս իմ:

Ասէ ցնա երիցս անգամ. Սիմովն Յովնա- 17
նու սիրե՞ս զիս. տրտմեցաւ Պետրոս
զի ասացն ցնա երիցս թէ սիրես զիս.
և ասէ ցնա. տէր, դու զամենայն գի-
տես և դու իսկ զամենայն ճանաչես, և
եթէ սիրեմ զքեզ. ասէ ցնա Յիսուս,

արածեա զոչխարս իմ։
18 Ամէն ամէն ասեմ քեզ, զի մինչ մանուկն
էիր, անձամբ անձին գօտի ածէիր և
երթայիր յո՛ և կամէիր. և յորժամ
ծերասցիս, ձեռս՝ի վեր կալցես. և այլք
ածցեն քեզ գօտի, և տարցին ուր ոչն
կամիցիս։
19 Զայս ասաց նշանակեալ թէ որով մա-
հու փառաւոր առնիցէ զԱստուած. և
զայս իբրև ասաց, ասէ ցնա. եկ զկնի իմ։
20 Դարձաւ Պետրոս և տեսանէ զաշա-
կերտն զոր սիրէր Յիսուս, զի երթայր
զկնի. որ և անկաւ զլանջօքն նորա և ա-
սէ. տէր, ո՛վ է որ մատնելոցն է զքեզ։
21 Զնա տեսեալ Պետրոսի, ասէ ցՅիսուս.
տէր, իսկ սա զի՞։
22 Ասէ ցնա Յիսուս. եթէ կամիմ զի կաց-
ցէ դա՝ մինչև ես գամ. քեզ զի՞ փոյթ է,
դու եկ զկնի իմ։
23 Եւ ել բանս այս յեղբարս և համարե-
ցան թէ աշակերտն այն ոչ մեռանիցի.
և ոչ ասաց նմա Յիսուս եթէ ոչ մեռա-
նիցի, այլ թէ կամիմ ես թէ կացցէ դա՝
մինչև ես գամ։
24 Այս աշակերտ է որ վկայէ վասն այ-
սոցիկ, որ և գրեացն իսկ զայսոսիկ. և
գիտեմք եթէ ճշմարիտ է վկայութիւն
նորա։

Բայց է և այլ ինչ բազում զոր արար 25
Յիսուս, զոր եթէ գրեալ էր մի ըստ
միոջէ, կարծեմ թէ և ոչ աշխարհս
բաւական էր տանել զգիրսն որ թէ
գրեալ էին։

ՎԱԽՃԱՆ
ՍՐԲՈՅ ԱՒԵՏԱՐԱՆԱՑ

ՑՈՒՑԱԿ ԱՒԵՏԱՐԱՆԱՑ

ՀԱՆԳՍՏԵԱՆ, ՏԱՃԱՐԻ, ԻՒՂԱԲԵՐԻՑ, ԲԺՇԿՈՒԹԵԱՆ ԵՒ ԱՆԴԱՍՏԱՆԻ. ՈՐՊԱՇՏԻՆ Ի ԿԱՐԳԱՒՈՐՈՒԹԵԱՆ ՀԱՍԱՐԱԿԱՑ ԱՂՕԹԻՑ ԸՍՏ ՁԱՅՆԻՆ

ԱՒԵՏԱՐԱՆՔ ՀԱՆԳՍՏԵԱՆ

Ի ՄԱՏԹԷՈՍ

գլ. ժա. 25. Յայնմ ժամանակի։ վ. 30. իմ փոքրոգի։
գլ. ժգ. 36. Յայնժամ թողեալ։ վ. 52. զնոր և զհին։
գլ. իա. 18. Եւ այգուցն իբր։ վ. 32. հաւատալ նմա։
գլ. իե. 31. Եւ յորժամ եկես։ վ. 46. յաւիտենականն։

Ի ՄԱՐԿՈՍ

գլ. դ. 1. Դարձեալ սկսաւ։ վ. 9. լսելոյ՝ լուիցէ։
գլ. դ. 26. Եւ ասէր՝ այսպէս։ վ. 34. մեկնէր զամ։
գլ. ժգ. 24. Այլ յաւուրսն յայ։ վ. 31. անցանիցեն։
գլ. ժգ. 32. Այլ վն աւուրն։ վ. 37. արթուն կացէք։

Ի ՂՈՒԿԱՍ

գլ. թ. 10. Դարձան առաքեալքն։ վ. 17. սակառի։
գլ. ժբ. 32. Մի երկն։ վ. 48. պահանջեսցեն 'ի նմանէ։
գլ. ժէ. 3. Զգոյշ կացէք. վ. 10. առնել՝ արարաք։
գլ. իա. 27. Եւ յայնժամ տեսց։ վ. 38 լսել 'ի նմանէ։

Ի ՅՈՎՀԱՆՆԷՍ

գլ. ը̃. 13. Եւ էր մերձ զա: վ. 22. զոր ասայ Յս̃:
գլ. ե̃. 19. Պատասխանի ետ: վ. 23. զառաքիչն նորա:
գլ. ե̃. 24. Ամէն ամէն ասեմ: վ. 30. առաքեայն զիս:
գլ. ժը̃. 24. Ամէն ամէն ասեմ ձեզ: վ. 26. հայրն իմ:

ԱԻԵՏԱՐԱՆՔ ՏԱՃԱՐԻ

Ի ՄԱՏԹԷՈՍ

գլ. իէ̃. 1. Եւ եղեալ առ: վ. 51. կրՑեւ ատամանց:

Ի ՄԱՐԿՈՍ

գլ. ժէ̃. 1. Եւ յեղանեւն ն̃ր: վ. 37. արԹուն կացէք:

Ի ՂՈՒԿԱՍ

գլ. իա̃. 5. Եւ յասել ոմանց: վ. 38. լսել'ի նմանէ:

Ի ՅՈՎՀԱՆՆԷՍ

գլ. ժդ̃. 19. Ամէն ամէն: վ. ժդ̃. 13. հայր յորդի:

ԿԱՄ

գլ. Ժ. 22. Եղեն յայնժամ նաւ: վ. 42. 'ի նա անդ:

ԱՒԵՏԱՐԱՆՔ ԻՒՂԱԲԵՐԻՑ

Ի ՄԱՏԹԷՈՍ

գլ. ԻԸ. 1. Եւ յերեկոյի շա. վ. 20. կտրծ աշխարհի։

Ի ՄԱՐԿՈՍ

գլ. ԺԵ. 42. Եւ իբրեւ երեկ։ վ. ԺԶ. 8 զի երկնչէին։

Ի ՂՈՒԿԱՍ

գլ. ԻԳ. 50. Եւ ահա այր մի։ վ. ԻԴ. 12. զինչ եղեւ։

Ի ՅՈՎՀԱՆՆԷՍ

գլ. ԺԹ. 38. Յետ այսորիկ։ վ. Ի. 18. ինչ ասաց ցնա։

ԱՒԵՏԱՐԱՆՔ ԲԺՇԿՈՒԹԵԱՆ

Ի ՄԱՏԹԷՈՍ

գլ. Դ. 23. Եւ շրջէր Յս։ վ. 25. և բժշկեաց զնոսա։
գլ. Ը. 1. Այլ իբրեւ էջ'ի լեռ։ վ. 17. մեր եբարձ։
գլ. Ը. 28. Եւ իբրեւ անց։ վ. 34. սահմանաց նոցա։
գլ. Թ. 1. Եւ մտեալ'ի նաւ՝ անց։ վ. 8. մարդկան։
գլ. Թ. 18. Մինչդեռ նա։ վ. 26. երկիրն ընդ այն։
գլ. Թ. 27. Եւ մինչդեռ։ վ. 34. հանէ դա զդեւս։
գլ. Թ. 35. Եւ շրջէր Յս։ վ. Ժ. 1. հիւանդութիւնս։
գլ. ԺԲ. 9. Եւ գնացեալ ան։ վ. 14. կորուսցեն զնա։
գլ. ԺԲ. 22. Յայնժամ մա։ վ. 37. պարտաւորեսցիս։
գլ. ԺԴ. 22. Եւ ստիպեաց վաղ։ վ. 36. փրկեցան։
գլ. ԺԵ. 21. Եւ ելեալ ան։ վ. 31. առնէին զած Իէլի։
գլ. ԺԷ. 14. Եւ իբրեւ ե։ վ. 20. աղօթիւք և պահօք։
գլ. Ի. 29. Եւ յելանելն նոցա։ վ. 34. զհետ նորա։

Ի ՄԱՐԿՈՍ

Գլ. ա̅. 21. Եւ մտանեն 'ի Կափ: վ. 34. զնա թէ Քն է:
Գլ. ա̅. 35. Եւ ընդ այգն ընդ: վ. 45. յամ կողմանց:
Գլ. բ̅. 1. Եւ մտեալ դար. վ: 12. երբէք ոչ տեսաք:
Գլ. գ̅. 1. Եւ եմուտ միւսանգամ: վ. 5. ձեռն նորա:
Գլ. գ̅. 7. Իսկ Յս աշակեր: վ. 12. առնիցեն զնա:
Գլ. ե̅. 1. Եւ եկն յայնկոյս: վ. 20. զարմանային:
Գլ. ե̅. 21. Եւ իբրև անց Յս: վ. 43. նմա ուտել:
Գլ. զ̅. 53. Եւ իբրև անց: վ. 56. մերձեցանն՝ փրկեցան:
Գլ. է̅. 24. Եւ անտի յար: վ. 30. դնէր 'ի մահիճս:
Գլ. է̅. 31. Եւ ելեալ մի: վ. 37. և համրոց խօսել:
Գլ. ը̅. 22. Գան 'ի Բեթս: վ. 26. ասիցես 'ի շէնն:
Գլ. թ̅. 13. Եւ եկեալ առ ա: վ. 28. և աղօթիւք:
Գլ. ժ̅. 46. Եւ գան յԵրիք: վ. 52. 'ի Ճանապարհին:

Ի ՂՈՒԿԱՍ

Գլ. դ̅. 31. Եւ. էջ'ի Կափառնա: վ. 42. թէ Քն է:
Գլ. ե̅. 12. Եւ եղև 'ի հա: վ. 16. կայր յաղօթս:
Գլ. ե̅. 17. Եւ եղև 'ի միում: վ. 26. նոր նշան:
Գլ. զ̅. 1. Եւ եղև 'ի շա: վ. 11. առնիցեն Յսի:
Գլ. է̅. 1. Եւ իբրև կա: վ. 10. հիւանդ բժշկեալ:
Գլ. է̅. 11. Եւ եղև 'ի վ. 23. գայթագղեսցի յիս:
Գլ. ը̅. 22. Եւ եղև 'ի միում: վ. 39. արար նմա Յս:
Գլ. ը̅. 40. Եւ իբրև դար: վ. 57. որ ինչ եղեն:
Գլ. թ̅. 37. Եւ եղև 'ի վա: վ. 44. մեծամեծացն Այ:
Գլ. ժա̅. 14. Եւ հանէր դև մի: վ. 23. ընդ իս՝ ցրուէ:
Գլ. ժգ̅. 10. Եւ ուսու: վ. 17. գործէին 'ի նմանէ:
Գլ. ժդ̅. 1. Եւ եղև 'ի մտա: վ. 6. պտասխանի առ այն:
Գլ. ժէ̅. 11. Եւ եղև մինչ: վ. 19. կեցուցին զքեզ:
Գլ. ժը̅. 35. Եւ եղև 'ի մօ: վ. 43. օրհնութիւն Այ:

Ի ՅՈՎՀԱՆՆԷՍ

Գլ. դ. 46. Եկն դարձեալ'ի Կա։ վ. 54. 'ի Գալիլեա։
Գլ. ե. 1. Յետ այսորիկ։ վ. 18. առնէր զանձն Այ։
Գլ. թ. 1. Եւ մինչդեռ ան։ վ. 38. եպագ նմա։
Գլ. ժա. 1. Եւ էր ոմն հիւ։ վ. 46. զոր արարն Յս։

ԱՒԵՏԱՐԱՆՔ ԱՆԴԱՍՏԱՆԻ

Ի ՄԱՏԹԷՈՍ

Գլ. իդ. 27. Զի որպէս փայ։ վ. 35. իմ մի անցցեն։
Գլ. իէ. 35. Եւ հանեալ։ վ. 50. արձակեաց զոգին։
Գլ. իէ. 50. Եւ Յս դարձեալ։ վ. 61. գերեզմանին։

Ի ՄԱՐԿՈՍ

Գլ. ժե. Եւ 22. ածեն զնա։ վ. 37. և եհան զոգի։

Ի ՂՈՒԿԱՍ

Գլ. իգ. 32. Ածին և այլ երկ։ վ. 46. եհան զոգի։

Ի ՅՈՎՀԱՆՆԷՍ

Գլ. գ. 13. Եւ ոչ ոք էլ յերկ։ վ. 21. գործեցան։
Գլ. ժթ. 16. Յայնժամ ետ վ. 22. գրեցի՝ գրեցի։
Գլ. ժթ. 25. Եւ կային։ վ. 30. աւանդեաց զոգին։

1344

0028219
1385

1385